

Ը. 1. ԿԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԼԻԳԱՅԻ ԴԵՐԸ
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ
ՀԱԿԱՆՄՊԵՐԻՎԼԻՍԱԿԱՆ
ՊԱՅՔԱՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

Ш. Л. КАРАМАНУКЯН

РОЛЬ ЛИГИ
АРАБСКИХ ГОСУДАРСТВ
В АНТИИМПЕРИАЛИСТИЧЕСКОЙ
БОРЬБЕ АРАБСКИХ СТРАН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1988

9(5)

Հ Գ Դ


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՑ ՊԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՆԱԺԻՏՈՒՅՑ

ԸՆԹԱՐԱՐԱՐՈՒՅԹ

Օ. Լ. ԿԱՐԱՍԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԼԻԳԱՅԻ ԴԵՐԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ
ՀԱԿԱԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՊԱՑՔԱՐՈՒՄ

A 7800



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՑ ՊԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՐԵՎԱԿԱ

1988

Տարագրվում է ՀՍՍՀ ԳԱ Արևելագիտուրյան ինստիտուտի
դիտական խորհրդի ոռոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
պատմական զիտուրյանների դպրուց
Ն. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,

Դիրքը նշանաւակուրյան և եւաշխավուրել գրախոսներ՝
պատմական զիտուրյանների բեկնածուներ
Ա. Հ. ԽՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ և Պ. Հ. ՍԱՐԿԱՅԱՆՆԵՐ

Կարամանուկյան Շ. Լ.

Արարական պետությունների լիգայի ղերը արարական երկրների հակախմբերի լիտուական պայքարում /լիդատ. խմբ. Ն. Հ. Հովհաննիսյան/; ՀՍՍՀ ԳԱ. Արևելագիտ. ինստ.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988.—204 էջ.

Աշխատությունում զերչուծվում էն Արարական պետությունների լիգայի ժրագրային փաստաթղթերը, լուսարանվամ և նյա ստեղծման պատմությունն ու զրծունելությունը՝ հանուն ռեպիտենի երկրների ազգային անկախության ամրապնդուն, արարտական աշխարհի հակագույքաշին շարժումների աշխատացման, Պազճետինի հարցի արդարուցի լուծման, ինչպես նաև բարերիսալիստական ռազմաքաղաքական խմբավորումներում արտրագան երկրներն ընդունելու դեմ:

Աշխատությունը նախատեսված է արևելագիտների, միջազգային գործուների, ինչպես նաև Արարական արևելքի նորագոյն պատմությամբ հետաքրքրվող ընթերցողների համար:

Ա. Ռ Ա. Զ Ա. Բ Ա. Կ

Արաբական անկախ երկրները միավորող ռեզիսնալ միշտական կազմակերպությունը՝ Արաբական պետությունների լիգան, իր գործունեության ավելի քան քառասուն տարիների ընթացքում կարևոր դեր է կատարել Արաբական արևելքի միշտական հարաբերություններում։ ՍՄԿԿ ՀՀՎՀ Համագումարում ընդունված կուսակցության ժրագրի նոր խօսքագրությունում ասվում է, որ «... ազգային-ազատագրական հեղափոխությունների և շարժումների պատմական նվաճումը նոյավ իմակերիալիզմի գաղութային սիստեմի փլուզումը, նրա ավերակների վրա տասնյակ ինքնուրուցն պետությունների առաջացումը»¹։ Այդ երկրներն այսօր այնքան կարևոր դեր են կատարում միշտակային կյանքում, որ սոցիալիստական և կապիտալիստական համակարգերի կողքին կազմում են միշտակային հարաբերությունների երրորդ ենթահամակարգը²։ Համախմբվելով չմիանալու շարժման մեջ, նրանք կարևոր ներդրում ունեն «ճշնաժամային իրավիճակների վերացման և կանխման գործում»³, կարշավային պայմանագրի անդամ պետությունների 1983 թ. հունվարին ընդունված քաղաքական հայտարարությունում նշվում է, որ «այս առումով կոչված են դրական դեր կատարելու նաև այնպիսի միշտական ռեզիսնալ կազմակերպություններ, ինչպիսիք են Աֆրիկյան միասնականության կազմակերպությունը, Արաբական երկրների լիգան»⁴։

Արաբական լիգայի հիմնադրման, ժրագրային փաստաթղթերի, գործունեության ուսումնասիրումը թույլ կտախորամուխ լինելու արաբական ազգային-ազատագրական շարժման մի շարք կարևոր խնդիրների մեջ, ճիշտ գեահատել արդ կազմակերպության նպատակներն ու գործունեության մեխանիզմը, վեր հանել արաբական ժողովուրդների հակամակերպությունը, Արաբական երկրների լիգան»⁵։

թյան գործոնի գերը: Բացի այդ, այն մեզ կօգնի նաև ընդարձակելու և խորացնելու մեր պատկերացումները արարական միջավհատական հարաբերությունների ոլորտի մասին:

Աշխատությունում հիմնականում քննարկվում է Արարական լիգայի 1940—1950-ական թվականների գործունեությունը, երբ արարական երկրների հակաբիմպերի համար առաջարում են Արարական արևելքի միջազգային կյանքում այդ կազմակերպության կատարած դերն ուներ թերևս առավել կարևոր նշանակություն:

Պատք է նշել, որ Արարական պետությունների լիգային նվիրված սովորակոն Հեղինակների հետազոտությունները փաստորեն սահմանափակվում են այդ կազմակերպության առաջին երեք տարիների գործունեության ուսումնամիջրությամբ: Այդ աշխատությունները զրվել են 30—40 տարի առաջ, և նրանց Հեղինակները հասկանալի պատճառներով իրենց ձեռքի տակ չեն ունեցել բավարար շափով սկզբնաղբյուրներ, պաշտոնական փաստաթղթեր, ինչը, բնականարար, իր կնիքն է զրել այդ աշխատությունների վրա: Թե՛ այդ, թե՛ Արարական արևելքի նորագոյն պատմությանը նվիրված այլ աշխատություններում Արարական լիգայի հիմնադրման և առաջին տասնամյակի գործունեության հետ կապված մի շարք հարցեր բավականաշատ ուսումնասիրված չեն, կամ նույնիսկ բոլորովին լուսաբանված չեն: Օրինակ, սովորական պատճառությունն առ այսօր չի անդրագարձել 1945—1948 թթ. Պազմսատինի հարցում Արարական լիգայի դիրքորոշմանը, 1940-ական թվականների երկրորդ կեսին Մերձավոր արևելքում ուղղմաբազական խմբավորումներ ստեղծելու ծրագրերի հանդեպ այդ կազմակերպության վերաբերմունքին և այլն: Ճշգրաման է կարոտ նաև Արարական լիգայի դերի գնահատումն արարական ժողովուրդների մղած հակաբիմպերի համարական պայմանագրության մասին:

Աշխատությունը շարադրելիս հիմք են ծառայել Արարական լիգայի ծրագրային փաստաթղթերը, այդ կազմակերպության հորհրդի և Քաղաքական կոմիտեի որոշումները, որոնք հրապարակված են ինչպես փաստաթղթերի ժողովածուներում, այնպես էլ Արարական լիգային նվիրված առանձին աշխատությունների հավելվածներում: Արարական լիգա-

շին վերաբերող նյութերի հարստությամբ առանձնապես աշքի է ընկենում Մ. Խալիլի «Արարական պետությունները և Արարական լիգան» փաստաթղթերի ժողովածուի երկրորդ հատուրը, որում հրապարակված են լիգայի ծրագրային մի շարք փաստաթղթեր և որոշումներ⁵: Արարական լիգայի հիմնադրման հետ կապված կարենոր նյութեր են հրապարակված Ա. Գոմայի «Արարական պետությունների լիգայի հիմնադրումը» աշխատության հավելվածում⁶: Օգտագործվել են նաև Թ. Ղալիլի, Մ. Ղանեմի, Զ. Հուրեկիցի, Ա. Խանիի, Մ. Լայսիի և այլոց աշխատություններում հրապարակված փաստաթղթերը լիգայի վերաբերյալ⁷:

Աշխատության համար շատ արժեքավոր են եղել ՍՍՀՄ Հոկտեմբերյան հեղափոխության կենտրոնական պետական արխիվում պահպող նյութերը⁸, որոնք թույլ են տալիս անդրադառնալ ցարդ թիւ լուսաբանված մի շարք իրադրաժուրունների:

Արարական լիգայի մասին զգալի նյութ կա նաև արարական, գիւմավորապես եղիպտական մամուլում: Աշխատությունում օգտագործվել են «Ալ Ահրամ», «Le Journal d'Egypte» և «Արև» օրաթերթերում զետեղված լիգային առնվպող նյութերը: Արևմտյան արևելագիտական պարբերականներից շատերը նույնպես զգալի ուշադրություն են դարձըրել Արարական լիգային, տպագրել այդ կազմակերպության տարրեր մարմինների ընդունած որոշումների ամրողական տերությունը: Այս առումով առանձնապես հիշատակելի են ֆրանսիական «Cahiers de l'Orient contemporain», և ամերիկան «Middle Eastern Affairs» ու «Middle East Journal» պարբերականները:

Ինչպես արդեն նշվեց, Սովորական Միությունում լույս են տեսել Արարական լիգային վերաբերող մի քանի աշխատություններ: Ժամանակադրական առումով դրանցից առաջինը Վ. Բ. Խուցկու «Արարական պետությունների լիգա» գրքունին է, որը լույս է տեսել 1946 թ.⁹: Չնայած իր փոքր ծավալին և շոշափվող հարցերի սակագությանը, նրանում կան արժեքավոր մի քանի մտքեր լիգայի հիմնադրման և առաջին քայլերի վերաբերյալ: Արդարությունը պահանջում է տանը նաև, որ այդ գրքունիում կան նաև առանձին անձառու-

թյուններ, որոնք հովանաբար կապված են այն բանի հետ, որ գրավոյզը գրված է դեպքերի անմիջական տպավորությամբ և որոշ փաստեր վերատուգելու հնարավորություն չի եղել:

1954 թ. Մոսկվայում պաշտպանվել է Յու. Ն. Եշերակովի թեկնածուական դիսերտացիան «Արարական պիտույքունների լիգա (1945—1948)» թևմայով¹⁰, որի ավտոռոեֆերատն ենք ունեցել մեր տրամադրության տակ: Ըստ ավտոռոեֆերատի, Հեղինակն անդրագարձել է իր ուսումնասիրած շըրշանում լիգայի քաղաքական գործունեության բոլոր հիմնական կողմերին: Սակայն աշխատությունում կան փաստական որոշ աննշտություններ և վիճելի որոշ պնդումներ լիգայի կատարած դերի վերաբերյալ: Վ. Բ. Լուցկու և Յու. Ն. Եշերակովի աշխատություններում թիւ են աղբյուրները, ինչ բացատրվում է այդ ժամանակ գիտական շրջանառության մեջ գտնվող նյութերի սակագությամբ:

1966 թ. Մոսկվայում պաշտպանվել է ևս մեկ դիսերտացիա՝ նվիրված Արարական լիգայի իրավական ստատուսին: Հեղինակը հիմնականում ժանրացել է իրավական այլեւայլ խնդիրների վրա: Աշխատությունում պատմական որոշ թերում ունի միայն երկրորդ գլուխը, որում արծարծվում է լիգայի հիմնադրման պատմությունը¹¹: Արարական լիգայի հիմնադրման և գործունեության հետ կապված մի շարք հարցեր քնննարկված են՝ է. Թումայի «Ազգային-ազատագրական շարժումը և արարական միասնականության խնդիրը» աշխատությունում¹²:

Սույն մենագրության հեղինակն օգտվել է Արարական արեների նորագույն պատմությանը վերաբերող սովորական արարագետների մի շարք աշխատություններից: Արարական լիգան իր գործունեության առաջին տասնամյակի ընթացքում հանդիս է եկել արարական երկրներում ժավալված ազգային-ազատագրական, Հակամագերիալիստական տարրեր շարժումների պաշտպանությամբ: Այս կամ այն կոնկրետ հարցում Արարական լիգայի դիրքորոշման ճիշտ դնահատումը հնարավոր է այդ հարցի մասին խորը պատկերացում կազմելուց հետո միայն: Այս առումով սովորական գիտնականների՝ արարական երկրների նորագույն պատմության հան-

գուցային հարցերին վերաբերող ուսումնասիրությունները
զգալիորեն օդնել են հեղինակին:

Սպայային անկախության նվաճման և ամրապնդման հա-
մար Եղիպատոսի, Սիրիայի և Ամենի մղած պայքարում արա-
բական միջպետական ռեզիոնալ կազմակերպության դիրքո-
րոշման հարցն ուսումնասիրելիս հեղինակի համար անշափ
օգտակար են նղել Ի. Պ. Բելլանի և Յ. Մ. Պրիմակովի,
Շ. Ն. Կուրտագելաշվիլու, Վ. Հ. Հովհաննիսյանի ու Հ. Ս. Սար-
գսյանի, Լ. Բ. Մեղքեղկոյի, Է. Փ. Պիր-Բուզաղովայի և
Բ. Գ. Սեյրանյանի մենագրությունները, ինչպես նաև «Եմենի
նորագույն պատմություն» կոլեկտիվ աշխատությունը¹³:

Մերձավոր արևելքում ուղղմաքաղաքական ագրեսիվ
խմբավորումներ ստեղծելու իմացերիալիստական երկրների
փորձերի նկատմամբ Արարական լիգայի վերաբերմունքն
ուսումնասիրելիս օգտագործվել են «Անդիխայի քաղաքակա-
նությունը Մերձավոր և Միջին արևելքում» կոլեկտիվ աշխա-
տությունը և Ն. Հ. Հովհաննիսյանի, Յ. է. Տուզանովայի, Բ. Մ.
Փոցիվերիայի, Ա. Ֆ. Ֆեղչենկոյի ուսումնասիրությունները¹⁴:

Հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրների անկախու-
թյան համար մղած պայքարին Արարական լիգայի ցույց
տված օժանդակության հարցին անդրադառնալիս հեղինակն
ըգտվել է Ռ. Գ. Լանդայի, Ն. Ս. Լուցկայայի, Լ. Պ. Մանա-
սերյանի և այլոց մենագրություններից¹⁵:

Պազմատինյան հարցում Արարական լիգայի դիրքորոշ-
ման խնդիրը լուսաբանելիս օգտագործվել են Յ. Դմիտրինի,
Լ. Ն. Կոտլովի, Գ. Ս. Նիկիտինայի, Ե. Մ. Պրիմակովի և այլ
հետազոտողների աշխատությունները¹⁶:

Արարական պետությունների լիգայի մասին բազմաթիվ
ուսումնասիրություններ են գրվել արաբական և արևմտյան
երկրներում: Արար հեղինակների զործերից առավել շահե-
կանները Ա. Գոմայի, Բ. Ղալիի և Ա. Տարբինի մենագրու-
թյուններն են, որոնք աչքի են ընկենում փաստական նյութի
առատությամբ¹⁷: Առանձնապես Հիշատակելի է Ա. Գոմայի
աշխատությունը: Այն գրված է անգլիական այլեւայլ արխիվ-
ներում պահպող հարուստ նյութի հիման վրա, որն առաջին
անգամ է գրվում զիտական շրջանառության մեջ:

Արևմտյան հեղինակների լույս ընծայած աշխատությունները մեծ մասամբ հոդվածներ են, որոնք հիմնականում ունեն նկարագրական և մակերևսային բնույթ։ Դրանցից առանձնանում է Ռ. Մակղոնալդի մենագրությունը¹⁸, որում բազմակողմանիորեն քննարկված են Արարական լիգայի գործունեության այլնայլ կողմերը։ Ռ. Մակղոնալդի աշխատությունում, ստկայն, հաճախ գերազնահատվում է միջարարական տարրեր հակասությունների դերը, չեն բացահայտվում կիզայում առանձին ճգնաժամային երևույթների առաջցման բուն պատճառները։ Ընդհանրապես արար և արևմբուտակը վրոպական հեղինակների աշխատություններից օգտվելիս հեղինակը աշխատել է գրանք հնարավորին շափ ենթարկել պատմագննական վերլուծության։

Աշխատությունում օգտագործվել են նաև սովորական, արար և արևմտյան հեղինակների մի շարք այլ գործեր, որոնք վերաբերում են արարական երկրների նորագույն պատմությանը։

ԱՐԱԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻԳԱՅԻ
ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ
ԵՎ ՇՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Արարական աշխարհի միավորումը օրակարգի հրատապ հարց էր դեռ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ տարբեր կուսակցություններ, խմբավորումներ ու գործիչներ առաջ էին քաշում արարական երկրամասերի պետական համախմբման այլնայլ ծրագրեր։ Ումանք պղողագանդում էին ամրող արարական Ասիայի, ուրիշները՝ Իրաքի, Սիրիայի և Հիշաղի, երրորդները՝ պատմական Սիրիայի տարրեր մարզերի միավորման նախագծեր։ Ընդ որում միավորում ասելով հասկացվում էր արարական երկրների համախմբմումը մեկ պետության մեջ։

Արարական միասնականության հարցն արար գործիշներին շարունակում էր հուզել նաև 20—30-ական թվականներին։ Այդ ժամանակի նրանցից շատերը արարական տարբեր երկրների տարանջատ գոյության փաստը գիտում էին որպես բացասական երկույթ, որպես արևմտյան երկրների գործարքների հետևանք²։ 1930-ական թվականների երկրորդ կեսին Պաղեստինում իրադրության հետագա բարդացումը, այնտեղ ունեցող իրադարձությունների լայն արձագանքն արարական մյուս երկրներում հետագա սրություն հաղորդեցին միջարարական համագործակցություն հաստատելու հարցին։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին արարական երկրների մի միավորում ունենալու արարական ժողովուրդների ձգտումը սկսեց ավելի վառ արտահայտվել

1945 թ. ստեղծված Արարական պետությունների լիգան շատ բանով հենց այդ ձգուման դրսերումն էր: Այս կապակցությամբ պետք է համաձայնել վ. Բ. Լուցիու այն մտքի հետ, որ «... կիդան ծագեց արարական միության նկրատող շարժման շնորհիվ, որի ծագումը կախված չէր օտարերկրյա այս կամ այն տիրության ցանկություններից ու պլաններից»³: Արարական միության զաղափարի իրականացումը, սակայն, պայմանավորված էր նաև մի շարք այլ գործոններով, որոնցից մասնավորապես կարեռ էին ինչպես արարական առանձին, այնպես էլ երևմտյան երկրների վերաբերմունքն այդ հարցի նկատմամբ: Նշանակություն ունեին նաև արարական երկրներում ազգային-ազատագրական շարժման ու Մերձավոր արևելքում ռազմական գործողությունների ընթացքին առնչվող հանգամանքները:

Արար առաջին քաղաքական գործիցը, որ միության իր ծրագիրը իրականացնելու համար փորձեց օգտվել երկրորդ համաշխարհային պատերազմի ռազմական իրադարձություններից, Անդրհորդանանի էմիր Արդալյանը էր: Յանկանալով զուտ քաղել Ֆրանսիայի պարտությունից, նա 1940 թ. հունիսին առաջ քաշեց Սիրիան և Անդրհորդանանը մեկ պետության մեջ միավորելու դադափարզը: Այս հարցի մասին նա հուշագրեր ուղարկեց անգլիական կառավարությանը, որոնցում ի միջի այլոց նշվում էր, որ իր գլխավորությամբ ստեղծվելու նորաստեղծ պետությունը կլինի Անգլիայի հուսալի դաշնակիցը⁴: Մերձավորարևելյան և մյուս ռազմական թատերաբեմերում ժայրանեղ լարված վիճակում գտնվող Անգլիան, իհարկե, տվյալ պահին ի վիճակի չեր որևէ ձևով աշակել էմիրի նախագծին, ինչը և պայմանավորեց պատերազմի ընթացքում կատարված արարական միության «հաշիմյան» առաջին առաջարկի ձախողումը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին Արարական արևելքում իրենց քաղաքականությունն աշխատացրեցին Առանցքի երկանքը: 1940 թ. հոկտեմբերի 23-ին նրանք շշարունակելով արարական ժողովուրդներին խարելու իրենց քաղաքականությունը..., հանդես եկան անգլիական տիրապետության դեմ ուղղված արարական ազատագրական շարժումը պաշտպանելու և արարական երկրների անկախու-

թյունը ճանաշելու իրենց պատրաստակամության վերաբերյալ հասուկ հայտարարությամբ»⁵: Առանց այդ էլ արարական միջավայրում բավականին ուժեղ հակաանզիքական տրամադրությունները թուլացնելու, Արևելյան Միջերկրականի շրջանում ու Հյուսիսային Աֆրիկայում իր դիրքերը գոնս մասնակիորեն բարելավելու 1941 թ. դարնանը Իրաքում իր ռազմական միջամտության տհաճ տպավորությունը մեղմելու⁶, ինչպես նաև Առանցքի երկրների վերահիշյալ հայտարարության ներգործությունը թուլացնելու նպատակով անզըմիական կառավարությունը ստիպված էր որոշ փոփոխություն մտցնել իր արարական քաղաքականությունում: Դրա արտահայտությունն էր արարական միության գաղափարի պաշտպանությամբ հանդես դալու վերաբերյալ անզիքական կարիքածությունը 1941 թ. մայիսի վերջի որոշումը: Այն ընդունելիս կոնդունը այլընտրանք շուներ, քանի որ որևէ այլ ձեռք նա չեր կարող Արարական արևելքում հաջողությունների հասնել: Քաղաքական նոր զիծը Անզիքային հնարավորություն էր ընձեռում արարական միության գաղափարը յուրովի իրագործելու միջոցով ոչ միայն Մերձավոր արևելքում ընդարձակել իր ազդեցության գոտին, այլև որոշակիորեն բարեզարդել ու հրապուրիչ դարձնել իր արարական քաղաքականությունը: Անզիքական այս նոր մոտեցումը, իհարկե, կարեոր էր արարական երկրների մի միավորում ստեղծելու գործում: Սակայն, ինչպես նշում է Ա. Տարբինը, սիսակ կլիներ Անզիքային մատնանշել որպես արարական ապագա միության նախաձեռնող⁷: Այս առումով զիպուկ է նկատել Վ. Բ. Լուցկին. «Հասկանալով, որ (արարական երկրների միավորմանն ուղղված—Ն. Կ.) շարժման դեմ բացահայտ պայքարը լոկ կթուլացնի իր դիրքերն Արարական արևելքում, Անզիքան որոշեց աշակեցել այդ շարժմանը, որպեսզի այն իր վերահսկողության ներքո պահի...»⁸

1941 թ. մայիսին կոնդունի արարական քաղաքականության հետ առնչվող հարցերը քննարկվեցին անզիքական զեկավար շրջաններում: Արտաքին գործերի մինիստր Ա. Իդենին ուղղված մայիսի 19 թվակիր նամակում վարշապետ Ռ. Զերմին առաջարկում էր իրն Սառուի զիքավորությամբ ստեղծել «Արարական խալիֆայություն», որը կընդուրկեր Սառու-

յան Արարիան, Իրաքը, Անդրհորդանանը և Պաղեստինը՝
«Խալիֆայությունում» Հաստատվելու էր Հրեական «ինքնա-
վար մի անկախ միավոր», որն իրավունք էր ունենալու նաև
Հրեաների ներդադիր կազմակերպել։ Ֆորին Օֆիսի մասնա-
գետները, սակայն, Զերիլի պլանը ռեալ չէին Համարում։
Նրանց պատրաստած «Անզիփի» արարական քաղաքականու-
թյունը փաստաթղթում, որը մայիսի 27-ին Ա. Իդենը ներ-
կաբացրեց կառավարությանը, խոսվում էր ոչ թե «Արարա-
կան խալիֆայության» այլ՝ «Փեղերացիայի» մասին։ Նկատե-
ունենալով Հաշիմյանների և սառույանների Հակամարտու-
թյունը, նախատեսվող «Փեղերացիայում» այդ տոհմերից
մեկի կամ մյուսի առաջնորդության Հարցը շրջանցվում էր։
Միաժամանակ կարծիք էր Հայտնիվում, որ «Փեղերացիայի»
միջոցներում կլինի լուծել Պաղեստինի Հարցը¹⁰։ Հարկ
է նշել, որ այս փաստաթղթի հիմնական դրույթները Հաշիփ
առնվեցին կառավարության կողմից։ Դա պարզորոշ երևում
է Հատկապես 1941 թ. մայիսի 29-ի Ա. Իդենի Հայտարա-
րությունից, որում ասված էր. «... Արար շատ մտածողներ
արարական ժողովուրդների Համար ցանկանում են ավելի
բարձր աստիճանի մի միություն, քան այն, որից նրանք այժմ
օգտվում են։ Միությանն ուղղված իրենց ջանքերում նրանք
հույս ունեն ստանալ մեր աշակցությունը։ Մեր բարեկամների
այս կոչը պետք չէ անպատճախան մնալ. ինձ բնական և ար-
դարացի է թվում, որ արարական երկրների միջն մշակութա-
յին, տնտեսական և քաղաքական կապերը ամրապնդվեն
նորին Մեծության կառավարությունը Համաձայն կլինի ցան-
կացած նախագծի, որը Համբուհնանուր Հավանության կար-
ժանանա»¹¹.

Ա. Իդենի Հայտարարության ընդհանուր առմամբ տար-
տամ բնույթը պայմանավորված էր ոչ միայն զիտակցություն
այն իրողության, որ ցանկացած կոնկրետ նախագիծ իր
«անզիփական» ծագման պատճուռով դժվար թե Հաջողություն
ունենար։ Կարենոր էր նաև այն, որ 1941 թ. կեսին Մերձավոր
արևելքի տակամին շրյուրեղացած քաղաքական իրավիճա-
կում, երբ զեր անորոշ էր Միրիայի և կիրանանի քաղաքական
ապագայի Հարցը, այնքան էլ կայուն չէին Անզիփի դիրքերը
ծգիպոտում, պարզված չէր Սառույան Արարիայի դիրքորո-

շումը արարական միության նկատմամբ, որևէ կոնկրետ նախադիքի առաջքաշումը վաղաժամ կլիներ,

Լոնգոնի քայլն Արարական արևելքում ընդհանուր առմամբ անդրադարձներ չունեցավ։ Միայն Անդր՛որդանանի էմիր Արդալյան արձագանքոց դրանու նրա կառավարությունը 1941 թ. հունիսի 1-ին որոշեց պատմական Սիրիայի բոլոր մասերի՝ Պաղեստինի, Սիրիայի, Լիբանանի և Անդր՛որդանանի միավորման հարցով պաշտոնակես դիմել անզինական կառավարությանը¹², իր ծրագրի իրականացումը գործնականորեն էր ամենի դյուրացնելու նպատակով Արդալյանը մինչ այդ նույնիսկ առաջարկել էր, որ անդր՛որդանանյան Արարական էնգաներ Անդրիայի և Ազատ Ֆրանսիայի զորամասերի հետ միասին մասնակցի 1941 թ. ամռանը Սիրիայում վիշիականների դեմ մզգող գործողություններին։ Հաշվի առնելով Ազատ Ֆրանսիայի, Սաուդյան Արարիայի և սիրիական որոշ քաղաքական գործիշների ընդդիմադրությունը Արդալյանի ծրագրին, Անդրիան շպաշտապանեց այս Հակառակ դրան, Արդալյանը շդադրեցրեց լոնգոնի աշակցությունը ձեռք բերելու իր փորձերը 1941 թ. նոյնմերին և 1942 թ. հունվարին «Մեծ Սիրիայի» հարցով նա նորից դիմեց Անդրիային¹³։ Արդալյանի նմանօրինակ համառության պատճառն հավանաբար այն էր, որ նա իրազեկ էր «Մեծ Սիրիայի» ծրագրի նկատմամբ անզինական բարձրաստիճան որոշ գործիշների դրական վերաբերմունքին և հույս ուներ իր հուշագրերի միջոցով հասնել վերջիններիս տեսակենտներն Անդրիայի արարական քաղաքականության հիմքում դնելուն։

Ա. Իդենի հայտարարությունից հետո անդրիական դեկավար մարմիններում քննարկվեցին նոր քաղաքական գծի իրականացման հետ կապված հարցերը։ Սեպտեմբերի 29-ին Ա. Իդենի նախագահությամբ տեղի ունեցած միջգերատեսչական մի ժողովում, որին մասնակցում էին գաղութների մինիստր և Մոյնը, Հնդկաստանի գծով պետական մինիստր էյմրին, Մերձավոր արևելքի հարցերի մինիստր լիբրլտոնը և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, այն կարևոր հետևողայուն արվեց, որ արարական երկրների ֆեղերացիա ստեղծելու գաղափարն իրականանալի չէ¹⁴։ Հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Անդրիայի արարական քաղաքականության


Հարցն ավելի մտնբամասն քննարկվեց Մերձավոր արևելքի պետական կոմիտեում։ Կարինեաց հաստատեց միջզերատեսչական այդ մարմնի կողմից կազմված զեկուցագիրը, որը դրվելու էր Անգլիայի արարական քաղաքականության հիմքում։ Զեկուցագիրը հաստատելով, որ արարական երկրների ֆեդերացիայի գաղափարն ընդունելի պետք է համարել այն դեպքում միայն, եթե այն կօգնի լուծելու Պաղեստինի հարցը, մատնանշում էր նաև ֆեդերացիայի գաղափարն իրազործելու դժվարությունը՝ կապված դինաստիական հակամարտությունների, Ֆրանսիայի զիրքորոշման և միջդավանական հակասությունների հետ։ Միաժամանակ այն մտավախությունն էր հայտնվում, որ արարական միությանը նպատակամղված շարժումն հետազյում կարող է փոխակերպվել հականդլիական շարժման Հուշագիրն ուներ հավելված, որում բերված էին արարական ֆեդերացիայի մի քանի տարրերակներ՝ «Մեծ Սիրիայի» նախագծից մինչև ասիական մայր ցամաքի արարական երկրների միավորման նախագիծ¹⁵։ Ուշագրավ է, որ բոլոր նախագերը վերաբերում էին միայն ասիական մայր ցամաքի արարական երկրներին։ Եղիպատոսի բացակայությունը բացատրվում է նրանով, որ կոնդունը, ինչպես վկայում էն Կաճիրեռում անգլիական գեուզան էնմուսոնի դեռ նախապատերազմյան հուշագրերը, վախենում էր, որ արարական և մահմեդական աշխարհում Եղիպատոսի գերի աշխուժացումը կարող է նրան դարձնել ուղիղութիւն ժողովում նրանուն իմային բարեկարգությունը առաջնորդը ուղղակի իմայերիալիզմից։ Բացի դրանից, անգլիական որոշ քաղաքադեստներ գերազանցատում էին «Փարավոնական» գործոնի դերը եղիպատական իրականությունում, խոսում նրա «իրականում արարական երկիր շնչնելու» մասին¹⁶։ Այսպիսով, Անգլիան, հավանաբար, տուրք էր տալիս նաև ասիական արարների որոշ շրջաններում արմատացած այն տեսակետին, թե եղիպատացիները մաքուր արարներ չեն։

Անգլիական գործիչների ցանկությանն հակառակ, սակայն, Եղիպատոսը ոչ միայն պարզապես մասնակցեց, այլև կարևորագույն գեր կատարեց արարական երկրների մի միավորում ստեղծելու գործում։ Այս հարցում ակտիվություն դրսերեց 1942 թ. փետրվարին Եղիպատոսում իշխանության դրույթ եկած վաֆդական կառավարությունը։ Վեցինս 1942 թ.

մայիսի 31-ին արարական տարբեր երկրների ներկայացուցիչներին հրավիրեց միջազգարական հարաբերությունների բարելավման շուրջ խորհրդակցելու¹⁷: Հունիսին Կահիրը այցելեցին և վարչապետ Մուստաֆա Նահճասի հետ արարական միության հարցի շուրջ բանակցություններ վարեցին լևանույան հայտնի քաղաքական գործիչներ՝ կիրանանի ապագա պրեզիդենտ Բիշարա Խուրին և Սիրիայի ապահով վարչապետ Զամիլ Մարզամը: Բանակցությունների ընթացքում Բիշարա Խուրին շեշտեց, որ կիրանան արարական մյուս երկրների հետ կամացագործակցի միայն իր անկախության և տարածքային ամբողջականության նաև շահմազման հիմքի վրա: Մարզամն հավատիացրեց, որ Սիրիան պատրաստ է այդ հիմքի վրա համագործակցել կիրանանի հետ¹⁸: Խորհրդակցական ընույթ կրող այս բանակցությունների նշանակությունն այն էր, որ զրանք նշանավորում էին արարական այնպիսի քաղաքական խմբագործմանների մտսնակցությունն արարական միություն ստեղծելու գործին, որոնց տեսակետներն ավելի շուշա հանգում էին արարական միությունը միջպետական մակարդակով իրականացնելուն:

Նույն թվականի գեկոնմբերին Կահիրը այցելեցին Իրաքի գահապահ Աբդուլ Բական ու վարչապետ Խուրի Սահիդը և բանակցություններ վարեցին նահճասի, Մերձավոր արևելքի գծով անզիփական մինիուր Ռ. Քեյզիի, ինչպես նաև արարական տարբեր երկրների Կահիրեառ գտնվող քաղաքական գործիչների հետ: Բանակցությունների ընթացքում նուրի Սահիդն առաջ քաշեց արարական միության իր ծրագիրը: Ռ. Քեյզին ցանկություն հայտնեց նուրի Սահիդի տեսակետներն ավելի խորը ուսումնասիրելու համար ունենալ երա նախագծի դրավոր շարադրանքը¹⁹: 1943 թ. հունվարին նուրի Սահիդն իր նախագիծն ուղարկեց Ռ. Քեյզիին: «Բարեկեր մահիկը անոմով հայտնի այդ նախագծի համաձայն Սիրիան, կիրանանը, Պաղեստինը և Անդրհորդանանը միավորվելու էին մեկ պետության մեջ, որի բնակիչներն իրենք պիտի որոշեին երկրի կառավարման ձևը՝ միապետություն կամ հանրապետություն, միացյալ կամ ֆեդերալ մի պետություն: Սիրիական միասնական պետությունն Իրաքի հետ կազմելու էր «Արարական միություն կամ Արարական լիգա», որին կարող էին միանալ

4/28/00



այլ արարական երկրները: Այդ կազմավորումն ունենալու էր Խորհուրդ, որում հերթով նախագահներու էին անդամ երկրների ղեկավարները: Խորհուրդը պատասխանառու էր լինելու քաղաքական, ֆինանսական, ինչպես նաև հաղորդակցությունների, սովորությների, ազգային փոքրամասնությունների իրավունքներն ապահովելու և լուսավորության համակարգի հետ կապված հարցերում: Միասնական սիրիական պետությունում հրեաները և մարոնականները օգտվելու էին կիսանիքավարությունից: Նախատեսվում էր Երուսաղեմ քաղաքում պայմաններ ստեղծել ապահովելու համար կրոնական արարողությունների կատարման անվտանգությունը, որի վերահսկումն իրականացնելու համար կազմվելու էր Երեք կրոնների ներկայացուցիչներից բաղկացած մի հանձնաժողով: Նախադում նշվում էր, որ նպատակահարմար չէ եղիստուսի և Սառույան Արարիայի ի սկզբանե անդամակցությունն Արարական միությանը²⁰:

Նորի Սահիդի նախադում նախատեսվող Արարական լիգան կամ միությունը միջպետական մի կազմակերպություն էր լինելու նրա մշտական Խորհուրդը ոչ թե կոչված էր համագործու անդամ երկրների քաղաքականությունը արտաքին քաղաքական, ֆինանսական և այլ մարզերում, այլ ուղղակի տպատասխանառու էր դրանց համար նախադում ոչինչ չէր ասվում Միությանը կամ կիդային անդամագրվելուց հետո մասնակից երկրների անկախության պահպանման մասին, այլ ընդհակառակը, միության հասնելու համար սովորենության դուռքերումը դիտվում էր որպես «անհրաժեշտություն»: Իր հուշագրում խոսելով ստեղծվելիք միավորման մասին, նորի Սահիդն հաճախ օգտագործում էր ոչ թե (ձևական) Կիդա բառը, այլ խոսում էր ուղղակի միության (ձևական) մասին: Կարելի է ննիադրել, որ կիդա տերմինը երբեմն օգտագործվում էր միայն բացարձակ միության գեմ տրամադրված շրջանակների գոյնությունը թուացնելու նպատակով: Ինչ վերաբերում է ստեղծվելիք միավորման Խորհրդում գերիշխանության հասնելու հարցին, ապա դրան, ինչպես 1943 թ. սկզբին իրաքյան իրազեկ շրջանակներից իրն Սառույան հասած լուրերն էին վկայում, Սահիդն ուղում էր հասնել միացյալ Սիրիայում ինքնակալական վարչակարգ հաստատելու և

սիրիական գահն Իրաքի գահապահ Արդուլ Խլաշին տրամադրելու միջոցով²¹: Ի սկզբանե նպիտոսի և Սառուցյան Արարայի մասնակցությունը նպատակահարմար չհամարելը նույնական պիտք է բացատրել իրայի անվան տակ պատմական Սիրիան և Իրաքն ընդգրկող արաբական մի նոր պետություն ստեղծելու նուրի Սահդի միատումով: Այս նախագծին անդրադարձած շատ հեղինակներ (Հ. Թումա, Ա. Գ. Զիրինա, Ա. Տարբին) չեն նկատել դրանում նախատեսվող կիզայի ոչ թե միջպետական, այլ համապետական էությունը: Հարցին ճիշտ են մոտեցել Ն. Հ. Հովհաննիսյանը և Ռ. Մակղոնալզը: Նրանցից առաջինը ինչպես այս, այնպես էլ Էմիր Արդալլահի «Մեծ Սիրիայի» ժրագիրը զիտել է որպես Արաբական արևելքում մի «նոր պետական միավորում ստեղծելու» փորձ²²: Իսկ Ռ. Մակղոնալզը այն միտքն է հայտնել, որ նուրի Սահդը «իր ալերարական լինգա» տերմինով ավելի շատ նկատի ուներ արաբական երկրների քաղաքական մի կոնֆեղերացիա, որը վերջ ի վերջո կդառնար սոսիերեն քաղաքական ռեալությունը²³:

Սիրիայում և կրանանում սահմանադրությունների վերականգնման և առաջիկայում ընտրությունների անցկացման վերաբերյալ Ազատ Ֆրանսիայի իշխանությունների 1943 թ. սկզբին կատարած հայտարարությունն ավելի հնարավոր և ուստի դարձրեց այդ երկրների գործուն և արդեն պետական մակարդակով մասնակցությունն արաբական միության զաղափարի իրազերմանը: Միաժամանակ զգալիորեն բարելավվեց Մերձավոր արևելքի ռազմաքաղաքական ընդհանուր իրազերմանը, որն արդյունք էր երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում սկսված արմատական բեկման: Այս բոլորը, ինչպես նաև արաբական համագործակցության հարցում նպիտոսի աշխույժ դիրքորոշումը, ավելի նապատակում հոգ ստեղծեցին միշարարական հարաբերություններն աշխուժացնելու համար: Այս պայմաններում անզիրական կառավարությունը երկրորդ անգամ հանդես եկավ արաբական միության հարցի վերաբերյալ: 1943 թ. փետրվարի 23-ին Ա. Իդենը հայտարարեց, որ «Անդիքան շարունակում է համակրանքով վերաբերել արաբների տնտեսական, մշակութային և քաղաքական միությանն ուղղված շարժմանը»: Նշելուց

Հետո, որ միության վերաբերյալ ամեն մի առաջարկություն պետք է ներկայացվի արարների կողմից, նա շեշտեց, որ ցարդ չի մշակված համընդհանուր հավանության արժանացած մի նախագիծ²⁴: Այլ խոսքով, Ա. Իդենը փաստորեն հրաժարվում էր ոչ առանց Անդիխայի աշակեցության մշակված սահմագիծը հրապարակայնորեն պաշտպանելուց: Հունգրոնում չէին կարող հաշվի շառնել, որ դրա դեմք հանդես էին գալիս սիրիական և լիբանանյան ժողովրդական զանգվածները, Եղիպտոսը և Սաուդիան Արաբիան, ինչպես նաև ԱՄՆ-ը և Ֆրանսիան²⁵, Միաժամանակ Ա. Իդենը, բոլորովին էլ ոչ պատճեականորեն, իր հայտարարությունում առաջնային տեղ էր հատկացնում տնտեսական համագործակցությանը: Բայն այն է, որ լոնգոնն սկսել էր ավելի շատ մտահոգվել արաբական քաղաքական համագործակցության՝ իր համար վնասակար հետևանքներով և փորձում էր առայժմ այն սահմանափակել տնտեսական ու մասսամբ նաև մշակութային ոլորտներում: Այս առողջով հատկանշական է Անդիխայի Մերձավոր արևելքի մինիստրության արտակարդ աշխաւությունը միշտարաբական համագործակցության հենց տնտեսական և մշակութային ասպարեզներում և նրա կրավորականությունը արարների շրջանում քաղաքական համագործակցություն հաստատելու հարցում:

Արաբական արևելքում ստեղծված նոր իրավիճակից փորձեց օգտվել նաև Անդրհորդանանը: Եվ Իդենի 1943 թ. փետրվարյան հայտարարությունը, և Միրիայում ու Լիբանանում քաղաքական զարգացումները Արդալլահին առիթ էին ընձեռում մի անգամ ևս փորձել իրականացնելու «Մեծ Միքայիլ» ծրագիրը: Էմիրը 1943 թ. ապրիլին անդիխական կառավարությանն ուղարկեց «Մեծ Միրիայի» ծրագրի և արաբական միության վերաբերյալ մի հուշագիր²⁶: Ըստ Արդալլահի նախագծի պատմական Միրիայի բոլոր մարզերը միավորվելու էին մեկ պետության մեջ, որը լինելու էր կամ սահմանադրական միապետություն (առաջին տարբերակ), կամ պաշնակցային պետություն (երկրորդ տարբերակ): Երկու գեպրում էլ պետության զեկավարը լինելու էր Արդալլահն ինքը: Եթե Լիբանանը չմիանար սիրիական միացյալ պետությանը, ապա այն տարածքներում, որոնց և ինքնավար կ-

բանան լեռան տարածքի միավորմամբ առաջին համաշխարհային պատերազմից հետո ստեղծվել էր Մեծն կիրանանի պետությունը, հանրաքաղաքական պիտի անցկացվեր՝ որոշելու համար նրանց կիրանանի կազմում մնալու կամ «Մեծ Սիրիային» միանալու հարցը²⁷: Իսկ եթե կիրանանը միանար «Մեծ Սիրիային», ապա երբեմնի կիրանան լեռան շրջանակներում և Պաղեստինի մի քանի հատվածներում նախատեսվում էր հաստատել «Հատուկ վարչակարգ»: Սիրիական միացյալ պետությունը Անդրիայի հետ պիտի կնքեր 1936 թ. անգլո-եղիպատական և 1930 թ. անգլո-իրաքյան պայմանագրերին համանման մի պայմանագիր և իրաքի հետ կազմելու էր արարական մի միություն, որին կարող էին միանալ արարական այլ երկրները ևս: Միության շրջանակներում համակարգվելու էր անդամ երկրների քաղաքականությունը պաշտպանական, ֆինանսական և այլ ասպարեզներում:

1943 թ. սկզբին անց նաև արարական այլ երկրների ակտությունը արարական միության գաղափարն իրականացնելու խնդրում: Արարական լիդայի ապագա բոլոր հիմնադիր անդամներն սկսեցին միմյանց հետ շփումների մեջ մտնել: 1943 թ. մարտին իրաքյան քաղաքական հայտնի գործիչ Զամիլ Մադֆախին այցելեց Կահիրե, Ամման և Զիդյա, որտեղ բանակցություններ վարեց տեղական ղեկավարների համամակել Ծյիալուսի վարչապետ Նահհասն առաջարկեց համարարական կոնքրետ հրավիրել արարական միության հարցը քննելու համար: Սակայն, մինչ այդ, ըստ Նահհասի, անհրաժեշտ էր ավելի մանրամասն ծանոթանալ խնդրի վերաբերյալ յուրաքանչյուր արարական երկրի տեսակետին²⁸: Նույն թվականի մարտի 30-ին Ծյիալուսի արդարադատության մինիստր Սարբի Արու Ալամը վարչապետ Նահհասի անունից հայտարարեց, որ եպիստական կառավարությունը որոշել է արարական միության հարցը քննարկելու համար շփումների մեջ մտնել արարական մյուս կառավարությունների հետ²⁹:

1943 թ. կեսերից միշտարաքական բանակցությունները խիստ աշխատվացան: Հուլիսի 8-ից 13-ը Նահհասն այցելեց Պաղեստին, որտեղ հանդիպումներ ունեցավ տեղական և

սիրիական քաղաքական գործիչների հետ։ Բանակցությունների ընթացքում մասնավորապես քննարկվեց արարական միությանը Պաղեստինի արարների մասնակցության հարցը։ Նահանար Արդալլահից Անդրհորդանան այցելելու հրավեր ստացավ, սակայն ժամանակի սղությունը պատճառաբանելով, այցելու հրաժարվեց³⁰։

Նույն ամսին, Կահիրե մեկնելու հանապարհին, Ամման, Դամասկոս և Բեյրութ այցելեց իրաքի վարչապետ Նուրի Սահը, իր այցելության ընթացքում նա ձգում էր համապատասխան հող նախապատրաստել Շաբրերեր մահեկից ծրադի իրականացման համար, ընդ որում ամեն ինչ անկույզ սիրիական գահը իրաքի գահապահ Արդուլ Էլլահին վերապահելու համար։ Այդ նպատակով Սահին Արդալլահին խորհուրդ տվեց «Ճեռնապահ մնալ սիրիական գահի շուրջ անժամանակ վեճերից» և ավելի շատ ուշադրություն դարձնել Պաղեստինին³¹։ Սիրիական գահի համար հաշիմյան դինաստիայի երկու ճյուղավորումների միջև թափուն պայթար էր մզգում։ Պետք է ննթադրել, որ Սիրիայում հուկիսին, իսկ կիրանանում օգոստոսին անցկացվող պառկամենտական ընտրություններով զրադիված Ըստայան քաղաքական գործիչներն առաջժմ նպատակահարմար շգտան բացահայտորեն հանդես դրաւ նախագծի գեմ, քանի որ Նուրի Սահից Բեյրութում և Դամասկոսում իր վարած բանակցություններից ընդհանուր առմամբ գո՞յ էր մնացել։ Միայն կիրանանի մարոնական շըրշանակներն էին գեմ արտահայտվել նրա նախագծին։

Հուկիսի 31-ից օգոստոսի 5-ը Կահիրեում կարևոր բանակցություններ տեղի ունեցան Նահանարի և Սահիդի միջև։ Դրանց ընթացքում իրաքյան վարչապետն առաջ քաշեց արարական միության երկու տարրերակի։ Ըստ առաջին տարրերակի արարական միությունն ունենալու էր ընդհանուր ժողով, որում միության անդամ երկրները ներկայացվելու էին ըստ իրենց քնակիւթյան թվի և բյուջեի։ Նախատեսվում էր ստեղծել նաև ընդհանուր ժողովին հաշվետու գործադիր կոմիտե, որի որոշումները, անկախ այս կամ այն երկրի այդ որոշման նկատմամբ ունեցած վերաբերմունքից, լինելու էին պարտադիր։ Միությունն ունենալու էր պրեզիդենտ, որն ընտրվելու կամ նշանակվելու էր։ Ըստ երկրորդ տարրերակի, միության ընդ-

Հանուր ժողովում բոլոր անդամ երկրները ներկայացվելու էին հավասար հիմունքներով՝ անկախ իրենց բնակչության թվից և բյուջեից, իսկ ընդունված որոշումները պարտադիր էին լինելու որոշմանը կողմ քվեարկած երկրների համար միայն³²: Սակայն Սահոբի հիմնական նպատակը ոչ թե այս երկու տարրերակներից որևէ մեկը արարական միության հիմքում զնելն էր, այլ՝ իր ռարերեր մահիկի» ծրագրի նը-կատմամբ ռեգիստրուսի աջակցությունն ապահովելը³³: Ընդ որում Սահոբը շեշտը դնում էր իր ծրագրի առաջին մասի՝ «Մեծ Սիրիայի» ստեղծման վրա, հավանաբար ննիթարելով, որ դրա ստեղծումից հետո ռարերեր մահիկի» իրագործումը կընթանա առանց զժվարությունների: Այդ հարցում եղիստ-տական աջակցությանը նա խոստանում էր վարձահատուց լինել՝ Կահիբեին իրավունք տալով հանդես գալու սիրիական միացյալ պետությունում հրեաներին և մարոնականներին ընձեռվելիք առանձնաշնորհների երաշխավորի զերում³⁴: Բա-նակցությունների ընթացքում Եղիստոսն ու Իրաքը պայմա-նավորվեցին հանդես շգալ արարական երկրների միջև որևէ այլ միավորման՝ մասնավորապես սիրիական միացյալ պե-տության ստեղծման դեմ³⁵: Դա բնավ էլ չէր նշանակում, սա-կայն, որ Եղիստոսը հանդես էր գալիս հաշիմյանների ծրադ-րերի պաշտպանի զերում: Բանն այն է, որ ալլալ պահին «Մեծ Սիրիայի» զաղափարին, բացի կիրանանից, սկզբունքո-րեն չէին առարկում պատմաշխարհագրական Սիրիայի մաս կազմող ոչ մի երկրում: Հարցը ոչ թե ընդհանրապես այդ գաղափարի, այլ այն ինչ սկզբունքների վրա, ինչ ձևով և ում զեկավարությամբ իրականացնելու մեջ էր: Այնպես որ Եղիս-տոսի այդ քայլը պետք չէ դիտել որպես զիշողականություն Իրաքի կամ Անդրօրդանանի նկատմամբ:

Նույի Սահոբ և Նահճասը նպատակահարմար գտան արարական միության շուրջ վարվող բանակցություններում ընդգրկել միայն արարական անկախ երկրների և Պաղեստի-նի ներկայացուցիչներին³⁶: Դա թելադրված էր այն իրողու-թյունից, որ օտարերկրյա տիրապետության տակ գտնվող արարական երկրների մասնակցությունը պարզապես հնարա-վոր չէր՝ գաղութացին իշխանությունների ընդդիմադրության հետևանքով: Պաղեստինի համար արված բացառությամբ

Հովհաննես կարծես շեշտում էին արարական աշխարհի համար այդ երկրի առանձնահատուկ նշանակությունը: Մի փոքր առաջ անցնելով նշենք, որ Արարական լիգայի հիմնադիր բոլոր անդամները անկախ պետություններ էին, թևկուղ և նրանցից ումանց (օրինակ Իրաքի) անկախությունը ձևական բնույթուններ: Բացառությունն էր Անդր՛օրդանանը, որը գտնվելով անգվածան մանդատային տիրապետության ներքո, նույնիսկ ձևական անկախությունն չուներ: Հիմնադիր մյուս պետությունների կողմից այդ հանգամանքի «անտեսումը» բացարձությամ է մի կողմից Անդր՛օրդանանի աշխարհապետական անդանցառությունն կարևոր զիրով, իսկ մյուս կողմից իդային Ամմանի իշխանությունների մասնակցությանը Անգվածիայից ընձևով առանձնահատուկ խրախուսանքով:

Սահմանահամաս հանդիպումից հետո արարական համապետակցության շուրջ վարչող բանակցություններում, անշուշտ ոչ-առանց Իրաքի համամտության, առաջատար դեր ունեց կատարել Եղիպատոսը: Բանակցությունների ավարտից հետո հրապարակված Եղիպատա-իրաքյան համատեղ հայտարարություններում նշված էր, որ այսուհետեւ Եղիպատոսի վարչապետ Նահճանը է հանձն առնելու արարական մյուս երկրների հետ միության հարցի շուրջ բանակցություններ վարելու պարտականությունը, ըստ որում արարական ժողովուրդների տեսակետներն ավելի պարզորոշ իմանալու համար հրավիրվելու է հատուկ կոնգրես³⁷:

1943 թ. օգոստոսի 28-ից սեպտեմբերի 1-ը Նահճանը բանակցություններ վարեց Անդր՛օրդանանի վարչապետ Թաւուֆիկ Արուլ Հուղայի հետ: Նախօրենին իր վարչապետին ուղղած հրահանգներում էմիր Արդալլահը նշում էր, որ արարական միությունում Իրաքի ու Եղիպատոսի կողքին մասնաւում պատմաաշխարհապետական Սիրիայի առանձին Երկրներն այնքան թույլ ու անհամապատասխան կլինեն, որ կհարկադրվին կրավորական գիրք դրավել արարական համապետակցության հարցում: Ըստ Արդալլահի այդ հանդամանքը վնասելու էր ընդհանուր գործին, քանի որ արարական միությունում Իրաքի ու Եղիպատոսի կողքին միացյալ սիրիական պետության բացակայությունից արարաները տուժելու էին³⁸, Բանակցությունների ժամանակ Արուլ Հուղան, առաջ-

բաշելով վերոհիշյալ փաստարկները, ձգում էր ամեն կերպ ապացուցել «Մեծ Սիրիայի» ստեղծման անհրաժեշտությունը, սակայն հաշվի առնելով կիրանանում և Պաղեստինում տիրող իրազրության լուրահատելությունը, առաջ էր քաշում առաջմմ միայն Սիրիան և Անդրբորդանանը մեկ պետության մեջ միավորելու ծրագիրը³⁹:

Արաբական երկրների համախմբման հարցի շուրջ բանակցությունների մեջ մտնելով, Բաղդադն ու Ամմանը իրականում ավելի շատ հետամուս էին ոչ թե արաբական ընդհանուր մի միություն ստեղծելուն, այլ իրենց զվարավոր նպատակի իրականացմանը, այն է՝ պատմաաշխարհագրական ամբողջ Սիրիային տիրություն, կամ գոնե նրա մեծ մասն իրենց իշխանությանը ևնթարկելուն: Ընդ որում հաշիմյան դինաստիայի երկու ճյուղերից յուրաքանչյուրը սիրիական տարածքի նկատմամբ իր հավակնությունները համարում էր ավելի օրինական: Այլ էր Եգիպտոսի խողիրը. մասնակցելով արաբական միությանը, նա նպատակ ուներ ընդարձակել իր ազգեցության ոլորտները և դերիշյող դեր ձեռք բերել Արաբական արևելքում: Դրան Եգիպտոսն ուզում էր հասնել առանց սեփական սահմանների ընդարձակման: Հենց վերջին հանգամանքը օրյեւտիվորեն դրդեց 1943 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներից արդեն իսկ իշխանության զվարավում սիրիական և լիբանանյան ազգային դորժիչներին արաբական համագործակցության հարցում Եգիպտոսի հետ հանդիս գալ միացյալ հակառակությամբ:

Ապագա միությանը Սիրիայի և կիրանանի մասնակցության հեռանկարը զգալի ազգեցություն թողեց արաբական համազրորդակցության հարցում Սառույյան Արաբիայի դիրքուուցման վրա: 1943 թ. հովհանք նահհասը Իրն Սառույյին տեղյակ էր պահում իր վարած բանակցությունների ընթացքին և խնդրում էր, թեկուղ սոսկ հաշիմյանների ծավալապաշտությունը կանխելու սիրույն, անդամակցել արաբական միությանը⁴⁰: Սակայն սառույյան վեհապետը մինչև սեպտեմբեր հրաժարվում էր մասնակցել ընթացող բանակցություններին, մտավախ՝ արաբական ապագա միությունում հաշիմյանների թե եղիպտական հավանական զերակայությունից⁴¹: Արաբական ապագա կազմակերպության կազմում Սիրիայի.

կիրանանի, ինչպէս նաև Եմենի ներկայության շնորհիվ Կահի-
ռնի թէ Բաղդազի ու Ամմանի Հավակնությունները դիմակայելու
Հնարավորության առկայությունը, ինչխոսք՝ նաև անգլիական
դործիչների համառ Հորդորները միայն Հնարավոր դարձրեցին
Սառւյան Արարիայի մասնակցությունը միության շուրջ
վարվող նախնական շփումներին: Սեպտեմբեր 24 թվակիր մի
ուղերձով իրն Սառվը նահնասին տեղեկացրեց, որ իր երկիրը
պատրաստ է յասնակցել բանակցություններին: Նա միա-
ժամանակ ընդդում էր, որ արարների միավորումը մի կա-
ռավարության ներքո՝ աննպատճակահարմար է ու անիրա-
զործելի, նկատի ունենալով արևմտյան երկրների դիրքորո-
շումը և իրադրությունը Սիրիայում և Պաղեստինում: Իրն
Սառվը, ամենայն հավանականությամբ անզիացիների խոր-
շըրդով, առաջարկում էր ուշադրությունը կենտրոնացնել
տնտեսական և մշակութային համագործակցության վրա և
խուսափել դոնե մինչև պատերազմի վերջը քաղաքական
հարցեր քննարկելուց⁴²: Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին
Կահիրենում բանակցություններ տեղի ունեցան նահնասի և
Սառվյան Արարիայի ներկայացուցիչ Յուսուֆ Ցասինի միջն
Դրանց ընթացքում նդիպտական կողմը, պաշտպանելով սա-
ռույան տնտեսակետը արարական միության ապահենարունաց-
վածության վերաբերյալ, նշեց նաև քաղաքական մի շարք
հարցերի, այդ թվում պահեստինյան և սիրիական խողիր-
ների քննարկման անհրաժեշտությունը արարական միության
շուրջ վարվող բանակցություններում: Յուսուֆ Ցասինը առաջ
քաշեց ապագա կազմակերպության ստեղծման հետ կապ-
ված հարցերը կոնցրես Հրավիրելուց առաջ նախապատրաս-
տական մի կոմիտենում քննարկելու գաղափարը: Նա առա-
ջարկեց այդ կոմիտեի նիստերն անցկացնել Մերքայում: Զա-
ռարկելով այդպիսի մի կոմիտեի ստեղծման դեմ, նահնասը
շնամածույնց այն Մերքայում հրավիրելու մտքի հետ, քանի
որ դա կարող էր մտավախություններ առաջացնել Իրաքում
և քրիստոնյաների շրջանում⁴³:

Նդիպտոսում գտնվելու ընթացքում Յուսուֆ Ցասինը ձըշ-
տեց նաև ԱՄՆ-ի կառավարության դիրքորոշումն արարական
միության հարցի վերաբերյալ: Կահիրենում ամերիկյան դես-
պանորդ Քիրքն իր կառավարության հետ խորհրդակցելուց
26

Հետո սառւպականն ներկայացուցչին տեղեկացրեց, որ ԱՄՆ-ը դրականորնն է վերաբերում արարական միության գաղափարին: Քիրքն ավելացրեց, որ նախընտրելի է այդ ուղղությամբ առաջին քայլերը ձեռնարկելով ոչ թե քաղաքական, այլ մշակութային և տնտեսական ասպարեզներում⁴⁴: Ծիշտ չեր լինի, ստկային, ամերիկյան նման դիրքորոշումը դիտել որպես նույն հարցի նկատմամբ անզվիական տեսակետի հետ համեստաշնելու դաշնակցային պարտքի արտահայտում: ԱՄՆ-ի այս քայլը աղելի շուտ պայմանավորված էր Վաշինգտոնի այն մտավախությամբ, որ արարական ապագա միության քաղաքական թերումից կարելի է միայն Արարական արևելքում Անգլիայի ազգեցության հետագա աճ ակնկալել:

Մերձավոր արևելքում բավական ազգեցություն ունեցող արևմտյան մյուս երկիրը՝ Ֆրանսիան, նույնպես կողմ էր արարական համագործակցությունը տնտեսական և մշակութային ոչորաններով սահմանափակելուն: Սակայն արարական միության ֆրանսիական և անզվիական նախագծերի նմանությունը միայն այսքանն էր: Նախ ֆրանսիական իշխանությունները, ինչուիս երեսում է պատերազմի ընթացքում երկար ժամանակ կանատում (Սիրիայում և Իրանանում) Աղատ Ֆրանսիայի ոլխավոր պատգամավորի կարևոր պաշտոնն զրագեցրած գեներալ Կատրուի արտահայտած նկատառումներից, ցանկալին իրականի տեղ ընդունելով ենթադրում էին, որ արարական ապագա միությունում նգիպտոսն ու Իրաքը չեն ընդգրկվի⁴⁵: Հաշվի առնելով արարական միասնության գաղափարի լայն ժողովրդականությունը Սիրիայում, Կատրուն աննպատակահարմար էր համարում վերջինիս արարական համագործակցությունից մնելուսացնելու փորձ անելը: Ավելին, նա կարծում էր, որ աշխարհագրական, պատմական և ինտելեկտուալ գործոններից ենելով, Սիրիան արարական միությունում զլխավորող դեր կկատարի: Ըստ Կատրուի, այդ միության կենտրոնը կլիներ Դամասկոսը: Այս բոլորի հետ մեկտեղ, սակայն, Սիրիան շարունակելու էր մնալ Ֆրանսիայի ազգեցության ներքո: Ինչ վերաբերում է կրանանին, ապա ենթադրվում էր նրան ընդգրկել արարական միությունում⁴⁶: Ֆրանսիական այս հավակնութ ծրագրումները այդպես էլ մնացին թղթի վրա: Լեանտի երկրներում ծավալված ազ-

գային-աղատագրական շարժման հետևանքով ֆրանսիական մանդասի վերաբերյալ Հոդվածների ջնշումը սիրիական և լիբանանյան սահմանադրություններից, ինչպես նաև այդ երեքը հայրենասիրական ուժերի իրենց երկրների ազգային անկախության ամրապնդման ուղղությամբ ձեռք բերած հաջորդ հաջողությունները այն աստիճան թուլացրեցին Ֆրանսիայի զիրքերը և անտառում և ընդհանրապես Արաբական արևելքում, որ Փարիզը փաստորուն ի վիճակի շեր որևէ ձևով աղեցություն դործել արաբական միության գաղափարի իրագործման ընթացքի վրա:

1943 թ. հոկտեմբերի 26-ից նոյեմբերի 3-ը Ալեքսանդրիայում և Կահիրեամ կարևոր բանակցություններ տեղի ունեցան նահանջման և Սիրիայի վարչապետ Սաադալլա Զարրիի ու արտաքին գործերի մինիստր Զամիլ Մարդամի միջև։ Մինչ այդ արաբական միության հարցի շուրջ սիրիական կողմը հոկտեմբերի 10-ին Եթորայում խորհրդակցել էր նաև լիբանանյան ներկայացուցիչների հետ։ Եղիպատա-սիրիական բանակցությունների ընթացքում Դամասկոսն իր պատրաստակամությունը հայտնեց անդամակցել արաբական ապագա միությանը, անկախ այն բանից, թե այն ինչ ձևով կիրականացվի՝ կենտրոնացված պետության, միշտարաբական միկազմակերպության, թե որևէ այլ ձևով։ Սաադալլա Զարրին տեղեկացրեց, որ Սիրիան պատրաստ է արաբական մյուս երկրների հետ համագործակցություն հաստատել անխստիր բոլոր ասպարեզներում, այդ թվում՝ նաև քաղաքական⁴⁷, նամամամանակ նշեց, որ իր կառավարությունը կողմնակից է «Մեծ Արիիայի» ստեղծմանը, սակայն այդ միավորումում պահպանելով հանրապետական վարչակարգը որպես հիմք և Դամասկոսը իրու մայրաքաղաք»⁴⁸։ Սիրիական կողմը հայտնեց, որ ինքը ճանաչում է լիբանանի անկախությունը և տարածքային ամրողականությունը, պայմանով, որ ուկրանանը պահպանի իր անկախությունը, արաբական կողմնորոշումը, Սիրիայի ու նրա (լիբանանի—Ն. Ա.) միջն հաստատվեն ամուս տևողական կապերը⁴⁹։ Սիրիան պաշտպանեց արաբական ապագա միությունն անկախ արաբական երկրներով սահմանափակելու առաջարկը, սակայն նշեց վարչող բանակցություններում պահեստինյան արաբական կուսակ-

28

ցությունների մասնակցության անհրաժեշտությունը, Միության հարցում սիրիական զիրքորոշման առանձնահատկությունն այն էր, որ նա միջավետական մակարդակը չէր համարում արարական միության իրականացման միակ ձևը: Միրիան կողմնակից էր միջարարական համագործակցությունն էլ ավելի խոր հիմքերի վրա գնելուն, ընդուակ մինչև արարական միացյալ պետական միավորում ստեղծելուն: Այս առումով էլ պետք չէ որպես սոսկ հայտարարություն ընկալել Սաազալա Զարբիի այն միտքը, որ «Սիրիան կհրաժարվի իր երկընքում իր զրոշակից ավելի բարձր պարզել մի այլ զրոշ, բացի արարական միության դրոշից»⁸⁰: Նմանօրինակ զիրքորոշումը պայմանավորված էր Սիրիայում արարական միության զաղափարի անհամեմատ ավելի մեծ ժողովրդականությամբ, ովք սակայն, Սիրիան պատրաստ էր գնալ միության ոչ ամեն զնուի: «Մեծ Սիրիայի» նախագծին իրենց համամտությունը խիստ սկզբունքայնորեն պայմանավորելով երկրի հանրապետական վարչակարգի պահպանման պահանջով, սիրիացիները զրուորում էին իրենց վճռականությունը՝ որևէ կենտրոնացված միության նախագիծ պաշտպանելու այն գելքում միայն, եթե այն իրականացվեր որոշակի դիմուկը առականական սկզբունքների հիման վրա: Հարեւ է շեշտել, որ Դամասկոսի նման զիրքորոշումը շատ բանով պայմանավորեց անզուհաշիւյան «Մեծ Սիրիայի» և «Բարեեր մահիկի» նախագծերի ձախողումը:

Այդ նախագծերի իրականացմանը դեմ էր նաև դրանց ոլորտը ներքաշվելու համար հայտանշված արարական մյուս երիտասարդ հանրապետությունը՝ Լիբանանը: 1944 թ. հունվարին վարչապետ Ռիադ Սուլիմ և նահանգի միջև կայացած քանակցությունների ընթացքում լիբանանյան կողմը շեշտեց, որ Լիբանանը պատրաստ է ամենալայն քաղաքական, տրնտեսական և մշակութային համագործակցություն հաստատել արարական մյուս երկրների հետ միայն իր անկախության պահպանման հիմքի վրա: Լիբանանի այսպիսի զիրքորոշումը կանխորոշված էր 1943 թ. սեպտեմբերի ազգային ուխտով, որի արտաքին քաղաքական կարենոր զրույթներից մեկը երկրի անկախության հիմքի վրա արարական մյուս պետությունների հետ կապերի ընդլացնմանն ու զարգացմանն էր վերա-

բերումն։ Ռիադ Մոլչը առաջ քաշեց այն տեսակետը, որ միջարարական համագործակցության ծավալման համար առաջնային նշանակություն ունի արարական երկրներում արևմտյան ազգեցության թուլացումը⁵², կիրանանյան այս տեսակենտր, ինչպես նաև 1944 թ. փետրվարին եղիպտա-եմենցան բանակցությունների ժամանակ Եմենի արտահայտած ցանկությունը՝ միջարարական համագործակցությանը տարածեն նաև արարական երկրների դեմ ուղղված ազգեսիաների դեմ պայքարելու ուղղությամբ, ընդունվելու դեպքում կապաստենին ստեղծվելիք միությունը էլ ավելի արդյունավետ և օգտակար դարձնելուն, ինչպես և կիրանանը, Եմենը նույնպես հանդես էր գալիս արարական համագործակցությունը միջպետական մի կազմակերպության միջոցով հաստատելու օգտին⁵³։ Մասնակցելով արարական միության շուրջ վարչող բանակցություններին, Եմենը ցանկանում էր դուրս գալ երկարամյա միջազգային մեկուսացումից և ձգտում էր դրան հանճել ավելի շուրջ համագործակցելով արարական, քան արևմտյան երկրների հետ կիրանանն իր հերթին հույս ուներ արարական միության միջոցով ամրապնդել իր ազգային անկախությունը և այն օգտագործել արարական մյուս երկրների հետ շահավետ տնտեսական կապեր հաստատելու համար։

Եղիպտա-Եմենյան խորհրդակցություններով արարական միություն ստեղծելու դորում ավարտվեց 1943 թ. ամռանը եղիպտա-իրաքյան բանակցություններով սկսված մի կարևոր փուլ։ Այն որակական մի նոր աստիճան էր նշանավորում արարական միությանն հանճելու ճանապարհին։ Առաջին անգամ լինելով արարական համագործակցության հարցը քննարկվում էր միջպետական մակարդակում։ Բանակցությունների ընթացքում պարզ դարձավ, որ դրանց մասնակից յոթ արարական երկրների միշեն միությունն հնարավոր է իրագործել ուղիղությամբ միջազգային մի կազմակերպության ձևով միայն։ Արարական աշխարհում ձևավորված կամ ձևավորման ընթացքում գտնվող առանձին պետությունների, դրանց միշեն զոյլություն ունեցող հակասությունների ու զարգացման մակարդակների տարրերություններում համարա-

բական միությունն իրագործելու մի ուրիշ այլընտրանքային տարրերակ չկար:

Արարական միության շուրջ վարպետ բանակցությունների ընթացքում և դրանից հետո անզիփական ղեկավար շըրշաններում շարունակում էին քննարկել Անզիփայի արարական քաղաքականության հետ կապված հարցերը: Խնչանական էր նրանում է Ա. Գոմայի շրջանառության մեջ դրած նյութերից, 1943 թ. կեսերից Անզիփային Արարական արևելքում ամենից շատ հույսող խնդիրներից մեկը պաղեստինյանն էր Անզիփական կարբինետի որոշմամբ 1943 թ. հուլիսին ներքին դրուժերի մինիստր Հերբերտ Մորիսոնի պլավորությամբ կազմվեց մի հատուկ հանձնաժողով, որը ուսումնասիրելու էր Պաղեստինի հարցը: Հանձնաժողովը 1944 թ. հունվարին կառավարությանը ներկայացրեց մի զեկուցագիր, ըստ որի նախատեսվում էր պատմաաշխարհազրական Սիրիայի տարածքում ստեղծել երեք առանձին պետություններ՝ «Մեծ Սիրիա» (Սիրիական հանրապետության, հարավային Լիբանանի, Պաղեստինի արարական մասերի և Անզիփորդանանի միավորմամբ), Լիբանան և Հրեական պետությունն նույն զեկուցագրով նախատեսվում էր Անզիփայի ղեկավարությամբ և ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի մասնակցությամբ նրուսադիմի շըրշանում միշտազգային վարչակարգ հաստատել Ավելի ուշ՝ 1944 թ. աշնանը, անզիփացի մի շարք մասնագետներ, հաշվի առնելով «Մեծ Սիրիայի» նախագծի իրականացման բարդությունը, առաջ քաշեցին «Հարավային Սիրիայի» ստեղծման ծրագիրը, որը կընդորկեր Անզիփորդանանը և Պաղեստինի արարական հատվածները:

Այս բոլոր նախագծերը հետամուտ էին հրմնականում մեկ նախատակի. Պայմանագրություններում հրեական պետության ստեղծմանն հասնել՝ առանց արարական երկրներում Անզիփայի ուրբերք վաճանգելու: Սակայն Անզիփայի արտաքին գործերի մինիստրության մասնագետներն ու անձամբ Ա. Իղենը հավատացած չին, որ նման նախագծերով կարելի է հրեական պետություն ստեղծելու հարցում արաբների համաձայնությունն ստանալ, կամ էլ դրանց միշտով զոնե նվազագույնի հասցնել Անզիփային սպառնացող վեասները արարական երկրներում: Ֆորին օֆիսում գերակշռում էր այն տեսակետը,

որ արարական որևէ միություն, այդ թվում նաև «Մեծ Սիրիան», չի համաձայնի Պաղեստինի քաժանմանը⁵⁴ Միության շուրջ վարպետ բանակցությունների ընթացքում արարական մայրաքաղաքների մի մասի կողմից քաղաքական համագործակցության հարցի առաջ քաշումը վկայում էր, որ արարեների որևէ համախմբում դժվար է ներթարկել Անդլիայի ամբողջական վերահսկողությանը։ Այս բոլորից են ելով, Էնգոնը որոշեց հասնել 1944 թ. սկզբին արդեն որոշակի հետանկար դարձած արարական միության հարցի շուրջ նախապատրաստական կոմիտեի նստաշրջանի հրավիրման հետաձգմանը։ Ֆորմի օֆիսը 1944 թ. փետրվարին մինչև իսկ նորի Սահման թելադրեց դադարեցնել իր ակտիվությունը արարական միության հարցում, երբ Իրաքի վարչապետը նոր էր վերադարձել Դամասկոս, Բեյրութ և Ամման կատարած այցելությունից, որի ընթացքում նա մի անգամ ևս հետապուտ էր եղել «Բարերեւ մահիկի» ծրագրի իրականացմանը⁵⁵։

Հավանաբար բանն այն էր, որ Էնգոնը, թերահավատ՝ հաշիմյանների գերիշխանությամբ այդ ծրագրի իրականացման հարատվորության հարցում, երկնշում էր, որ Իրաքի շանքերի աշխատությունը սիրիական և լիբանանյան կառավարություններին կդրդի որպես հակագիր էլ ավելի աշխատացնել իրենց գործունեությունը համաարարական միության շուրջ նախապատրաստական կոմիտեի նստաշրջանի հրավիրման ուղղությամբ և դրանով իսկ կձախողվեն նստաշրջանն առայժմ հետաձելու լոնգոնի ծրագրերը։ Իրենց նպատակին հասնելու համար անզիփացիները որոշակի ճնշում գործադրեցին արարական բոլոր երկրների վրա։ Նրանց թելադրանքով 1944 թ. մարտին և ապրիլին, համապատասխանաբար Սիրիայի արտաքին գործերի մինիստր Զամիլ Մարդամի և Լիբանանի վարչապետ Ռիսադ Սուլէի հետ բանակցությունների ժամանակ, սառուցյան միապետը դեմ արտահայտվեց «պատերազմական պայմաններում» նախապատրաստական նըստաշրջանի հրավիրմանը⁵⁶։

Արարական երկրները միառժամանակ տեղի տվեցին անզիփական այս ճնշման առաջ 1944 թ. հունիսի 12-ին միայն Եղիպատուի արգարազատության մինիստր Սարրի Արու Ալամը վարչապետ նահանափ անունից հայտարարեց, որ իր կա-

ուավարությունը պաշտոնական հրավիրներ է ուղարկել բանակ-
ցությունների մասնակից արարական երկրների կառավարու-
թյուններին, առաջարկելով հովիսի վերջին—օգոստոսի սկզբ-
րին նախապատրաստական կոմիտեի նիստ հրավիրել Եղիա-
տոսաւմ⁷⁵, Ե՞ւ Կաճիրեկի այս նախաձեռնությունը, և՝ արա-
րական մի քանի կառավարությունների անմիջական ու զրա-
կան արձագանքը շատ բանով արդյունք էին արարական
երկրների հասարակական տարրեր խավերի կողմից միության
պահապարփն սույց տրված այն աշակեռության, որը 1943 թ.
սկսած արտահայտվում էր նաև ուսանողների, կանանց, իրա-
վարանների և նմանատիպ այլ համարարական համագու-
մարներ հրավիրելու զանգվածային շարժումներում։ Իրա Հետ-
մեկանք ունեած է նշել եղիատական կառավարության հւանո-
գականությունը նախապատրաստական կոմիտեի նստաշրջան
հրավիրելու հարցում։

Միրիամի, կիրանանի, իրաքի և Անդրհորդանանի կառա-
վարություններն ընդունեցին Եղիատասի հրավերը, մինչ Սա-
տուցյան Արարիան ու նրան հետեւելավ նաև նմենը ձգտում էին
հետաձգնլ նստաշրջանի հրամիրումը։ Միայն իրենց քանիքների
ապարագունության ի տես և առանց իրենց մասնակցության
նստաշրջանի գումարման հեռանկարից մտավախ, Սատուցյան
Արարիան և նմենը հայտնեցին, որ պատրաստ են մասնակ-
ցելու կոմիտեի նիստաերին նրանց պատվիրակները։ Հուսեյն
Քարսին և ծուսուփ Յասինը, Ալեքսանդրիայում սկսուելու-
րի 25-ին իր աշխատանքն սկսած արարական միության նա-
խապատրաստական կոմիտեի նստաշրջանին մասնակցեցին
համապատասխանարար սեպտեմբերի 28-ից և հոկտեմբերի
1-ից, այն բանից հետո, երբ խորհրդաժողովի մասնակից-
ները առաջին նիստի որոշման համաձայն հեռագիր ուղար-
կցին Սանա և Ռիադ, երկու միապետներից խնդրելով ան-
հապաղ իրենց ներկայացուցիչներին ուղարկել Ալեքսանդրիա,
Անդրիացիների ընդդիմադրության հակառակ, հոկտեմբերի
մեջից նստաշրջանի աշխատանքներին սկսեց մասնակցել
նաև պաղեստինյան արարների ներկայացուցիչ Մուսա ալ
Ալամին, Եղիպատոսի, Իրաքի, Միրիամի, կիրանանի և Անդրհոր-
դանանի պատվիրակությունները զիսավորում էին վարչա-
պետներ Մուստաֆա Նահճասը, Համդի Փաշաշին, Սաադալլա

Զարբին, Ռիադ Սուլեյմ և Թառէջիկ Աբովյ Հուղան։ Իրաքի պատվիրակությանը անդամակցում էր նաև նախկին վարչապետ Նուրի Մահիդը։

Նախապատրաստական կոմիտեի նստաշրջանը, որ ավելի հաճախ անվանվում է Ալեքսանդրիայի խորհրդաժողով, ճշշտորշեց այն հիմնական սկզբունքները, որոնք գրվելու էին արարական ապահով միության հիմքում։ Խորհրդաժողովի մասնակիցները սկզբից ենթ ձեռնամուխ եղան արարական ապահով միության ձևը որոշելու հարցին։ Թնարկման էին դրված միության մի քանի տարրերակներու թացարձակ միության գաղափարը, որը ենթադրվում էր իրականացնել կամ կենտրոնածույթ մի պետության, կամ էլ գաշնակցային հանրապետության ձևով, բացի Միրիայի պատվիրակությունից ոչ մեկի կողմից շապանվանվեց⁵⁵։ Հարցը շլուժվեց նաև միությունը միջարարական մի կազմակերպության միջոցով իրականացնելու առաջարկը բոլոր երկրների կողմից ընդունվելուց հետո էլլ Բանն այն էր, որ խորհրդաժողովի մասնակիցներից ուժանք (Իրաք, Միրիա, Անդրբորդանան) ցանկանում էին, որ ստեղծվելիք կազմակերպությունն ունենա գործադիր իշխանություն, իսկ մյուսները գրան համաձայն չէին⁵⁶։ Տարակարծություններ կային նաև կազմակերպությունում անդամ երկրների ներկայացուցչության և ընդունված որոշումները բոլորի համար պարտադիր լինելու կամ չլինելու հարցերի շուրջ Ումանք կողմնակից էին հավասար հիմունքներով անդամ երկրների ներկայացուցչությունը հաստատելուն, իսկ մյուսներն ուղղում էին այն սահմանել ըստ յուրաքանչյուր երկրի բնակչության և բյուջեի։ Ումանք առաջարկում էին ձայների մեծամասնությամբ ընդունված որոշումներն անխստիր բոլոր երկրների համար պարտադիր համարել, ուրիշներն ուղղում էին գրանք պարտադիր համարել միայն այն երկրների համար, որոնք կողմ էին քվեարկել տվյալ որոշումներին⁵⁷։ Վերջիվերջո, այս հարցերի վերաբերյալ խորհրդաժողովը հաստատեց Եգիպտոսի վարչական նահանգի ձևակերպությունը, որն առանց որևէ փոփոխության մտցվեց նախապատրաստական կոմիտեի նիստերի արդյունքներն ամփոփող Ալեքսանդրիայի արձանագրության առաջին պարագրաֆում⁵⁸։ Դրա սկզբում ասվում էր, որ «Արարական պետությունների լիգան

բաղկացած է լինելու արարական անկախ երկրներից, որոնք կցանկանան անդամակցել դրանք։ Արարական լիգան ունենալու էր խորհուրդ, որում «կիգայի անդամ երկրները ներկայացվում են Համասար Հիմունքներով»։ Խորհրդի որոշումները պարագաներ էին լինելու միայն դրանց կողմ քվեարկած երկրների համար։ Սակայն, եթե կիգայի անդամ երկու երկրների միջև որևէ անհամաձայնություն ծագեր և այդ երկրներն այն կարգավորելու համար դիմեին կիգայի խորհրդին, ապա վերցինիս այդ կատակեցությամբ ընդունած որոշումը կողմների համար լինելու էր պարտադիր։ Այսպիսով Ալեքսանդրիայի խորհրդաժողովը որոշեց արարական երկրների միջև համագործակցությունն հաստատել միշտեական, ուղիղունակ, համարարական մի կազմակերպության միջցոցվել։

Ալեքսանդրիայի արձանագրության առաջին պարագափը կանխորշում էր նաև Արարական լիգայի խորհրդի գործունեության շրջանակները։ Նշվում էր, որ Խորհուրդը «կոչված է լինելու իրադրութեալ արարական երկրների միջև էնքված պայմանագրերը, ինչպես նաև պարբերաբար հանդիպումներ կազմակերպել՝ նրանց միջև հարաբերություններն ամրապնդելու, քաղաքական քայլերը համակարգելու...», բայց միշտցներուն նրանց անկախությունն ու սույներնենությունը որևէ ազդեստայից պաշտպանելու և ընդհանրապես արարական երկրների գործերը քննարկելու համար։ Նախատեսվում էր նաև ստեղծել մի ճյուղային կոմիտե, որը կորոշեր Խորհուրդի ստատուսը և սկզնարկեր այն քաղաքական հարցերը, որոնց շուրջ կարելի է արարական երկրների միջև պայմանագրեր կնքելու Խորհրդին իրավունք էր վերապահվելու միշտորդություն կատարել կիգայի անդամների, ինչպես նաև նրանցից մեկի և մի օտար երկրի միջև պատերազմի վտանգ ծագելու դեպքում։ Կիգայի անդամներին արդեւվում էր միմյանց միջև առաջացած տարածայնությունները լուծել ուժի գործադրումով, ինչպես նաև վարել այնպիսի քաղաքականություն, որը կվնասեր կիգային կամ նրա անդամներից մեկին։ Ալեքսանդրիայի արձանագրության առաջին պարագափի այս դրույթները վկայում էին, որ իմպերիալիստական երկրների ակնկալիքներին հակառակ, Արարական լիգան ա-

ուաշին Հերթին քաղաքական դեր կատարող մի մարմին էր լինելու:

Ալեքսանդրիայի արձանագրության Կրկրորդ պարագրաֆից համաձայն արարական համագործակցությունը տարածվելու էր նաև տնտեսության, ֆինանսների, հաղորդակցությունների, մշակույթի, քաղաքացիական, առողջապահության և սոցիալական ասպարեզներում:

Համաձայնելով արարական ապագա միությունը միշտ պետական մի կազմակերպության միջոցով իրականացնելու դադարին, տարբեր նկատառումներով արարական ավելի սերտ միության կողմնակիցները՝ Սիրիան, Անդրկորդանանը և Իրաքը, չեին Հրաժարվում իրենց նախական տեսակետներն ապագայում իրականացնելու հույսից: Իրաքի նախակին վարչական նույրի Սահդը Ալեքսանդրիայի խորհրդամողությունը էլ արծարծնց «Մեծ Սիրիայի» հարցը: Այդ նախագիծն օրակարգում մտցնելիս Հաշիմյանների ներկայացուցիչները ահենկալում էին, որ սիրիական պատվիրակությունն իրենց Հայ միացյալ ճակատով Հանդեռ կզարդ Դրա պատճառն այն էր, որ Սիրիայի թիկուզ վերապահումով «Մեծ Սիրիայի» օգտին Հանդեռ դալն ու Նրանց մեկնաբանում էին որպես սիրիական կառավարության պրոնաշիմյան զիրքորոշման արտահայտությունները Սակայն իրաքա-անդրկորդանանյան հույսերը շարդարացանու Խորհրդամողություն սիրիական պատվիրակությունը, «Մեծ Սիրիայի» նկատմամբ իր դրական վերաբերմունքը Հանրապետական վարչակարգի պահպանումով պայմանավորվելուց բացի նշեց, որ Անդրկորդանանի և Պաղեստինի անզիրական մանդատային տիրապետության տակ գտնվելու պայմաններում խնդրու առարկա նախագծի քննարկումը անձամանակ է⁶²: Այլ խոսքով, սիրիական կողմը դեմ էր արտահայտվում «Մեծ Սիրիայի» նախագիծը անզու-Հաշիմյան տարբերակով իրականացնելուն: Փորձելով Հարցը փակուղուց դուրս բերել, Սահդն առաջարկեց, որ նախապատրաստական կոմիտեի նստաշրջանը գոնե դրանորի իր տեսակետը ընդհանրապես արարական ավելի սերտ մի միության Հարցի վերաբերյալ: Վերջիվերջու որոշվեց Ալեքսանդրիայի արձանագրությունում մտցնել երրորդ պարագրաֆը, որում նշվում էր-

«Փո՛՛ռունակությամբ ընդունելով այս առաջին քայլը, կոմիտեն հույս ունի, որ ապագայում արարական երկրներն այն կամրջապնդն այլ քայլերով են...»: Նուրի Սահմզը ցանկանում էր այս պարագրաֆն օգտագործել ոչ միայն «Մնծ Սիրիայի» նախադին իրականացնելու համար: Նա նաև հույս ուներ դրա միջոցով հասնել կիզայի ընդարձակման ի հաշիվ Թուրքիայի, Աֆղանստանի և Իրանի, այդպիսով այն դարձնելով մերձավորաբնելյան մի կազմակերպություն⁶³:

Այնքանազդրիայի արձանագրության շորորոդ պարագրաֆը վերաբերում էր կիրանանին: Սիրիայի առաջարկով մտցրված այդ պարագրաֆում խորհրդաժողովի մասնակից երկրները հայտարարում էին, որ իրենք ճանաչում են կիրանանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը, ըստ որում շեշտում էին, որ իրենք գա անում են Շենքելով կիրանանի խորհրդարանի կողմից միաժամորեն հաստատված 1943 թ. Հոկտեմբերի 7-ի անկախ քաղաքական դիմ անցկացնելու մտագրության վերաբերյալ կառավարական հայտարարության վրա: Մրանով ապագա Արարական լիգայի անդամները ցույց էին տալիս, որ իրենք կիրանանի անկախությունը զիտում են որպես միրանանցիների ձևոր բարած նվազում և այն շեն կապում այդ հարցում Ֆրանսիայի դիրքուշաման հետ Բացի այդ, այս պարագրաֆով կիրանանի սահմանները ստանում էին համարակական ճանաչում, ինչը նույնպես կարևոր էր դրանց օրինականության հարցի շուրջ այլնայլ գրուցները դադարեցնելու առումով: Եվ վերջապես պարագրաֆը մի անգամ ևս ընդգծում էր հիմնադրվելիք Արարական լիգայի միջպետական, ուսպիսնալ լինելը, որով և ցրում էր ապագա միությունում կիրանանի ինքնուրույնության վերացման վերաբերյալ լիրանանյան հասարակական որոշ շրջանակների ունեցած մտավախությունները:

Հակառակ կոնդոնի ընդդիմադրության, Ալեքսանդրիայի խորհրդաժողովը քննարկեց նաև Պաղեստինում տիրող իրազրության հարցը: Խորհրդաժողովի ավարտից հետո հապարակված հաղորդագրությունում նստաշրջանի մասնակիցները ողջունում էին պաղեստինյան արաբների ներկայացուցիչներ Մուսա ալ Ալամիի ներկայությունը և նշում, որ արարական երկրները հատուկ նշանակություն են տալիս «եղրայք

երկրի գործինաց՝ Ալեքսանդրիայի արձանագրությունում Պազ-
ղևստինին էր վերաբերում Հինգերորդ պարագրաֆը։ Այնտեղ
ասվում էր, որ «Պաղեստինը արարական երկրների կարևոր
մասն է, և որ արարների իրավունքներն այնտեղ չեն կարող
ունանարվել առանց արարական երկրների խաղաղությունը
վտանգելու»։ Նշվում էր նաև, որ «Հրեական ներգաղթը դա-
դարեցնելու, արարներին պատկանող հողերը պաշտպանելու
և Պաղեստինին անկախություն տալու վերաբերյալ ՄԷԺ
Բրիտանիայի ստանձնած պարտավորությունները՝ իրակա-
նացվելու դեպքում կնպաստեն խաղաղության և անվտան-
գության ամրապնդմանը»։ Այսպիսով, արարական երկրները
պաշտպանում էին 1939 թ. անգլիական կառավարության
Սպիտակ դրի գրույթները Պաղեստինի հարցի վերաբերյալ
Ալեքսանդրիայի խորհրդաժողովի մասնակիցները գտնում
էին, որ Ալբուպակոն Հրեաների հարցը պետք չէ շփոթել սիո-
նիզմի հետ և դեմ էին արտահայտվում նրանց հարցը ոմի նոր
աներդարացիությամբ լուծելուն, որի գոհերը կդառնան Պա-
զղևստինի արարները...»։ Խորհրդաժողովի ժամանակ Մուսա
ալ Ալամին առաջարկեց ստեղծել «Արարական պղպային
ֆոնդ»՝ Պաղեստինի արարներին պատկանող հողերը մրկելու
համար սիօնիստական ոտնակություններից⁶⁵։ Արձանագրու-
թյունում ասվում էր, որ այդ հարցը տնտեսական ու ֆինան-
սական հարցերի ննիմաժողովում նախնական քննարկման
ննիմարկելուց հետո կղովի նախապատրաստական կոմիտեի
առաջիկա նստաշրջանի օրակարգում։

Ալեքսանդրիայի արձանագրության շրբորդ և Հինգերորդ
պարագրաֆները վաստառեն նույն արձանագրության առա-
շին պարագրաֆի դրույթների իրագործման առաջին փորձերն
էին։ Եվ այս հանգամանքը, և՛ Ալեքսանդրիայի խորհրդա-
ժողովի հրավիրման վիաստն ու նրա ընթացքը վկայում են,
որ 1944 թ. կեսերից արարական միություն ստեղծելու շար-
ժումը Հիմնականում ընթանում էր ոչ միայն ստարերկրյա-
տերությունների, մասնավորապես Անգլիայի կամքին հակա-
ռակ, այս դուրս էր եկել նրանց վերահսկողության տա-
կից։ Այս կապակցությամբ անհրադառնալ կիզայի ստեղծման գործում
կոնդոնի «աներդրման» խնդրին։ Սովետական արևելագիտա-
38

կան պրականության մեջ հաճախ այն տեսակետն է արտահայտվել, որ Անգլիան պաշտպանում էր Լիդույի ստեղծման գործը, ձգտելով արարական միության զաղափարը ժառացնել իր շահերին⁸⁵: Այս տեսակետը թափանցել է նաև վերջերս լույս տեսած «Զարգացող երկրները ժամանակակից աշխարհում». նոր ուժ համաշխարհային քաղաքականությունում և էկոնոմիկայում և «Զարգացող երկրների արտաքին քաղաքականությունը, ընդհանուր պրոբլեմներ և հետազոտման մեթոդուղիման» արժեքավոր մենագրությունների էջերը⁸⁶, Մինչդեռ իրականում կանոնը, վախճանալով ստեղծվող արարական միջակետական կազմակերպության քաղաքական անվերահակելի ուղղվածությունից, նաև ոչ մի լավ բան շակընալիքով Պաղեստինի հարցում նրա անակնկալներով հզի ակտիվությունից, ուսած 1944 թ., ինչպես վերնում հիշատակված փաստերն են վկայում, ամեն կերպ շանում էր խուզուղունել Արարական լիդույի ստեղծումը:

Այնքանողությամբ արձանադրությունը 1944 թ. հոկտեմբերի 7-ին ստորագրվեց խորհրդաժողովի մասնակից յոթ երկրներից միայն հինգի՝ Սպիտառի, Իրաքի, Սիրիայի, Անդրկովանանի և Կիրանանի կողմից, քանի որ սառողական և հմենյան պատմիրակները համապատասխան իրավասություններ չունեին: Սառույան Արարիան և նմենը արձանադրությունը հաստատեցին համապատասխանաբար 1945 թ. հունվարի 7-ին և փետրվարի 5-ին:

Արարական ապագա միության հիմնական սկզբունքները, հատկապես միության ինչ ձևով իրականացնելու հարցը Ալեքսանդրովիայի խորհրդաժողովում որոշելուց հետո թվում էր, որ արարական երկրներն առանց որևէ ոժմարության կմշակեն Արարական լիդույի ստատուսը և այն արագործն կյանքի կեռչն: Եվ սակայն, ինչպես Արարական լիդույի պակտի մշակմանը նվիրված զաղաքական ենթահանձնաժողովի նստաշրջանում, որը կահիրենում գումարվեց 1945 թ. փետրվարի 14-ից մարտի 3-ը, այնպէս էլ դրանից առաջ ու հետո հարկ եղավ Հաղթահարել տարրեր բնույթի մի շարք խոշրնդուներ:

Առաջին խոշրնդուր կապված էր արարական միության հաբցում Սառույան Արարիայի դրսնորած նոր մոտեցման հետ 1945 թ. հունվարի սկզբին, Ալեքսանդրիայի արձանա-

գրությունը հաստատելու հետ մեկտեղ, Սառույցան Արարիան, որքան էլ դա ապարօբինակ թվա, առաջ քաշեց արարական ապագա միությունը արարական անկախ երկրների միջև կնքը վելիք մի դաշինքի միջոցով իրականացնելու գաղափարը Այդ դաշինքն ունենալու էր ինքնապաշտպանական բնույթ և ուղղված չէր լինելու մի այլ երկրի կամ երկրների խմբի դեմ Ռիազն անհրաժեշտ էր Համարում նաև, որ միության բոլոր անդամները ճանաչեին Միրիայի և կրթանանի անկախությունը և նրանց հանրապետական վարչակարգերը: Բացի այդ նախատեսվում էր, որ Սառույցան Արարիային իրավունք վերապահվի չմասնակցել միության շրջանակներում ձեռնարկվող օրենսդրական և լուսավորական այն նախաձեռնությունն, որոնք կարող էին անհարիր լինել իրամիտ սկզբունքներին⁶⁸: Կարելի է այն հետևողությունն անել, որ Ռիազը, ընդհանրապես կողմնակից լինելով արարական միությանը, ցանկանում էր դա իրականացված տեսնել ոչ թե ռեզիստալ կազմակերպության, այլ արարական երկրների միջև կնքված մի դաշինքի ձևով: Սակայն հարցի նկատմամբ այսպիսի մտածումը կարող էր հանդիսնել միության որոքը ոչուխ թերեւու ձգձգմանը: Միության սառույցան տարբերակին, որն ըստ էության դրական պետք է համարել, կոնդոնի թելադրանքով ամենայն հավանականությամբ կընդդիմանային հաշիմյանները, քանի որ Անդրիան բացասաբար էր վերաբերում սառույցական նախաձեռնությանը⁶⁹: Այն ավելորդ մտավախություն կարող էր առաջացնել նաև լիբանանյան քաղաքական որոշ շրջանակներում: Ավելորդ այս բարդություններից կարելի է խուսափել, ևթե վերոհիշյալ առաջարկները պարզորոշ ներկայացվեին ոչ թե որպես Ալեքսանդրիայի արձանագրությունում առաջ քաշված Արարական լիգայի գաղափարի այլնութանք, այլ իրեն հենց Արարական լիգայի շրջանակներում թրականացվելիք միջոցառումների վերաբերյալ նկատառումներ: Ռիազի դիրքորոշման այդպիսի փոփոխման հնարավոր եղավ հասնել Եղիպատոսի թագավոր Ֆարուկի 1945 թ. հունվարի վերջին Սառույցան Արարիա կատարած այցելության ընթացքում: Փա անգլիական իրաղեկ «Թայմ» թերթը որակեց որպես «որոշ շափով նման կրդայի վերջնական ստեղծման երաշխիքի»⁷⁰:

1945 թ. փետրվարի 14-ին Կահիքեռում բացվեց Արարական լիգայի պակտը մշակող քաղաքական և նժառանձնաժողովներուն նստաշրջանը: Դրան մասնակցում էին Եպիստոռի, Սիրիանանի, Անդրհորդանանի պատվիրակությունները՝ արտօնածին զործերի մինիստրների, ինչպես նաև սառուղական և իրաքան պատվիրակությունները՝ սառուղական դիվանագիտ և աղ դին Զիրքիլիի և Իրաքի նախկին վարչապետ Նուրի Սահիդի զըմավորությամբ: Նստաշրջանին չեղ մասնակցում նմանը Պազճատինի արաբներին ներկայացնում էր Մուսա ալ Ալամբին: Նստաշրջանի քննարկմանը ներկայացված էին Արարական ոլետությունների լիգայի պակտի իրաքան և Մերանանյան նախագծերը, ինչպես նաև Լիգայի նկատմամբ Սառողյան Արարիայի վերոհիշյալ նկատառումները: Նստաշրջանի սկզբում սառուղական պատվիրակությաց հայտարարեց, որ իր երկրի համար սկզբունքային նշանակություն ունի արարական ապահով միավորությունը Միրիայի և Լիրանանի անկախության որահպանումը և Լիգայի անդամների կողմից ուրիշ արարական երկրի տարածքի վրա հաստարված ցանկացած ազգեսիայի գնամ միամսնարար հանդես գալու վերաբերյալ ուղարառականության ընդունումը⁷¹:

Արարական լիգայի պակտի մշակման համար Հրավիրված քաղաքական և նժառանձնաժողովի նստաշրջանն հիմնականում հաստատեց այն դրույթները, որոնք արդեն կային Ալեքսանդրիայի արձանագրությունում, ինչպես նաև ավելացրեց որոշ նոր էլեմենտ Այս նստաշրջանում մշակված պակտի նախագծի և 1945 թ. մարտի 22-ին համարարական կոնգրեսի կողմից հաստատված պակտի միջն կան որոշ տարրերություններ, որոնք հիմնականում կապված են Հողվածների քանակի, գրանց հերթականության ու խմբագրման հետ⁷², Լիգայի պակտի վերլուծումը կատարվելու է ըստ նրա հաստատված տարրերակի: Միակ էական տարրերության մասին, որ կա դրանց միջն, ստորև առանձին կնշվի:

Քաղաքական և նժառանձնաժողովը հաստատեց Ալեքսանդրիայի արձանագրության այն դրույթը, ըստ որի Լիգան բաղկացած էր լինելու միայն արարական անկախ երկրներից (Արարական լիգայի պակտի հոդված 1-ին): Որոշ տարածայնություններ առաջացան նույն հոդվածի երկրորդ մա-

սի շուրջ, որը վերաբերում էր ապագայում արարական նորանեկախ որևէ երկրի կիզային անդամակցելու ձևակերպումներին։ Ըստ իրաքյան նախադիրի, արարական ամենն մի անկախ երկիր կարող էր այդ կազմակերպության անդամ դառնալ այդ մասին տեղյակ պահելով կիզայի Թարտուղարությանն ու մասնակից երկրներին⁷³։ Կիրանանյան նախագիծը անհրաժեշտ էր համարում նաև, որ որևէ երկրի կիզա ընդունվելու հարցի առթիվ կայացվի Խորհրդի հատուկ որոշում⁷⁴։ Նախապատվությունը տրվեց լիրանանյան ձևակերպմանը, որը և դրվեց կիզայի պակտի չ-ին հոգվածի երկրորդ մասի հիմքում։

Ըստ պակտի 2-րդ հոգվածի, կիզայի նպատակը լինելու էր ուժեղացնել կապերը անդամ երկրների միջև, համակարգել նրանց քաղաքական ծրագրերը՝ միմյանց միջև համագործակցություն հաստատելու համար, պահպանել նրանց անկախությունն ու ուսվերենությունը...։ Նույն հոգվածով նախատեսվում էին նաև այն քնազավառները, որոնցում ժամանակից եր միջարարական համագործակցությունը Գրանց էին. 1. Տնտեսության և ֆինանսների, 2. Հազորդակցությունների, 3. մշակույթի, 4. քաղաքացիական, 5. սոցիալական, 6. կրոնի ոլորտները Առաջ անցնելով նշենք, որ պակտի 4-րդ հոգվածով նախատեսվում էր Խորհրդին կից համապատասխան կոմիտեներ ստեղծել՝ վերոհիշյալ յուրաքանչյուր ասպարեզում համագործակցությունը համակարգելու համար։ Հաշվի առնելով Սառույան Արարիայի նկատառումը Խոլամի սկզբունքներին հակառող ձևունարկումներին շմասնակցելու վերաբերյալ, նպատակահարմար համարվեց պակտի 2-րդ հոգվածում նշել, որ «... անդամ երկրների միջև համագործակցությունը ժամանակելու է նկատի ունենալով յուրաքանչյուր երկրի վարչակարգը և դրանում զոյտություն ունեցող պայմանները»։

Արարական լիզայի պակտի 3-րդ հոգվածի համաձայն կիզան ունենալու էր Խորհրդից, որում «յուրաքանչյուր երկիր ունենալու է մեկ ձայն...։ Խորհրդի խնդիրն էր լինելու «իրականացնել կիզայի նպատակները, վերահսկել անդամ երկրների միջև կնքվելիք պայմանագրերի իրականացումը»։ Ըստ պակտի 8-րդ հոգվածի, Խորհրդի որոշումները պարա-

Դիր էին լինելու միայն այն երկրների համար, որոնք կողմէ էին քվեարկել տվյալ որոշմանը։ Նույն հոդվածը, դարձյալ ենելով սառուղական վերոհիշյալ նկատառումից, նախատեսում էր, որ «Խորհրդի որոշումները յուրաքանչյուր երկրում իրականացվելու հն ըստ այդ երկորի ներքին օրենքների»։ Խորհրդը գումարվելու էր տարեկան երկու անգամ՝ մարտև հոկտեմբեր ամիսներին, իսկ Խորհրդի արտահերթ նիստ կարող էր տեղի ունենալ լիգայի անդամ երկու երկրների պահանջով (Հոդված 11)։ Խորհրդի նիստում հերթով նախադաշելու էին անդամ երկրների ներկայացուցիչները (Հոդված 15), և աշխիքն լինելու էր Արարական լիգայի մշտական նստավայրը, սակայն Խորհրդի նստաշրջանները կարող էին տեղի ունենալ նաև այլ երկրներում (Հոդված 10)։

Արարական լիգան ունենալու էր Գլխավոր քարտուղարություն՝ քաղկացած զլիսավոր քարտուղարից, նրա տեղակալներից և այլ պաշտոնյաներից։ Գլխավոր քարտուղարը ընտրվելու էր Խորհրդի անդամների ձայների երկու-երրորդի մեծամասնությամբ (Հոդված 12)։ Գլխավոր քարտուղարը պատրաստելու էր լիգայի տարեկան բյուջեի նախագիծը և այն ներկայացնելու էր Խորհրդի հաստատմանը (Հոդված 13)։ Գլխավոր քարտուղարության պաշտոնյաներ նշանակելիս, լիգայի բյուջեն հաստատելիս, Խորհրդի, նրան կից կոմիտեների և Գլխավոր քարտուղարության ներքին աշխատակարգը որոշելիս, ինչպես նաև նիստերի հետաձգման վերաբերյալ հարցերը վճռելիս բավարար էր Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությունը (Հոդված 16)։

Եթե որևէ երկիր ցանկանար գուրս գալ Արարական լիգայից, ապա նա այդ մասին մեկ տարի առաջ պետք է տեղակա պահեր լիգայի խորհրդին։ Միաժամանակ Խորհրդը երավառու էր լիգայից հեռացնել այն երկրին, որը չէր կատարի պակտից բխող իր պարտականությունները։ Վերջին դեպքում Խորհրդի որոշումը պետք է լիներ միաձայն, առանց հաշվի առնելու խնդրո առարկա երկրի ձայնը (Հոդված 18)։

Արարական լիգայի պակտը փոփոխության հնմարկելու համար պահանջվում էր Խորհրդի անդամների ձայների երկու երրորդի մեծամասնություն (Հոդված 19)։

Բավականին դժվարություններ առաջացան կիզայի պակտի 5-րդ հոդվածի ձևակերպման ժամանակ, որը վերաբերում էր կիզայի անդամ երկրների, ինչպես նաև անդամ երկրներից որևէ մենքի և մի օտար երկրի միջև ծագած տարածայնությունների կարգավորմանը։ Կիզայի պակտի թե՛ իրարշան, թե՛ լիբանանյան նախագերերում, ինչպես նաև վերոհիշյալ սառուղական հուշագրում վեճները ուժի միջոցով լուծելը համարվում էր անթույլատրելի։ Այս դրույթն առանց որևէ բարդության մտցվեց 5-րդ հոդվածում։ Հիշված երեք փաստաթղթերում էլ նախատեսվում էր, որ տարածայնությունների կարգավորման հարցում կիզայն դրանցում տարբեր կերպ էին սահմանվում այդ հարցում Խորհրդի ունենալիք իրավասության շրջանակները։ Սառուղական հուշագրում առաջարկվում էր, որ եթե որևէ երկիր չնենթարկվի արրիտրամի որոշմանը, ապա ամյուս արարական երկրները խորհրդակցելու նն և ստիպելու նն նրան ընդունել այն, ինչը որ ճիշտ է։ Քաղաքական ենթակոմիտենի նաստաշրջանի ընթացքում իրաքը ներկայացրեց երկու հուշագիր, որոնցում ճշգրտված էր Բաղդադի դիրքորոշումը այս և այլ վիճելի հարցերի վերաբերյալ⁷⁵։ Իրաքը դեմ էր արտահայտվում կիզայի միջամտությանը մինչև նրա ստեղծումը կնքված պայմանագրերի հետ կապված հարցերում, ինչպես նաև գտնում էր, որ որևէ վիճելի կիզայն պակտի միջամտի միայն վիճող երկու կողմերի համաձայնությամբ վեճների կարգավորման հարցում կիզայի խորհրդի իրավասությունները որոշ շափով սահմանափակված էին նաև պակտի միանալու համապատասխան նախագծում, ըստ որի Խորհուրդը արրիտրի իրավունք չէր ունենալու այն դեպքում, եթե տարածայնությունները վերաբերում էին որևէ անդամ երկրի անկախությանը և տարածքային ամբողջականությանը։ Քաղաքական կոմիտեն հաստատեց 5-րդ հոդվածի մի փոխդիջողական տարբերակ, ըստ որի Խորհուրդը կարգավորելու նպատակով միջամտելու էր այն տարածայնություններին միայն, որոնք լուծելու համար միջող կողմերը դիմելու էին իրեն, և որոնք չին վերաբերում անդամ որևէ երկրի անկախությանն ու տարածքային ամբողջականությանը։ 1945 թ. մարտի 17-ին և 19-ին տեղի ունեցած Համարարական կոնգրեսի հրավիր-

ման նախապատրաստական կոմիտեի նիստերի ժամանակ որոշվեց 5-րդ հոգվածում դրույթ ավելացնել այն մասին, որ վեճերի կարգավորման հարցում Խորհրդի որոշումները ընդունվեն ձայների պարզ մեծամասնությամբ։ Նախապատրաստական կոմիտեն նաև նպատակահարմար դռավ, որ վիճող կողմերը շմասնակցեն որոշումների ընդունմանը և որոշումներն ունենան պարտադիր ընույթ⁷⁶։ Սա միակ էական տարրերությունն էր քաղաքական հնիահանձնաժողովի հաստատած պակտի նախագծի և մարտի 22-ին կնքված պակտի միջև։ Պակտի 5-րդ հոգվածի համաձայն Խորհրդը կարող էր միջամտել նաև կիգայի անդամ երկրի և մի օտար երկրի միջև տարածայնությունների կարգավորմանը, եթև վիճող կողմերն այդպիսի խնդրանքով դիմեն իրեն։

Սրբարական լիդույի պակտի 6-րդ հոգվածով նախատեսվում էր, որ եթե կիգայի անդամ որևէ երկիր ազրենսիայի հնիարկվի, ապա նա իրավունք է ունենալու պահանջել Խորհրդի հրամիքումը արտակարդ նստաշրջանի, որը միահայնուրն որոշելու է, թե ինչ միջոցները են ձևնարկվելու ազրենորի դեմ, եթե ազրենորը կիգայի անդամ լիներ, ապա նրա ձայնը քվեարկության ժամանակ հաշվի չէր առնվելու։

Կիգայի յուրաքանչյուր անդամ պարտավորվում էր հարդել անդամ մյուս երկրներում հաստատված վարչակարգերը և ձևնապահ մնալ զրանք փոխելու ուղղությամբ որևէ քայլ ձևնարկելուց (Հոգված 8): Կիգայի պակտի այս հոգվածն արտացոլում էր սառուղական հուշագրի այն կետի, որը պահանջում էր միության անդամների կողմից Սիրիայի ու կիրանանի անկախության ու զրանց հանրապետական վարչակարգերի անվերապահ ճանաշումը։ Հատկանշական է, որ կիգայի պակտի կնքման նախաշեմին, քաղաքական հնիահանձնաժողովի նստաշրջանում զրա դեմ շառարկելուց հետո, իրարը ձգտում էր հասնել այս հոգվածը պակտից հանելուն։ Մարտի 11-ի մի հուշագրում իրաքի կառավարությունը տեղեկացնում էր, որ կառավարման ձեի ընտրության հարցը վերաբերում է միայն տվյալ երկրի մողովրդին և փաստուն պահանջում էր 8-րդ հոգվածում քավարարվել միայն այս դրույթի շարադրմամբ⁷⁷։ Մակայն իրաքյան այս քայլը անհետանք մնաց, կիգայի պակտի 8-րդ հոգվածի երեան գալը

այլ կերպ է բացատրվում «Մերձավոր և Միջին արևելքի երկըների արտաքին քաղաքականությունը» պրոտակ Ընդհանուր առամամբ իրավացիորեն նշելով, որ «Եղիպատոսի, Խրաբի, Անդր՛որդանանի, Սառողյան Արարիայի և Եմննի միապետական վարչակարգերի միապետական էությունն ընկած էր նրանց փոխադարձ հարաբերությունների ինչպես կենտրոնաձիգ, այնպես էլ կենտրոնախուզ ներառումների հիմքում, Հեղինակներն ընկնում են շափականցության մեջ գրելով, որ «ինքնակալությունների պահպանման ընդհանուր նպատակը նարավոր գարձրեց Արարական պետությունների լիգայի ստեղծումը, բանի որ նրա պակտում գոյություն ունեցող վարչակարգերի անսասանությունը համարվեց որպես լիգայի ստեղծման նախապայմաններից մեկը»⁷⁸: Խոճրո առարկա Տ-րդ Հոգվածը, ինչպես տեսանք, բոլորովին այլ նկատառումների դրդմամբ մտավ լիգայի պակտի մասը Ավելին, անդիմանու Խրաբը ձգտում էր այդ Հոգվածը պակտից դուրս ցցել: Ինչ վերաբերում է ինքնակալությունների պահպանման հանգամանքին, ապա դրա դերը լիգայի ստեղծման գործում, մեր համոզմամբ, էական չի եղել:

Լիգայի պակտի Զ-րդ Հոգվածում նշվում էր, որ եթե լիգայի անդամ երկու երկրներ ցանկանան հաստատել ավելի սերտ հարաբերություններ, քան պակտով է նախատեսված, ապա կարող են դրա վերաբերյալ լրացուցիչ պայմանագրեր լինքել նույն Հոգվածում ասվում էր նաև, որ լիգայի անդամ երկրների երկկողմանի, ինչպես նաև լիգայի որևէ անդամի և մի օտար երկրի միջև կնքված և կնքվելիք պայմանագրերը չեն վերաբերում լիգայի մյուս անդամներին: Պակտի 17-րդ Հոգվածով նախատեսվում էր, որ անդամ երկրները ապագայում իրենց կնքելիք բոլոր պայմանագրերի պատճենները ներկայացնեն լիգայի դիմավոր քարտուզարությանը:

Ալեքսանդրիայի արձանագրության միակ դրույթը, որ բացակայում էր լիգայի պակտում, դա որևէ անդամի կողմից լիգային և նրա անդամներին վնասող արտաքին քաղաքականությունն չվարելու վերաբերյալ դրույթն էր: Քաղաքական ենթահանձնաժողովի քննարկմանը ներկայացված պակտի իրաբյան նախագծում այս դրույթի վերաբերյալ հատուկ Հոգված կար: Պետք է ենթադրել, որ այն պակտի մեջ շմացվեց

այն պարզ պատճառով, որ արարական երկրների միջև համաձայնեցված քաղաքականություն վարելու նպատակով ստեղծվող Արդարայի պակտում այդպիսի հատուկ հոդվածի գործությունը արարական երկրների կողմից ավելորդ համարվեց: Է. Թուման մի փոքր ժայրաճեղության մեջ ընկնելով գտնում է, որ այս, ինչպես նաև այլ կետերում Լիգայի պակտը «էականորեն տարրերվում է» և նույնիսկ «նահանջ է... Ալեքսանդրիայի արձանադրության դիրքերից»⁷⁹:

Բացի վերնում վերլուծված հոդվածներից, պակտը ուներ նաև երեք հավելված, որոնք վերաբերում էին Պաղեստինին, ոչ Լիգայի անդամ արարական երկրների հետ համագործակցությանը և Լիգայի պլիսավոր քարտուղարի նշանակմանը: Պաղեստինին վերաբերող հավելվածում նշվում էր, որ նրա պողությունը, ինչպես նաև դեյուրե նրա ազգային անկախությունը չեն կարող քննարկման առարկա լինել, ինչպես որևէ այլ արարական երկրի անկախությունը»: Միաժամանակ Լիգայի խորհրդին հանձնարարվում էր Պաղեստինից ընտրել մի ներկայացուցիչ, որը Խորհրդում կններկայացներ պաղեստինյան արարաներին: Անկախությունը շնվանած արարական երկրներից միայն Պաղեստինի նկատմամբ այսպիսի քաջառություն կատարելով, Լիգայի անդամները կարծիս ընդդում էին աշու երկրի և նրան հուզող հարցերի առանձնահատուկ նշանակությունը արարական աշխարհի համար: Երկրորդ հավելվածում ասվում էր, որ Արարական լիգայի խորհրդոր աշակցելու է անկախություն շնվանած արարական երկրների նկրուումների իրականացմանը և գդտելու է «բարեկալել նրանց ապահովությունն ու ստատուր՝ օպտագործելով իր տրամադրության տակ եղած բոլոր քաղաքական միջոցները»: Միաժամանակ Խորհրդին հանձնարարվում էր ամեն ինչ անել՝ իրականացնելու այդ երկրների մասնակցությունը Լիգայի կոմիտեների աշխատանքներին:

Լիգայի պակտի այս հավելվածները կարելի է համարել նրա առաջին, ճիշտ է՝ փոքր ինչ վեհերուտ, բայց բոլոր դեպքերում քաղաքական ակտիվ դիրքորոշման մասին վկայող քայլերը: Դրանց նշանակությունը ավելի է ակնրախ դառնում, եթե հաշվի է առնվում այն, որ անգլիական և ֆրան-

սիմական շրջանները կուլիսների և տեսում շանք չէին խնայում
այդ համբեկածները պակտից հանելու համար⁸⁰:

Պակախ երրորդ հավելվածով Արարական լիդայի առա-
շին գլխավոր քարտուղար էր նշանակվում Արդառութեան
Ազգամք, որը մինչ այդ նպիպառուի արտաքին գործերի մի-
նխօտության արարական երկրների վարչության տնօրնեն էր:

Արարական պետությունների լիդայի պակտը ստորագրո-
վեց Կահերեում 1945 թ. մարտի 22-ին Սիրիայի, Անդրկոր-
դանանի, Իրաքի, Սաուդյան Արարակայի, Լիբանանի և Եգիպ-
տուսի ներկայացուցիչների կողմից: Բացի Սաուդյան Արա-
րակայից, մեացած արարական պետությունները ներկայացված
էին իրենց վարչապետներով: Մայիսի 5-ին պակտն սառ-
բադրեց նաև Եմենը:

Պակտը ուժի մեջ մտավ մայիսի 10-ին: Արարական
լիդայի հասուցվածքն սկզբնական շրջանում կանխորոշվում
էր միայն նրա պակտով: Սակայն, եթե պակտը հետագա
տարիներին փոփոխություն չկրեց, ապա լիդայի կառուցված-
քը շատ բանով փոխվեց: Նախ լիդայի նորհրդի 1946 թ. նո-
յեմբերի 30-ի ըրուզումով ստեղծվեց լիդայի քաղաքական
կոմիտեն, որը հետագայում գարձագ նորհրդից հետո լիդայի
ամենաշարուր մարմինը: Լիդայի աշխատանքը կարդավորե-
լու համար ընդունվեցին նաև մի շաբթ օրինագծեր: 1951 թ.
զեկուեմբերին հաստատվեց նորհրդի աշխատակարգի վերա-
բռյալ օրինագիծը: 1951 թ. Հոկտեմբերին նույնպիսի օրինա-
գիծ ընդունվեց նաև լիդայի կոմիտեների, իսկ 1953 թ. մա-
յիսին՝ Դժխավոր քարտուղարության վերաբերյալ⁸¹: Այս օրի-
նագծերը զգալիորեն փոխվեցին լիդայի կառուցվածքը, ինչ-
պես նաև որոշ լրացումներ ժամցրեցին նորհրդի և կոմիտե-
ների աշխատակարգերի հարցերում: Այսպես, եթե ըստ լի-
դայի պակտի 4-րդ հոգվածի նրա կազմում լինելու էր վեց կո-
միտե, ապա ըստ նորհրդի աշխատակարգի լիդան ունենալու էր
հինգ կոմիտե: 1. քաղաքական, 2. տնտեսական, 3. սոցիա-
լական և մշակութային, 4. ֆինանսական և վարչական,
5. իրավաբանական: Կոմիտեների նիստում որոշումներն ըն-
դունվելու էին մայիսերի պարզ մեծամասնությամբ, սակայն
դրանք ուժի մեջ էին մտնելու նորհրդի կողմից հաստատվե-
լուց հետո միայն: Անհրաժեշտության դեպքում կարող էին

կազմվել նոր կոմիտեների կրգայի խորհրդի նիստերը օրինական էին Համարվում նրանում անդամ երկրների մեծամասնության ներկայության դիպքում:

Արարական լիգայի հովանու ներքո կնքվել են բազմաթիվ տևականական, մշակութային, քաղաքացիան և այլ բնույթի պայմանագրեր, կրգայի գործունության շրջանակներն ընդունակելու և նրա կառուցվածքի փոփոխման առումով առանձնահատում նշանակություն ունի 1950 թ. ապրիլին կնքված Համատեղ պաշտպանության և տևականական համագործակցության պայմանագրիը²². Ըստ այդ պայմանագրի Երկրորդ հոգվածի, կրգայի մնել կամ ավելի անդամների դեմ կատարված ազգի սիմբոլ համարվում էր նրա բոլոր անդամների դեմ կատարարված ազգի սիմբոլ: Խոյն հոգվածով կրգայի անդամները պարագանելու միջոցների, այդ թվում նաև զինված ուժերի օգաւագործման, ազգի սիմբոլի ներքարիված ներկրին կամ երկրներին օգնելու, ազգի սիմբոլին հետ մշվելու, խաղաղությունն ու անվտանգությունը վերականգնելու համարու: Պայմանագրի 6-րդ հոգվածով նախատեսվում էր կրգայի խորհրդի վերահսկողության ներքո ստեղծել Համատեղ պաշտպանության խորհուրդ՝ բարեկացած անդամ երկրների արտաքին գործերի և ապօպացիւ պաշտպանության մինիստրներից: Այդ խորհրդին կից գործելու էր նաև մշտական սաղմանական կոմիտե, որում ներկայացվելու էին զինապար շտաբների ներկայացուցիչները և որը պետք է համակարգեր անդամ երկրների ուղղական նախագծերը, ինչպես նաև զբաղվեր նրանց զինված ուժերի միասնականացմանը և համանեման այլ հարցերով: Համատեղ պաշտպանության խորհրդում ձայների երկու երրորդի մեծամասնությամբ ընդունված որոշումները պարտադիր էին լինելու բոլորի համար: Նախատեսվում էր ստեղծել նաև Տնտեսական խորհուրդ, որին ստորագրավելու էր համանուն կոմիտեն: Պայմանագրի 10-րդ հոգվածը արգելում էր անդամ երկրներին կնքել որևէ պայմանագրի, որի դրույթները անհամատեղելի կլինեին տվյալ պայմանագրի հետ:

1954 թ. որոշվեց Արարական լիգայի բարձրագույն օրգան համարել արարական պետությունների ղեկավարների կոնֆերանսները, որոնք գումարվելու էին տարին մեկ ան-

զաման, 1965 թ. սեպտեմբերին Կասարլանկայի կոնֆերանսառում ընդունված Արարական Համերաշխության պահպաջ որոշումնեց Համարել Լիգայի պահպաջ Հավելված:

Լիգայի գոյության ավելի քան քառասում տարիների ընթացքում բազմաթիվ առաջարկներ են կատարվել այն արարական ավելի սերտ մի միությամբ (արարական երկրների ֆեդերացիայով, զորժադիր իշխանությամբ օժտված արարական միությունով և այլն) փոխարինելու վերաբերյալ: Սակայն արարական երկրների միջև դեռ 40-ական թթ. սկզբին շոշափելի, իսկ մեր օրերում արդեն ավելի ցցուն դարձած Հակասություններն ու տարբերությունները, արարական Համագործակցությունը ամբողջ արարական աշխարհն ընդորեկող մասշտաբով առայժմ հնարավոր են դարձելու իրազործել միհայն միջակետական ռեզիստան մի կազմակերպության՝ Արարական լիգայի միջնորդ:

Արարական պետությունների լիգայի ստեղծումը կարևոր պատմական իրադարձությունն էր արարական երկրների կյանքում: Հանձին նրա կյանքի կոչվեց մի կազմակերպություն, որը, հենվելով արարական անկախ պետությունների Համագործակցության ու արարական ամրող աշխարհի բազմաբնույթ աշակցության վրա և օգտագործելով պակտով իրեն ընձեռված հնարավորությունները, կարող էր էական օժանդակություն ցույց տալ արարական ժողովուրդների երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո օրբստորև Հղորացող Հակաբեմպերիալիստական պայքարին: Լիգայի ստեղծումը վկայում էր, որ արարական երկրների միհասնական շանթերով ավելի հեշտ է լուծել արարական աշխարհին հուզող շատ և շատ հարցերու Արարական լիգայի հետազա գործունությունը հաստատում է այս գրութիւնիները:

ԱՐԱԲԱԿԱՆ ԼԻԳԱՅԻ ԴԵՐԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՈՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ
ՄՂԱՇ ՊԱՑՔԱՐՈՒՄ

Արաբական պետությունների լիդան իր գործունեության ընթացքում մեծ ռէշաղություն էր զարձնում արաբական երկրների անկախության ամրապնդման գործին։ Արաբական պետությունները միշտ անկախական այդ կաղմակերպության մեջցով հաճախ էին միասնական քաղաքական կուրս որդեգրում թւ՝ արաբական առանձին երկրներին, թւ՝ ընդհանրապես իրணց բոլորին վերաբերող հարցերում։

Լիդայի առաջին նստաշրջանը նվիրված էր Լևանտի երկրների՝ Սիրիայի և Լիբանանի անկախության ամրապնդման խնդրին։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ազգային-ազատագրական շարժումը Սիրիայում և Լիբանանում ծավալվեց նոր թափով, 1943—44 թթ. այդ երկրների հայրենական ուժերը ազգային անկախության նվաճման ուղղությամբ հասան զգալի հաջողությունների։ Այդ թվականներին, հակառակ ֆրանսիական գաղութարարների ընդդիմադրությանը, Սիրիայի և Լիբանանի սահմանադրություններից հանվեցին ֆրանսիական մանդատին վերաբերող հողվածները, տեղական կառավարություններին փոխանցվեցին կառավարման մի շարք ֆունկցիաներ։

1944 թ. սկսած Լևանտի երկրներն սկսեցին առաջ քաշել հատուկ զորամասերն իրணց փոխանցելու էական հարցը։ Տեղական բնակչությունից հավաքագրված այդ զորամիավորումները փաստորեն «Սիրիայի և Լիբանանի ազգային բա-

Նակներն էինք, որոնք, սակայն, ոգտնվում էին ֆրանսիական սպաների հրամանաւարության ներքո և ննթարկվում էին Հայութում ֆրանսիական ռազմական ուժերի հրամանաւարությանը՝ 1945 թ. մայիսի սկզբին Հայտնի դարձավ. որ Ֆրանսիայի ժամանակավոր կառավարությունը հատուկ զորամասերի փոխանցման խնդիրը պայմանավորում է Սիրիայի և Լիբանանի հետ անիրավաճակասար ռազմական տևանական ու մշակութային պայմանադրերի կնքմամբ: Միաժամանակ գաղութարարները նոր զորամասեր ուղարկեցին Լիբանան²: Փարիզի այս քայլերը Սիրիայի և Լիբանանի կառավարությունների կողմից որակվեցին որպես իրենց նրկրների ազգային սուվերենությունը խախտող և անկախության ոգուն հակասող գործողություններ³:

Մայիսի վերջին տասնօրյակում Սիրիայում փաստորեն համաժողովրդական պայքար ծավալվեց ֆրանսիական ինպերիալիստների դեմ: Իրենց երկրի անկախության համար պայքարող Հայրենասերների դեմ նույնիսկ Հրանտանի, տանկեր և ինքնաթիռներ էին օգտագործվում: Առանձնակի դաժանությամբ աշքի ընկան Դամասկոսում մայիսի 29—31-ին ֆրանսիական զորամիավորումների ձևանարկած զործողությունները, որոնց ընթացքում զոհվեց 400 մարդ⁴:

Դռն մինչ այդ, Սիրիայի և Լիբանանի արտաքին գործերի մինիստրների մայիսի 27-ին կայացած հանդիպման ժամանակ որոշվեց դիմել Սիրաբական լիգային՝ խորհրդի արտահերթ նստաշրջան Հրավիրելու պահանջով: Բեյրութում և Դամասկոսում հավանաբար ակնկալում էին, որ իրենց մղած պայքարի հաջողաւթյանը կնպաստի նաև արաբական երկրների համերաշխության արտահայտումը:

1945 թ. հունիսի 4-ին Կահիրեում բացվեց Լիգայի խորհրդի նստաշրջանը: Անդամ պետությունների մեծ մասի պատվիրակությունները զիսավորում էին վարչապետները, Հունիսի 7-ին տեղի ունեցած 4-րդ նիստից հետո Հրապարակվեց Խորհրդի որոշումը ֆրանս-լեանույան ճնշաժամի կապակցությամբ: Դրա առաջին կետում Ֆրանսիայի գործողությունները որակվում էին որպես «ազգենիա» և նշվում էր, որ Փարիզը «պատասխանատվություն է կրում մարդկային կորուստների և հասցրած նյութական վնասի համար»⁵: Երկրորդ

Հետում ասվում էր, որ ֆրանսիական զորքերի ներկայությունը Սիրիայում և Լիբանանում խախտում է այդ երկրների տուչերների տումբը ու անկախությունը: Խորհուրդը միաժամանակ պաշտպանում էր ֆրանսիական զորքերի անհապաղ հեռացման վերաբերյալ Սիրիայի և Լիբանանի պահանջը: Ռուշան երկրորդ կետի վերջում նշվում էր, որ «Խորհուրդը վճռականորեն մերժում է այդ երկու հանրապետությունների տարածքում այլ օտարերկրյա ուժերի մնալու պայմանների անորոշության մասին պնդումը» և ավելացվում, որ «բրիտանական պաշտոնական անձինք հավաստիացրել են, որ նրանք մտադիր են ետ քաշել իրենց զորամասերն այդ երկու երկրներից»:⁹ Այսպիսով, Արաբական լիդան խնդրին համապարփակ մոտեցում էր ցուցաբերում, արծարծում ոչ միայն տվյալ պահին սրություն ստացած ֆրանսիական զորամիավորումների դուրս բերման հարցը, այլ նաև հերթում պատերազմական պարագաների բերումով դեռևս 1941 թ. Լեանտում գտնվող անդիմական զորամիավորումների տեղում հիմնավորվելու վերաբերյալ պնդումները: Որոշման երրորդ կետը վերաբերում էր հատուկ զորամասերին: Կիդայի խորհրդի համոզմամբ «այդ զորքերը, նրանց սպառապինությունը, հանդերձավորումը, ուղղմամթերքը և զորանոցները պետք է վերազարձվեին Սիրիային և Լիբանանին ու ննթարկվեին նրանց հրամանատարություններին, այդ երկրների կառավարությունների տրամադրության ներքո դրվելու համար»¹⁰, Վերջին, շորորդ կետում կիդայի խորհրդի իր պատրաստակամությունն էր հայտնում անել ամեն ինչ, որպեսզի «հասնի երկու հանրապետությունների նպատակների իրականացմանը», այն է՝ «պահպանել նրանց անկախությունը և դուրս բերել օտարերկրյա զորամասերը նրանց տարածքից»¹¹:

Այս որոշման ընդունումից հետո գումարվեց Խորհրդի նա երկու նիստ: Հունիսի 11-ի վերջին նիստից հետո հրապարակված հայտարարությունում նշվում էր, որ «Խորհրդը թնարկեց այն միջոցները, որոնք ձեռնարկվելու են խանգարելու համար ֆրանսիական պղբեսիան և պաշտպանելու Սիրիայի և Լիբանանի անկախությունն ու ամրողական սուվերենությունը»¹²: Կահիրեի իրազեկ շրջանակներում ենթադրում էին, որ խոսքն այն միջոցների մասին է, որոնք ձեռնարկվել-

ու էին, եթե Ֆրանսիան հրաժարվեր դուրս բերել իր զոր-
քերը Սիրիայից ու Լիբանանից¹¹:

Ֆրանս-Լիբանտյան ճգնաժամի նկատմամբ Արաբական
լիգայի որդեգրած դիմք միանշանակ չի գնահատվել սովորա-
կան պատմադրության էջերում: Է. Պ. Պիր-Բուզազովան,
մանրամասն ներկայացնելով լիգայի ընդունած որոշման շա-
րադրանքը, չի Հշտորոշել իր վերաբերմունքը դրա նկատ-
մամբ¹²: Կարելի է ասել, որ նա, համեմայն դեպու, բացասա-
կանորեն չի գնահատում լիգայի որոշումը: Պ. Վ. Միլոգրա-
դովը, խոսելով Արաբական լիգայի առաջին քայլերի, այդ
թվում Խորհրդի ֆրանս-լիբանայան ճգնաժամին նվիրված նըս-
տաշրջանի մասին, զրում է, որ դրանք «Հեռու էին ստեղծված
իրադրամիջան պահանջած կտրուկ բնույթին ունենալուց», բայց
այնուամենայնիվ «ազգային-ազատագրական շարժմանն օ-
ժանդակող էին»¹³: Վ. Բ. Լուցկու զրույցում նույնակեն տրված
է Արաբական լիգայի որոշման տեխսութ, սակայն դա կա-
տարված է էական ազնատումներով, որի պատճառով էլ թույլ է տրվել որոշման սխալ գնահատում: Բանն այն է, որ
Վ. Բ. Լուցկին, անտեղյակ լինելով երկրորդ կետի այն հատ-
վածից, որտեղ խոսվում է Լիանտում զոնվող անզիրական
զորամիավորումների մասին, պնդում է, որ Արաբական լի-
գան շնորհակալություն հայտնեց Անզիրային սիրիական
խնդրում նրա զիրբորոշման համար և նույնիսկ անզիրական
զորքերի դուրս բերում շաբահանջեց Լիանտի տարածքից¹⁴:
Այսուհետեւ Վ. Բ. Լուցկին զրում է, որ լիգան «պաշտպանեց
Զերշլիի առաջարկությունը սիրիա-լիբանանյան խնդիրը երեք
տերությունների՝ Անզիրայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի համատեղ
ժննարկմանը փոխանցելու մասին, առաջարկությունը, որը
բոլորովին չեր համապատասխանում Սիրիայի և Լիբանանի
շահերին»¹⁵: Լիանտյան խնդիրը Սիրիայի ու Լիբանանի մաս-
նակցությամբ վերոհիշյալ երեք պետությունների առջև քըն-
նարկման դնելու լիգայի երաշխավորության մասին է խոսում
նաև Պ. Վ. Միլոգրադովը¹⁶: Իսկ Յու. Ն. Շերբակովը զրում
է, որ լիգան «լուսիթյան մատնեց, նույնիսկ արդարացրեց այդ
երկրների անզիրական օկուպացումը»¹⁷: Սակայն, ինչպես
տեսանք վերևում, Արաբական լիգան բոլորովին էլ շարդա-
րացրեց, կամ լուսիթյան շմատնեց անզիրական զորամիավո-
54

բումների հարցը, այլ բավականին աներկրայորեն արտահայտվեց դրանց դուրս բերման օգտին, ընդ որում շեշտելով, որ այդ կապակցությամբ համապատասխան հավաստիացումների են ստացվել անգիտական պաշտոնական շրջանակներից: Իսկ դա հակառակ այն իրողության, որ 1945 թ. հունիսին Ֆրանսիայի գործողությունների հետևանքով առավել սուր դրված էր Ֆրանսիական զորամիավորումների գուրս քերման հարցը, իսկ անգիտական ուղղմական ներկայության խնդիրը հետառում կարծեք մոռացության էր մատնված: Իրականությանը մի համապատասխանում նաև վ. թ. Լուցկու և Պ. Վ. Միլոզրագովի այն պնդումը, թե Արարական լիգան հանդես եկավ լևանտ-ֆրանսիական հարցը ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի առջև քննարկման դնելու առաջարկով: Նման փաստի մենք չենք հանդիպել Արարական լիգայի 1945 թ. հունիսյան նստաշրջանի և ոչ մի փաստաթղթում: Այսպիսի հարեւոր նրեւութիւնը կողքով, եթե այն անդի ունեցած միներ, դժվար թե լուսվյամբ անցնեին Ն. Հ. Շովհաննիոյանն ու Հ. Ս. Սարգսյանը և է. Պ. Պիր-Բուղաղովան՝ Սիրիայի այդ շրջանի պատմությանը նվիրված իրենց աշխատություններում, նման փաստ մի արձանագրել նաև Արարական լիգայի գործունեությունն ուստիմնասիրած որևէ օտար հեղինակ: Եղիսաբետացի իրազեկ մասնագետ Բուտրոս Ղալին, օրինակ, իր աշխատությունում անդրադառնալով լևանտ-ֆրանսիական հարցում Արարական լիգայի որդեգրած կեցվածքին, հիշատակում է միայն մեզ հայտնի փաստերը¹⁵: Այս վրիպման պատճառն ամենայն հավանականությամբ այն է, որ Վ. թ. Լուցկու և Պ. Վ. Միլոզրագովը, իրենց գրքույկները գրելով դեպքերի թարմ հետքերով, հնարավորություն շեն ունեցել հշգրտել իրենց ձեռքի տակ եղած լրագրացին տեղեկությունների հավաստիությունը:

Անհնար է ճիշտ զնահատական տակ Արարական լիգայի դիրքորոշմանը՝ առանց Խորհրդի նստաշրջանի ընթացքի հետ կապված մի շարք պարագաներ լուսաբանելու թեկուզ միայն այն փաստը, որ Խորհրդի Գ-րդ Նիստից հետո, երբ հրապարակվեց վերոհիշյալ որոշումը, տեղի է ունեցել Խորհրդի և Էրկու նիստ, որոնց ընթացքում որևէ էական նոր որոշում մի կայացվել, հուշում է այն մասին, որ լիգայի որոշ ան-

դամներ դեռ որոշակի ակնկալիքներ ևն ունեցել նստաշրջանից։ Ամբողջ Հարցն այն է, որ, ինչպես նշված է է. թ. Լուցեու մաս և հավաստված այլ ազբյուրներով ևս, սիրիական պատվիրակությունը, շրավարարվելով ընդունված որոշումով՝ առաջարկում էր Ֆրանսիայի դեմ կիրառել մի շարք պատճամիչոցներ՝ խոհել զիվանապիտական հարարերությունները Փարիզի հետ, արարական երկրներում դադարեցնել ֆրանսիանունով տրվող ասդիմագորդումները, արգելել ֆրանսերենի զասալանդումը և Սիրիային ու կիրանանին հասցված վեւասիշտվով ֆրանսիական ունեցվածքներ բանապատել արարական երկրներում¹⁹։ Այս առաջարկը, սակայն, պլանավորում ընդդիմության պատճառով չընդունվեց²⁰։ Դա հիմքնի նմանութեակ կեցվածքն ամենայն համանականությամբ պայմանավորված էր Ֆրանսիայի ճնշմամբ։ Պետք չէ բացառել նաև, որ Լոնդոնն էլ խստիվ կընդդիմանար Արարական միջայի հարումը միջոցառումներին, վախճանալով, որ այդպիսի որոշումը վաս նախադեմ կհանդիսանա և հետագայում որևէ այլ ինքը ի հասկացությամբ արգեն կարծարժանի Անգլիայի գետմաժամքուներ կիրառելու հարցը։ Այսպիսի հնթապրաւուան հավանականությունը կմնանա, եթե հաշվի առնենք նաև յանդրի առնվատթյամբ 1945 թ. մայիսի վերջի ու հունիսի սկզբի անգլո-ֆրանսիական հարարերությունները մանրամասները։ Մայիսի 31-ին, երբ ֆրանս-սիրիական հակամարտությունը հասել էր իր կիզակետին, անդիսական կառավարությունը հատուկ հուշագրով Ֆրանսիայից սկանչանցնց անմիջապես դադարեցնել կրակը և զորքերը զրանոցներ վերադարձնել Ելիսելով ուժերի հարարերակցությունից։ Փարիզն ստիպված էր համակերպիվել և կատարել Անգլիայի ներկայացրած պահանջները։ դադարեցնել կրակը և զորքերը հետքաշել Դամասկոսից ու մի շարք այլ վայրերից²¹։ «Նրանց տեղը, — շարունակում է Ն. Շովշանիսյանը, — զրավեցին անգլիական զորքերը, որոնք արդեն մայիսի 31-ի երեկոյան մտան Սիրիայի մայրաքաղաքը²², Անգլիայի այսպիսի դիրքուրոշումը «արդյունքն էր նրա այն քաղաքականության, որին նպատակն էր թույլ շտալ Ֆրանսիային իր դիրքերն ամրապնդել Սիրիայում ու կիրանանում...»²³, ինչպես ցույց տրըցեց, այդ ուղղությամբ Լոնդոնը զգալի հաջողություններ ար-

ձանադրեց մայիսի վերջին, ուստի և հունիսի 4-ից 11-ը, Արարական լիգայի խորհրդի նստաշրջանի օրերին, լևանոյան խնդրում անզլո-ֆրանսիական առնակատումը շարունակելու համար օրէնքութիվ պատճառներ չկային, և ուրիմն նրանց համատեղ հանդոս գույք միանդամայն հավանական էր: Եվ վերջապես, դժվար է հակվել այն մոտքին, որ կոնդոնից զգալի կախման մեջ գտնվող եղիստական կառավարությունը պատմամիջոցների գեմ արտահայտվեր Փարիզի դրդմամբ միայն:

Ինչ խոսք, սիրիական պատմիրակության առաջարկների ընդունութը անշափ օգտակար կլիներ թէ՛ կեանտի երկրների ազգային-աղաւատագրական պայքարի, թէ՛ արարական նորաստեղծ կազմակերպության հեղինակության բարձրացման համար: Եվ իրավացի է Վ. Բ. Խուցկու այն դիտողությունը, որ իրայի դիրքորոշման բացասական կողմն այն էր, որ դրանով չեին նախատեսվում ուկոնկրետ միջոցառումներ ֆրանսիական ադրեսիայի գեմ պայքարելու համար²⁴: Այդպիս մինչուղ հանդերձ, միաժամանակ հարկ է նշել, որ Արարական լիգայի որոշումը ընդհանուր առմամբ դրական նշանակություն ունեն: Առաջին անգամ լինելով իմայիշիայիստական մի երկրի քաղաքականություն միջանական այդ կազմակերպության միջոցով աներկայորեն զննադատվում էր: Ո՞իշատ է, ու կոնկրետ, բայց այնուամենայնիվ արտահայտվում էր արարական երկրների համերաշխությունը Սիրիայի և Արանի հետ: Լեանտում օտար զորքերի մնալուն ցուցարերվում էր համապարփակ մոտեցում, դրվում էր և ֆրանսիական, և անզիրական զորքերի դուրս բերման հարցը:

Ֆրանսիական իմայերիստաների գեմ սիրիական և լիքանանյան ժողովուրդների պայքարը վերջիվնոշությամբ պարագանեց: 1945 թ. հունիսին Ֆրանսիան հայտարարեց հատուկ զորամասները Սիրիային ու Լիբանանին փոխանցելու մասին: Իսկ 1946 թ. ընթացքում օտարերկրյա բոլոր զորքերը դուրս են հանդիսացնելու կամաց ակտուակտում կամ անդամակում իրենց ներզրումն ունեցան նաև համաշխարհային առաջադիմական ուժերը, մանավանդ ՍՍՀՄ-ը, որը թէ՛ 1945 թ. մայիսյան ֆրազարձությունների ժամանակ, թէ՛ 1946 թ. վետրվարին Մէկու-ի Անվտանգության խորհրդում կեանտից օտարերկրյա զորքերի դուրս բերման հարցը բննարկելիս, հանդիս եկավ

Սիրիայի և Լիբանանի շահերի պաշտպանությամբ։ Հսանոին ժողովուրդների հաջողությանը նպաստեց նաև արարական համերաշխության արտահայտումը, որը գրանորվեց Արարական լիգայի 1945 թ. հունիսյան որոշումում։

* * *

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Արարական արևելքում նոր թափով ծավալված ազգային-ազատազրական շարժման կարևորագույն բաղադրամասերից մեկը հպիապտական ժողովրդի պայքարն էր երկրի անկախության և նրա տարածքից անգլիական զորքերի դուրս բերման համար։

1922 թ. Եղիպտոսում թեպետ «անկախ» պետություն էր Հռչակվել, սակայն նրա անկախությունն ուներ ձեւական բընույթ²⁵, 1936 թ. անգլո-Եղիպտական պայմանագիրը նույնացնեն ըստ էության շփոխվեց անկախության ձեւական բնույթը, քանի որ երերում շարունակում էին մնալ րիխտանական զորքերը՝ Եղիպտոսում անգլիական ունակության և քաղաքական անհրաժեշտության պիտակոր հնարանը²⁶։ Եվ պատահական չեր, որ անրերորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Եղիպտոսում համաժողովրդական պայքար ծավալվեց Եղիպտոսի տարածքից անգլիական օկուպացիոն զորքերի դուրս բերման և 1936 թ. անգլո-Եղիպտական ստըրկական պայմանագրի շեղյալ հայտարարման համարը²⁷։

1945 թ. վերջին և 1946 թ. սկզբին Եղիպտոսում համաժողովրդական և լույթներ տեղի ունեցան անգլիական զորքերի անհապաղ զուրս բերման կարգախոսի ներքու իրենց կանգվածայնությամբ առանձնակես աշբի ընկան 1946 թ. փետրվարի 21-ի ցույցերը, որոնց ընթացքում ընդհարումներ տեղի ունեցան ցուցարարների և անգլիական զինվորների միջև։ Հենց այս շրջանից սկսած անգլո-Եղիպտական կոնֆլիկտին սկսեց անդրադառնալ նաև Արարական պետությունների լիգան։ 1946 թ. մարտի 1-ին Հրապարակվեց Լիգայի պիտակոր քարտուղար Արգառուահման Ազգամի հայտարարությունը, որում նշվում էր, որ արարական երկրներն ու արարակարուրդը կանգնած են Եղիպտոսի կողքին ոչ միայն նրա համար, որ նրանք արար են, այլ նաև պատճառով, որ

Նրանք համոզված են, որ էվակուացիայի (անգլիական զորքերի — Ե. Կ.) վերաբերյալ եղիպտական ժողովրդի ու կառավարության պահանջը ամրողապին արդարացի է²⁹: Հայտարարությունում մերկացվում էր անգլիական քաղաքագիտութիւնի այն փաստարկը, որ Եղիպտոսում անգլիական զորքերի ներկայությունը իրր պայմանավորված է Մերձավոր արևելքի խաղաղությունը պաշտպանելու ձգտությունը: Այնուհետև շեշտվում էր, որ ունգիոնի «կայունությունն ու խաղաղությունը չկննտր է իրականացվեն Կահիրեի միջնադարյան միջնաբրդում, Սուեզի ջրանցքում ու արաբական այլ երկրներում ժողովրդի կամքին հակառակ զորամիավորումներ պահելով» և որ «Հին գաղութարարական և իմպերիալիստական դրույթները... կործանարար են արաբական և մահմեդական երկըրմէրում Մեծ Բրիտանիայի իրական և կենսական շահերի համար»³⁰:

1946 թ. մարտի 25-ին Լիգայի խորհուրդը, անգրադառնալով անգլո-Եղիպտական կոնֆլիկտին, միաձայնորեն որոշ շեշտվառությունը Եղիպտոսի պահանջները³¹, Լիգայի այս քայլերը ցույց էին տալիս, որ արաբական երկրները Եղիպտոսի մղած պարտարին համարարական նշանակություն էին տալիս:

Վախենալով եղիպտական ազգային-ազտագրական շարժման հետագա վերելքից, նաև հաշվի առնելով անգլո-Եղիպտական կոնֆլիկտի իր համար տհաճ արձագանքներն Արաբական արևելքում, Անգլիան ստիպված եղավ բանակցություններ վարել Եղիպտոսի հետ: 1946 թ. ապրիլ-մայիսին տեղի ունեցած անգլո-Եղիպտական բանակցությունների առաջին փուլը, սակայն, անարդյունք ավարտվեց: Նույն թվականի մայիսի վերջին Խնշասում (Կահիրեի մոտ) տեղի ունեցած Արաբական լիգայի անդամ երկրների զեկավարների բարձր մակարդակի հանդիպում, որի ընթացքում, ի շարուած հարցերի, քննարկելեց նաև անգլո-Եղիպտական հարաբերությունների խնդիրը: Ինչասի խորհրդաժողովի ավարտից հետո հրապարակված հայտարարությունում արաբական երեսները մի անգամ ևս հաստատեցին Եղիպտոսի պահանջները պաշտպանելու իրենց վճռականությունը: Նրանք միաժամանակ ողջունեցին անգլիական կառավարության խոս-

տումը՝ իր զորքերը նեղոսի հովտից դուրս բերելու վերաբեր-
յալ³¹: Բանն այն էր, որ Անդիայի վարչակնության 1946 թ-
մայիսի 7-ին հայտարարել էր անդիական զորքերը եղիպ-
տական տարածքից դուրս բերելու իր կառավարության ցան-
կության մասին, այն պայմանով, որ եղիպտական կառավա-
րությունը հնարավորություն տա «արտակարգ պայմանների
ունարում» անհապաղ վերադարձնել զորքերը դեպի այդ շք-
շան³²: Արարական լիդայի խորհրդի հունիսի 8-ից 13-ը Բլու-
դանում (Դամասկոսի մոտ) տեղի ունեցած նստաշրջանը
հաստատեց Ինշասում ընդունված որոշումները: Միաժամա-
նակ Խորհուրդը անհանգստություն հայտնից «անդրունիպ-
տական բանակցությունների ընդմիջվելու առթիվ» և հայտա-
րարեց, որ «եթե շրավարարվեն Եղիպտառուի բոլոր պահանջ-
ները, ապա անդրունիպտական բարեկամությունն այլևս չ-
կարող շարունակվել»³³:

Ինչպես տեսնում ենք, Ինշասում և Բլուդանում ընդուն-
ված որոշումներում Եղիպտառուի պահանջների պաշտպանու-
թյան հետ մենական առկա է լունդոնի հետ բարեկամական հա-
րաբերությունները պահպանելու ցանկություն: Այդ պատ-
ճառով էլ Բլուդանում հաստատված փաստաթուղթը քննա-
դասվեց սիրիական կօմունիստների կողմից: Փաստորնեն, ինչ-
պիս նշում էր կոմկուսի օրգան «Սառութ աշ Շաար» թերթը,
«Արարական նրկրների լիգան հաշվի շի առնում եղիպտական
համբային կարծիքը, որը գժգու է բանակցություններից և
պահանջում է եղիպտական հարցը դնել Անվտանգության խոր-
հրդում»³⁴, ծիշտ է նաև թերթի այն պնդումը, որ «իրայի
հայտարարությունը... շատ կարեոր և նշանակալի կլիները
եթե շուդեկազմունքը...»³⁵:

Արարական լիգայի դիրքորոշման այսպիսի ավելորդ վե-
հերոսությունը շատ բանով պայմանավորված էր նրանով
որ այդ շքանում Եղիպտառում իշխանությունը գտնվում էր
ծայրահեղ հետազիմական, իմպերիալիստամենտ ուժերի ձեռ-
քին: Նրանց քաղաքական գիծը գժգութությունը էր առաջացնուած
նույնիսկ բոլորովին էլ ոչ արմատական հայացքներ ունեցող
քաղաքական շրջանակներում: Եղիպտառուի այդ օրերի վարչա-
պետ Խամայիլ Միդկիի կառավարության զործունեության տրա-
մարանական ավարտը եղավ 1946 թ. Հոկտեմբերի 25-ին

նրա և Անգլիայի արտաքին գործների մինիստր Բերինի միջն անգլո-եղիպտական նոր պայմանագրի ստորագրումը։ Սակայն այդ պայմանագրի դրույթները այն աստիճան չեն համապատասխանում Եղիպտոսի ազգային շահերին, որ ժողովրդական լայն դանդաղաձների ճնշման ներքո 1946 թ. գեկտիւմների 9-ին Սիրիկին վերցիվերջո ստիպված եղավ Հրաժարական տալի Սիրիկի կառավարության, ինչպես նաև Սիրիկի-Թիվին պայմանագրի տապալման անմիջական պատճառ դարձավ սուզմանյան Հարցը³⁰։ Այսանդ Հարկ է շատ հակիրճ անդրադառնալ սուզմանյան խնդրի էությանը, քանի որ առանց դրա այդ շրջանի անգլո-եղիպտական Հարաբերություններն ուղղակի անհնար է լուսարանել։

Գետ XIX դ. վերցից Սուզանը ձևականորեն գտնվում էր անգլո-եղիպտական միասնական կառավարման ներքո, սակայն իրականում այնտեղ տնօրինում էին անգլիացիները։ Եղիպտական ազգային-ազատագրական շարժումը երկրից անգլիական զորքերի դուրս բերման Հարցը դիտում էր Շնեղոսի Հովտի միասնությանը, այն է՝ Եղիպտոսը և Սուզանը մեկ պետականությունում միավորելու գաղափարի հետ անխղեմորեն կապված։ Ընդ որում սուզմանյան ազգային-ազատագրական շարժման առաջադիմական թեր նույնպես սկըզբունքուն հանդիս էր դալիս Եղիպտոսի հետ միավորվելու գոտին։ Սիրիկի-Թիվին պայմանագրի Սուզանին վերաբերող դրույթը, որում խոսվում էր և նեղոսի Հովտի միասնության և ապագայում սուզմանյան ժողովրդին խնծնորոշման իրավունք տալու մասին, կողմերից յուրաքանչյուրը մեկնաբանում էր յուրովիվ³¹։ Սակայն, եթ 1946 թ. դեկտեմբերի 9-ին Անգլիան Հայտարարեց «Սուզանը Եղիպտոսից անջատելու որոշման մասին»³², Սիրիկի կառավարությանը Հրաժարական տալուց բացի որևէ այլընտրանը չմնաց։

1947 թ. սկզբին Արարական լիգան մի քանի անգամ հայտարարություններ արեց սուզմանյան խնդրում իր դիրքորոշման վերաբերյալ։ Հունվարի 7 թվակիր Հայտարարությունում շեշտվում էր, որ «Եղիպտոսից անջատվելու պահանջը մի օգնի Սուզանին անկախություն ձեռք բերելը»³³։ Լիգան կարծում էր նաև, որ «Եղիպտոսից Սուզանի անջատման կողմնակիցները օգնում են իմպերիալիզմին մնալու Սուզանում և դրա համար էլ

լիդան չի կարող աջակցել նրանց»⁴⁰: Հունվարի 19-ին հրապարակված հայտարարությունում խոսվում էր սույանյան խնդրի լուծման հգիպտական առաջարկների և կիդայի դրանց նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին: Հայտարարությունում ասվում էր, որ Եղիպտոսը դեմ չի սույանյան ժողովրդին ինքնորոշման իրավունք տալուն: Բայց այդ իրավունքը «պետք է հիմնվի ազատության և կողմնակի աղղեցության... բացակայության վրա...»⁴¹: Եղիպտոսը պատրաստակամություն էր հայտնում համաձայնն Սույանի ապագա ստատուսի վերաբերյալ հանրաքվե անցկացնելուն, պայմանով, որ մինչ այդ «իրականացվի ամբողջական էվակուացիա (անզիական զորքերի—Ե. Ա.), և ամբողջովին վերանան մնշում զործադրիկան բոլոր միջոցները, որոնք այժմ գտնվում են անզիացիների ձեռքին»⁴²: Այսպիսի դիրքորոշումը պետք է ընդհանուր առմամբ դրական համարել: Փաստորեն առաջարկվում էր սույանյան հարցի լուծման բավականին դեմուկրատական նախագիծ: Սկզբունքորեն ճիշտ էր նաև սույանցի անշատողականներին քննազատելը, եթե մասնավանդ հաշվի առնվի, որ այդ շրջանում անշատողական տրամադրություններով համակված էին Սույանի հետադիմական ուժերը: Սակայն Արարական լիդայի կեցվածքը սույանյան հարցում ուներ նաև բացասական երանգ: Բանն այն էր, որ կիդան ոչ միայն հրատակորեն չէր սահմանազատվում «եղիպտական թագի հովանու ներքո» Սույանի և Եղիպտոսի միավորման դրույթից, այլ նաև հանգես էր գալիս զրա պաշտպանությամբ, այդպիսով համերաշխելով Եղիպտոսի կառավարության կեցվածքի հետ Բնկ այդ դրույթին հետևող հգիպտական հետադիմական շրջանները հակադրվում էին նեղոսի հովտի միասնության կարգախոսը դեմուկրատական դիրքերից պաշտպանողներին, որոնք միասնություն ասելով հասկանում էին առաջին հերթին ուրիշ եղբայրական երկրների՝ Եղիպտոսի և Սույանի ժողովուրդների միացյալ հակատ, ուղղված՝ անզիական իմակերիալիստների դեմ»⁴³:

Սույանյան հարցի լուծման վերեսմ հիշված պլանը անզիացիների կողմից մերժվեց: Լուղոնք մտադիր չէր զիշումներ անել ո՞չ սույանյան խնդրում, ո՞չ էլ նեղոսի հովտից իր զորքերը դուրս բերելու հարցում: Ճիշտ է, հականզիա-

կան ուժեղ արամազությունները գոնե մասնակիորեն թուլացնելու նպատակով կռնդոնց 1946 թ. հունիս, 1947 թ. մարտ ամիսների ընթացքում իր զորամիավորումները ևս քաշեց Կահիրենից, Աշերանդրիացից և Եղիպտոսի այլ շրջաններից՝ դրանք կենտրոնացնելով Սոււելի շրանցքի գոտում, բայց դրանով անգլո-կղիպտական կռնֆլիկտի սրությունը բոլորովին էլ չվերացավ:

Եղիպտոսի վարչապետի պաշտոնում համային Միջիբին փոխարինած Մահմուդ Նուրբաշին դեռ 1946 թ. զեկոտեմբերին հայտարարեց անդլո-եղիպտական կռնֆլիկտը ՄԱԿ-ի Անվատանգության խորհուրդ մտցնելու իր կառավարության մտադրության մասին: Արաբական լիգայի խորհրդի 1947 թ. մարտին տեղի ունեցած նստաշրջանում նշվեց, որ անդլո-եղիպտական բանակցությունների անարդյունավետությունն է ստիպում Եղիպտոսին դիմել ՄԱԿ: Միաժամանակ խորհուրդը պահանջեց սանդլիական զորքերի ամբողջական և անհապաղ վակակուացիա և եղիպտական թագի ներքո նեղոսի հովտի միասնությունը⁴⁴:

1947 թ. հունիսին Եղիպտական կառավարությունը պաշտոնապես դիմեց ՄԱԿ՝ անգլո-եղիպտական վեճը Անվտանգության խորհրդում քննարկելու համար: Անվտանգության խորհրդը օգոստոս և սեպտեմբեր ամիսներին մանրամասն քննարկեց Հարցը, ուսեալին արևմտյան և նրանց հարող միշտը այլ երկրների անզլումն կեցվածի պատճառով հնարավոր շեղավ որեւէ որոշում կայացնել: Միայն Սովետական Միությունը, Լեհաստանը և Միրիան էին հետևողականորեն պաշտպանում անզլիական զորքերի դուրս բերման վերաբերյալ Եղիպտոսի պահանջը: Անվտանգության խորհրդուն անորոշ ժամանակով հետաձգեց Հարցի քննարկումը⁴⁵: Կիդարի քաղաքական կռմիտն այդ կապակցությամբ 1947 թ. և սպասամբերի 20-ին իր ափսոսանքն արտահայտելով նշեց, որ Հարցի անարդարացի լուծումը կարող է «վտանգի արարական բոլոր երկրների անվտանգությունն ու խաղաղությունը»⁴⁶: Արաբական լիգայի խորհրդի հոկտեմբերյան նըստաշրջանը մենք անդամ ևս հանդիս եկավ Եղիպտոսի պահանջների պաշտպանությամբ⁴⁷: Դրանից հետո մոտ երեք տարի կրտսեն այլևս շանդրադարձ անզլո-եղիպտական

կոնֆլիկտին։ Դա բացատրվում է նրանով, որ արդեն 1947 թ. վերջից արարական աշխարհի ուշադրությունը կենտրոնացած էր Պաղեստինի վրա։ Խմբերի փական տերությունների քանքերով՝ հրահրված արարա-իսրայելական պատերազմը առժամանակ էրէրորդ պլան մղեց արարական ժողովուրդ-ներին հուղող մյուս բոլոր խնդիրները, այդ թվում և Եղիպատուից անդիմական զորամիավորումների գուրս բերման հարցը։ Ավելին, պատերազմում արարական երկրների անհաջողությունը որոշ ժամանակով անդամական հարաբեկան երկրներում ծավալվող ազգային-ազատագրական շարժումը։ Այդ իրադարձությունները բնականաբար ազդում էին նաև Արարական լիզայի դործունեության վրա։ Միայն 1950 թ. կիզան սկսեց վերաշխատացնել իր գործունեությունը։ 1950 թ. նոյեմբերին ԱՄՆ կատարած իր այցելության ժամանակ գրլիամբոր քարտուսաբ Աղջամը հայտարարեց, որ «Մեծ Բրիտանիան, եթե չի ցանկանում, որ Եղիպատուը դառնա արյունական հուղումների և միջադեպերի թատերաբեմ, պարտավոր է իր գործերը ևտ քաշել Սուեզի շրանցքի գոտուց»⁴⁸։

1950 թ. սկզբին Եղիպատուը տեղի ունեցած պառամենտական ընտրություններում հաղթանակեց Վաֆդ կուսակցությունը, որի առաջնորդ Մուստաֆա Նահճան էլ հունվարի 12-ից սկսեց պլիսավորել երկրի կառավարությունը։ Նոր կառավարության առջև դրված կարեռագույն խնդիրը շարունակում էր մնալ օտարենրկյա ղործերի դուրս բերումը։ Սակայն Նահճանը երկար ժամանակ փորձում էր խնդրի լուծմանը հասնել անդունեցիպատական երկկողմանի բանակցությունների միջոցով։ Ավելի քան մեկ և կես տարվա ընթացքում անդի ունեցած տարրեր մակարդակի խորհրդակցությունները, սակայն, նորից համաձայնության չհանգեցրին։ Այդ ընթացքում վաֆդական կառավարությունը կորցրեց ժողովական զանգվածների վատահությունը, ևսիստված հեղինակությունը հնարավոր էր վերականգնել միայն 1936 թ. անգլո-Եղիպատական պայմանագիրը շնորհած հայտարարեց այդ ուրայմանագիրը շեղյալ համարելու Եղիպատուի կառավարության որոշման մասին։ Մեկ օր անց Արարական լիզայի քաղաքական կոմիտեն հանդես եկավ Նահճանի կառա-⁴⁹

վարդության այդ քայլի պաշտպանութամբ մեկ անգամ ևս հավասար է իդայի աջակցությունը նպիկտոսի պղպաշին պահանջներին⁵⁰:

Թաղարական կոմիտեի այս քայլը կարևոր նշանակություն ուներ: Այն ցուցը էր տալիս, որ Կաջերեի սրոշուամբ արժանակում է արարական բոլոր ժողովուրդների հավանությանը: Իսկ վերջիններին համերաշխությունը նպիկտոսի հետ այն կարենոր գործոններից մեկն էր, որը նաշնասի կառավարությանն օդինց կայունությունն զբանարկել և մերժել 1951 թ. նույնամերների 13-ի ԱՄՆ-ի, Անդրխայի, Ֆրանսիայի և Բուրժայի կառավարությունների առաջարկը «մերձավորարկելյան հրամանատարության» ստեղծելու մասին: Այդ առաջարկի շնորհաւամբ փաստուն կնշանակեր Սուեզի շրանցքի գոտու անդրխական օկուպացումը փոխարինել իմպերիալիստական կրկների համատեղ օկուպացմամբ: Հոկտեմբերի 15-ին նպիկտական պառաւմների երկու պահանջներն էլ հաստատեցին 1936 թ. անգլո-կղիպտական պայմանագիրը շեղյալ հայացարարելու մասին օրինագիծը: Էստոնի, սակայն, անտեսեց այդ քայլը, իսկ 1951 թ. Հոկտեմբերին անդրխական դուրսիավորումների դեմ սկսված պարտիզանական պայքարից հետո, հետզհետեւ ավելի ու ավելի աճեց Սուեզի շրանցքի գոտուն գտնվող անդրխական զինվորների թիվը: 1951 թ. զեկումբերին Արարական լիգայի զինավոր քարտուղար Ազգամը, անդրադառնալով «կղիպտական հայրենատերներին» և անգլիական զորամիավորումների միջև սկսած բախումներին, հայտարարեց, որ դրանք են այլ ճշնաժամային երավիճակի, որը կարող է պայթել ցանկացած ժամանակը⁵¹, չափական ավելացրեց, որ «ո՞չ Սուեզի շրանցքի գոտին աղատ աշխարհի շահերից հենակով պաշտպանելու պատրվակը, ո՞չ է նպիկտոսը սովորական ազրեսիայից պաշտպանելու շինուությունը պնդումը չեն կարող երբեք թուլացնել եղիպտական ժողովրդի վճռականությունը՝ վերջ տալու օտարերկրյա ուժերի կողմից երերի օկուպացմանը»⁵²:

Անգլո-կղիպտական կոնֆլիկտի լուծման համար ավելի բարենպաստ պայմաններ ստեղծվեցին նպիկտոսում 1952 թ. հունիսյան հեղափոխության հաղթանակից հետո: Խշխանության գլուխ եկած հեղափոխական ուժերը մտադիր էին վճռա-

կան միջոցներով հասնել երկրից անզվիական զորքերի հնապացմանը: Խնշպես նշում են Ի. Պ. Բելյաևն ու Ե. Մ. Պրիմակովը «Հեղափոխության զեկավարման խորհուրդն իր առջե խնդիր գրեց Եղիպատոսի տարածքից անզվիական զորքերի դուրս բերմանն հասնել ամենաեկարճ ժամկետում»⁵³, Արդեն 1953 թ. վեհապետական ստարագրվեց Սուվանի վերաբերյալ անուշունդիպատական համաձայնադիրը, ըստ որի նախատեսվում էր երեք տարվա անցումային շրջանի ընթացքում օտարերկրյա զորքերը դաւա բերել Սուվանից, իսկ այնուհետև միջազգային հակոդության ներքո անցկացնել Սահմանադիր ժողովի ընտրություններ, որին էլ վերչնականապես կորչեր Սուվանի ապագա ստատուսը⁵⁴: Իսկ 1953 թ. ապրիլի 27-ին Կահիրենում պաշտոնապես սկսեցին Սուվանի շրանցքի գոտոց անզվիական զորքերի դուրս բերման վերաբերյալ անզլունդիպատական բանակցությունները: Մինչ այդ, Եղիպատոսն անհրաժեշտ համարեց մեկ անգամ ևս Արարական միջայի միջոցով արարական երկրների համերաշխությունն ապահովել իր ձգած ուշացրարին: Սահմանադիրը արարական մի շաբթ երկրների՝ Սիրիայի, Իրաքի և Լիբանանի կառավարությունները, ամենայն հավանականությամբ լուրջունի դրդամք, ոմեն ինչ արեցին, որպեսզի քաղաքական կոմիտեի այրիի սկզբների համար նախատեսվող նստաշրջանը հետաձգվի⁵⁵, Մայիսի 9-ին կոմիտեն այնուամենանիվ անդրագարձավ անզլունդիպատական կոնֆիդետին: Նրա հրապարակած հայտարարությունում շեշտվում էր, որ իր երկրի տարածքից օտարերկրյա զորքերի դուրս բերումը պահանջելը «Եղիպատոսի բնական իրավունքն է» և որ սեղիպատական խնդիրը ամբողջ արարական աշխարհի խընդիրն է⁵⁶: Կիդայի կարծիքով Եղիպատական հարցի լուծման ձգգումը վնասում էր «Արարական արևելքի խաղաղությանն ու կայունությանը»⁵⁷: Քաղաքական կոմիտեի այդ հայտարարությունը նույնությամբ հաստատվեց Լիգայի խորհրդի կողմից և մայիսի 11-ին հրատարակվեց որպես Խորհրդի որոշում⁵⁸: Արձանագրենք, որ արարական անզլունդես վարչակարգերը հնարավորություն շնորհին բացահայտորեն ընդդիմանալու այդ որոշմանը, քանի որ հակառակ գեպքում կապարսավելին թե՛ համարարական, թե՛ իրենց երկրների հանրային կարծիքների կողմից,

1953 թ. դարնանն սկսված անգլո-հպիսլտական բանակը թյառությունների առաջին փուլը որոց ընդմիջումներով շարունակվեց մինչև Հռկանմքերի վերջը՝ Այդ ընթացքում կողմերը մի շարք հանգույցային հարցերում համաձայնության եկան։ Մակայն Սուհելի ջրանցքի գոտու ուսումնական խարիսխները ովերտակալիվացնելու Անգլիային վերապահվող իրավունքի նշայմանների և անգլիական զորքերի դուրս թերումից Հետո խարիսխներում մեացող անգլիական տեխնիկական մասնագետների ունենալիք իրավունքների հարցերի շուրջ կողմերի միջև համաձայնություն շկայացավ⁶⁰։ Խոկ Նդիպոտոսի նոր զելամբարությունը ցանկանում էր բանակցություններն արտգև և արդյունավետ ավարտել, ոչ առանց հիմքի կարծելով, «որ զրուցը (բանակցությունների—Ե. Ա.) հաշողությունը կնպաստի լայն դանդվածներում նոր իշխանության ժողովրդականացմանը, հետեւարար դրան (նոր իշխանությանը—Ե. Ա.) հազրություն նաև քաղաքական կայտնություն, որի կարիքը նա այդ աստիճան զգում էր»⁶¹, 1954 թ. Հռկանվարի 10-ին, բանակցությունները վերսկսելու փորձից առաջ, Նդիպոտոսի արտաքին զորքերի մինիստր Մահմուդ Ֆավլին անգլո-հպիպատական կոնֆլիկտը նորից ներկայացրեց Արարական լիգայի խորհրդի նստաշրջաններն⁶²։ Խորհրդից, մտահոգություն հայտնելով օտարերկրյա զորքերի դուրս թերման հարցի ձգձգման կապակցությամբ, մեկ անգամ ևս իր աշակեցությունն արտահայտեց Նդիպոտոսին։ Հետաքրքրական է Խորհրդի հայտարարության նրկուրդի մասը, որտեղ արարական երկրներին կոչ էր արվում ավերափոխել իրենց քաղաքականությունը... և որևէ օտար երկրի հետ համագործակցություն ու բարեկամություն հաստատել միայն արդարության և արժանապատվության հիման վրա։ Այսպիսով Արարական լիգան ցանկանում էր ընդգծել Նդիպոտոսի հետեւողական կեցվածքի ճշշտությունը և այն օրինակելի էր համարում արարական մյուս երկրների համար։

1954 թ. Հռկանվարին Անգլիան և Նդիպոտոսը նախաստորապեցին անգլիական զորքերի դուրս թերման վերաբերյալ համաձայնագիրը՝ Խոկ նույն թվականի Հռկանմքերի 19-ին այն ստորագրվեց և այդ օրվանից եւ ուժի մեջ մտավի Համաձայնագիրը ուղղվեց գլխավոր խնդիրը՝ ազատել Նդիպոտոսը

օտարերկրյա օկուպացումից⁶³: Այդ առթիվ կիսայի խորհուրդը շնորհավորեց Եղիպառոսի կառավարությանը⁶⁴: Անզլու-Եղիպառական կոնֆլիկտի հաճախակի քննարկումները Արաբական լիգայի տարրերը մարմիններում այդ խնդրին տվեցին Համարաբական Հնչեղություն, նպաստելով դրա շուրջ արաբական ժողովուրդների հանրային կարծիքի կենտրոնացմանը, ինչը վերջիվերջո զգալիորեն նպաստեց Եղիպառոսի մղած պայքարի հաջող ավարտին:

Անզլու-Եղիպառական վերոհիշյալ համաձայնազրի ստորագրումից հետո Եղիպառոսի առջև ծառացան քաղաքական անկախության ամրապնդման, սոցիալ-տնտեսական զարգացման, արտաքին քաղաքականության սկզբունքների փոփոխման և երկրի պաշտպանութեական խոցելի տեղերը վերացնելու հետ կտպված մի շարք խնդրներու 1955 թ. առավել սրություն ստացավ Եղիպառոսի զինված ուժերը արդիական զենքով ապահովելու հարցը: Խմանքի լիստական երկրուները մերժում էին զենք և զինամթերք վաճառելու Եղիպառոսի խնդրանքները՝ այդ բանը պայմանավորելով իրենց զինավորությամբ ուղարկածական խմբավորումում Կահիրեի մասնակցությամբ: Այս պայմաններում Եղիպառոսի զեկավար Գամալ Աբդել Նասերը որոշեց զիմել սոցիալիստական երկրներին: 1955 թ. սեպտեմբերին Եղիպառոսի և Զեխոսովակի հիմքությամբ միջև համապատասխան պայմանագիր կնքվեց: Եղիպառոսի արտաքին քաղաքականության այդ «շրջադարձ» սկսեց գնալով ավելի շատ աշակցություն վայելել Ասիայում և Աֆրիկայում⁶⁵, Բնականարար արաբական աշխարհը նույնականացները շմնաց դրա նկատմամբ: 1955 թ. հոկտեմբերի 1-ին Արաբական լիգայի խորհրդի աշնանային նստաշրջանի առաջին իսկ նիստում որոշվեց ողջույնի հեռազբի Հզել Գամալ Աբդել Նասերին: Ճիշտ է, հեռազրում ուղղակիորեն չեր խոսվում սոցիալիստական երկրներից զենք գնելու մասին, սակայն Խորհուրդը ողջունում էր Եղիպառոսի վճռական քաղաքականությունը, որը նպատակամզգած է պաշտպանելու երկրի արժանապատվությունը» և Հայտարարում էր այդ քաղաքականության հետ արաբական երկրների համերաշխ լինելու մասին⁶⁶: Այսպիսով արաբական երկրները պաշտպանում էին Կահիրեի քաղաքականության շրջա-

ուրածը: Պատահական չէ, որ Համաշխարհային մամուլում Արարական լիգայի այդ հետազիրը իրավացիորեն ընկալվեց որպես արարական երկրների Համերաշխության արտահայտություն զննող գնելու հարցում Եղիպատոսի դրանուած նախաձեռնության հետ⁶⁷:

Եղիպատոսի քաղաքականությունը զնալով ավելի արմատական էր զանուում նաև այլ ոլորտներում: Այդ իրողության դրսելումներից էր Սուեզի ջրանցքի ընկերության ազգայնացման վերաբերյալ Եղիպատոսի կառավարության 1956 թ. հունիսի որոշումը: Արարական լիգայի քաղաքական կոմիտեն այս առնչությամբ օգոստոսի 17-ին ընդունեց հաստուի բանաձև, որը նույն օրն ևել հաստատվեց Խորհրդի կողմից: Դրա առաջին կետում արարական երկրները պաշտպանում էին Սուեզի ջրանցքի ընկերությունն ազգայնացնելու Եղիպատոսի որոշումը, իսկ երկրորդ կետում շնչառում էին, որ իրենք համերաշխ են Եղիպատոսի ձեռնարկած բոլոր միջոցառումների հետ: Խնչուելու հայտնի է, ջրանցքի ազգայնացումից հետո իմաստի համարական երկրները ուժիդ ճնշում էին գործադրում Եղիպատոսի վրա, նպատակ ունենալով շեղյալ Հայտարարել տալ Կահիրեկի Համարձակ որոշումը: Անգլիան ու Ֆրանսիան, որոնց պատականում էր ջրանցքի ընկերության բաժնետոմսերի մեծ մասը, սկսեցին զորամիավորումներ կենտրոնացնել Մրեկլյան Միջերկրականի շրջանում: Արարական լիգայի որոշման երրորդ կետում կոչ էր արվում վերջ տալ «այն ճնշմանն ու սպառնալիքներին», որոնց ենթարկվում է Եղիպատոսը և Հիշեցվում էր, որ «միջազգային վեճերը պետք է լուծել Միավորված Ազգերի կանոնադրությամբ նախահաված խաղաղ միջոցներով»⁶⁸:

Օգոստոսի 13-ին Խորհրդադրության հաստատեց Քաղաքական կոմիտեի մի նոր որոշում, որը դարձյալ Սուեզի ջրանցքի ազգայնացմանն էր վերաբերում: Այդ փաստաթղթում արարական երկրները ողջունում էին Եղիպատոսի պրևիդենտ Նախերի Հայտարարությունն այն մասին, որ իր կառավարությունը պատրաստ է ապահովել ազատ նավարկությունը Սուեզի ջրանցքում և համագործակցել բոլոր այն երկրների հետ, որոնք օգտագործում են ջրային այդ ուղին: Որոշման վերջում ընդունվում էր, որ «որևէ արարական երկրի սուվերե-

նության դեմ կատարված ոտնձգություն կհամարվի որպես
արարական բոլոր երկրների դեմ զործված ազգային ազգային այս քայլերը բարոյապես օգնում էին Եղիսաբետին՝ իր
քաղաքական կուրսը Հետևողականորեն շարունակելու և արև-
մըտյան երկրների խարդավանքներին դիմագրավելու զոր-
ծում և միաժամանակ արևմտյան տերություններին ստիպում
էին իրենց քաղաքականությունն իրականացնելիս նկատի
ունենալ նաև արարական աշխարհի համանական հակաղղե-
ցությունը դրա նկատմամբ:

Սուենոյան ճգնաժամի առաջին իսկ օրերից իմպերիալիս-
տական երկրները, ուղղմական ցույցեր կատարելու հետ մեկ-
տեղ, փորձում էին հարցի իրենց համար դրական լուծմանն
հասնել այլ ճանապարհներով ես: Առանձնապես մեծ հույսեր
էին կապվում Սուենի ջրանցքն օգտագործող երկրների կոն-
գրունում 1956 թ. օգոստոսի 16-ից 23-ը դումարված կոնֆե-
րանսի հետ: Սակայն Սովետական Միությունը, որը մասնակ-
ցում էր այդ կոնֆերանսին, վիճեցրեց իմպերիալիստական
երկրների փորձերը՝ կոնֆերանսն օգտագործել Սուենի ջրանց-
քի վրա օտարերկրյա տիրապետությունը վերականգնելու հա-
մար⁷⁰: Այնմտյան երկրները, սեպտեմբեր-հոկտեմբեր ամիս-
ներին հրավիրելով այսպիս կոչված երկրորդ և երրորդ լոնդոն-
յան կոնֆերանսները, հայտարարեցին Սուենի ջրանցքն օգտա-
գործողների ասոցիացիայի ստորագրման մասին: Խնայքս նշում է
սովետական հետազոտող Լ. Ի. Մեզվեդեռն, այդ ասոցիա-
ցիայի ստորագրմանը Շնայդեր էր հետապնդում յրանցքի վե-
րահսկումը վերադարձնել իմպերիալիստական երկրներին՝
ԱՄՆ-ի դիսավորությամբ⁷¹: Արարական լիգայի քաղաքա-
կան կոմիտեն հոկտեմբերի կեսին նորից անդրադապվ
Սուենի ջրանցքի ազդայնացման հարցին: Քաղաքական կո-
միտեի որոշման մեջ ասվում էր, որ «Սուենի ջրանցքի կա-
պակցությամբ ծագած ներկա ճգնաժամը վերաբերում է ա-
րարական բոլոր երկրներին և իրենից ներկայացնում է մի
փորձ՝ դրավելու Սուենը Եղիսաբետի և այլ արարական եր-
կրների վրա դիմված ճնշում զործադրելու միջոցով, ինչը
կվատանգի արարական երկրների խարդարությունը, ապահո-
վությունը և սովետնությունը⁷²: Արարական երկրները
միաժամանակ պատրաստակամություն էին հայտնում կոնֆ-

միեւը լուծել խաղաղ ձևով, բայց այնպես, որ դա «Համակառի եղիպատսսի ազգային սուվերենությանն ու արարեների ազգային շահերին»⁷³։ Այնուշետև որոշման մեջ ջրանցքն օգոստոսի ողբեկների ասոցիացիայի ստեղծումը «անընական» էր համարվում և դատապարտվում էին «Անդիբայի և Ջրանսիայի սպառնալի մեթոդներն ու քաղաքական, տնտեսական և ռազմական մնացումը, որոնց նրանք գիմում էին իրենց նպատակին հասնելու համար»⁷⁴։

Տեսնելով, որ «սովորական» միջոցները չեն օգնում վերականգնելու իրենց զիրքերը եզրակացնելու հոկտեմբերի 29—31-ին հարձակում կատարեցին Եզրակացնի գիմ։ Հակառակ եղիսպատճենների հերոսական զիմազրությանը, անդլո-ֆրանս-իսրայելական անհամեմատ ավելի լավ զինված բանակներն առաջ էին շարժվում գեազի երկրի խորքերը Սակայն Սովորական Միության խիստ նախազգուշացումների, ինչպես նաև սոցիալիստական երկրների, արարական և դարդացող մյուս պետությունների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ հասնալոր եղամի Նոյեմբերի 7-ին դադարեցնել ուազմական գործողությունները։ Առվետական կառավարությունն այդ օրերին առաջարկեց «ՄԱԿ-ի մյուս անդամների հետ ուազմածովային և ուազմաօդային ուժեր օգտագործել պատերազմը Եզրակացնում դադարեցնելու և ազրեսման սանձահարելու համար»⁷⁵։ Սուհոյան արկածախնդրությանն անդրադարձած համարյա բոլոր մասնադիտները միաբան են, որ «Սովետական Միության Դերբորոշումը կարելոր, կարելի է ասել վճռական դեր կատարեց Շեռյակը՝ ազրեսմայի ու միայն տապալման, այլ նաև նրա հնտեսնքները համեմատաբար կարճ ժամանակամիջունում վերացնելու գործում»⁷⁶։ Արդեն 1957 թ. մարտին օտարերկյա բոլոր զորքերը հնացել էին Եզրակացնի տարածքից։

Իսկ ի՞նչ դիրքորոշում ունեցան արարական պետությունները նոյյակ ազրեսմայի նկատմամբ։ Արարական բոլոր երկրները դատապարտեցին ազրեսորներին, իսկ նրանց մեծամասնությունը խոցեց դիվանապիտական հարաբերությունները Անդիբայի և Ջրանսիայի հետ։ Սիրիայում պայմանագրեց անդիբայի և Ջրանսիայի սնկերություններին պատկանող նավթամուղը, իսկ Սասույան Արարիայում արգելվեց նավթի մատակարարա-

ռումը անդպիսական հեղուկանավերին։ Եզիակտոսի վրա հարձակվելով, իմպերիալիստները հետապնդում էին ոչ միայն Սուսզի ջրանցքն իրենց վերահսկողությանը վերադարձնելու նպատակը, այլև հույս ունենի առավակելի նասերի առաջադիմական վարչակարգը, հարված հասցնել արարական ամբողջ ազգային-ազգայտազրական շարժմանը⁷⁷ և վերջին հաշվով արձատախիլ անել արարական երկրների համերաշխությունն ու համագործակցությունը հակախմակերթական կարգաբանությունը հակախմակերթական երկրների համարական իրարժիքի ներքո։ Սակայն իմպերիալիստական երկրներն իրենց հաշիվներում սխալվեցին։ Արարական երկրների համագործակցությունն ու համերաշխությունը ազգեստիայից հետո ավելի ամրապնդվեց։ Այսպես, տասնամյա ընդմիջութից հետո նոյեմբերի 13—14-ին Բեյրութում զումարված Արարական լիգայի անդամ երկրների զեկավարների խորհրդակցությունը, դատապարտելով եռյակ ազրեսիան, պահանջեց անպատճեն-իսրայելական զորքերն անհապաղ բերել Եղիպատոսից⁷⁸։

Այստեղ, սակայն, անխուսափելիորեն ժաղում է մի հարց։ Արարական լիգայի անդամ պետություններն ինչո՞ւ ուղղմական օգնություն ցույց չավեցին Եղիպատոսին, մանավանդ, որ նրանք բոլորն էլ անդամակցում էին Իսրայի հովանու ներքո կնքմած Համատեղ պաշտպանության պայմանագրին, իսկ սամանք, որինաւել Սիրիան և Սաուդիան Արարիան, Եղիպատոսի հետ ունենի նաև փոխադարձ օգնության երկեղողմանի պայմանագրեր Առաջին Հերթին նշենք, որ արարական առանձին երկրներ, մասնավորապես Սիրիան և Հորդանանը պատրաստակամություն հայտնեցին մասնակցելու ազգեստիայի հետ մզմանը, սակայն պրեզիդենտ Նասերը նախընտրեց նըրանց չներքաշել պատերազմի մեջ լայն սարատեգիական պատճառներից ելնելով⁷⁹։ Բոլոր զելոքերում չի կարելի արգարացված համարել Իսրայի ուղղմական օրդանների անզործության փաստը։ Այդ անգործությունը մասամբ պայմանագործված էր նաև Բաղդադի պակտի ստեղծումով և դրա նկատմամբ Արարական լիգայի անդամների դրսնորած վերաբերմունքով։ 1950-ական թվականների առաջին կեսին, երբ նոր էր ստորագրվել միջարարական համատեղ պաշտպանության պայմանագիրը, Արարական լիգան դործում միշտցա-

ոռումներ էր ձեռնարկում դրա պրոցեսների իրականացման
ուղղությամբ։ Սակայն Բազգաղի պակտի ստեղծումից (1955 թ.)
հետո արարական մի քանի երկրներ երկեղողմանի կամ եռա-
կողմ պաշտպանական պայմանագրեր կնքեցին և գերազա-
սեցին դրանց միջոցով ապահովել իրենց անվտանգությու-
նը։ Դրա արդյունքն եղավ այն, որ Համատեղ պաշտպանու-
թյան պայմանագրի ըստ Էռության ոչ վատ պլանավորված
ժեխանիզմը փաստորեն գաղաքաց գործելուց, իսկ երկկող-
մանի և եռակողմ այլեայլ պայմանագրերի հիմամբ ստեղծ-
ված նոր մարմիններն էլ անպատճառատ դիմավորեցին և այսի
ազրեսիան։ Մյուս կողմից ճիշտ չեր նաև այն, որ Արարա-
կան լիգայի անդամ երկրները, այդ թվում Եգիպտոսը, այն-
քան էլ ուսալ շղթահատելով իրադրության հնտապա դարպաց-
ման հետարակոր տարբերակները, 1956 թ. հունիսից հետո
չհեռանարկեցին լիգայի ուսպմական մեխանիզմը վերականգ-
նելու փորձերը Ի՞նարկե միամտություն կլինի կարծել, որ
եղանկ ազրեսիայի դեմ արարական երկրների ուսպմական
համատեղ ելույթը կարող էր էական ազգեցություն գործել
պատերազմական գործողությունների ընթացքի վրա, քանի
որ մի կողմում իմայնբիալիստական երկու հզոր երկրների՝
Անգլիայի և Ֆրանսիայի ու նրանց զաշնակից Խարայիլի մին-
չև ատամները արդիական զենքով զինված բանակներն էին,
իսկ մյուսում Եգիպտականի հետ պիտի կանգնեին փաստու-
թն, որո կազմավորման պրոցեսում գտնվող արարական
թույլ զինված բանակները եվ սակայն արարական երկըր-
ների մասնակցությունը պատերազմին, բացի ավագ պահեն
բարոյա-քաղաքական կարևոր գեր կատարելուց, բոլոր զեայ-
քերում անշափ «ուսանելի» կլիներ ազրեսորների, մանավանդ
Խարայիլի համար։ Ինչենիցէ, այս բոլորը պետք չէ խանգարի,
որպեսզի նշվի սուելլյան ճգնաժամի տարբեր փուլերում Ա-
րարական պետությունների լիգայի ակտիվության կարևորու-
թյունը։

Եղիպտոսից օտարերկրյա զորքերի դուրս բերման և
երկրի անկախության ամրապնդման ուղղությամբ Արարա-
կան լիգայի 1945—56 թթ. զործումնեությունը հակառակ որոշ
գեազրերում, մանավանդ 40-ական թվականներին, դրա որո-
շակի անհետողականությանը, այնուամենայնիվ զգալիորեն

նպաստաց և գիտական ազգային-ազատազրական շարժման
առաջընթացին:

1940—50-ական թվականներին արևմտյան երկրների
մերձավորարևելյան քաղաքականության հիմնական նպա-
տակներից մեկը ուղղությունը իրենց զվարավորությամբ ուղղ-
մաքաղաքական ազրեսիվ խմբավորումներ ստեղծելն էր: Այդ
թվականներին առաջ քաշվեցին այդպիսի խմբավորումներ
ստեղծելու մի քանի ծրագրեր:

Դեռ 1942—1945 թթ., երբ արարական երկրների միջև
բանակցություններ էին վարկում արարական երկրների մի
միավորում ստեղծելու հարցի շուրջ, անզինական զեկավար
շրջաններում մտածում էին ստեղծվելիք կազմակերպությու-
նը իրենց ձեռքբին հույս գործիք դարձնելու և այն իրենց նպա-
տակների իրականացմանը ծառայեցնելու մասին: Սակայն
Արարական լիդայի ծրագրային առաջին փաստաթղթերը՝
Ալեքսանդրիայի արձանագրությունը և Արարական պետու-
թյունների լիդայի պակար ցույց տվեցին, որ Անզինայի ա-
կընկալիքները անհող են: Լոնգոնում հատկապիս խիստ զըժ-
գուն էին այդ փաստաթղթերում Պաղեստինի և Պաղութային
լծի տակ գտնվող արարական մշում երկրների հարցերի
արժարժումից:

Արարական լիդայի գործունեությունում նշմարվող ան-
կախական այդ միտումները վերացնելու համար Անզինան
դիմեց գործուն քայլերի: Նախ լիդայի վրա ուժեղ ճնշում
քանեցվեց, ձգտելով նրա գործունեությունն առժամանակ
սահմանափակել երկրորդական նշանակություն ունեցող
հարցերով: Միաժամանակ անդրհորդանանյան զեկավար
գործիչները 1945 թ. աշնանից սկսեցին հարձակումներ գոր-
ծել լիդայի վրա, խոսել նրա գործուն ուժ շունենալու մասին,
նորից առաջ քաշելով արարական ավելի սերտ միտիյան
իրականացման գաղափարը, որի ստեղծման գործում առա-
ջին քայլը կլիներ անդրհորդանանյան էմիր Արդալաճի
զվարավորությամբ «Մհե Սիրիայի» պետության ստեղծումը⁸⁰:
Ակսվեց պրոպագանդիկ նաև Արարական լիդան Պարսից
ծոցի անդիմական լծի տակ գտնվող արարական իշխանա-
պետությունների հաշվին ընդարձակելու ծրագիրը⁸¹: Իսկ

անդումնա իրաքյան գործիչները 1945 թ. սեպտեմբերից սկսեցին Հանգես զայ Թուրքիան Արարական լիգայի կազմում ընդգրկելու առաջարկով⁸²: Բաղդադի այս նախաձեռնությունը, ըստ «Արևի», «կամապատասխան» դիտավորությանը բրիտանական դաշնակցիններ⁸³: Տարաբնույթի, բայց այս կամ այն չափով անպայմանորեն լիգային առնչվող այս ծրագրերի իրականացումը զգալիորեն կոյսուրացներ Մերձավոր արևելքում «Արևելյան բլոկ» անվանումով ուսումնական էր անդամագրել ոչ միայն Արարական լիգայի, այլև Սաադարայի պակտի երկրներին (Թրան, Աֆղանստան և Թուրքիա): Այդ ծրագրերը միաժամանակ կոչված էին թուլացնել լիգայի հակամիւշելլիքալիստական պոտենցիալը, մի դեպքում լիգայի անդամ երկրների շարքում վերախմբավորում կատարելու («Մեծ Սիրիայի ծրագիր»⁸⁴), մյուսում՝ լիգան արևմտամետ երկրների հաշվին ընդարձակելու միջոցով։ Բայ «Արևելյան բլոկի» ստեղծումը հնատագայում կարող էր հանդիցնել Արարական լիգայի, որպես անկախ կազմակերպության, տարրաւումմանը այդ խմբավորման շրջանակներում։

Արարական լիգային, սակայն, միայն «Արևելյան բլոկի» դումարելիներից մեկը լինելու գերը չէ, որ հատկացված էր Այդ խմբավորման գործերին՝ անդրադարձած հեղինակների կողմից չի արձանագրված, որ անդիւական գործիչներն արարական երկրներում այդ ծրագրի ընդունումը հետացնելու նպատակով ձգտում էին անպայման ապահովել դրա նկատմամբ լիգայի խորհրդի դրական վերաբերմունքը։ Ըստ երեսութիւնի էտնդունում կարծում էին, որ այս դեպքում գործին կօժանդակի նաև լիգայի անդամներ Իրաքի և Անդր՛հրդանանի դիրքորոշումը։ 1945 թ. աշնանը, Արարական լիգայի խորհրդի աշնանային նստաշրջանում իրաքյան պատմիրակության անդամ, նախկին վարդապետ Նուրի Սահղն առաջարկեց քննարկել «Արևելյան բլոկի» ստեղծման հարցը⁸⁵: Լիգայի խորհրդի նստաշրջանի աշխատանքը լուսարանող պաշտոնական և ոչ մի հազորդագրությունում այս մասին ոչ մի բան չնշվեց։ Լիգան հանգես չեկավ «Արևելյան բլոկի» նախագծի դատապարտմամբ։ Սակայն անկասկած է, որ խորհրդի անդամների մեծամասնությունը խուսափողական

կեցվածք որդեգրեց դրա նկատմամբ։ Լիգայի այսպիսի դիրքութշումն էլ, սակայն, պեսք է համարել մեկը այն կարևոր գործոններից, որոնք վերջիվներու հանգեցրին ուղիղունի ազգամին-ազատագրական շարժման և Սովորական Միության դեմ ուղղված ազրեսիվ այդ խմբավորումն ստեղծելու ծրագրի ձախողմանը։ Նույնիսկ այդ ժամանակվա պահպանողական վարչակարգեր ունեցող արարական երկրների մեծամասնությունը զիտակցում էր Սովորական Միության դեմ ուղղված որևէ խմբավորմանը մասնակցելու անհրաժեշտության մասին արևմտյան երկրների կողմից բերվող փաստարկների անանկությունը։ Այս կապակցությամբ հատկանշական է Արարական լիգայի գլխավոր քարտուղար Ազգամի 1945 թվեկտնմբերին կատարած հայտարարությունը, որում նշվում էր. «Լիգան, որպես արարական երկրների ժողովրդական լայն զանգվածների շահերն արտահայտող օրգան, տարածայնություններ չունի Ռուսաստանի հետ և դրա համար էլ ոչ մի հիմք չկա, որ նա շահազրգոված լինի մասնակցելու արևել հակասովներական խմբավորումում։ Ընդհակառակը, Ռուսաստանի ազգային քաղաքականության հիմնադրույթները և նրա ընդհանուր դեմոկրատական ուղղվածությունը անշափ դնահատվում են լիգայի և արարական աշխարհի գեմոկրատական տարրերի կողմից»⁸⁵։

«Արևելյան բլոկի» ստեղծման հարցում շահախնդիր էր նաև Թուրքիան։ Դեռ Արարական լիգայի ստեղծման 202անում Անկարայում բացասարար էին վերաբերում այդ կազմակերպությանը, քանի որ այն «կարող էր ուժեղ արգելք հանդիսանալ Արարական արևելքի պետությունների նկատմամբ թուրքական ծրագրերի իրականացման համար»⁸⁷, իսկ նոր խմբավորումում հնարավոր կլիներ տարրալուծել Արարական լիգան և դրանով իսկ հեշտացնել Անկարայի ծավալապաշտական ծրագրերի իրականացումը, որոնց մեջ մըտնուաց էր նաև Կիրինակայի բռնակցումը Թուրքիային և որին ի սկզբանե հակադրվում էր Արարական լիգան»⁸⁸։

«Արևելյան բլոկ» ուղղագրադարական խմբավորումն ստեղծելու գաղափարը Արարական լիգայի խորհրդի կողմից մերժվելուց հետո, այն կարծեք թե մոռացության մատնը-վեց, 1945 թ. վերջերին և 1946 թ. առաջին կեսին Եգիպտոս-

սում նոր թափով պայքար ծավալվեց երկրից անզիմական դորբերը դուրս բերելու համար։ Այս իրավիճակում Անգիացի մերձավորարևելյան քաղաքականության ուշադրությունը կենտրոնացվեց եղիպտական հարցի վրա։ Արդեն 1946 թ. սկզբին Հոնդոնն առաջարկեց անդու-եղիպտական հակամարտությունը լուծել «Համատեղ պաշտպանության» պայմանագիր կնքելու միջոցով։ Ըստ այդ ծրագրի անզիմական վերահսկման տակ էր դրվելու ամբողջ եղիպտական քանակը, ինչպես նաև Եգիպտոսի արտաքին քաղաքականությունը⁹⁹, Սակայն 1946 թ. հոկտեմբերին այդ ոգով կնքված Սիրկի-Եկին պայմանագիրը եղիպտական պառզամենտի կողմից չհաստատվեց և մերժվեց։ Այս պայմաններում, ինչպես նշվում է կիրանանի կոմկուսի երերորդ համագումարին արված Կենտկումի հաշվետվությունում, անզիմական քաղաքականությունը «նորից ուղղվեց «Արևելյան բլոկի» և «Մեծ Սիրիայի» ծրագրերին»¹⁰⁰։ 1947 թ. հունվարին և ապրիլին, ի լրումն 1946 թ. մարտին ստորագրված թուրք-իրաքյան «Բարեկամության և միության» պայմանագրի, կնքվեցին թուրք-անդրհորդանանյան և իրաքա-անդրհորդանանյան համաման պայմանագրեր։ Այս պայմանագրերով, ինչպես նշում է Ա. Ֆ. Ֆեղչենկոն, ստեղծվեց Բաղդադ-Անկարա-Ամման եռանկյունին, որը կոչված էր լինելու «Արևելյան բլոկի» հիմքը¹⁰¹։ Միաժամանակ իրաքա-անդրհորդանանյան պայմանագիրը «յուրօրինակ փորձ էր... հետին մուտքից իրազործել «Մեծ Սիրիայի» և «Բարեկամության» մահիկի»¹⁰² երկրների ֆեղհրացիայի սանդօման նախագծերը», ուժեղացնել այդ պայմանագիրը կնքած երկրների դիրքերն Արարական լիգայում, «խորացնել դեռ 1945 թ. նկատվող կիրայի պառակտումը և դրանով իսկ թուլացնել այդ ուղիղուալ կազմակերպության հակամագերիալիստական դործունեությունը»¹⁰³, Անգիան և նրա կամակատարները տեսնելով, որ իրաքա-անդրհորդանանյան ստեղծվելիք միությանը միանալու մյուս արաբական երկրներին ուղղված կոչերը մնում են անպատասխան, սկսեցին առաջնահերթ ուշադրություն դարձնել «Մեծ Սիրիայի» ծրագրին, գտնելով, որ առաջել ուալ հիմքեր կանչենց դրա իրականացման համար և որ դրա իրականացու-

մը թույլ կտա նաև ամենավարճ ժամանակահատվածում
ստեղծել «Արևիլյան բլոկ» խմբավորումը:

1946 թ. նոյեմբերի երկրորդ կեսից անդրհորդանանյան
զորքիչները պրոպագանդիստական լայն արշավանք ժամա-
նցին «Մեծ Սիրիայի» ծրագրի օգտին, որը շատ վատ ըն-
կալվեց Պամասկոսում և Բեյրութում⁹⁴: Հարցն այն աստիճան
սրվեց, որ քննարկման առարկա դարձավ Արաբական լիգա-
յում: Այդ առթիվ հրապարակված հայտարարությունում
նշվում էր, որ արաբական երկրները նպատակադրված չեն
սխախատել Արաբական լիգայի անդամ որևէ երկրի անկախու-
թյունն ու սույներնությունը կամ միջամտել նրա կառավար-
ման ձևի հարցինաւ Միաժամանակ մի անդամ ևս հավաստ-
վում էր արաբական պետությունների հավատարիմ լինելը
լիգայի պակատին⁹⁵, Այսպիսով, ճիշտ է՝ շատ դիվանագիտո-
րն, Արաբական լիգան հանդիս եկավ «Մեծ Սիրիայի» ծրագ-
րի նկատմամբ: 1946 թ. նոյեմբեր 23 թվակիր այս հայտա-
րարությունը ստորագրել էր նաև Անդրհորդանանի արտաքին
գործերի մինիստր Մուհամեդ աշ Շուրայրին: Մի քանի օր
անց, սակայն, նոյն աշ Շուրայրին իր կառավարության
անունից մի հուշագիր ներկայացրեց Արաբական լիգայի
խորհրդի նախագահին, որում հայտնում էր Անդրհորդանանի
ժողովությունը «Մեծ Սիրիայի» ծրագրի իրականացման
փորձերը շարունակելու մասին⁹⁶: Փաստորեն ամրող 1947 թ.
ընթացքում Ամմանի արաբական քաղաքականության հիմ-
քում շարունակում էր դրված մեալ «Մեծ Սիրիայի» ծրա-
գրը: 1947 թ. փետրվարին Արաբական լիգայի քարտուղա-
րությունը, եկնելով ընդհանուր շաշերից, պահանջեց «պատա-
րեցնել այդ հարցի բարձրացումը»⁹⁷: Ավելի ուշ այդ ծրագրի
դատապարտմամբ հանդիս եկան սառւզական և եղիպատական
կառավարությունները⁹⁸: Քննարկվում էր նույնիսկ Անդրհոր-
դանանին լիգայից վանդելու հարցը⁹⁹: Այս պայմաններում
Անդրհորդանանի էմիր Արդալյանը հայտարարեց, որ ժամա-
նակավորապես հրաժարվում է «Մեծ Սիրիայի» ստեղծման
առաջարկից, Պաղեստինի խնդրում արաբական միասնական
դիրքորոշում որդեղրելու անհրաժեշտությունից ելնելով: Ինչ-
պես նշում է Լ. Ն. Կուտավը «այսպիսով, փաստորեն... Արդաւ-

լաշի թարգի ներքո կեանտի արարական երկրները միավորներու ծրագրին վերջ արվեց»¹⁰⁰,

«Արևելյան բլոկ» և «Մեծ Սիրիա» իմպերիալիստական ծրագրերի ձախողման դրույթը Արարական լիգան որոշակի դեր կատարեց: Այդ կազմակերպությունը բացասական դիրքուրոշում որդիվրեց երկու նախագծերի նկատմամբ: Ճիշտ է, այն զգուշավոր և այհաջ եղածից շատ դիվանագիտական երանգ ուներ, բայց այնուամենայնիվ բացասական էր: Արարական լիուայից շրջանակներում փաստորեն ստեղծվեց այդ ծրագրերին ընդդիմացող արարական երկրների մի ճակատ, որին անդամակցում էին Սիրիան, Լիբանանը, Եղիպտոսն ու Սասույան Արարական և որը, հենվելավ արարական ժակովը կան լայն զանգվածների հակախմակերիալիստական տրամադրությունների վրա, կարողացավ հաջողությամբ պարագանել այդ նախագծերի դեմ:

«Արևելյան բլոկ» և «Մեծ Սիրիա» նախագծերի իրականացման դրույթը հաջողության շնասնելով, Անգլիան 1947 թ. վերջին և 1948 թ. սկզբին նորից առաջին պլան մղեց «Համատեղ պաշտպանության» պայմանագրերի գաղափարը: Ի տարրերություն 1946 թ., երբ փորձ արվեց այդպիսի պայմանագիր կնքել միայն Եղիպտոսի հետ, այս անգամ խնդիր էր դրվում չման պայմանագրեր ունենալ Արարական արևելքի բոլոր երկրների հետ: Բայց այդ պայմանագրերի, նախատեսվում էր ստեղծել համատեղ պաշտպանության խորհուրդներ, որոնցում ներկայացված էին լինելու անգիտական և տեղական սպաներ: Պայմանագիր կնքած յուրաքանչյուր արարական երկրի բանակը, ուղղմած ծովալիքն ու ռազմաօդային խարիսխները, հազորդակցությունների համարեղ պաշտպանության խորհրդի վերահսկողությանն էին նեթարկվելու: Պատերազմական կամ պատերազմի վտանգի պայման-ներում խորհուրդներն իրավունք էին ունենալու անգիտական զորքեր հրամիրելու Պատերազմի պայմաններում ուղղմական խարիսխները անդիտական ուղղմական հրամանատարությանն էին նեթարկվելու¹⁰¹:

1948 թ. հունվարի 15-ին Պորտուգալիայում կնքած անգուիդարյան և 1948 թ. մարտի 15-ին Ամերիկանում ստորագրված

անզըռ-անդր՛որդանանյան պայմանագրերն արդեն համապատասխան դրույթներ էին պարունակում համատեղ պաշտպանության մարմիններ ստեղծելու վերաբերյալ¹⁰². Սակայն այս պայմանագրի կնքումը նշանավորում էր միայն «Համատեղ պաշտպանության» պայմանագրերի միջոցով իր գլխավորությամբ Արտրական արևելքում ռազմա-քաղաքական խմբավորում ստեղծելու հոնդոնի քաղաքականության առաջին փուլը Երկրորդ փուլում ենթադրվում էր կամ համանման պայմանագրեր կնքել կիզայի անդամ մնացած երկրների հետ¹⁰³, կամ էլ Արարական լիզայի ու Անդրբայյի միջն ստորագրել մի պայմանագրի, որը «կփոխարիներ Անդրբայյի և Արարական լիզայի անդամ երկրներ՝ Երաբի, Եղիպատոսի և Անդրբայմանայի միջն գործություն ունենցող, ինչպես նաև կիզայի անդամ Մառույան Արարիայի և Եմենի հետ ապահովում կնքվելիք պայմանագրերին»¹⁰⁴. Անդրբայկան գործիքները կարծում էին, որ այս անդամ գործի հաջողությանը կնքապատճ նաև այն բարդ վիճակը, որ իրենց և ամերիկյան իմպերիալիստների վարած քաղաքականության հետևանքով սահմանադրությունը էր Արարական արևելքում, Պաղեստինի հարցի ծայրահեղ սրման կապակցությամբ և կողունի գիտավորությամբ, արարական երկրները, գիտակցելով իրենց վատ գիտական մինելը և Պաղեստինում սիոնիստական կազմակերպությունների ժամանակաշրանքում նկրտումների ունալությունը, ուղղակի սահմանադրությունը եվ բոլորովին էլ պատահական չէ, որ հենց 1948 թագրի մեջ, արարախիսրայելական պատերազմի նախօրյակին, Արարականի վարչապետ Շիխադ Սուլեյ Արարական լիզայի քաղաքական կոմիտեում բարձրացրեց Արարական լիզայի անդամ երկրների և Անդրբայյի միջն ուազմական պայմանագրեր կնքելու հարցը¹⁰⁵. Սակայն այս անդամ ևս կողունի հաշիվները սխալ դորս եկան: Արարական լիզայի քաղաքական կոմիտեն ընդուած շղնաց անդրբայկան առաջարկին և այն անարձագանք թողեց: Այսպիսով անդրբայկան քաղաքականությունը այս անդամ ևս անհաջողություն կրեց:

Պետք է նշել, որ 40-ական թվականներին առաջ քաշված վերոհիշյալ ոչ բոլոր ծրագրերն էին հավանության արժանանում արևմտյան բոլոր երկրների կողմից: Օրինակ «Մեծ

Արդիական ծրագրի նկատմամբ բացասական դիրքորոշում ունեն ԱՄՆ-ը և Ֆրանսիան¹⁰⁶, Փարիզը դեմ էր նաև Իրաքից բացի արարական որսէ երկրի և Սաստարադի պահուի անդամ ունառթյունների միջն ռազմական պայմանագրի կնքմանը¹⁰⁷:

50-ական թվականներից, սակայն, արևմտյան երկրուների մերձավորարևելյան քաղաքականությունը սկսեց ավելի համակարգված դառնալը՝ Դրա վկայություններից եր 1950 թ. մայիսի 25-ի անգլո-ֆրանս-ամերիկյան հայտարարությունը Մերձավոր արևելյան վերաբերյալ։ Այդ փաստաթղթում երեք աերությունները հայտնում էին արարական երկրներին և Խորայինին զենք և զինամթերք մատակարարելու երևաց պատրաստակամության մասին, պայմանով, որ այդ երկրները դրանք չօգտագործեին միմյանց դեմ։ Արևմտյան երկրներն իրենց իրավունք էին վերապահում միշտունիքի ուղիունիքի պահպանությունը, նոր սրում, ինչպես շեշտվում էր հայտարարությունում, նույնիսկ «Միավորչած ազգերի ցրանակներից գործոց»¹⁰⁸։

1948 թ. արարա-խորայիլական պատերազմում պարտություն կրելուց հետո արարական երկրներն իրոք զգում էին զենքի և զինամթերքի սրակամ՝ դիմագրավելու համար եր ստեղծման օրվանից ծավալապաշտական քաղաքականություն վարող Խորայիլի վտանգը։ Սակայն, ինչպես երեսում է վերոհիշյալ հայտարարությունից, արևմտյան երկրները բացառում էին արարական երկրների կողմից իրենց մատակարարած զենքի օգտագործումը Խորայիլի դեմ։ Նրանք մտահոգված էին ոչ թե արարական երկրների պաշտպանունակության հարցով, այլ նպատակ ունեին զենքի մատակարաման միջոցով ուժեղացնել մերձավորարևելյան երկրների հախույալ վիճակը, միաժամանակ ինչպես իրավամբ նշում էին միրանանյան կոմունիստները, ուսպիսելով դարձնել «Սովորական Միության գեմ հարձակվելու խարիսխ... և զինել արարական հետադիմական վարչակարգերը՝ կանգնեցնելու համար ժողովրդական շարժումները»¹⁰⁹։

1950 թ. հունիսին անգլո-ֆրանս-ամերիկյան հայտարարությունը քննարկվեց Արարական լիգայի խորհրդում Հունիսի 21-ին երեք երկրների կառավարություններին ու-

պարկվեց կիզայի պատասխանը: Զ կետից բաղկացած այդ
փաստաթիվից ոժվար է միանշանակ պատկերացում կազմել
եռյակ Հայուարարության նկատմամբ կիզայի դիրքության
մասին¹¹⁰: Պատահական չէ, որ այդ փաստաթիվին տրվել են
իրարամեր գնահատականներ: Իրոք, Արարական լիզայի
պատասխանում չի մերկացվում անդրամերիկյան Հայուա-
րարության բուն էությունը, բացահայտութեն չի զատապարտ-
վում արևմտյան երկրների ռեզիստի անցուդարձերին միշտ
մըսելու դիտավորությունը, կարծեք չուկյայն ընդունվում է
ստացվելիք զենքն ու զինամթերքը իրայնի զեմ ջօտա-
գործնելու իմպերիալիստների պայմանը: Հենց այսպիսի
Հաշտվողական կեցվածքի համար էլ կիզայի պատասխանը
լիբանանյան կոմունիստները գնահատել են որպես ոկապի-
տուլյանտականն¹¹¹: Սովորական Հետազոտողներ Բ. Գ.
Սեյրանյանը, Օ. Է. Տուգանովան, ինչպես նաև արար պատ-
մաբան Ա. Սահոքը (ըստ Բ. Գ. Սեյրանյանի հղման) գտնում
են, որ Արարական լիզան եռյակ Հայուարարության նկատ-
մամբ բացասական դիրքորոշում որդեգրեց: Նրանք իրենց
կարծիքը հիմնավորում են Շենվելով կիզայի պատասխանի
Զ-րդ կետի վրա, որում նշվում էր, որ արարական երկրնե-
րը «...Հավանություն չեն տա որնէ գործողության, որ կիվա-
սի իրենց անկախությանն ու սովորեննությանը»¹¹²: Մեր կար-
ծիքով այս հարցում Արարական լիզայի դիրքորոշումը գնա-
հատելիս, եթե նկատի առնվի կիզայի պատասխանը միայն
ավելի ճիշտ կլինի Հակվել դեպի արար կոմունիստների
գնահատականը: Սակայն Հարցին աշգտիսի մոտեցումը կը ի-
նի բերի, քանի որ Արարական լիզայի պատասխանը միայն
քամը չէր, որ ձեռնարկվեց միշտարարական այդ կազմակեր-
պության կողմից՝ Արարական արևմերում իմպերիալիստա-
կան ոտնձգությունների և մասնավորապես եռյակ Հայուա-
րարության դեմ պայքարելու համար: Այս առումով միան-
դամայն իրավացի են Յու. Վ. Մարուճովն ու Յու. Վ. Պոսոյմ-
կինը, Բ. Մ. Փոցխվերիան և Օ. Է. Տուգանովան, որոնք Արա-
րական լիզայի անդամների կողմից կնքված Համատեղ
պաշտպանության և անտեսական համագործակցության պայ-
մանագիրը դիտում են որպես ռեզիստ ու մուսավարական
խմբավորումներ ստեղծելու իմպերիալիստական ծրագրերի
82

դեմ ուղղված քայլ¹¹³, Արևմտյան Հեղինակ Ռ. Մակղոնալզը Արարական լիգային նվիրված իր մենագրությունում աշդ պայմանագրին անդրադասնալով նշում է, որ այն ստորագրով էց մի այլապիսի ժամանակ, երբ պայմանները դրա համար բոլորովին էլ բարենպատառ չեն նրա կարծիքով անրարենը պատասխաններից մեկն էլ արարական որոշ երկրների վրա արևմտյան տերությունների էլ ավելի ուժեղացած ճշնշումն էր՝ այսպիս կոչված «սավիմական վատանդի» դեմ ուղղված «սաշտապանական» խմբավորումում նրանց ընդգրկելու համար¹¹⁴:

Համատեղ պաշտպանության պայմանագրի առաջացման համամանքները, որոնք ցարդ անհրաժեշտ շափով լուսաբանված չեն, մեզ կօգնեն էլ ավելի հիմնավորելու վերևում ասլածք:

1948 թ. արարա-իսրայելական պատերազմում արարական երկրների կրած պարտությունը բավականին վատ անդրադապակ Արարական լիգայի գործունեության վրա Սակայն 1948 թ. վերջին—1949 թ. առաջին կեսին արարական երկրներում արդեն իսկ առաջ էին բաշխված նախագծեր, որոնք կոչված էին լիգան դուրս բերել Հզնաժամկեց՝ նրա անդամների միասնությունն էլ ավելի ամրապնդելու և օտարերկրյա ազդեցությունը վերացնելու ճանապարհով՝ Այսպես, օրինակ, 1949 թ. փետրվարին Սիրիան և Լիբանանն առաջարկեցին լիգայի անդամներին արգելել առանց լիգայի համաձայնության օտար երկրի հետ որևէ պայմանագիր կընթալի¹¹⁵, Սրան հակառակ, անդիմանտ արարական վարչակարգերը ներկայացրեցին լիգայի բարեփոխման իրենց ծրագրերը երաքի վարչապետ Նուրի Սահդի նախագծով նախատեսվում էր ավելի շատ ազատություն տալ անդամ երկրներին, այդ թվում, այլ երկրների հետ լիգայից անկախ ռազմական և առևտրական պայմանագրեր կնքելու ասպարեզում¹¹⁶, իսկ 1949 թ. օգոստոսին Հորդանանի թագավոր Արդալլահը հանգս նկալ «Մահմետական լիգա» ստեղծելու առաջարկով, որին կանգամակցեցին Իրանն ու Պակիստանը և որը «կաջակցեր Արարական երկրների լիգային»¹¹⁷. Արարական լիգայի խորհրդի 1949 թ. հոկտեմբերի նստաշրջանը, քննարկելով լիգայի բարեփոխման բազմաթիվ առաջարկնե-

թը, վերջիվերջու նախապատվությունը տվեց արարական միասնական անվտանգության պայմանագիր կնքելու նգիպատսի գաղափարին: Որոշվեց կազմել մի հանձնախումբ, որը մշակելու էր պայմանագրի տեքստը¹¹⁸:

1950 թ. ապրիլին կիգայի խորհուրդը հաստատեց այդ պայմանագիրը, որում լիբանանցան կառավարության առաջարկով տեղ հատկացվեց նաև միջարաբական տնտեսական համագործակցությանը: Պայմանագիրը կոչված էր ուժի դացնելու արարական երկրների համագործակցությունը ռազմական և տնտեսական հարցերում: Նախատեսվում էր կիրամի շրջանակներում ստեղծել մի շաբթ նոր մարմիններ, որոնք լայն իրավասություններ էին ունենալու պաշտպանական և տնտեսական ասպարեզներում: Պայմանագիրը կրում էր դաւա արարական բնույթ և կոչված էր ծառայելու միայն արարական երկրների պաշտպանությանը: Անզիսան բացառեկան վերաբերմունք դրսնորեց պայմանագրի նկատմամբ, մինչ ԱՄՆ-ը սկզբից ևս մի ակտիվորեն աշխակցում էր այն ստորագրելու գաղափարին, նրանում տեսնելով իր զվարացությամբ ապագայում ստեղծվելուր ռազմական խմբավորման սաղմբ¹¹⁹: Անզիսի դրդմամբ Իրաքն ու Անզիսորդանանը հրաժարվեցին պայմանագիրն ստորագրելուց, պահանջելով այն որոշ փոփոխությունների հնթարկելու կիգայի անդամ յոթ երկրներից երկուսի ձեռնպահությունը բնականարար զգավորնեն կթուլացներ պայմանագրի արդյունավետությունը և սկզբում կիգայի անդամները կարծեն թե հակված չեն առանց Իրաքի և Անզիսորդանանի, մի տեսակ անջատ, ստորագրել այն: Սակայն 1950 թ. հունիսի 17-ին, այն նույն օրը, երբ կիգայի խորհուրդը հաստատեց եռյակ հայտարարության պատասխանը¹²⁰, նգիպտուր, Սիրիան, Լիբանանը, Սաուդյան Արաբիան և Եմենը ստորագրեցին «Համատեղ պաշտպանության և տնտեսական համագործակցության» պայմանագիրը: Փաստորեն այդ քայլը կարելի է համարել եռյակ հայտարարությանը տրված Արարական լիգայի պատասխանի 10-րդ կնքը, որը սակայն, միաձայնորեն շեր հաստատվել կիգայի անդամների կողմից: Եռյակ հայտարարությունը տվեց հակառակ արդյունք:

Մի շարք Հեղինակներ իրավացիորեն դանում են, որ «Համատեղ պաշտպանության» պայմանագրի կնքումը ուղղված էր նաև իրաքի և Անդրհորդանանի գեռամ լրիվ շմարած ժամակաշատական նկրտումների դեմ¹²¹: Սակայն հարց է առաջանում, թե ինչո՞ւ էր Արաբական լիգայի պատասխանը այսուհենայինիվ հաշտվողական: Մեր կարծիքով այդ բանի հիմնական պատճառներից մեկն այն էր, որ եայակ հայուարության համարհեղինակներից մեկը ԱՄՆ-ն էր Այդ ժամանակաշրջանում ամերիկյան զիվանագիտությունը, միտելով կանոնի և Փարիզի ազգեցությունն Արաբական արևելքում փոխարինել ամերիկյանով, հաճախ զաղտնորեն աշակցում էր արաբական այս կամ այն երկրին՝ անզլո-ֆրանսիական իմակերիալիստների դեմ մզվող նրա պայքարում: Այսպես, օրինակ, Վաշինգտոնը «զաղտնորեն խրախուսում էր Եղիպտական կառավարության պահանջը Եղիպտոսից անզլիական զորքերի դուրս բերման վերաբերյալ»¹²²: Այս բայուր արաբական երկրներում թյուր պատկերացումներ էր առաջացրել ԱՄՆ-ի բաղաքական գծի վերաբերյալ: Եվ Արաբական լիդացի փառաւթղթերում եթե անզլիական և ֆրանսիական իմակերիալիստները շատ հաճախ ամենասուր ձևով ֆննադատվում էին, ապա ԱՄՆ-ը որպես կանոն խնայվում ու շրջանցվում էր Վաշինգտոնի հետ բարվոք հարաբերությունները շվիացնելու լիգայի անհեռանկարային և սխալ միտումով էլ մասամբ պայմանագործած էր լիգայի պատասխանի նման բնույթը: Բացի այդ հավանաբար նշանակություն ուներ նաև ամեն զնով միասնական ձևով հանդես դալու լիգայի ձգումը: Ավելի խիստ պատասխանի ընդունումն անպայմանորեն կհանդիպեր իրաքի և Հորդանանի ընդդիմագրությանը, որը կդժվարացներ միասնական դիրքորոշման որդեգրումը: Սակայն կրկնության գնով պետք է նշել, որ լիգայի պատասխանով չե, միայն, որ պետք է դատել արաբական միջակետական կազմակերպության վերաբերմունքի մասին: Վերջին Հաշվով Համատեղ պաշտպանության պայմանագրի կնքումով լիգան ցույց տվեց իր ընդդիմությունն արաբական երկրներն իմակերիալիստական ուղմաքաղաքական խմբավորումներում ընդգրկելուն:

Խնադես 1940-ական, այնպէս և 1950-ական թվականներին Մերձավոր արեւելքում ռազմաքաղաքական խմբավորումների ստեղծման հարցում անշափ շահագրդիր զիրքորշում էր դրսեռում Թուրքիան, Իմպերիալիստական ծրագրերի իրականացման գործում Անկարան հանախո կատարում էր յուրատեսակ միջնորդի ղերը 1950 թ. մարտին, երբ ստորագրվեց խոհաւ-թուրքական պայմանագիրը, թուրքական շրջանները սկսեցին սրբազնանդել արարական երկրներին այդ պայմանագրին միանալու գաղափարը¹²³, իսկ 1951 թ. Հոկտեմբերի 13-ին թուրքական կառավարությունը ԱՄՆ-ի, Անդրիայի և Ֆրանսիայի հետ միասին պաշտոնապես զիրքից Սրբարական միզայի անդամ երկրներին և Խորայիշին «Միջին-արևելյան հրամանատարություն» անվամբ հայտնի ռազմագաղաթական խմբավորումն ստեղծելու առաջարկով՝ նախատեսվում էր, որ մերձավորանելյան երկրների հետ մեկանդ այդ խմբավորումն անդամներ կդառնան Ավստրալիան, Նոր Զելանդիան և Հարավ-Աֆրիկյան Միությունը, Ենթագրվում էր նաև սերու կազ հաստատել «Միջինարևելյան հրամանատարության» միջև Բացի այդ «Միջինարևելյան հրամանատարության» զորքերի անվան տակ ամերիկյան-անգլիական, ֆրանսիական և թուրքական զորամիավորումներ էին տեղադրվելու Արարական արևելյան կարելոր շրջաններում Իմպերիալիստական այս զործարքի իրականացումը, ինչպես նշվում էր Եգիպտասիր, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Սաուդյան Արաբիայի, Եմենի և Խորայիշի կառավարություններին հղված ստվետական կառավարության հուշագրում ակհանգեցներ Մերձավոր և Միջին արևելյան երկրների ռազմականության օկուպացմանը Ասլանայան բլուի կազմակերպիչ երկրների զորքերի կողմից...»¹²⁴. Արևմտյան երկրները «այդ հրամանատարության ստեղծման անհրաժեշտությունը... փորձում էին հիմնավորել նրանով, որ իրը Մերձավոր և Միջին արևելյան երկրներին սպառնում էր Սովետական Միությունը¹²⁵. Սակայն իրականում ռազմաքաղաքական այդ խմբավորումը կոչված էր ճնշել սեփանի ազգային-ազատագրական շարժումը և զառնալ ՍՎՀՄ-ի ղեմ ուղղված ռազմական կարելոր խարիսխի¹²⁶,

Քառյակ Հայտարարությունը երեան և կավ մի այնպիսի ժամանակ, երբ ծայրահեղորեն սրվել էին անգլո-Եղիպտական Հարաբակայնորունքուն և Եղիպտական կառավարությունն արդեն Հրապարակայնորունքուն Հայտնել էր 1936 թ. անգլո-Եղիպտական անդրտվահավասար պայմանագիրը շեղյալ Հայտարարելու իր մատադրության մասին: «Միջինարևելլյան Հրամանատարության» վերաբերյալ իրենց առաջարկով իմաստիալուստական երկրները վաստորեն նպատակ ունենին նաև վիճակնել Եղիպտական կառավարության այդ միջոցառումը: Դրա համար էլ ռազմական այդ խմբավորումն ստեղծելու առաջարկը, ինչպես նաև զբանից առաջ և հետո եղած մի շարք այլ առաջարկներ, Արարական լիգայի կազմից զիտվում էին արարական երկրներին հուզող այլ Հարցերի, մասնավորապես Եղիպտասուից անգլիական զարգերի դուրս բերման խնդրի հետ կապակցված: Այս երկու խնդիրները իրարից շեխն բաժանում նաև արեմայան երկրները: Պատահական չէ, որ անզիւժական կառավարությունը խստանում էր Եղիպտասուից դուրս բերել իր զորքերը (բացի այն զորամասերից, որոնք պիտի անցնեին միջինարևելյան Հրամանատարության ներքո), եթե նաշիրեն ընդուներ շորս երկրների առաջարկը¹²⁷, 1951 թ. հոկտեմբերի 14-ին Եղիպտական կառավարությունը մերժեց իմակերիսալիստական ծրագիրը, իսկ պառակենատի երկու պալատները միաձայնորեն որոշեցին շեղյալ Հայտարարել անգլո-Եղիպտական պայմանագիրը: Մինչ այդ, հոկտեմբերի 9-ին, Արարական լիգայի քաղաքական կոմիտեն հանդիս էր և կել Եղիպտասուի մտադրության պաշտպանությամբ¹²⁸: Միաժամանակ լիգայի խորհուրդը որոշել էր արեմայան երկրների հետ միատեղ շմանակցել որևէ ռազմական խմբավորումում, քանի զեռ շեն բավարարված արարական երկրների իրավացի պահանջները: Իսկ հոկտեմբերի 14-ից հետո լիգայի անդամ երկրները հանդիս եկան Եղիպտասուի պաշտպանությամբ: Այս պայմաններում լիգան Հայտարարությամբ Հանդիս շեղյալ, քանի որ արարական երկրների կարծիքով դրա կարիքը չկար¹²⁹: Արարական լիգայի զիւավոր քարտուղար Ազգամը Հայտարարեց, որ արարական երկրների հանդեպ սովորական սպառնալիքի մասին

խոսակցությունները ոչ մի հիմք շունեն: Նա ավելացրեց, որ ռեժիսունները երբեք մեզ չեն սպասնացել և չեն ստորացրելու իսկ Եղիսաբետի նկատմամբ «իսկական ազրեսորները անգիտացիներն են»¹³⁰։

Տեսնելով, որ «Միջինարեւլյան Հրամանատարություն» ստեղծելու փորձերը հաջողություն չեն ունենում, արևմտյան երկրները նորից առաջ քաշեցին Թուրքիան Արարական լիգայի հովանու ներքո կնքված համատեղ պաշտպանության պայմանագրի անդամ զարձնելու գաղափարը Այսպիսի առաջարկով մտադրություն ուներ հանդես դաշ իրաքյան կառավարությունը: Հատկանշական է նաև, որ միաժամանակ Ենթադրվում էր համատեղ պաշտպանության պայմանագրի անդամությունից զրկել Եմենին, Սառույան Արարտային, Սիրիային ու Լիբանանին, քանի որ նրանք, իրոք, ուսագմական տեսանկյունից չեն կարող արդյունավետ օգնություն ցուցաբերել¹³¹: Իրականում այս ծրագիրը նպատակամղված էր Եղիսաբետին զրկել կիդայի շրջանակներում իր մշտական դաշնակիցներից, մեկուսացնել նրան և համատեղ պաշտպանության պայմանագիրը դարձնել արևմտամետ ռազմա-քաղաքական մի խմբավորման հիմք, որում գլխավորող դեր կկատարեին Թուրքիան, Իրաքը և Անդրկորդանանը: Այս ծրագիրը սատեայն, այն աստիճանն էր հակասում կիդայի սկզբունքներին, որ վերջիվերջո Իրաքը շհամարձակվեց նույնիսկ այն պաշտոնապես քննարկման դնել:

1952—1953 թթ. Արարական լիգան մի քանի անգամ նորից անդրադամավ ռազմաքաղաքական խմբավորումներ ստեղծելու հարցին: ԱՄՆ-ի պետական քարտուղար Դավիթ Մերձավոր արևելք կատարած այցելության նախօրեին՝ 1953 թ. ապրիլին, կիրանանի արտաքին գործերի մինիստրությունը Արաբական լիգայի անդամների անունից մի հուշագիր հղեց նրան: Դրանում նշվում էր, որ Սուեդի շրանցքից անզիփական դորֆերի դուրս բերումից և պաղեստինյան խնդրի լուծումից առաջ արաբական երկրներն ավելորդ են համարում Մերձավոր արևելքի պաշտպանության վերաբերյալ որևէ բանակցություն վարել արևմտյան երկրների հետ: Հուշագրում ասված էր նաև, որ արաբական երկրները Միջին արևելքի պաշտպանության համար չեն զգում արևմտյան տերու-

Հիւնկերի կարիքը՝¹³² Այդ շրջանում, մանավանդ 1953 թ., Արաբական լիգայի կողմից մի շարք միջազգառումներ ձեռնարկվեցին Համատեղ պաշտպանության պայմանագրի դրույթների արագ և արդյունավետ կենսագործման ուղղությամբ:

Իսպանիայի կանոնական երկրները, սակայն, շարունակում էին չանը ու հունդ շխնայիլ նպատակին հասնելու համար: Մերժավոր և Միջին արևելյան արևմտամետ ուղղմաքաղաքական խմբավորման ստեղծումն արագացնելու նպատակով 1954 թ. ապրիլին կնքվեց թուրք-պակիստանյան համաձայնագրիրը սրաբրեկամության և Համադրժակցության վերաբերյալ: Թուրք-պակիստանյան համաձայնագրիրը և գրանցարական որոշ պետությունների միանալու լուրք բացասական: արձագանքներ առաջարկեց արաբական երկրներում ժիգայի օրմիտների նույն օրերին տեղի ունեցող նոտաշրջանում անդամ երկրները հավաստիացրեցին: որ իրենք հրավեր չեն ստացել միանալու այդ պայմանագրին և որ ուրիննջ չեն կը մտածում զրան միանալու մասին»: Թաղաքական կոմիտեն նշեց, որ արաբական երկրները ցանկանում են ամբապնդի իրենց պաշտպանության կամքի, սակայն նրանք չեն համաձայնի զինքն ստանալ ի վեհանգ երենց երկրների անկախության և սովորենության, ինչպես նաև Համատեղ պաշտպանության պայմանագրի դրույթների իսխաման միշտով...»¹³³։

Սակայն 1954 թ. երկրորդ կեսին պարզ դարձավ, որ իրարք պատրաստ է անդամագրվել իմաներիալիստական ուղղմաքաղաքական խմբավորումում: 1955 թ. փնտրվարին Բաղդադում ստորագրվեց իրաքա-թուրքական ուղղմական պայմանագրը, որը և դարձավ Բաղդադի պակաս անոնն ստացած ուղղմական խմբավորման հիմքը: 1954 թ. երկրորդ կեսի և 1955 թ. սկզբի իրազարձությունները, այդ թվում նաև կիդայի զիրքորոշումը զրանց նկատմամբ, բավականին ժանրամասն լուսաբանված են սովորական հնտազոտողների աշխատություններում¹³⁴, Ռևոլի և բավարարվում ենք նշելով, որ իմաներիալիստական խմբավորմանը իրաքի մասնակիցների առքությունն ի շիք դարձնելու ուղղությամբ կիդայի կողմից

ձեռնարկված քայլերն անարդյունավետ եղան Ավելին, արարական օրոց երկրների տատանողական կեցվածքը, պատճառ դարձավ, որ կիգան սկզբնական շրջանում նույնիսկ չկարողացավ սպազառնապես դատապարտել Իրաքի քայլը՝ Սահայն կիգայի մնացած անդամները, Արարական արևելքում օրբստորն հղորացող հակաբիմափերիալիստական արամարդությունների ներդործությամբ, վերջիվերջո հստակորեն գեն արտահայտվեցին Բաղդադի պակտին և Իրաքից հետո արարական մի երկրորդ երկիր այդ խմբություննան մեջ ներդրավելու արևմտյան տերությունների փորձերը ձախողվեցին:

Սահայն ինչն էր պատճառը, որ ամբողջ տաս տարի սրեւ խմբավորման մեջ շներշաշվելուց հետո, Արարական լիգայի անդամ մի երկիր այնուամենայնիվ անդամակցեց այդ պակտին: Բանն այն է, որ եթե 1940-ական թվականների երկրորդ ինքին և 50-ական թթ. սկզբին Մերձավոր արևելքում սաղմացադարձական խմբավորումներ ստեղծելու արևմտյան ծրագրերով նախատեսվում էր դրանցում ընդդրել Արարական լիգայի անդամ բույր երկրներին, ապա 1950-ական թթ. կեսերին, զգալով, որ հավակնութ այդ հաշվարկները անիրադութելի են, իմակերիալիստները որոշեցին սկզբում բավարարութել ծրագրվող խմբավորումներին արարական զիսավոր երկրների մասնակցությամբ: Ընդ որում առաջնային նշանակություն էր տրվում Իրաքին և Եգիպտոսին: 1954 թ. Հոկտեմբերին կնքվեց Եգիպտոսից անգլիական զորքերի դուրս բերման վերաբերյալ անգլո-Եգիպտական պայմանագիրը ըստ որի նախատեսվում էր անգլիական զորքերը 20 տասնվան ընթացքում հեռացնել Սուեզի ջրանցքի դռուուց, սակայն նրանց իրավունք էր վերապահվում առաջիկա յոթ տարիներին նորից օղակադրծել իրենց խարիսխները, եթև Եգիպտոսի կամ Արարական լիգայի հովանու ներքո կնքված համատեղ պաշտպանության պայմանագրի անդամ որևէ երկրի, ինչպես նաև Թուրքիայի դեմ հարձակում գործվեր¹³⁵: Իմակերիալիստական երկրներն այս պայմանագիրը համարում էին բավարար միջոց՝ նեղոսի հովտում իրենց զիրքերն առժամանակ ստահապանելու համար: Անգլո-Եգիպտական պայմանագրի ստորագրումից հետո Բաղդադի պակտի հապճեալ ստեղծումով իմակերիալիստները նեթազրում էին ամբազնդել ձեռք

բերված Հաշողությունը և միաժամանակ բարենպաստ պայմաններ ստեղծել արարական այլ երկրներ դրանում ներդրավակու համար Ասկայն այս անզամ ևս արևմտյան երկրների Հաշողարկները սխալ գուրս նկան: Նրանք ստիլված են բավարարվել արարական երկրներից միայն իրացն այդ ազգների խմբավորումում ընդդրկելով: Իսկ 1956 թ. սուեդան արկածախնդրությունն ու 1958 թ. իրացյան Հեղափոխությունը այդ երկու երկրներում իմակերիալիզմի գիրքերին խորությունը հարվածներ հասցրեցին: Չեղյալ Հայտարարվեց անզեր-և-ինչուառեկան: 1954 թ. պայմանագիրը, իսկ իրաքը դուրս եկամվ Բազգաղի պակտից:

1940—50-ական թթ. Արարական լիգան որոշակի դրական դեր կատարեց իմակերիալիստական ուսումնաքաղաքական խմբավորումներ ստեղծելու ծրագրերի խափանման գործում: Իսկ այդ ծրագրերի ձախողումը արարական ազգային-ազատագրության շարժման կարևոր նվաճումներից է:

* * *

1940—50-ական թթ. Արարական լիգան, ճիշտ է՝ ոչ Հաճախ, բայց անդրադարձել է նաև Արարական թերակղղություններում տեղի ունեցած իրադարձություններին: Արարական աշխարհի այս մասն իր զարգացման մակարդակի դրեթե բոլոր ցուցանիշներով XX դ. կեսին զգալիորեն ետ էր մուտք արարական մյուս երկրներից: Ազատազրական պայմարն այս ուղղությունում ձևավորման ընթացքի մեջ էր: Հենց այս հանդամանքով էլ պայմանագրված էր Արարական պետությունների լիգայի նվազ ակտիվությունը Արարական թերակղղություններու հարցերում: Այստեղ նշենք, որ քանի կը զգուն վերաբերող հարցերում: Այստեղ նշենք, որ ալ Բուրայի օազիսի շուրջ ծագած անզու-սառուցական հակամաշտությունը սերտորեն առնվազում է Օմանում տեղի ունեցած գեպբերի հետ, ապա այդ հարցերը դիտվում են միասին:

Սովորական հետազոտող Ա. Ա. Խանովի կարծիքով Արարական պետությունների լիգայի ստեղծման երկույթն այն գործուներից մնէն էր, որ նպաստեց Պարսից ծոռագրի արարական իշխանությունների բնակչության ազգային հնագիտական պահպանը¹³⁶: Սակայն 1940-ական պահպանական պահպանը

կան թթ. երկրորդ կեսին լիգան Արարական թերակղզու երեքրներից միայն եմենին հուլող հարցերին անդրադարձավ՝ 1946 թ. հունիսին անգլիացիները նորից բախումներ հրահրեցին եմենյան ցեղերի և իրենց հսկողության տակ գտնվող աղքանյան պրոտեկտորատների զորամասների միջն¹³⁷. Լիգայի անդամ հանդիսացող եմենը դիմեց այդ կազմակերպության հորհրդին՝ անգլո-եմենյան հակամարտության հարցը քըն-նարկելու խնդրանքով։ 1946 թ. հունիսին եռորհուրդը ընդունեց մի որոշում, որում արարական երկրները պաշտպանում էին եմենի դիրքորոշումը պրոտեկտորատների հարցում նրան և բրիտանական կառավարության միջև ծագած վեճում։ Որոշման մեջ նշվում էր, որ ըստ անգլո-եմենյան 1934 թ. պարմանագրի, նման վեճները պետք է լուծվեն օբարեկամական բանակցությունների միջոցով¹³⁸. Ինչպես տեսնում ենք, լիգայի այս որոշումը, ինչպես և 1940-ական թվականների երկրորդ կեսի մի շարք այլ որոշումներ, հեռու էր արմատական բնույթ ունենալուց։

1940-ական թվականների երկրորդ կեսին եմենը շարունակում էր մնալ հետամնաց, ժայրահեղ հետազիմական վարչակարգով մի երկիր։ Սակայն արդեն այդ շրջանում երկրում անդին էին ունենում ներքին խմորումներ։ Իմամ Յաջաշին ընդդիմադիր ուժերը, որոնք իրենց սոցիալական պատկանելիությամբ շատ խայտարդեն էին, կենտրոնացել էին Աղենում և փորձում էին տիրապետող վարչակարգի դեմ իրենց պայքարում օգտագործել նաև Արարական լիգան։ 1946 թ. ընդդիմագիր ուժերի կողմն անցավ նաև Իմամի որդիներից Իրաւճիմը, որը նույն թվականի գեկտեմբերին դիմեց Արարական լիգային, ինգրելով, որ այդ կազմակերպությանը միշամտի եմենի ներքին գործերին ու լուծի գոյություն ունեցող պրոբլեմները¹³⁹. Այս կոչը, սակայն, ոչ մի արձագանք չդուռափ լիգայի շրջանակներում։

1948 թ. վենարվարի 17-ին եմենում տեղի ունեցավ պետական հեղաշրջում, Սպանվեցին իմամ Յաջաշին և նրա մի շարք կողմնակիցներ։ Եշխանության գլուխ անցավ խոշոր ավատատեր Արդալլահ ալ Վաղիրը, որը վենարվարի 18-ին հուշակից հմամատ Սակայն իմամի որդիներից Աշմենը կարողացավ զբավել պետական գանձարկողը և մայրաբաղարից

դուրս դիմադրություն կազմակերպել։ Խշխանության երկու կենտրոններն էլ իրենց համար կենսական էին համարում արարական երկրների, մասնավորաբար կիզաքի աջակցության ձևորենումը¹⁴⁰։ Հեղաշրջումից անմիջապես հետո աջ վազիրի կառավարությունը կիզային դիմելով խնդրեց ճանաչել նոր վարչակարգը կիզայի որոշմամբ զիսավոր քարտուղար Աղջամի դիմավորությամբ կազմվեց մի ճանձնաժողով։ որ պետք է տեղում ուսումնասիրեր իրավունակը և հանձնարարականներ մշակեր Խորհրդի համար¹⁴¹։ Սակայն ճանձնաժողովը դեպքերի զարգացմանը հետևեց Սառույան Արարիայից, ուր նա ժամանեց տեղի դեկավարների հրավերվի էր Ռիազը պաշտպանում էր իշխան Ահմեդին, որն էլ պայմենով Սառույան Արարիայի աջակցությունից և հենքեւով Եմենում գտնվող իր կողմնակիցների վրա, մարտի 14-ին դրայից Սանան և Հաջակվեց իժամ¹⁴², Մարտի 22-ին կիզայի քաղաքական կոմիտեն հայտարարեց իմամ Ահմեդի իշխանությունը ճանաչելու մասին¹⁴³։

Եմենյան իրազարձությունների ժամանակ կիզայի կրավորական դիմորդի դերում էր Այդ զեպքերը ցույց տվեցին, որ կիզայի ձևավորված պետություններում ի վիճակի չէ որևէ ձևով ապդել ուժերի հարաբերակցության և տեղաբաշխման վրա, իւամ էլ ճանդես գալ նրանց հաշտեցնողի դերում։ Եզ պատահական չէ, որ այդ զեպքերը եղան առաջին և վերջին Ներքին իրազարձությունը, որին կիզայի փորձեց միջամտել Ընդհանրապես կիզայի ներքաշումը ներքազարական հորձական հույսուների ոլորտը՝ այդ կազմակերպության համար միայն լրացուցիչ խոշընզոտներ կստեղծեր և անկասկած կհանգեցներ նրա ուժերի միանգամայն ավելորդ շլատմանը, ինչը հավանաբար դիմակցվեց նաև կիզայի անդամների և ղեկավանների կողմից։

1950-ական թվականներին էլ Անդիկայի հետ Եմենի հարաբերությունները շարունակում էին լարված մնալ։ 1950 թ-ի վերաբերությունների միջի բանակցություններ սկսվեցին աղենյան պրոտեկտորատների և Սմենի միջև սահմանային խնդիրությունների համար այսպիս ուղղված էր կազմակերպությունը, Սմենի վեճերը լուծելու նպատակով։ Կիզայի խորհրդությունը, ըմենի խնդրանքով, այդ բանակցությունների վերաբերյալ ընդունեց մի որոշում, որում արարական երկրները ողջունում էին երկ-

բառության սկիզբը և հույս հաշտում, որ կկայացվի նմենի օրինական իրավունքներն ապահովող դուացուցիչ և բարեկամական մի համաձայնություն¹⁴⁴: Սակայն 1951 թ. մարտի 10-ին կնքված անդրամասնություն¹⁴⁵, Սակայն 1951 թ. մարտի 10-ին կնքված անդրամասնություն¹⁴⁶, սահմանադրության պայմանագիրը փաստորին ժամանակավոր կումբումին էր և բառ էության լլուծեց զոյլթյուն ունեցող հարցերը¹⁴⁷: Պատահական չէ, որ երբ 1953 թ. Անդրամասնություն հարավարակեց Հարավային Արարտիայի ֆեղերացիա ստեղծելու որացահայտությունն սաղությարարական էությամբ¹⁴⁸ իր նախադիմք¹⁴⁹, որով նախատեսվում էր Աղենի Արևելյան և Արևելյան պրոտեկտորատները և Աղենի գաղութը համախմբմքէ, անդրամասնությունները նորից սրվեցին Նմենի կառավարությունը ընդդիմացավ անդրական այս նախադիմքն և աջակցեց գրա գիմ հանդեմ և կող հարավ-եմենյան ուժերին: Ի պատասխան և նորունը վերսկսեց սինված ընդհարութեար Հրանքել սահմանային գոտում, մանավանդ Եարվայի վիճակի շրջանում¹⁵⁰, 1954 թ. հունվարի 19-ին Արարական լիգայի խորհուրդը որոշում ընդունեց «Որպես պրոտեկտորատներ Հայտնի եմենյան շրջաններում բրիտանական իշխանությունների ազգիսիային մասին: Դրանում դատապարտվությունը և պաշտպանվում էին բրիտանական ուժերի բռնի գործողությունները և պաշտպանվում էր Նմենի կառավարության օրինական գիրքորոշումը: Միաժամանակ որոշվեց մի Հանձնաժողովը ուղարկել Նմեն, իմաստին Արարական լիգայի աջակցությունը Հայտնեցու Համար¹⁵¹: Էրդայի պատվիրակությունը, 1952 թ. սեպտեմբերից զիսավոր քարտուղարի պաշտոնում Աղղամին փոխարինած Արդ էլ Խալեկ Հասումայի զիսավորությամբ, Նմեն և աղենյան պրոտեկտորատներ այցելեց Քեարվարի 17-ից 22-ը: Նմենում Հասուման Հայտարարեց, որ ֆեղերացիայի նախադիմքը ընդունվել է Հակառակ հարավ-եմենյան շեյխերի և սովորական բացարձակ մեծամասնության կամքին¹⁵²: Ապրիլի 3-ին Խորհուրդը, Հաստատելով Արդայի պատվիրակության Հաշվետվությունը, Հարավ-եմենյան առաջնորդներին կոչ արեց ընդգրկվել այնպիսի վարչակարգում, որը «կարող է անհարիր լինել իրենց աղղային ոգուն և որը կարող է իրենց օտարել արարական եղբայրության և մասնավորապես Նմենի հետ միավորումից»¹⁵³: Խորհուրդը պատրաստակամություն Հայտնեց «Նմենի կառա-

վարության համաձայնությամբ անհրաժեշտ օգնություն ցույց տալ... Հարավ-և մենքան շեյխսերին և սովորաններին, ուժեղացնել նրանց և պաշտպանել նրանց արարական ընտրթեալ¹⁵¹, 1954—1957 թթ. Լիգայի հետեւղական կեցվածքը անդրահմենքան հակամարտություններում՝ կանոնավորաբար դրսորվեց լիգայի խորհրդի և քաղաքական կոմիտեի հայտարարություններում¹⁵², որոնք քաջալերում էին Հարավային եմինի տարածքում ժամանակած ազգային-ազատագրական պայքարը:

1950-ական թվականների կեսերին Արարական միզան զգայի ուշագրություն էր դարձնում Արարական թերակղզու հարավ-արևելքում տեղի ունեցած իրադարձություններին՝ ալ Բուրայմի օազիսի շուրջ ծագած անգլո-սառուցական վեշին և օմանի իմամության ազատագրական պայքարին:

Այ Բուրայմի օազիսը, որի տարածքը կազմում է շուրջ երեսու հաղար քառակուսի կիլոմետր, 1940-ական թվականների վերջից կուլտիվնածոր դարձավ Սառուցան Արարիայի և անգլիստեկան տիրապետության տակ գտնվող Արար Դարիի էմիրության և Մասկատի սուլթանության միջև: Այ Բուրայմի սուլթանը էր ամենամեծ էռ Ռիազի դործողությունները խրախուսում էր ամերիկան համբային ԱՐՄՄԿ ընկերությունը, քանի որ օազիսը հացին նավով չհետապուտված պաշարներ: 1940-ական թվականների վերջին և 50-ականն թվականների սկզբին փորձեց արթեցին Հարցը լուծել բանակցությունների միջոցով, սակայն դրանք որևէ շոշափելի արդյունք չտվեցին: 1952 թ. անգլուանների սառուցական 40 հոգուց քաղկացած մի դաշտական սառուցական մասսա, որի կազմում կային գրադիրներ, տեխնիկական մասնագետներ և պահակներ, մասավ ալ Բուրայմի և հիմնավորվեց օազիսի համաստ ընկերություն¹⁵³, և պատասխան, անդիքական քաղաքական գործակալի զիսավորությամբ մի շոկան նույնական մասավ ալ Բուրայմի և դիրք զուազեցրեց սառուցիներից շրու կը հետավորության միա¹⁵⁴: 1953—1954 թթ. սահմանագլխին ալ Բուրայմին ենթարկվեց անգլիական դրածոներ Արար Դարիի էմիրի և Մասկատի սուլթանի պորքերի Հարձակմանը¹⁵⁵, եռ Ռիազն առաջարկեց Հարցը լուծել օազիսում հանրաքվե անցկացնելու միջոցով, սակայն կոնդոնը դրան շհամաձայնեց, 1955 թ. սեպտեմբերին անդ-

Ամացիները հեռացան ժների արքայուրաժային դատարանից, որին հարցը փոխանցվել էր նույն տարվա սկզբին՝ երկու կողմերի համաձայնությամբ: 1955 թ. Հոկտեմբերին անգլիացին սպաների հրամանաշարությամբ գործող Արու Դարիի և Մասկատի զորքերը մտան ալ Բուրյամի և այն ամբողջությամբ գրավեցին¹⁵⁵:

Արաբական լիգայի քաղաքական կոմիտեն նոյնմբերի 9-ից 14-ը քննարկեց ալ Բուրյամիում տեղի ունեցած իրադարձությունները, Անգլիայի զորդողությունները որակեց որպես «ագրեսիա» և պաշտպանեց Սաուֆան Արարիայի զիրքորոշումը: Ընդունված որոշումում նշվում էր, որ խնդիրը պետք է լուծվի խաղաղ միջոցներով, ուկուղացիոն զորքերի հեռացման հիմքի վրա: ¹⁵⁶ Սակայն հակառակ՝ արաբական համարյա բոլոր երերների աշակեցությանը եռ նիւթին, ալ Բուրյամին մնաց անգլիական տիրապետության ներք, իսկ հետագայում նրա հիմնական մասը անցավ Արաբական Միացյալ էմիրություններին:

Ալ Բուրյամի իրազարձությունները ազգեցին նաև Օմանի իմամության և Մասկատի սուլթանության հարաբերությունների վրա: Անցիններին միշտ դեռ 1920 թ. էս Սիր թնակավայրում կնքվել էր մի պայմանագիր, ըստ որի ժամանակակից Օմանի տարածքի մեծ մասը ենթարկվում էր Օմանի իմամությանը և միայն երերի Հյուսիս-արևելյան առավիճակ շերտն էր մնում Մասկատի սուլթանի տիրապետության ներքո:¹⁵⁷ 1953—1954 թթ. ալ Բուրյամի ներխուժելիս Մասկատի սուլթանը խախտել էր նաև իմամության տարածքը, ինչը ընազգայում (իմամության մայրաքարում—ն. է.) բնական անհանգստություն էր առաջացրել: ¹⁵⁸ Ինչպես նշում է Է. Ն. Կոտլավը, սուլթանի և Անգլիայի ծագալապաշտական քաղաքականություն վարելու և մանավանդ հզրագույն նավթային ընկերությունների շահերի առաջին պլան մղվելու պայմաններում, իմամության զեկավարները ևսատիճանաբար հրաժարվեցին նախկինում իրենց վարած Ֆեկուսողական քաղաքականությունից և փորձեցին աշակեցություն դունել աֆրուասիական և առաջին շերտին արաբական երերների հանրային կարծիքում¹⁵⁹, Այս ուղղությամբ իմամությունն առաջին քայլը կատարեց 1954 թ.

Ամացիները Հեռացան ժների արքայուրաժային դատարանից, որին հարցը փոխանցվել էր նույն տարվա սկզբին՝ երկու կողմերի համաձայնությամբ: 1955 թ. Հոկտեմբերին անգլիացիների հրամանաշխարհությամբ գործող Արքու Դարքի և Մասկատի զորքերը մտան ալ Բուրյամի և այն ամրողությամբ զրավեցին¹⁵⁰:

Արարական լիգայի քաղաքական կոմիտեն նոյնմբերի 9-ից 14-ը քննարկեց ալ Բուրյամիում տեղի ունեցած իրադարձությունները, Անգլիայի զործողությունները որակեց որպես «ագրեսիա» և պաշտպանեց Սառովյան Արարիայի զիրքորոշումը: Ընդունված որոշումում նշվում էր, որ խնդիրը պետք է լուծվի խաղաղ միջոցներով, «օկուպացիոն զորքերի հեռացման հիմքի վրա»¹⁵¹, Սակայն հակառակ՝ արարական համարյա բոլոր երերների աշակեցությանը եռ նիւթին, ալ Բուրյամին մնաց անգլիական տիրապետության ներքո, իսկ հետագայում նրա հիմնական մասը անցավ Արարական Միացյալ էմիրություններին:

Ալ Բուրյամի իրազարձությունները ազգեցին նաև Օմանի իմամության և Մասկատի սուլթանության հարաբերությունների վրա: Անցիններին միշտ դեռ 1920 թ. էս Սիր թնակավայրում կնքվել էր մի պայմանագիր, ըստ որի ժամանակակից Օմանի տարածքի մեծ մասը հնթարկվում էր Օմանի իմամությանը և միայն երերի Հյուսիս-արևելյան առավիճյա շերան էր մնում Մասկատի սուլթանի տիրապետության ներքո¹⁵², 1953—1954 թթ. ալ Բուրյամի ներխուժելիս Մասկատի սուլթանը խախտել էր նաև իմամության տարածքը, ինչը շնազվայում (իմամության մայրաքարում—ն. է.) բնական անհանգստություն էր առաջացրել¹⁵³, ինչպես նշում է Է. Ն. Կոտլավը, սուլթանի և Անգլիայի ծագալապաշտական քաղաքականություն վարելու և մանավանդ հզրագույն նավթային ընկերությունների շահերի առաջին պլան մղվելու պայմաններում, իմամության զեկավարները ևսատիճանաբար հրաժարվեցին նախակինում իրենց վարած Ֆեկուսողական քաղաքականությունից և փորձեցին աշակեցություն դունել աֆրուասիական և առաջին հերթին արարական երերների հանրային կարծիքում¹⁵⁴, Այս ուղղությամբ իմամությունն առաջին քայլը կատարեց 1954 թ.

Օման՝ տեղում իրադրությանը ժանոթանալու և խորհրդին զեկուցելու համար¹⁶⁶, 1956 թ. Հոկտեմբերին կիսայի խորհրդից նորից անդրադարձավ օմանյան հարցին և որոշեց շարունակել իր ջանքերը՝ մինչև որ Օմանը ձեռք բերի ազատության իր իրավունքը¹⁶⁷:

1957 թ. Հուլիսին Օմանում ազատազրական ապստամբությունը բռնկվեց: Ապստամբները կարճ ժամանակում կարողացան աղաւագրել երկրի տարածքի կեսից ավելին¹⁶⁸: Սակայն լոնգոնը իր դրածու Մասկատի սուլթանին օգնության ուղարկեց անդիմական բանակի կանոնավոր գորամասեր, այդ թվում նաև սազմաօդային ուժեր, որոնց օգնությամբ էլ հաջողվեց օդոստոսի կեսերին ապստամբներին լուրջ հարվածներ հասցնել¹⁶⁹: Կիսայի խորհուրդը դատավարուեց անդիմական ազրեսիան և պահանջնց օմանյան հարցը քննարկել ՄԱՆ-ի Անվտանգության խորհրդում¹⁷⁰, սակայն իմադերիալիստական երկրներին հաջողվեց խափանել այդ պահանջի իրավործումը:

Երկրում անդիմական-կանոնավոր դորամասերի առկայությանը հակառակ, օմանյան հայրենասերները երկար ժամանակ շարունակում էին պարտիզանական պայքար մղել Մասկատի սուլթանի անդրումետ վարչակարգի դեմ: Նրանց զինված ապստամբությունը, շնայած անհաջող ավարտին, պետք է համարել անդիմական իմադերիալիզմի դեմ արարեկան ժողովուրդների մղած պայքարի կարևոր բազկացուցիչ մասը:

1940—1950-ական թթ. Արարական պետությունների լիդան գտնվում էր արարական երկրների անկախության ամրապնդման համար մղվող պայքարի հորձանուտում: Այդ կազմակերպությունը տեսապես և աշխատմորեն արձագանքում էր Արարական արևելքում տեղի ունեցող իրադարձություններին և իր գործունեությամբ, 40-ական թվականներին նրանում առկա որոշ անհետառողականությանը հակառակ, զգալի ներդրում կատարում արարական երկրների արտաքին քաղաքական կուրսում հակաֆակերիստական դժի հաստատման մեջ, դրանով իսկ նպաստելով արարական երկրների անկախության ամրապնդման գործին:

ԱՐԱԲԱԿԱՆ ԼԻԳԱՆ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՅՐԻԿԱՅԻ
Ս.ՐԱԲԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ
ՄԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Արարական պետությունների լիգայի պահանջ գաղութային լծի տակ գտնվող արարական երկրներին վերաբերող հավելվածը վկայում էր, որ նորաստեղծ կազմակերպությունը ժրագրում էր համագործակցել Հյուսիսային Աֆրիկայի և իրերների հետ: Իրենց հերթին այդ երկրների աղդային-աղաւատագրական ուժերը մտադիր էին գործնական կապեր հաստատել կրօնայի հետ ու նրա միջոցով ապահովել արարական մողովուրդների աշակցությունն անկախության համար երենց պայքարին: Հենց այս երկեղութանի ձգութը հիմնական պատճառն էր այն բանի, որ Արարական լիգայի 1940—1950-ական թվականների գործունեությունում զգալի տեղ էին գրավում գաղութային լծի տակ գտնվող արարական ժողովուրդներին հուզող խնդիրները:

Անկախության համար պայքարը երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո նոր թափով ծավալվեց Հյուսիսային Աֆրիկայի արարական երկրներում: 1940-ական թվականների երկրորդ կեսին թերևս առավել հրատապ էր կրիայի քաղաքական ապագայի հարցը: Պատերազմի ավարտից հետո կրիայի տարածքում շարունակում էին մնալ անզիմական և ֆրանսիական զորամիավորումներ: Երկիրն անդամական առավելացման վերաբեր մասի, որոնցից երկուսում՝ Կիրսնաիկայում և Տրիպոլիտանիայում տնօրինում էին անզիմակային բանակներ, իսկ Ֆեցցանում՝ ֆրանսիացիները: Կրիայի հետեւասանները ղեմ էին երկրի արհեստական բաժանմանը:

Պատերազմի ավարտից անմիջապես հետո նրանք նորից առաջ քաշեցին կրիային անկախություն տալու պահանջը¹: Սակայն «իտալական նախակին գաղություն տալու պահանջը»²: Սակայն «իտալական նախակին գաղությունների (այդ թվում կրիայի) բախտի հարցը միջազգային առումով որոշված չէր համարվում և դեռ քննարկման էր ննթակա»³: 1945 թ. սկսած կրիայի հարցը մի քանի անգամ արձարձվեց Արտաքին գործների մինիստրների խորհրդում, որում ներկայացված էին ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի արտաքին գործների մինիստրները: Բուն կրիայում անվլո-ֆրանսիական գաղութաբարների գործողություններն այն աստիճան էին վատթարացրել ազգաբնակչության վիճակը, որ հակամաժոհերի հայտիստական շարժմանը կողք-կողքի մասնակցում էին տարբեր խավերի ներկայացուցիչներ՝ սկսած երիտասարդ բանվոր դասակարգից, վերջացրած ավատակերություն:

Արևմտյան երերների գաղութաբարական քաղաքականության դեմ պայքարելիս լիբրիական գործիչները դիմում էին տարաբնույթ միջոցների, այդ թվում բազմաթիվ բողոքներ էին ներկայացնում Արարական լիգա, ակնկալելով, որ այդ կազմակերպությունը նույնպես կօգնի իրենց մզած պայքարին: Կիգան անպատճիսան շխողեց այդ կոչերը: Կիգայի գլխավոր քարտուղար Ազգամը 1945 թ. սեպտեմբերին հայտարակեց, որ արարական աշխարհին հուզող կարենուազույն խնդիրներից մեկն էլ լիբրիական հարցն է: Նա ավելացրեց, որ «արաբները ոչ մի օտար պետության հովանավորություն չին ընդունիր այդ պետության վրա, որ պետք է ըլլա անկախաւ»: Հոկտեմբերի 4-ի իր հայտարարությունում Ազգամը նշեց, որ «այդ երկիրը ցույց տված է ինքինները կառավարելու իր կարողությունը և անկախության իր իրավունքը քանի տարի ընդդիմանալով իտալական կայսերապաշտության և ֆաշայականության»⁴: Նա շեշտեց, որ Կիգան պաշտպանում է կրիայի անկախության պահանջը և «կընդդիմանա երկրի բաժանումին»: Վերջում Ազգամն ընդունեց, որ «եթե խնամակալություն անհրաժեշտ է, անիկա պետք է ի գործ դրվի արար պետության մը կամ կիգային կողմէն, և լիբրիացիներու բաղձանքները պետք է ճշտվին հանրաքվեով մը»⁵: Նույն ամսվա 10-ին կիգայի գլխավոր քարտուղարը հրապարակեց սեպտեմբերի 28-ին Արտաքին գործերի մինիստրների խոր-

Հըրդին հղած իր հուշագիրը, որում շատ պարզ ձևակերպված էր Արարական լիգայի դիրքորոշումը լիրիական խնդրի նկատմամբ. Լիրիան պետք է լինի անկախ ու միասնական երկիր և անդամակիցի Արարական լիգային⁷: Ինչպես իրավացիորեն նշում են Բուտրոս Ղալին և Պ. Բեյլադը, այդ «եռմիասնական նորատակը» (անկախություն, միասնականություն և անդամակցություն Արարական լիգային) դարձավ Միրիական խնդրում Արարական լիգայի հետագա գործունեության լեյտուրիվը⁸:

1946 թ. ապրիլին Արարական լիգայի խորհուրդը, քըննարկելով լիրիական հարցը, մի անգամ ևս հավաստեց իր աշակեցությունը լիրիայի անկախության գործին և «լիազորնեց Աղջամին այդ անկախությունն իրագործելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելով⁹, ինչպես ցույց է տալիս փաստաթղթերի ուսումնաժողովը, միայն 1946—1948 թթ. Արարական լիգայի խորհրդի մակարդակով լիրիայի վերաբերյալ կայացվել էր վեց որոշում, որոնցում շեշտվում էր արարական երկրների համերաշխությունը լիրիական ժողովրդի հետ և պաշտպանվում նրա իրավունքները: Միևնույն ժամանակ լիգայի կողմից կարևոր միջոցառումներ ձեռնարկվեցին, լիրիական աղջամին-աղատագրական շարժման տարրեր շոկատները միավորներու ուղղությամբ: Հակառակ այն իրողության, որ Միրիական տարրեր կուսակցությունների միջև տարակարծություններ կային երկրում հաստատվելիք վարչակարգի բնույթի և այլ հարցերում, լիգային հաջողվեց նրանց միավորների անկախության և միասնականության կարգախոսի ներքո¹⁰: Այս գործում լիգայի վճռորոշ դերը նշել է նաև է. Ռուման, գրելով, որ «լիրիական կուսակցությունների միավորումը լիգայի ջանքերով տեղի ունեցավ»¹¹:

Արտաքին գործերի մինիստրների խորհրդի 1946 թ. հունիս-Հուլիսին Փարիզում տեղի ունեցած նստաշրջանում որոշվեց լիրիայի և իտալական մյուս նախկին դադութիների հարցը լուծել իտալիայի հետ խաղաղության պայմանագրի կնքումից հետո մեկ տարվա ընթացքում: Հետագայում հարցի լուծման վերջնական ժամկետ սահմանվեց 1948 թ. սեպտեմբերը¹²: Այսպիսի գործում մասնակի պատճառն արևմտյան երկրների դիրքորոշումն էր, որոնք ցանկանում էին «լիրիական ազ-

զեցության և տիրապետության դռափիների բաժանելը¹³: Որպես Հարցի կարգավորման առաջին քայլ, սովորական կառավարությունն առաջարկում էր Լիբիայից դուրս բերել օտարերկրյա զորքերը: Սակայն իմպերիալիստական կրկը ները մերժեցին սովորական այս առաջարկը¹⁴: Արտաքին զորքերի մինիստրների խորհրդի նստաշրջանը 1948 թ. սկսած մբերին իր աշխատանքն ավարտեց առանց որևէ որոշ շուրջ կայացնելու լիբիական խնդրի կապակցությամբ¹⁵: Այս պայմաններում լիբիական Հարցը փոխանցվեց ՄԱԿ, իմպերիալիստները նպաստակ ունեին միջազգային այդ մարմնում հասնել իրենց համար նպաստավոր որոշման:

Լիբայի խորհրդի 1949 թ. մարտյան նստաշրջանում որոշվեց, որ արաբական երկրներն հանդես կդան և կպաշտպանեն լիբիայի անկախության և միասնականության պահանջը¹⁶: Նույն թվականի մայիսի 7-ին, լիբիական Հարցը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում քննարկելու նախօրեին, Անգլիայի և Խոտալիայի արտաքին գործերի մինիստրներ Բեկինը և Սփորցան էնքնդրին մի համաձայնագիր, որով նախատեսվում էր տաս տարի ժամանակով կիրճնաբիկան հանձնել Անգլիայի, Տրիպոլիտանիան՝ Խոտալիայի, իսկ Ֆեցցանը՝ Ֆրանսիայի խիամակալությանը¹⁷: Սակայն Բեկին—Սփորցանի աղյօթիք մայիսի 18-ին Գլխավոր ասամբլեայի կողմից մերժվեց: Այս անհաջողությունից հետո արևմտյան երկրեները որոշեցին կիրճնաբիկան և Ֆեցցանը «անկախ» հռչակել և աշխատով համաշխառությային հասարակությանը զնել կատարված փաստի առջև: 1949 թ. հունիսի 1-ին Անգլիան հայտարարեց կիրճնաբիկայի անկախությունը ճանաչելու մասին¹⁸: Արաբական երկրները դատապարտեցին այս քայլը: Լիբայի գլխավոր քարտուղար Ազգամը հայտարարեց, որ Կիրճնաբիկայի անկախության ճանաշումը նշանակում է բրիտանական շահերի պաշտպանումը¹⁹: Իմպերիալիստների այս խորամանկ քայլը նույնպես իր նպաստակին շնասավ:

1949 թ. նույնմերերին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 4-րդ նստաշրջանում Սովորական Միությունն առաջարկեց լիբիան անհապաղ հռչակել անկախ պետություն: ՍՍՀՄ-ի, սոցիալիստական ու զարգացող երկրների միասնական շանքերով

Դլխավոր ասամբլեան նոյնմբերի 21-ին որոշեց Արքային անկախություն շնորհել 1952 թ. Հոմվարի 1-ից ոչ ուշ Այսպիսով, կրթան միասնական և անկախ պետություն հռչակելու միջազգային արգելքները վերացան, 1950—51 թ. Արքայում անցկացվեցին ընտրություններ, մշակվեց ու հաստատվեց երկրի Սահմանադրությունը և 1951 թ. գնենումբերի 24-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան կրթան անկախ պետություն հռչակեց, իսկ 1953 թ. մարտին նա դարձավ Արական լիգայի անդամ:

Կրթան միասնական և անկախ պետություն հռչակելու գործում իր զգալի ներդրումն ունեցավ նաև Արարական լիգան: Այդ կազմակերպությունը նախ ամեն ինչ արեց լիրիական ազգային-ազատազրական շարժման տարրեր չուկատներն համախմբելու համար: Եվ երկրորդ, որ թերևս առավել կարեղ է, կրտան հետևողականորեն պաշտպանեց լիրիացիների պահանջները միջազգային ասպարեզում: Հարցն այն էր, որ լիրիական խնդրի միջազգային կողմը, որը պայմանավորված էր նրա նախկինում իտալական գաղութ լինելու հանգամանքով, ավելի դժվար էր կարգավորման հնթարելում: Կարելի է պնդել, որ լիրիական խնդրի լուծումը հնաց սրա միջազգային կողմի կարգավորումից էր կախված: Եվ Արարական լիգան ամբողջ հինգ տարի հիմնականում ինքը ներկայացրեց և պաշտպանեց կրթայի շահերը միջազգային այլևայլ մարմիններում: Եվ երբ 1949 թ. սեպտեմբերին Խոակայի կառավարությունը որոշեց Հրաժարվել Բեին—Սֆորցա պայմանագրից և հանդես եկավ կրթայի անկախության պահանջի պաշտպանությամբ, Եղիպտոսում Խոակրայի դեսպան Յրակեասին այդ մասին պաշտոնապես տեղեկացրեց կրտայի գլխավոր քարտուղարին²⁰, ինչը վկայում էր, որ կրտան միջազգային ասպարեզում փաստորեն ընկալվում էր որպես կրթայի շահերի պաշտպան:

Հարկ է նշել նաև, որ կրթայի նորադույն պատմությանը անդրադամած մի շարք հեղինակներ արձանադրել են կրտայի ակտիվությունը լիրիական հարցում և արժանին հատուցել այդ կազմակերպությանը²¹:

Մեր կողմից քննարկվող ժամանակաշրջանում Արարական լիգայի գործունեության մեջ մեծ տեղ է հատկացվել նաև Հյուսիսային Ադրբեյջին արարական մյուս երկրներում՝ Ալ-Ժիրում, Մարոկկոյում և Թունիսում ֆրանսիական զաղութարարների դեմ ծավալված ազգային-ազատազրական շարժումներին։ Մի շարք հեղինակավոր մասնագետներ իրավացիորեն նշել են, որ հետպատերազմյան շրջանում Մազգիրի ժողովուրդների անկախության համար մզած պայքարին նպաստող գործուներից մեկն էլ «1943 թ. սկսած արարական միասնականության շարժման ամրապնդումն» ու «Արարական պետությունների լիգայի ստեղծումն» էր²²։ Հյուսիսաֆրիկյան մի շարք գործիչներ դեռ լիգայի ստեղծման օրերին գիտակցում էին, որ միջարարական այդ կազմակերպությունն ի վիճակի և գործուն օժանդակություն ցույց տալ իրենց երկրներին։ Նրանցից շատերը 1944—45 թթ. մասնակցում էին Ալեքսանդրիայի արձանագրության և լիգայի պակասի ստորագրման արարողություններին²³, իսկ ումանք (ինչպես օրինակ, Թունիսի այժմյան պրեզիդենտ Հարիր Բուրգիրան) պահանջում էին, որ Հյուսիսային Աֆրիկայի երկրներին թույլ տրվի սկզբից ևեթ ավելի ակտիվ մասնակցել Արարական լիգայի գործունեությանը²⁴։

Մինչև 1946 թ. Արարական լիգան բուն Հյուսիսային Աֆրիկային ուղղակիորեն վերաբերող որևէ որոշում չընդունեց, բավարարվելով գաղութային լծի տակ դանդող արարական երկրների խնդրին ընդհանրապես անդրադառնալով։ Լիգայի անդամ երկրների զեկավարների 1946 թ. մայիսի ինշասի խորհրդակցությունում նշվեց այդ երկրների անկախության համար պայքարելու կարևորությունը և հանձնարարվեց լիգային «այդ ժողովուրդների ցանկությունների իրականացման ուղղությամբ հոգատարություն ցուցարերել և ապահովել նրանց անզամակցումը լիգային»²⁵։ Համանման մի որոշում ընդունվեց նաև Խորհրդի հունիսին Բլուզանում կայացած նստաշրջանում²⁶։ Լիգայի զիսավոր քարտուղար Ազգամը 1946 թ. ընթացքում Մազգիրի երկրների վերաբերյալ արեց մի քանի հայտարարություններ, որոնք, սակայն,

ունեին հակասական, երբեմն նույնիսկ հաշտվողական թնույթ։ Այսպիս, 1946 թ. Հունվարի 4-ին Ազգամը հայտարարեց, որ «Լիգան պահանջնելու և ֆրանսիական զորամիավորումների դուրս բերումը Հյուսիսային Աֆրիկայի երկրներից», իսկ մի քանի օր անց, «Մոնդ» թերթի թղթակցին տված հարցազրոյցում ճշգրտեց, որ «ինքը նպատակ չի ունեցել Բժնամական դիրքորաշում որդեգրել Ֆրանսիայի հանդեպ» և որ «Լիգան այդ կապակցությամբ անմիջականորեն որեւէ միջոցառում չի ձևուարկելուա²⁷։ Այլէլի երկիմաստ էր Ազգամի 1946 թ. Հոկտեմբերի հայտարարությունը, որում նա այն միտքը հայտնեց, թե «ոչ մի հակասական բան չկա Արարական լիգայի անդամ լինելու և ֆրանսիական միությանը (այսպիս էր կոչվում ֆրանսիական գաղութային կայսրությունը Չորրորդ հանրապետության 1946 թ. Հոկտեմբերին ընդունված Սահմանադրությունում—Ե. Կ.) միանալու մեջ...»²⁸։

Ինչո՞վ էր պայմանագործած լիգայի այսպիսի տրամադրությունը։ Նբեւ փորձելու լինենք այն բացատրել՝ ելակետ վերցնելով Արարական լիգայի անդամ երկրներում տիրող վարչակարգերի բնույթը, ապա անբացատրելի կմնալիքայի զիրքորոշման փոփոխությունը սկսած 1946 թ. վերջը, բանի որ այդ ընթացքում լիգայի անդամ երկրների վարչակարգերում որևէ չական փոփոխություն տեղի չունեցավ։ Ուրեմն հարցն այստեղ Հյուսիսային Աֆրիկայում տիրող իրավիճակն էր, հատկապես վերջինիս ոչ-ճիշտ զնաւումը լիգայի կողմից։ Անկասկած նշանակություն ուներ նաև ինչպես լիգայի վրա Մազրիբի քաղաքական ուժերի ազգեստության աստիճանը, այնպիս էլ վերջիններիս շրջանում տիրող տրամադրությունները։ Արձանագրենք, որ 1945—46 թթ. Հյուսիսային Աֆրիկայի, հատկապես Ալժիրի հակագողութամին ուժերի միջավայրում դեռ բավականին զգալի էր իրենց նպատակների իրականացմանը «առանց բացահայտ կոնֆլիկտի, քաղաքական լուծումի միջոցով» համանելու միտքումը²⁹։ Մյուս կողմից Արարական լիգան բացահայտորեն թերապնահատում էր Մազրիբի ազգային-ազատագրական շարժման ուժն ու հարավորությունները։ Եվ վերջապես, միանդամային ճիշտ է և. Պ. Մանասերյանի այն միտքը, որ Հյուսիսային Աֆրիկայի հարցում արարական երկրների ակտիվությունը պայ-

ժանավորված էր նաև «արարական երկրների հանրային կարծիքի ճնշմամբ»³⁰, որի ազգեցությունը կիդայի վրա չէր կարող դրսենութել անմիջապես, կիդայի գործունեության առաջին իսկ օրերից:

1945—1946 թթ. Մազրիբի երկրների քաղաքական կյանքում դդայի աշխատացում էր նկատվում: Առանձին երկրներում և Համամազդիրյան աստիճանաշափով ազգային-հայրենասիրական ուժերի համախմբման փորձեր էին կատարվում, ճշտորշվում էին ազգային-ազատազրական շարժման ժրագրերը, առաջ էին քաշվում նոր պահանջներ: 1945 թ. նոյեմբերին տեղի ունեցավ Մարոկկոյի իստիկլալ, Ալժիրի ժողովրդի (ՊՊԱ) և Թունիսի նոր Գուսառուր կուսակցությունների զեկավարների հանդիպումը: Ազգայինական, հակազարդարարական ուղղվածություն ունեցող այդ կուսակցությունների խորհրդաժողովի ավարտից հետո հարապարակված փաստաթղթում ասվում էր, որ Մազրիբի ժողովրդները միաբան են ու համակարգիք անկախության նվաճման և Արարական լիգայի շրջանակներում Հյուսիսային Աֆրիկայի միասնությանը համնելու հարցերում³¹: Ավելի ուշ, 1946 թ. օգոստոսի 15-ին, Թունիսի Հին ու Նոր Գուսառուր կուսակցությունների համատեղ կոնքրեսում ընդունված Ազգային խարտիայում շեշտվում էր, որ անկախության նվաճումից հետո Թունիսը պետք է միանա Արարական պետությունների լիգային³²: Մրազրային նշանակություն ունեցող այսպիսի փաստաթղթերում անկախության նվաճումից հետո միջպետական արարական կազմակերպությանն անդամակցելու դրույթի առաջքաշումը պետք չէ դիմել որպես Արարական լիգայի ժողովրդականության փաստ միայն, կամ էլ՝ որպես ծրագրային պահանջ: Այն նպատակ էր հնատապնդում նաև կիդայի սկզբուն ուշագրությունն հրավիրել Մազրիբի երկրներում աիրող իրադրության վրա, ձեռք բերել նրա հնարավորին շափորության վրա, աշակեցությունը և օգտագործել նրա հնարավորությունները՝ Հյուսիսային Աֆրիկայի խնդիրները միջադպային տարրեր մարմիններում քննարկման դնելու դորձում: Պետք է նշել, որ 1940-ական թվականներին Արարական լիգան Ալժիրի, Թունիսի և Մարոկկոյի խնդիրները քննարկում էր միասին՝ դրանք շառանձնացնելով իրարից:

Այս բանը պայմանավորված էր նրանով, որ նշված ժամանակաշրջանում այդ երկրների առջև ծառացել էին հիմնականում համայնքանեան խնդիրներ և նրանց պայքարը ուղղված էր նույն երկրի՝ Թրանսիայի գեմ: Հետագայում, 1950-ական թվականներին, երբ Մազրիբի երկրներից յուրաքանչյուրում ազգային-ազգաւորապրական շարժումն սկսեց ընթանալ իր յուրահատուկ հունով, կարիք զգացվեց, որ Արարական լիգան առանձին անդրադառնություն կոնկրետ այս կամ այն երկրին հուզող խնդիրներին:

1946 թ. վերջին Հյուսիսային Աֆրիկայի հարցում լիգայի զիրքորոշման մեջ սկսում են փոփոխություններ նկատվելու նոյնմերերի 23-ին Խորհրդի Հերթական նիստում Մազրիբի երկրներում տիրող իրադրությունը քննարկվեց որպես օրակարգի առանձին հարց: Ընդունված որոշման մեջ նշվում էր, որ Խորհրդը պաշտպանում է Մարոկոյի, Ալժիրի և Թունիսի ժողովուրդներին անկախություն տալու և լիգայի անդամ դանակու պահանջը: Խորհրդը լիգայի դիմավոր քարտուղարին հանձնարարեց միջոցառումներ ձեռք առնել Մազրիբի արարական շարժմանն աջակցելու համար...³³: Միաժամանակ որոշվեց ֆրանսիական կառավարությունից պահանջել ազատ արձակել մազրիբցի քաղաքական քանտարկություններին:

1946 թ. նոյնմերերյան որոշումից հետո Հյուսիսային Աֆրիկայի ժողովուրդներին աջակցելու ուղղությամբ կոնկրետ քայլեր ձեռնարկվեցին: 1947 թ. հունվարին լիգայի աջակածությամբ Կահիրեան ստեղծվեց Հյուսիսային Աֆրիկայի պաշտպանության ճակատը, որում ներկայացված էին Բատիկալ, Նոր և Հին Գուստուր և Ալժիրի Հանուն դեմոկրատական ազատությունների հաղթության շարժում (ՄՏԼԴ)³⁴ կուսակցությունները³⁵: Արարական լիգայի քարտուղարությունը 1947 թ. փետրվարին հրավիրեց Հյուսիսային Աֆրիկայի հարցերին նվիրված մի կոնֆերանս, որը առաջ քաշեց ֆրանսիական միությանը որևէ ձեռվ մասնակցելուց հրաժարվելու, ուսարերկրյա բոլոր զորքերը Մազրիբից զուրս բերելու և Հյուսիսային Աֆրիկայի երկրներին անկախություն տալու պահանջները³⁶: Կոնֆերանսում որոշվեց հիմնել Մազրիբյան արարական բյուրո, որում ներկայացված էին Հյուսիսաֆրիկ-

յան բուրժուական ազգային կուսակցությունները՝ 1948 թ.-
հունվարին բյուրոյի փոխարեն ստեղծվեց Արարական Մադ-
քիրի ազատազրման կոմիտեն, Մարտկոյի ազգային-ազա-
տազրմական շարժման հայտնի գործիչ Արդ էլ Քրիմ աև Խատ-
արբիր գլխավորությամբ:

Կոմիտեի գլխավոր նպատակն էր «Մազրիրի բոլոր երեք
տարածքների» ամբողջական անկախության ձեռքբերումը³⁷,
իսկ ընթացիկ խնդիրը՝ «Հյուսիսաֆրիկյան երկրների ազգա-
յին կազմակերպությունների գործողությունների համաձայ-
նեցումը Արարական պետությունների լիդայի գործունեու-
թյան հետ»³⁸, Կոմիտեի աշխատանքներին տարբեր տարի-
ների մասնակցում էին Հյուսիսաֆրիկյան այնպիսի երևելի
գործիչներ, ինչպիսիք էին Հարիր Բուրզիրան (Թունիս),
Ալլալ ալ Ֆասին և Մուհամմեդ Վազզանին (Մարտկոյ), Շաղ-
լի ալ Մաքրին, Մուհամմեդ Խիդերը և Ահմեդ Բեն Բելլան
(Ալժիր)³⁹, Անդրադառնայով կոմիտեի ստեղծմանը, Ն. Ա. Ի-
վանովը գրում է, որ Մազրիրի բուրժուական կուսակցություն-
ների դեկավարները, կողմնորոշվելավ գեպի «Հյուսիսային
Աֆրիկայի բոլոր երեք երկրների բուրժուական և մանրբուր-
ժուական տարրեր կուսակցությունների միավորման ստեղ-
ծումը», Համարվեցին «կոմունիստների հետ սերտ համա-
գործակցությունից»⁴⁰, Այնուհետև նա նշում է, որ կոմիտեում
բուրժուական կուսակցությունների միավորումը «չէր բացա-
ռում նրանց համագործակցությունը կոմունիստական կու-
սակցությունների հետ առանձին հարցերում» և ավելացնում,
որ «չնայած ներքին տարածայնություններին, որոնք հաճախ
կրում էին սուր բնույթ, Կոմիտեն... դարձավ Հյուսիսային
Աֆրիկայում ազգային-ազատազրական շարժման կոորդի-
նացիոն կարենը կենտրոն»⁴¹, Բայտ է. Պ. Մանասերյանի.
Աշազրավ էր նաև այն, որ Կոմիտեն «... դարձավ Մարտկ-
կոյի, Ալժիրի և Թունիսի անկախության օգտին պրոպագան-
դայի կարենը կենտրոն»⁴², Պետք է նշել, որ Հյուսիսային
Աֆրիկայի ոչ բոլոր բուրժուական կուսակցություններն էին
ներկայացված Կոմիտեում, Դեսպի Արարական լիդան կողմնո-
րուցվող կազմակերպությունների կողքին կային նաև այնպի-
սիք, որոնք դեմ էին կիդայի հետ համագործակցությանը՝
Օրինակ, ալժիրյան ՈՒԴՄԱ-յի (Ալժիրյան Մանիֆեստի ղե-

մոկրատական միություն) ղեկավար Յարշաթ Արքասը, որը 1940-ական թվ. առաջ էր քաշում ֆրանսիական միության կազմում ինքնավար Ալժիրյան Հանրապետություն ստեղծելու առաջարկը և որին է, թուժան ալժիրյան շարժման «ոհ-ֆորմիստական» գործիչների թվին և դասում⁴³, 1947 թ. պատասխանելով Ղեկայի նկատմամբ իր վերաբերմունքի մասին հարցին, հայտարարեց, որ Ղեկայի անառատը հաղթահարելն ավելի զժվար է, քան՝ Միջնական ծովը⁴⁴, Ռեսնի և պետք է ասել, որ Արարական Մաղրիբի ազատագրման կոմիտեն բուրժուական առավել արմատական, հակառակութատիրական ուժերի կենտրոն դարձավ:

1947 թ. մարտին Արարական լիգայի խորհուրդը մի անդամ ևս իր աշակեցությունը համաստեց Ալժիրի, Թունիսի և Մարոκկոյի «ազգայնական շարժումներին»: Սակայն, ինչպես նախկինում, այս անգամ էլ Ղեկայի կողմանը երեսն հեկազ հաշտվողական մոտեցում: Խորհուրդը գլխավոր քարտուղարին հանձնարարեց Մաղրիբի խնդրի շուրջ «քարեկամական բանակցություններ» վարել ֆրանսիական կոռավարության հետ⁴⁵: Նույն թվականի մայիսին գլխավոր քարտուղարը հայտարարեց, որ արարական երկրներն անշափ մտահոգված են Հյուսիսային Աֆրիկայի ավելի քան 20 միլիոն արաբների վիճակով, որոնք «գտնվում են նույնպիսի վատ զաղութարարական վարչակարգերի տիրապետության ներքո, ինչպիսիք աշխարհի այդ տիպի բոլոր վարչակարգերն են»⁴⁶: 1947 թ. ընթացքում Մաղրիբի խնդրում Արարական լիգայի մոտեցման մեջ նկատման տատանումները վերջնականապես հաղթահարվեցին: Այդ ժամանակաշրջանից սկսած Ղեկան աներկարյունն կանգնեց Հյուսիսային Աֆրիկայի ազգային-ազատագրական շարժման պաշտպանի դիրքերում:

1948 թ. վեստրվարին Խորհուրդը քննարկեց Մարոկկոյում տիրող իրադրության հարցը և արձանագրեց, որ այն չի առաջադիմել մարոկկոյական ժողովրդի անկախության և ազատությանն ուղղված ձգտումների իրականացման ուղղությամբ⁴⁷: Որոշման մեջ նաև ասվում էր, որ այդ երկիրն օկուպացնող տերությունները ոչ մի դրական բան չեն անում «մարոկկոցիների իրավունքները ճանաշելու և նրանց ինքնակառավարումը թույլ տալու համար»⁴⁸: Խորհուրդը իր բողո-

թը հայտնեց մամանակ առ ժամանակ տեղի ունեցող արյունալիք միջադեպերի կատակցությամբ, որոնց «զոհերն են դառնում ազատության մարտկոցի կողմնակիցները» և հավաստեց, որ վերջիններիս այսուհետեւ «հարավոր ամեն տեսակ օգնություն է ցույց տրվելու իրենց նպատակների իրականացման համար»⁶⁰.

1950 թ. վերջին Արարական լիգայի պլիավոր քարտուղար Ազգամը ԱՄՆ կատարած իր այցելության ընթացքում պետական քարտուղար Աշխոնի հետ քննարկեց նաև, իր խոսքերով, «Հուսակային Աֆրիկայի ֆրանսիական օկուպացման հարցը»⁶¹. 1950 թ. ապրիլին Արարական լիգան ընդունեց մի որոշում, որը թեպետ ուղղակիորեն չէր առնչված Հյուսիսային Աֆրիկայի հետ, սակայն սուր քննադատության հնթարկվեց Մարտկոցի կոմմոնիստական կուսակցության կողմից: Բանն այն է, որ կիզան որոշեց ՄԱԿ ընդունվելու գործում աշակը և ԽՍՀՄ իսպանիային⁶²: Ֆրանկոյական ԽՍՀՄ որի տիրապետության ներքո էր գտնվում Մարտկոցի տարածքի մի մասը, վարելով «բառ էության նույնպիսի գաղութարարական քաղաքականություն», ինչպես ֆրանսիական իշխանությունները, միաժամանակ ի տարրերություն նրանց (ֆրանսիական իշխանությունների—Ն. Ա.) հանդեռ էր գալիս տարրեր դիմագողիական հայտարարություններով հօգուս ազգային շարժման, խաղաղով արարական ժողովուրդների «քարենկամի» գեր»⁶³: Մասամբ խարելով իսպանական ղեկավարների կեղծ ու խարենպատիր հայտարարություններից, մասամբ էլ հույս ունենալով մարտկոցյական ազգային-ազգատագրական շարժման համար օգուտ քաղել ֆրանսիսպանական հակամարտությունից, կիզան ընդունեց իսպանամետ կեցվածք, ինչը քննադատելի քայլ էր: Պետք չէ մոռանալ, սակայն, որ արարական երկրների (ճիշտ է՝ թյուր) պատկերացմամբ, իրենց իսպանամետառությունը իրը նպաստելու էր Մարտկոցի ազգատության գործին, Ռևոլու և կիզայի այսպիսի դիրքորոշումը դնահատելիս ճիշտ չի լինի մոռանալ այն պայմանագործ պարագաները:

1950-ական թթ. Արարական լիգան հյուսիսաֆրիկան ընդհանուր պրոբլեմների հետ մեկտեղ ավելի մեծ ուշադրություն էր գարձնում հյուսիսաֆրիկան առանձին այս կամ

այն երկրին, նայած, թէ տվյալ պահին քաղաքական իրադրությունը ո՞ր երկրում էր ավելի լարված:

1950-ական թթ. սկզբին Մադրիդի երկրներից Մարտկեռյան գաղութային վարչակարգի ճշնաժամը թերևս ամենասուրբն էր: 1950 թ. Հոկտեմբեր-նոյեմբերին Մարտկեռյի սուրբան Յուսուփի այցելությունը Ֆրանսիա, որը Փարիզի կարծերով՝ պետք է օգներ ելք զանելու ստեղծված զրությունից, ակնեալված արդյունքը շավից: Ֆրանսիայում սովորաբերում վեհերուտ, իսկ այնուշենուե բավականին որոշակիորեն պահանջեց վերջ տալ ֆրանսիական որոտեկտորատիններ, Տեսնելով, որ սովորական միջոցներով հնարավոր չէ կասեցնել աղջային-ազատագրական շարժման վերելքը, ֆրանսիական իշխանությունները մարտկեռյական հայրենասերների գետ հալածանելների նոր արշավ ծավալեցին: Երկու տարիվա բանտարկության դատապարտվեցին կոմիսուսի ղեկավարներ Ալի Ցաթան և Մուհամեդ Ֆարհանթը: Զերբարակվեցին նաև Բատիկլալ կուսակցության մի շարք ղեկավարներ⁵³: Արարական մեզայի խորհուրդը 1951 թ. մարտի 1-ին քննարկելով Մարտկեռյուում տիրող իրադրությունը անդամ երկրներին հանձնարկեց այդ կապակցությամբ հուշագրեր հղել ֆրանսիական կառավարությանը: Հուշագրում ասվում էր, որ այն պահին, շերր արարական աշխարհն սպասում է Մարտկեռյի աղաւագրմանը ՄԱԿ-ի կողմից հաստատված ազատության, ժողովուրդների ինքնորոշման, մարդու իրավունքների սկզբունքներին անհարիր վարչակարգի կապանքներից..., Ֆրանսիան Մարտկեռյում դիմում է միջոցների, որոնք հակասում են ոչ միայն այդ սկզբունքներին, այլ նաև խախտում են պրոտեկտորատի պայմանագրի գորութիւններն ու նպաստակները: Արարական երկրները պահանջում էին, որ Ֆրանսիան հաշվի առնի Մարտկեռյի ժողովրդի անկախ և սուվերեն մի ազգ դառնալու և ՄԱԿ-ին անդամագրվելու ցանկությունը⁵⁴, Ֆրանսիական կառավարությունը անպատճանան թողեց կիզայի հուշագիրը: Սակայն, ինչպես նշում է Լ. Պ. Մանասերյանը, այդ հուշագիրը «ուներ որոշակի քաղաքական նշանակություն», քանի որ պրոտեկտորատի հաստատումից ի վեր առաջին անգամ «այդպիսի կտրուկ ձևով» պահանջ-

վուա էր վերը տալ «արտահեղադրամի վարչակարգին և Մարտկոսին տալ անկախությունը»⁵⁶,

ի պատասխան ֆրանսիական զաղութային իշխանությունների սանձազերծած ահարեկշական դործողությունների, Մարտկոսի հիմնական քաղաքական կուսակցությունները, բացի Կոմկուսից, «Արարական պետությունների լիդայի մշշմամբ» 1951 թ. ապրիլին ստորագրեցին այսպես կոչված Տանժերյան պակտը և միավորվեցին Մարտկոկույական ազգային ճակատում⁵⁷, Ներշինս կոչված էր հիմնականում գործելու միջադղային ասպարեզում՝ ՄԱԿ-ում և Արարական լիդայում⁵⁸: Տանժերյան պակտի վեցերորդ կոտում ասվում էր, որ «Արարական լիդայի և Մարտկոսի միջև համագործակցությունը՝ անկախության իրականացումից առաջ և հետո լիդայում ակտիվ աշխատելու առումով ազգային պարտք է»⁵⁹: Մասնագետները, նշելով Հանդերձ Մարտկոկույական ազգային ճակատի հասակարգային սահմանափակվածությունն ու հակակոմինիստական ուղղվածությունը, գտնում են, որ այն որոշակի դրական աշխատանքը կատարեց մանավանդ միշագային մարմիններում⁶⁰:

Արարական լիդայի քաղաքական կոմիտեն, մարտկոյական հայտնի գործիչներ Ալլալ ալ Ֆասիի և Մուհամմեդ Վազգանիի մասնակցությամբ 1951 թ. սեպտեմբերին քըննարկելով Մարտկոյում տիրող իրադրության հարցը, որոշեց այն մտցնել ՄԱԿ-ի գլխավոր սամարլեայի հերթական նըստաշրջանի օրակարգում։ Հոկտեմբերի 5-ին Քաղաքական կոմիտեն մի հուշագիր հղեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին։ Դրանում ասվում էր, որ իրադրությունը Մարտկոյում տարեսկզբից ճգնածամային բնույթի է կրում, տեղի են ունենում միշագային օրենքների խախտումներ։ Այնուհետև հուշագրում հիշեցվում էր, որ արարական իրկրներն իր ժամանակին ֆրանսիական կառավարության ուշադրությունն են հրավիրել այդ փաստի վրա, սակայն որևէ արգյունքի չեն հասել։ Վերջում նշվում էր, որ արարական կառավարությունները դիմում են ՄԱԿ-ին հույս ունենալով, որ միշագային կազմակերպությունը կօժանդակի «Մարտկոսի» ժողովրդին իր ազգային ձգտումներն իրականացնելու ուղղությամբ և

որ այդպիսով Հնաբավոր կլինի նաև խուսափել խաղաղությանը վնասող միջազնպերից»⁶¹:

1951 թ. հոկտեմբերին Քաղաքական կոմիտեն անդրադարձ Թունիսում և Ալժիրում տիրող իրադրությանը նիստին մասնակցում էին աշխիրյան ՊՊԱ-ի առաջնորդ Մհապալի Հաչը և Դումատը կուսակցության քարտուզար Ալի Քաջազգանը: Կոմիտեն իր աշակցությունը հայտնեց երկու երկրների ազգային ձգումներին և հայտարարեց, որ իրավամի անգամ պետությունները «բոլոր շանքերը ներդնելու նն իրենց տրամադրության տակ եղած դիվանագիտական միջնություններով առաջնությունը համար այդ երկրների ապագան»⁶²:

Արաբական երկրների մարոկոյական հարցը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 6-րդ նստաշրջանի օրակարգում մտցենելու փորձը, հակասակ մի շարք այլ երկրների, մասնավորապես ՍՍՀՄ-ի աշակցությանը, 1951 թ. նոյեմբերի 1-ին անհաջողությամբ ավարտվեց: Ֆրանսիային հաջողվեց հասնել այն բանին, որ հարցի բննարկումը հետաձգվի: Դեկտեմբերի 4-ին Արաբական լիդայի գլխավոր քարտուզար Ազգամը հայտարարեց, որ «մենք պահանջում ենք խնդրի ժարոկոյական—Ե. Ա.) ազատ և օրյակտիվ բննարկում և, եթև ֆրանսիական գաղութարարական փաստարկներն այնքան լավ են, ինչպես պնդվում է, ապա Ֆրանսիան պետք է համաձայնի այս բննարկմանը»⁶³: Ազգամը գտնում էր, որ հարցի բննարկումը հետաձգելու համար բերված պատճառներն անընդունելի են: Նշելով, որ ֆրանսիական իշխանությունները փորձում են պատժի միջոցառումների օգնությամբ կասեցնել ազգայնականության աճը, նա շեշտեց, որ ստեղծված իրադրության մեջ «արդարացի և խաղաղ լուծման համական միակ միջոցը խնդիրը ՄԱԿ ներկայացնելը կլինի...»⁶⁴: Դեկտեմբերի 13-ին արաբական երկրները մի անգամ ևս փորձեցին մարոկոյական հարցը մտցնել ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 6-րդ նստաշրջանի օրակարգում, սակայն այս անգամ էլ նրանք հաջողության շհասան»⁶⁵:

Դեկտեմբերի 4-ի իր հայտարարության մեջ Ազգամն անդրադարձ նաև Թունիսում տիրող իրադրությանը Փետ 1950 թ. Թունիսի ազգային շարժման զեկավարները առաջ էին քաշել այսպես կոչված «պատվավոր կոմարումիսի» քա-

զարգականություն վարելու դադարիարք, ըստ որի Թունիսին անհապաղ անկախություն տալու պահանջը առժամանակ վերացվում էր և ավագա փուլի համար առաջնային էր համար վում ֆրանսիական կառավարության հետ բանակցություններ վարելու միջոցով ներքին ինքնավարության իրավունքի ձևորությունը⁶⁶, Մասնագիտաների կողմից «փուլերի քաղաքականություն» որակված այս կուրսը⁶⁷ 1951 թ. վերջին արդին իրեն սպառելու վրա էր՝ հիմնականում զաղութային իշխանությունների պրոտեկտորատի վարչակարգն անփոփոխ պահպան ցանկության պատճառով։ Արարական լիգայի զինավոր քարտուղարն իր հայտարարությունում, ողջունելով հանդերձ Ֆրանսիայի և Թունիսի միջև ուղղակի բանակցությունների միջոցով վիճելի խնդիրները լուծելու դրայվը, շեշտեց, որ ՆԲՀ և Համաձայնությունը չկայացվի, և Թունիսի մոշի այլ ազիտներով իրականացնել իր աղքային ձևուունները, ապա Համաձայն մեր պակախ և ժողովրդի ցանկության մեր պարտք կինի աջակցել մեր արար նզրայիններին⁶⁸, Վերջում նա ավելացրեց, որ «մեղքը մերը չի լինի, եթե ֆրանսիական կառավարությունն այս անզամ էլ շնանի իր նպատակների իրականացմանը, ինչը քսաներորդ դարի կեսին անհնար է հարյուրամյա հնության զաղութային քաղաքականությամբ»⁶⁹,

1951 թ. գեկտեմբերի կեսին վերջնականապես պարզ դարձավ, որ Փարիզը մտադիր չէ Թունիսում որևէ զիջում անել: Այն քանից հետո, երբ 1952 թ. հունվարի 14-ին Թունիսի կառավարությունը հայտարարեց իր և ֆրանսիական կառավարության միջև ծագած վեճը լուծելու համար ՄԱԿ-ի Անվետանության խորհրդին զիմենու իր մտադրության մասին, զաղութային իշխանություններն անցան Թունիսյան ազգային զարժւումն ամենաբիրտ միջոցներով արմատախիլ անելու քաղաքականության Զերբակալվեցին նոր Գուստուր և կոմունիստական կուսակցությունների ղեկավարները, իսկ մարտի 26-ին, առանց Թունիսի թեյի գիտության, հայտարարվեց Մահմանեղ Շենիքի կառավարության «Հրաժարականի» մասին, որա փոխարեն կազմվեց խամաճիկ մի կառավարություն, իսկ Շենիքը և նրա դաշնիքի որոշ մինիստրները ձերքակալվեցին⁷⁰, Արարական պետությունների լիգան անտարքներ շմաց Թունիսում տեղի ունեցող իրադարձությունների

Նկատմամբ: 1952 թ. ապրիլին կիգայի անդամ երկրները փորձեցին թունիսյան Հարցը քննարկել տալ ՄԱԿ-ի Անվետանդության խորհրդում, իսկ հունիսին մինչև իսկ առաջարկեցին զլխավոր ասամբլեայի արտահերթ նստաշրջան հաշվիրել: Սակայն երկու գեղջում էլ նրանք հաջողության շհասան71:

Հարկ է նշնչ, որ իմպերիալիստական երկրները կարողացան թունիսյան խնդրի շուրջ տարածայնություններ առաջնել կիգայի անդամների միջն և որոշ երկրների դրդել հակառակիլելու թունիսյան Հարցը ՄԱԿ-ին ներկայացնելու առաջարկին72: Սակայն կիգայի անդամների մեծամասնությունը հետևողականություն դրսերեց և արարական երկըրներն այնուամենային զիմեցին ՄԱԿ: Նույն թվականի սեպտեմբերին Արարական լիգայի խորհուրդը որոշեց թունիսյան և մարտկեոյական Հարցերը ժողովնել ՄԱԿ-ի զլխավոր ասամբլեայի հարթական նստաշրջանի օրակարգում73: Այս անդամ արդեն երկու Հարցերն էլ քննարկվեցին զլխավոր ասամբլեայում: Ճիշտ է, ձայների շնչին մեծամասնությամբ արևմտյան երկրներին հաջողվեց Թունիսի և Մարտկեոյի վերարերյալ անցկացնել շատ չափավոր որոշումներ, սակայն այդ Հարցերի քննարկումը ՄԱԿ-ում «որոշակի հարկած էր ուղղված ֆրանսիական զեկավար շրջանների գաղութարարական քաղաքականությանը»74 և «իսկական դատաստան դարձավ ֆրանսիական իմաների այլմի գաղութարարական գործողությունների նկատմամբ»75:

Հյուսիսաֆրիկյան երկրների քաղաքական կուսակցություններն իրենց հերթին միջազգային մի շարք Հարցերում համերաշխում էին Արարական լիգայի հետ: 1952 թ. սեպտեմբերերին, երբ կնքվեց Խորայելին արևմտապերմանական ուղմատուղանքներ տալու վերաբերյալ կյուրսեմբուրդյան պայմանագիրը, Արարական լիգան այն որակեց որպես «Մերձավոր արևելյում լուրջ կոնֆլիկտների վերականգնման համար կարևոր պատճառ» հանդիսացող քայլ76: Այդ կապակցությամբ արևմտապերմանական կառավարությանն ուղղված Արարական լիգայի հուշագրում ասվում էր, որ «արարական երկրները չեն կարող անտարբեր մնալ այն նշանակալի ուղության նկատմամբ, որն առաջարկվում է իրենց հետ պա-

աերազմական դրության մեջ գտնվող մի երկրի⁷⁷, ԳՅՀՀ-ի կառավարության այդ քայլը, որն «աջակցում էր Իսրայելու միլիտարիզմի հետագա աճին»⁷⁸, դատապարտվեց նաև մաղթիրյան քաղաքական կուսակցությունների կողմբց: 1952 թ. նոյեմբերին մարոկկոյական հայտնի քաղաքական զործի Մուհամմեդ Վազգանին քաղաքական կոմիտեին հղեց մի հապիր, որում մարոկկոյական ժողովրդի անոնից հայտարարում էր ուազմատուգանքների հարցում իրավի դիրքորոշման հետ համերաշխ լինելու մասին⁷⁹:

1950-ական թվականներին Արաբական լիգան ավելի մեծ ուշադրություն էր դարձնում Մազրիբի խնդիրները միջազգային ացնելուն: Ընդ որում կարեռ էր համարվում այդ հարցերում զարգացող մշտական երկրների հետ միասնական ճակատով հանդես դալը: Քաղաքական կոմիտեի նախաձեռնությամբ կրայի անդամ երկրների և Եթովպիայի, Իրանի, Աֆղանստանի, Ինդոնեզիայի, Հնդկաստանի և Պակիստանի ներկայացուցիչների մասնակցությամբ 1952 թ. գեկտեմբերի վերջին Հրավիրովնեց մի կոնֆերանս, որը քննարկեց Հյուսիսային Աֆրիկայում տիրող իրավիճակը⁸⁰: Իսկ 1953 թ. ապրիլին կրայի խորհուրդը քննարկեց մարոկկոյական և թումիսյան հարցերը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին և գլխավոր ասամբլեային, ինչպես նաև Ալմիրյան հարցը ՄԱԿ-ի համապատասխան կոմիտեներին, մասնավորապես մարզու իրավունքների կոմիտեին ներկայացնելու հարցը և կրայի քարտուղարությանը հանձնարարեց այդ ուղղությամբ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելով⁸¹:

Պետք է նշել, որ մազրիբյան որոշ քաղաքական կուսակցություններ 1953 թ. առաջարկում էին Մազրիբի հետ Արաբական լիգայի համերաշխությունն արտահայտել ավելի կոնկրետ միջոցներով: Այդպիսի հարց առաջին անգամ բարձրացվեց 1953 թ. օգոստոսին, երբ ֆրանսիական գաղութային իշխանություններն ու նրանց հետ համագործակցող մարոկկոյական հետապիմական ուժերը զահընկեց արեցին իր ժողովրդի աղջային-աղջատագրական շամման պաշտպանությամբ հանդես եկող սուլթան Բեն Յաւաւիին և սուլթան Հաջակեցին իրենց զրածո Մուհամմեդ Բեն Արաֆին: Սեպտեմբերին սկզբին մարոկկոյական աղջային կուսակցություն-

Ների պահանջով Քաղաքական կոմիտեն անդրադարձավ այդ միջադեպին։ Ելույթ ունենալով կոմիտեի նիստում հստիկաէ կուսակցության առաջնորդ Ալլալ աւ Ֆասին պահանջեց, որ արարական երկրները խղճն իրենց «քաղաքական և տնտեսական կապերը ֆրանսիայի հետ և ազգայնացնեն ֆրանսիական հաստատությունները»⁸², Իրաքյան պատվիրակն առաջարկեց, որ արարական երկրները դեպի Հնդկաշխն թուող ֆրանսիական ինքնամբիոներին արգելեն օգտվել իրենց օգանակայաններից⁸³: Խորհուրդը, սակայն, այդ առաջարկները չմտցրեց ընդունված որոշման մեջ, հակառակ այն իրողության, որ ըստ Եգիպտական իրավելե «աւ ԱՀրամ» թերթի, Լիգայի անդամների մեծամասնությունը պաշտպանում էր Իրաքյան առաջարկը⁸⁴: Խորհուրդի որոշման մեջ նշվում էր, որ Մարոկոյում և Թունիսում ֆրանսիայի գործողությունները հակասում են ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի վերջին նստաշրջանում ընդունված որոշումներին, որոնցում հանձնարարվում էր ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն քաղաքական քանակցությունների միջոցով ու խաղաղությամբ լուծել այդ հարցերը: Խորհուրդը որոշեց որպես առաջն քայլ այդ երկրների հարցը մի անգամ ևս բարձրացնել ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի առաջիկա նստաշրջանում և ամեն ինչ անել ՄԱԿ-ի միջոցով նրանց անկախությունն ապահովելու համար⁸⁵: 1953 թ. աշնանը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում Թունիսի և Մարոկոյի ժողովուրդների ինքնորոշման իրավունքը ճանաշող բանաձեռք շրջանակություն շտանշալու պատճառով⁸⁶: Ինչ խոսք, որ Արարական լիգայի որոշման արժեքն անհամեմատ պես բարձր կլիներ, եթե դրանով նախատեսվեր որոշակի պատճամիջոցներ կիրառել ֆրանսիայի դեմ:

1953 թ. օգոստոսից հետո նորից աշխուժացում է նկատվում լիգայի և Բաքանիայի միջն եղած առնչություններում: Այդ բանին նպաստեց նաև այն, որ Բաքանիան պաշտոնապես հայտարարեց, որ ինքը շարունակելու է Մարոկոյի օրինական սուլթան Համարել Մուհամմեդ թեն Յուսուֆին⁸⁷: Այս քայլը «ինքնարերաբար մարտահրավեր էր ֆրանսիական կամացականության դեմ պայքարող մարոկո-

յաւան ազգային գործիչների խրախումանը⁸⁵, 1953 թ. դեկտեմբերին Խստանիա և Մարտիկոյի խստանական դոտ այցելնց կիգայի զիսավոր քարտուղարի օգնական Ա. Շուքարին 1954 թ. ապրիլ-մայիսին նույն ուղերթով այցելություն կատարեց Լիգայի զիսավոր քարտուղար Ա. Հասունան։ Վերջինս խստանական գործիչների հետ ըննարկեց «Տնտեսական» (Մարտիկոյի խստանական գոտու զիսավոր քաղաքում—Ե. Ա.) շերիֆյան (այսինքն օրինական սուվամանին և նիմարկվող—Ե. Ա.) կառավարությունը ստեղծելու հարցը⁸⁶, 1954 թ. հունվարին կիգայի խորհուրդը հրապարակեց մի հայտարարություն, որում պաշտպանվում էր Խստանիայի զիրքորոշումը Զիբրալթարի խնդրի շուրջ անզիռ-խսպանական հակամարտությունում։ Միաժամանակ կիգան գններալ Ֆրանկոյին արարական երկրներ այցելելու հրավեր ուղարկեց, իսկ 1955 թ. հոկտեմբերին կիգան նորից որոշեց աշակեցել խստանիային ՄԱԿ անդամագրվելու գործում⁸⁷։

Հյուսիսային Աֆրիկայի երկրներին իր աշակեցությունը կոնկրետացնելու առումով 1954 թ. Արարական լիգան ընդունեց մի կարևոր որոշում։ Քաղաքական կոմիտեի հունվարյան նստաշրջանում որոշվեց ստեղծել Մազրիրի երկրների օգնության ֆոնդ⁸⁸, ճիշտ է, իր ստեղծման տարրում ֆոնդի գումարը շատ փոքր էր և կազմում էր ընդամենը 43 850 դոլար, սակայն 1958 թ. այն արդեն այդ ժամանակների համար զգալի գումար էր կազմում և հավասար էր 344 000 000 դոլարի⁸⁹։

Նույն թվականի ապրիլի 4-ին Հյուսիսային Աֆրիկայի ազգայնական կուսակցությունների ներկայացուցիչները կիգայի նստավայրում ստորագրեցին Արարական Մազրիրի ազգատագրման կոմիտեի 10 հոդվածներից բաղկացած պակտը։ Պակտում նշվում էր, որ կոմիտեն նպատակը Մազրիրի երկրների շամբողջական անկախության ձեռքբերումն է, կիգային միանալը՝ մերժելով Ֆրանսիայի հետ որևէ միությունը, քանի որ դա կլինի անդամանատված գերիշխանությունը⁹⁰։ Մազրիրի ազգատագրման կոմիտեն շուտով կիգայի խորհրդից պահանջեց ալժիրյան հարցը բարձրացնել միջազգային մարմիններում։ Հյուսիսաֆրիկյան կուսակցությունները նոր հարցեր դրեցին նաև քաղաքական կոմիտեի 1954 թ. սեպտեմ-

ժերյան նստաշրջանի ժամանակը՝ Նրանք առաջ բաշեցին Մաղրիբի պարտիզաններին ուղղմական օգնություն ցույց տալու և իրենց երկրներում արաբական մշակույթի պրոպագանդանման խնդիրները։ Միաժամանակ Լիգայի անդամ երկրներից ինդրիքնեց քաղաքական օժանդակություն ցույց տալ Քունիսին՝ ինքնավարություն տրամադրելու հարցի շուրջ այդ օրերին ընթացող ֆրանս-թունիսյան բանակցությունների կապակցությամբ, նաև Մարոկկոյին, առաջիկայում նախատեսվող նմանատիպ ֆրանս-մարոկկոյական երկխոսության առթիվ։ Քաղաքական կոմիտեի ընդունած որոշման մեջ նշվում էր, որ Լիգան կշարունակի միջազգային մարմիններում աշակեցի Մաղրիբի երկրներին⁹⁵։ Որոշման մեջ ոչինչ չեր առվում արծարծված մյուս հարցերի, մասնավորապես պարտիզաններին ուղղմական օգնություն ցույց տալու մասին։ Սակայն ճիշտ չեր լինի այդ ասպարեզում Լիգայի դործունեւթյան մասին դատել միայն հրապարակված որոշումներով։ Թանի որ ավել մարզում Լիգայի ակտիվությունը նպաստականաբար չեր համարվում պրոպագանդել։ Ինչ վերաբերում է Հյուսիսաֆրիկյան կուսակցությունների կողմից պարտիզաններին ուղղմական օգնություն ցույց տալու խնդրի առաջդրմանը, ապա այն հավանաբար ավելի շուրջ նորատակ էր հետապնդում Ֆրանսիային վախեցնել պարտիզանական շարժման հետագա աճի հետանկարով։ Նման պնդումի համար չիմք են հանդիսանում նաև՝ մի քանի մանրամասներ, որոնք հանրությանը հայտնի դարձան ավելի ուշ, 1950-ական թվականների երկրորդ կեսին։ Տակալին 1951 թ. Արաբական լիգայի գլխավոր քարտուղար Ազզամն ալժիրյան ՄՏԼԴ կուսակցության ղեկավարներին առաջարկել էր համապատասխան կազրեր ուղարկել Եղիպատուս՝ ուղղմական պատրաստություն ստանալու համար⁹⁶, 1953 թ. Բեն Բելլայի նախաձեռնությամբ Կահիրեսում կազմակերպվել էր Հյուսիսային Աֆրիկայում պարտիզանական շարժման ղեկավարման միացյալ շտաբ, որը «Արաբական Մաղրիբի պատրաստություն» ստանալու համար էր պատրաստում թունիսում ֆրանսիական գաղութարարների դեմ ղինված պայքարի համար և պլանավորվում էր այդ պայքարը տարածել նաև Ալժիրում և Մարոկկոյում⁹⁷, Կրկ-

մելով շեշտենք, որ այս բոլորի մասին հայտնի դարձավ ավելի ուշ, այն էլ ամենաընդհանուր ձևով միայն Այնպես որ չնայած տեղեկությունների բացակայությանը, պետք չէ բացառել, որ 1954 թ. սեպտեմբերյան նստաշրջանում, կամ էլ դրանից հետո, կիպան լուծած կլինի պարտիզանական շարժմանը ուղղմական օգնություն ցույց տալու հարցը:

1950-ական թվականների կեսերին Հյուսիսային Աֆրիկայում տեղի ունեցան արմատական նշանակություն ունեցող փոփոխություններ: Ազգային-ազատագրական շարժման աստիճանական հզորացման պայմաններում Ֆրանսիան ստիւլած էր պիզումներ անել Բունիսում և Մարտկույում: Նախ 1955 թ. հունիսին ստորագրվեց Բունիսի ներքին ինքնավարության մասին ֆրանս-թունիսյան համաձայնագիրը, իսկ 1956 թ. մարտին ստորագրվեց Բունիսի անկախություն տալու վերաբերյալ պրոտոկոլը: 1955 թ. նոյեմբերին ֆրանսիական իշխանությունները հարկադրված եղան Մարտկույում իշխանության զբոխ վերադարձնել օրինական սուլթան Մ. ԲԱՆ Յուսուֆին և 1956 թ. մարտին ստորագրել Մարտկույուի անկախության մասին գեկլարացիան: Իսկ 1958 թ. հոկտեմբերին Մարտկույուն և Թունիսը անդամագրվեցին Արաբական լիգային:

Այն բանից հետո, երբ 1954 թ. նոյեմբերի 1-ին սկսվեց ալժիրյան հեղափոխությունը, Մազրիբում ազգային-ազատագրական շարժման ծանրության կենտրոնը Բունիսից ու Մարտկույուից աստիճանաբարար տեղափոխվեց Ալժիր: Այս պայմաններում, քնականաբար, Արաբական լիգայի ուշադրությունը նույնպես կենտրոնացվեց Ալժիրին:

Ինչպես որ Մարտկույուն և Թունիսի պարագաներում էր, զդալի աշխատանք կատարվեց ալժիրյան խորքի միջազգայնացման ուղղությամբ: Արաբական լիգան 1954 թ. դեկտեմբերին Սաուդյան Արաբիային հանձնարարեց ալժիրյան հարցը ներկայացնել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի քննարկմանը⁹⁵: Ավելի ուշ, 1955 թ. աշնանը, սոցիալիստական երկըրսների և աֆրո-ասիական պետությունների օժանդակությամբ հաջողվեց ալժիրյան հարցը մտցնել ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի նստաշրջանի օրակարգում: Ֆրանսիային, սակայն, այս դեպքում, ինչպես նաև հետագայում, որնդհուար

մինչև 1960 թ., հաջողվում էր փակել Ալժիրի գերաբերյալ ՄԱԿ-ում սրնէ կռնկրեա որոշում ընդունելու ճանապարհը⁹⁹: Այսուամենայնիվ պետք է նշել, որ ալժիրյան խնդրի միջազգայնացման ուղղությամբ կիզայի ջանքերը դրական նշանակություն ունեցան: Ինչպես նշում է Ռ. Գ. Լանդան, ալժիրյան Հարցի միջազգայնացումը «սկզբնավորեց ալժիրյան հեղափոխության միջազգային ճանաշումը», իսկ հետագայում «այն հեղափոխության համար Հանգիստացավ մարտի կարևոր դաշտ և մետրոպոլիտացի վրա ճնշում գործադրելու միջոց»¹⁰⁰:

Ալժիրյան Հարցի կապակցությամբ կիզայի փաստաթթվաբերում քննադատության ենթարկվեց նաև ՆԱՏՕ ռազմաքաղաքական ազգեսիվ խմբավորումը Բանն այն է, որ ալժիրյան Հայրենասերների դեմ մզվող պայքարում Ֆրանսիան զտագործում էր նաև իր այն զորամասերը, որոնց ձևականությունը կանվում էին ՆԱՏՕ-ի հրամանատարության ներքո¹⁰¹, կորհրդի 1955 թ. Հոկտեմբերին քննումված որոշման մեջ ասվում էր, որ «Ալժիրում ֆրանսիական իշխանությունների գործադրած պատժամիջոցները և ՆԱՏՕ-ի ուժերի կողմից այդ իշխանություններին ցույց տրվող օգնությունը վահագում են ռեզիստնի խաղաղությունն ու անվտանգությունը»¹⁰², կիզայի խորհրդի 1956 թ. մարտին կայացած նստաշրջանում այդ փաստը որակվեց որպես ՆԱՏՕ-ի կողմից «ազատ ժողովուրդների դեմ պայքարում իր ուժերի օգտագործման թույլատրում», ինչը վնասում է «անվտանգությանը և Հայկառում ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքներին»¹⁰³:

Քաղաքական կոմիտեի 1956 թ. ապրիլի նստաշրջանում սիրիական պատվիրակությունն առաջարկեց մշակել Ֆրանսիային տնտեսական, մշակութային և քաղաքական բոյկոտի ևնթարկելու միջոցառումներ: Այդ Հարցն ուսումնասիրելու համար ստեղծվեց մի ենթակոմիտե, որը նույն թվականի կարնան ու ամռանը մի քանի նիստեր դումարեց¹⁰⁴, Ֆրանսիային բոյկոտի ենթարկելու հարցը քննարկվեց նաև Քաղաքական կոմիտեի 1956 թ. Հոկտեմբերի 21-ի նիստում¹⁰⁵, Սակայն նույնիսկ այն բանից հետո, եթե Հոկտեմբերի 22-ին ուղղակի օգաճնային մեթոդներով ձերբակալվեցին ալժիրյան հեղափոխության հինգ ղեկավարները, որոնց ինքնաթիրը Մարտկույցից թունիս թուելու ժամանակ ստիպողաբար իշեց-

վեց Ալժիրում, Լիբան Ֆրանսիայի դեմ որևէ պատժամիջոց ձևոնարկելու որոշում շընդունեց և սահմանափակվեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարից պահանջելով «Հանրային ազգայությունների դեմ գործադրած այդ ազրեսիան» Անվտանգության խորհրդում քննարկման դնել¹⁰⁶: Այս հարցում Լիբայի դրսեւրած զգուշավորությունը բացատրվում է Սուևգի դրանցքի աշգայնացման կապակցությամբ եղիպտա-ֆրանսիական հարաբերությունների ծայրահեղ սրմամբ: Միանդամայն հաւելալի այդ քաղաքական դիօք կոչված էր ավելորդ լարվածություն շտեղծել և ամեն ինչ անել դեպքերի վտանգավոր կարգացումից խուսափելու համար: Սակայն, երբ 1956 թ-հոկտեմբեր-նոյեմբերին Ֆրանսիան, Անգլիայի և Խորացելի հետ, ազգնութա կազմակերպեց Եգիպտոսի գեմ, արարական երերների մեծամասնությունը, առանց նախնական պայմանավորվածության և ինքնարուի ձեռվլ խզեց քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերությունները Ֆրանսիայի հետ: Մասնակցելով սուեցյան արկածախնդրությանը, Փարիզը հույս ուներ ևմի հարվածով հասնել երկու նպատակի վերականգնել ֆրանսիական բաժնետերների (Սուևգի շրանցքի—Շ. Ա.) «իրավունքները» և, որ զիխավորն է, վերջ տալ Եգիպտոսին որպես ԱԱԾ-ի (Ալժիրի Ազգային ազգատազրության հակատի—Շ. Կ.) օգնության աղբյուրին¹⁰⁷: Սակայն Ֆրանսիան իր հաշիվներում սխալվեց Նրան շնչաջողվեց վերականգնել իր բաժնետերների իրավունքները, իսկ ալժիրցի հայրենասերներին Եգիպտոսի, ինչպես նաև արարական մշտու երկրների օժանդակությունը զնալով ավելի հզորացավ: Դրա արտահայտությունն էր նաև եռյակ ազգնութայից անմիջապես հետ Արարական լիգայի անդամ պետությունների դեկայարների նոյնմբերի 13—14-ին Բեյրութում տեղի ունեցած խորհրդաժողովի ավարտին հրապարակված հայտարարությունը, որում Եղիպտոսին աջակցելուց բացի, արարական երկրները մեկ անդամ ևս հանդես եկան «ալժիրյան ժողովրդի պահանջների ուղաշտպանությամբ, ազգային ձգտումների՝ անկախության և սովորենության ձեռքբերմանն ու իրականացմանը նկրտող նրա պայքարությանը¹⁰⁸:

1956 թ. հետո էլ Արարական լիգան շարունակում էր զգայի ուշագրություն դարձնել ալժիրյան ժողովրդի պայքա-

թին, ընդհանուր մինչև 1962 թ., երբ Ալմիրը զարձավ սուվերենի պկառություն և Արարական լիգայի անդամ։ Նշելով հանդերձ Արարական լիգայի ակտիվությունը ալմիրյան խնդիրը միշտպահնացնելու, ալմիրյան հայրենասերներին քաղաքական և նյութական օգնություն ցույց տալու գործում, պետք է առել, որ կրտան միակ մարմինը չէր, որի միշոցով արտահայտվում էր Ալմիրի հետ արարական երկրների համերաշխությունը։ Արարական շատ երկրներ, զլիսավորապես նպիպուր, Մարտկեռն և Թունիսը սիփական նախաձեռնությամբ զգալի, այդ թվում նաև ուղղմական օգնություն էին ցույց տալիս ալմիրյի հայրենասերներին¹⁰⁹։ Թե՛ կրտայի միշոցով, թե՛ այլ խողովակներով արարական երկրների ընդհանուր օգնության մասին ավելի լավ պատկերացում կազմելու համար ժանութանանք Ռ. Գ. Լանդայի բերած հետեւյալ թվերին։ 1956—57 թթ., —դրում է նա, —Ալմիրում Հարկերի հավաքը ԱԱԾ-ի դրամարկղին ապահովում էր տարեկան 12 միլիարդ ֆրանկի մուտք, իսկ արարական երկրների օգնությունը՝ էլի 8 միլիարդ ֆրանկ։¹¹⁰ Ուրեմն ԱԱԾ-ի բյուջեի 40%-ն ապահովում էր արարական երկրների օգնության հաշվին, ինչը վկայում է, թե որքան նշանակալի էր կրտայի անդամների դերը ալմիրյան ազգային-ազատազրական շարժմանը նաև նյութակես օժանդակելու գործում։

Կրտայում, Թունիսում, Մարտկեռում և Ալմիրում մղված պայմանագրը քաղաքական անկախության ձեռքբերման համար արարական ազգային-ազատազրական շարժման կարևորագույն բազադրամասերից է։ Այդ երկրների ժողովուրդները իրենց նպատակների իրականացմանն հասան տևական, հաճախ նույնիսկ հերոսական պայքար մղելուց հետո, նրանց հայթանակը պայմանավորված էր նաև մի շաբթ միշագեային գործոններով, որոնցից առաջնայինն, իհարկե, ուժերի այն նոր հարաբերակեցությունն էր, որ ստեղծվել էր երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ստեղծման շնորհիվ։ Մաղրիբի ժողովուրդների պայքարին նպաստում էր նաև արարական համերաշխությունը, որը գիտավորապես արտահայտվեց Արարական պետությունների լիգայի միշոցով։ Այդ կազմակերպությունը մեծ ծառայություն մատուցեց այդ երկրների

պրոբլեմները միշազգայնացնելու ասպարեզում, նշանակալի
դեր կատարեց Մաղրիբի աղջային-ազատագրական շարժման
տարրեր ջոկատները միավորելու և նրանց քաղաքական, քա-
ռոյական և նյութական օգնություն ցույց տալու գործում:
Իիրիան, Ալժիրը, Թունիսը և Մարոկկոն անկախության նվա-
ճումից հետո անդամագրվելով Արաբական պետությունների
լիգային, ընդարձակեցին այդ կազմակերպության աշխար-
հագրական ընդգրկումը և նպաստեցին նրա քաղաքական
կշռի մեծացմանը:

ԱՐԱԲԱԿԱՆ ԼԻԳԱՆ ԵՎ ՊԱՂԵՍԻՆԻ ՀԱՐՑԸ

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին արաբական ժողովուրդների ուշագրությունը կենտրոնացավ՝ Պաղեստինի վրա։ Անզիփայի արտաքին գործերի մինիստր Բալֆուրի 1917 թ. հայտնի հայտարարությունը՝ Պաղեստինում հրեաների համար ազգային օչախ ստեղծելու գաղափարի նկատմամբ իր կառավարության դրական վերաբերմունքի մասին, արաբական երկրներում բացասական հակառակեցություն առաջ բերեց։ 1920-ական թվականներին Անզիփայի մանդատային տիրապետության ներքո գտնվող Պաղեստինում տեղի ունեցող իրադարձությունները արաբական աշխարհում լայն արձագանք էին գտնում, ինչպես նշվեց առաջին զիխում, Արաբական լիդայի ծրագրային առաջին փաստաթղթերում Պաղեստինին առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում։ Իր գործունեության առաջին օրից կիզան Պաղեստինի խնդիրը պահում էր իր տեսադաշտում։ 1940-ական թվականների երկրորդ կեսին ոչ մի այլ հարց այդքան մեծ անդ չէր գրավում Արաբական լիդայի գործունեությունում։ Պրան՝ պաղեստինյանը։

Արդեն 1945 թ. մայիսին կիզայի անդամ պետություններ ԱՄՆ-ի պրեզիդենտ Տրումենին և Անզիփայի վարչապետ Զերշիլին ուղարկեցին հուշագրեր, որոնցում ոՊաղեստինը հրեական ազգային օչախ դարձելու գաղափարին դեմ էին արտահայտվում։ Թե՛ իր ստեղծման շրջանում, թե՛ իր գործության առաջին օրերին Պաղեստինի հարցում կիզայի աշխարհությունը արևմտյան երկրների, մանավանդ Անզիփայի, Դժոհությունն առաջացրեց։ Կոնդոնը արաբական երկրների

վրա պետի ճնշում գործադրեց, ձգտելով Պաղեստինի հարցը հանել կիդայի օրակարդից և ի շիք դարձնել այդ կազմակերպության ծրագրային փաստաթղթերի Պաղեստինի վերաբերող գրույթների իրականացումը։ Այսպես, ի խախտումն կիդայի պակասի Պաղեստինին վերաբերող հավելվածի, պաղեստինյան ներկայացուցիչը շեր մասնակցում Խորհրդի 1945 թ-հունիսին կայացած առաջին նստաշրջանին, ինչը պաղեստինյան որոշ շրջանակներում բացառական հակագործություն առաջացրեց։ Երբ նույն թվականի հոկտեմբերի 31-ին բացվեց Խորհրդի երկրորդ նստաշրջանը, Պաղեստինի ներկայացուցիչը նորից ներկա չէր։ Բայց մի շաբթ աղբյուրների, այս դեպքում Խորհրդի աշխատանքներին Պաղեստինի մասնակցությանը Անգլիայից բացի ընդդիմանում էր նաև Ֆրանսիան, վախճառակավ, որ ո՞ս վատ նախադեպ կլինի, որին կարող են հետեւել նաև իր գաղութային տիրապետության տակ գտնվող Հյուսիսային Աֆրիկայի արարական երկրները։ Խորհուրդը, ընկարկելով պաղեստինյան ներկայացուցիչ մասնակցության հարցը, որոշեց դրա լուծումը հանձնարարել կիդայի գլխավոր քարտուղարին և նպաստուի վարչական նույրաշին, որոնք պետք է ուայս հարցի շուրջ բանակցեն բրիտանական կառավարության հետո⁴։ Միայն դեկտեմբերի 4-ին Խորհրդի № 17 որոշմամբ Պաղեստինի ներկայացուցիչների հարցը դրականորեն լուծվեց։ Որոշման մեջ նշվում էր, որ պաղեստինյան պատվիրակությունը լիիրավ ձայն է ունենալու Խորհրդում պաղեստինյան և նրանց հարակից հարցերի քննարկման ժամանակ և որ պատվիրակության անդամները (թվով երեքից ոչ ավելի) պիտի ընտրվեն Պաղեստինի գերազույն կոմիտեի և հաստատվեն Խորհրդի կողմից⁵։

1945 թ. սկսած ԱՄՆ-ը սկսնց ավելի գործուն կերպով միջամտել Պաղեստինի խնդիրներին։ Պրեզիդնստ Տրումենը 1945 թ. օգոստոսին անգլիական իշխանություններից պահանջեց, որ 100 հազար հրեաների թույլ տրվի անմիջապես զայթել Պաղեստին⁶։ Լուղունն սկզբում մերժումով պատասխանեց, սակայն, շցանկանալով ԱՄՆ-ի գեմ բացահայտ առնակատման գնալ, այնուամենայնիվ ստիպված եղավ իր պաղեստինյան քաղաքականությունում որոշ փոփոխություններ մտցնել։ Այդ պարզորոշ արտահայտվեց Անգլիայի ար-

սաքին գործերի մինիստր է. Բեինի 1945 թ. նոյեմբերի 13-ին Համայնքների պալատում արտասանած ճառում: Բեինը հայտարարեց, որ ԱՄՆ-ի կառավարությունը համաձայնվել է ուվրուգական հրեականության հարցն ուսումնասիրելու և դրա լույսի ներքո պազճատինյան խնդիրը մանրամասն քըն-նարկելու «համար անզլո-ամերիկյան միացյալ հանձնաժո-ղով ստեղծելու վերաբերյալ Անզիփայի առաջարկին»: Հանձնաժողովը պիտի ֆնարկեր նաև դեպի Պաղեստին հրեական դադիրի հարցը: Բեինն առաջարկում էր նաև արարեների հետ խորհրդակցել հանձնաժողովի գործունեության ընթացքամբ «հրեական հերդազթը այժմյան շափերով շղադարեցնելու վերաբերյալ»: Այսպիսով անզիփական կառավարությունը հրաժարվում էր 1939 թ. Սպիտակ գրքի քաղաքական դիրք, ըստ որի հրեաների դադիր Պաղեստին 1944 թ. զաղարեցվելու էր: Հետաքրքիր է, որ Արաբական լիդայի զնկավարությունը մինչև Բեինի հայտարարությունը տեղեկացվել էր, որ նվրուգական հրեաների հարցը ուսումնասիրելու համար շուտով ստեղծվելու է միջազգային հանձնաժողով, որի իրավասության շրջանակների մասին, սակայն, ոչ մի կոնկրետ բան չէր ասվել¹⁰, եռորդուրդը որոշեց հետաձգել Պաղեստինի հարցը քննարկումը և սպասել հանձնաժողովի ստեղծմանը:

Լիդային նմանօրինակ տեղեկություններ տվողները հավանաբար հույս ունեին, որ անզլո-ամերիկյան միացյալ հանձնաժողովի ստեղծումով արարական միջայինտական ալգ կազմակերպությունը կատարված փաստի առջև կդրվի և նրա անդամները շեն դիմանա անզլո-ամերիկյան համատեղ ճճեցմանը: Սակայն այս հաշիվները սիսալ գուրս եկան: Բեինի հայտարարությունից հետո Պաղեստինի հարցում կիցայի դիրքորոշումն ավելի արմատական դարձավ: Արաբական լիդայի Բեինին հասցեազրված պատասխանում, որը խորհուրդը հաստատեց նոյեմբերի 29-ին, նշվում էր, որ «Արաբական պետությունների լիգան, որը Մեծ Բրիտանիայի և Միացյալ Նահանգների հետ պահպանում է լավագույն հարաբերություններ, ոչ մի արդարացուցիչ հանգամանք չի տեսնում հանձնաժողովի կողմից (անզլո-ամերիկյան—Շ. Կ.) Պաղեստին ներգաղթի հարցը քննարկելու համար...»¹⁰: Այդ խնդրի արժարժումը ԱՄՆ-ի և Անզիփայի կողմից կիցան դիտում էր

սրագին այդ երկրների վրա պործադրված սիոնիստական ճընշման հետևանքը, մանավանդ որ բազմաթիվ Հրեաներ Պաղեստինից ցանկանում են արտադադրել ԱՄՆ և այլ երկրները Պատասխանում շեշտվում էր նաև, որ արարական երկրները ցանկանում են Պաղեստինը որքան հնարավոր է շուտ անկախտենել¹¹: Մի քանի որ անց նորից անդրադառնալով Պաղեստինի հարցին, Խորհուրդը որոշեց արգելել Պաղեստինում և նրանից դուրս սիոնիստներին պատկանող գործարանների արտադրանքի մուտքը արարական երկրները: Այսպիսի որոշման ընդունումը Խորհուրդը պատճառաբանում էր նրանով, որ սիոնիստներն իրենց տնտեսական հզորությունն օգտագործում են քաղաքական նպատակների իրազործման համար: Նույն որոշումով ստեղծվեց Հատուկ Հանձնաժողովը, որը պետք է համակարգեր և վերահսկեր այդ որոշման իրազորժությունը¹²:

1945 թ. աշնանային նստաշրջանի ժամանակ Խորհուրդը կարևոր քայլեր ձեռնարկեց Պաղեստինի արարական քաղաքական կուսակցությունները համախմբելու ուղղությամբ: Նստաշրջանի նախագահ Սիրիայի վարչապետ Զ. Մարգամը Խորհրդի հանձնարարությամբ նոյեմբերի 13-ից 24-ը այցելեց Պաղեստին և խորհրդակցեց տարրեր կուսակցությունների ղեկավարների հետ: Նոյեմբերի 22-ին նա հայտարարեց Պաղեստինի արարական գերազույն կոմիտեի¹³ ստեղծման մասին, որում ներկայացված էին Պաղեստինի արարական կուսակցությունները¹⁴:

Արարական լիգայի խորհրդի նստաշրջանի օրերին Պաղեստինում գրությունն ավելի սրվեց: Նոյեմբերի 2-ին՝ Բալթիկուրի ղեկարացիայի տարեղարձին, սիոնիստները Պաղեստինի տարրեր շրջաններում ահարենշական գործողություններ կատարեցին: Նույն օրերին հականքեական արարքներ տեղի ունեցան Կահիրեում, Ալեքսանդրիայում, Տրիպոլիտանիայում և այլուր: Կահիրեում և Ալեքսանդրիայում մի քանի հարյուր մարդ վիրավորվեց, իսկ Տրիպոլիտանիայում հարյուրից ավելի մարդ զոհվեց¹⁵: Արարական լիգան անդիմական կողմից հրահրված այդ միջադեպերին¹⁶ ուղղակիորեն շանդրադարձավ: Սակայն կիզայի ղեկավարությունը 1945 թ. վերցին և 1946 թ. սկզբին դիմեց որոշ քայլերի, ցույց տալու

համար, որ իր քաղաքականությունը ոչ թե ընդհանրապես հակածին է անհական, այլ հակասիոնիստական բնույթ ունի: Նոյն ժ-րերի դեպքերից հետո կիզայի գլխավոր քարտուղար Ազգամը և ուրիշում ներկայացված արարական պատվիրակությունների պատվիրակությունը կազմակերպված ընդունելությանը հրավիրեց նաև ծագումով հրեա եղիսաբետացիներին¹⁷: Մի այլ առիթով Արդամը հայտարարեց, որ արարական երկրների հրեաները ուղարկում են նույն իրավունքներից, ինչ որ արարաները ու նրանց ձևանարկությունները բոլորու շեն ևնթարկվելու, եթե նրանք շեն հարում սիոնիստներին¹⁸: 1946 թ. սկզբին կիզայի Գիտավոր քարտուղարը կոչով գիմեց և վրոպական հրեաներին, հիշեցնելով, որ դարերի ընթացքում հրեաների և արարաների միջև հարաբերությունները միշտ էլ եղել են բարեկամական, ի հակապատկեր Սվորովայում հրեաների կրած հաւածաներին¹⁹: Արարական լիզայի ղեկավարությունը ձգում էր համոզել հրեական լայն զանգվածներին Պաղեստինում արարական և հրեական տարրերի խաղաղ գոյակցության հայրավորության մեջ:

1946 թ. հունվարին Անգլիան պաշտոնապես հավանություն տվեց Թաղմանումին հրեական դաշինքի շարունակմանը՝ կիզայի գլխավոր քարտուղարության հրապարակած հայտարարությունում այդ որոշումը որպես անգլո-արարական փոխադարձ վստահությունը խաթթարող քայլ²⁰, լուղունի քաղաքականության փոփոխությունն արտահայտվեց նաև անգլո-ամերիկյան հանձնաժողովի հաշվետվությունում²¹, որը ապրիլի 20-ին պաշտոնապես հանձնվեց կիզայի գլխավոր քարտուղար Ազգամին: Այս բանը վկայում էր, որ միշտ աղջային առումով կիզայ արդեն ճանաչվում է որպես Պաղեստինի հարցում արարական երկրների քաղաքականության պիտաֆոր կազմակերպիւ:

Անգլո-ամերիկյան հանձնաժողովի հաշվետվությունը, որի մասին ստորև մանրամասն կիսում, նախ քննարկվեց կիզայի անդամ պետությունների ղեկավարների մայիսի 28—29-ին Խոշասում տեղի ունեցած խորհրդակցությունում և ապա Բլուդանում հունիսի 8—12-ը կայացած խորհրդի նըսաշրջանում:

Ինչասի խորհրդաժողովի ամբարտից հետո հրապարակված համատեղ հայտարարությունում անզլո-ամերիկյան հանձնաժողովի հաշվետվության հրեական գաղթը շարունակելու վերաբերյալ հանձնարարականը անընդունելի էր համարվում։ Հայտարարությունում հույս էր հայտնվում, որ օգությունը ունեցող սրտալից հարաբերությունները արարական ժողովությունների և երկու բարեկամական դեմքրատիաների միջև շնչ վնասվի։ այն բանից, որ վերցիններն եղանակացնելու արարներին վնասող միջոցառումների անցկացման վրա...»²²։

Թի՛ անզլո-ամերիկյան հանձնաժողովի հաշվետվությունը, թի՛ Պաղեստինի հարցն ընդհանրապես ամերիկյան բնակչության քաղաքացիների մասնաւում նախ կիսայի խորհությունը հասունի հայտարարությամբ անդրադարձավ անզլո-ամերիկյան հանձնաժողովի հաշվետվությանը, նշելով, որ վերջինիս էջերում շարադրված հանձնարարականները «անհամատեղելի են Արարական լիգայի անդամ լուրացանցությունը երկրի շահերի հետ»²³։ Հայտարարությունում մնել առ մնել մեկնարանվում էին անզլո-ամերիկյան հանձնաժողովի հանձնարարականները, և ցույց տրվում Արարական լիգայի վերաբերմունքը դրանց նկատմամբ «Զարմանքի և զայրույթի առիթ տվող» էր համարվում հանձնաժողովի նզրահանգումն այն մասին, որ «Պաղեստինից բացի ուրիշ ոչ մի երկրից հիմնական օգնություն չի սպասվում Եվրոպան լրել ցանկացող հրեաների համար մի օջախ ձեռք բերելու գործում»²⁴։ Արարական լիգան «տարօրինակորեն հակասական» էր որպես կում այն հանձնարարականը, որում, գաղթի շարունակությունը Պաղեստինի համար սժանը բեռ Համարելու հետ մեկտեղ՝ հանձնաժողովը հանդիս էր գալիք 100 000 հազար հրեաների Պաղեստինում ընդունելու առաջարկով։ Հայտարարությունում ասվում էր, որ «շատ զատապարտելի» է հանձնաժողովի կողմից Պաղեստինը որպես «ոչ արարական, ոչ էլ հրեական երկիր» դիմուլը և նաև այն «պնդումը, որ Պաղեստինը չի հանդիսանում և երբեք էլ չի լինի այն երկիրը, որին միայն մի ժողովուրդ կարող է տիրապետել ցանկանալ»²⁵։ Այսուհետեւ նշվում էր, որ «հանձնաժողովի հանձնարարականը՝ Պաղեստինում գոյություն ունեցող կառավարման ձեր՝ Պաղեստինում գոյություն ունեցող կառավարման ձեր՝

մինչև արարա-Հրեական հակամատության վերացումը շարունակվելու մասին, քանդում է այն հիմքերը, որոնց վրա հենցում էր մանդատային սիռումը²⁶: Աւումնասիրելով Պաղեստինում ապրող արաբների և Հրեաների կինսամակարգական համարդարձը, անգլո-ամերիկյան հանձնաժողովը արձանագրել էր Հրեաների կինսամակարդակի համեմատարար բարձր լինելը: Արարական լիգայի կարծիքով զրա հիմնական պատճառներից մեկն էլ մանդատային սիրումն էր: Պաղեստինում հողի առուծախի աղատության վերաբերյալ հանձնաժողովի հանձնարարականը²⁷ համարելով ոչ միշտ, կիզան գտնում էր, որ ԵՄՆ Բրիտանիայի պարտքն է կանգնեցնել այդ վրասանզի այն պահին, երբ նա տարածվում էր²⁸: Այստեղ հարկ է նշել, որ դեռ 1946 թ. մարտին լիգայի խորհրդի որոշմամբ ստեղծվել էր 1 միլիոն եղիպատական ֆունտի հասնող սկզբական կապիտալով մի բանկ, որը կոչված էր «պայմանական Պաղեստինում հողերը սիրոնիստներին վաճառելու դեմ»²⁹:

Պաղեստինի հարցի վերաբերյալ Բլուզանում ընդունվեցին մի շարք այլ որոշումներ ևս: Նպատակահարմար համարվեց ստեղծել հատուկ «Պաղեստինի կոմիտե», որում ներկայացված են լինելու արաբական բոլոր երկրների ներկայացուցիչները և որը զեկավարելու է Պաղեստինին վերաբերող բոլոր աշխատանքները³⁰: Միաժամանակ որոշվեց ստեղծել Պաղեստինի արաբներին միավորող մի նոր բարձրագույն մարմին՝ բազկացած չորս անդամներից (Զամալ Հուսեյնի, Ազմեդ Հիմմի, Հուսեյն ալ Խալիդի և Էմիր ալ Խուրի)³¹: Արաբական լիգան պահանջեց զինաթափել սիրոնիստական ջոկատները, Բլուզանի նստաշրջանի արդյունքները ամփոփող չաղորդագրությունում այնունետև նշվում էր, որ անհրաժեշտ է ուժեղացնել պայքարը Պաղեստինում հողերը սիրոնիստներին վաճառելու, ինչպես նաև սիրոնիստական ապրանքները բոլորուն ասպարեզներում: Որոշվեց նաև արաբական կառավարությունների միջոցներով ստեղծել Պաղեստինի համար հատուկ ֆոնդ՝ նույն նստաշրջանում ընդունվեցին նաև պաղեստինյան կուսակցությունները միավորելու և սիրոնիստական ապրանքները բոլորուն վերաբերյալ հատուկ որոշումներ: Գրանցից առաջինում նորից էր Հիշատակվում մեզ արդին հայտնի պաղեստինյան նոր բարձրագույն մարմնի

կազմը, որը կոչվում էր «Արաբական բարձրագույն գործադիր կոմիտե»³³, Որոշման մեջ նշվում էր, որ կիցան հույս ունի, որ «Պաղեստինում գործող երկու կազմակերպությունները՝ Արաբական բարձրագույն կոմիտեն և բարձրագույն արաբական ճակատը կը մրռնեն նոր պայմանավորվածության անհրաժեշտությունը և (Դորժադիր կոմիտեն) կհամարն Պաղեստինի բոլոր արաբների միակ ներկայացուցիչը...»³⁴: Արաբական լիգայի խորհուրդը զոնում էր, որ «այլևս ոչ մի իմաստ չկա, որ (գոյություն ունեցող պաղեստինյան կազմակերպությունները) շարունակեն իրենց գործունեությունը այժմ, եթե արդեն Դորժադիր կոմիտեն զոյլություն ունի»³⁵: Սիոնիստական ապրանքները բոյկոտելու մասին որոշումով նախատեսվում էր կիցայի անդամ յուրաքանչյուր երկրում ստեղծել բոյկոտի վերահսկումն իրականացնող հատուկ գրասներակներ, ամեն կերպ աշակեցնել Պաղեստինի արաբների պահանջարկը վայելող նյութերի և ապրանքների արտահանմանը արաբական երկրներից, տեղեկություններ ձեռք բերել սիոնիստական արտադրանքի մասին և այլն³⁶: Սիոնիստական ապրանքների բոյկոտի խողըն կարճ ժամանակում կիցայի նորից անդրադառնալը բացատրվում է նրանով, որ մի շարք արաբական երկրներ Խորհրդի 1945 թ. դեկտեմբերին որոշումը կամ բնակչության կատարում, կամ էլ այն իրագործում էին ոչ ճիշտ: Այսպես, օրինակ, Իրաքը արդեւ էր անխափիր բոլոր պաղեստինյան ապրանքների ներմուծումը³⁷:

Բուդանի նստաշրջանի պաշտոնական հաղորդագրության մեջ նշվում էր, որ ընդունված մի շարք որոշումներ զաղունի են պահպելու³⁸: Այդ գաղտնի որոշումներից մեկը վերաբերում էր Պաղեստինին: Գրանում արձանագրված էր, որ սիոնիստներն իրենց նախատակին հասնելու համար պատրաստ են ուժի դիմել: Գրահամար էլ անհրաժեշտ է, որ Պաղեստինի արաբները նախազգուշական միջոցներ ձեռք առնեն: Խորհուրդը որոշեց արաբական ժողովուրդներին «շխանգարելի դրամական միջոցներով, զենքով և մարտիկներով՝ Պաղեստինի արաբներին աջակցելու գործում»³⁹: Միաժամանակ պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ եթե «ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարությունները կենսազործեն անգլո-ամե-

Հիկյան հանձնաժողովի հանձնարարականները, ապա Արարական լիգայի անդամները «անհրաժեշտ միջոցներ էին ձեռք առնելու իրենց պահանելու համար»⁴⁰: Այդ «անհրաժեշտ միջոցներն» էին ԱՄՆ-ին և Անգլիային, ինչպես նաև այդ երերների բազարացիներին ոչ մի նոր կոնցեսիա շրամատ-դրելը, միջազգային կազմակերպություններում նրանց շա-շակցելը, արարական երկրներում այդ երկրների ունեցած կոնցեսիաները վերացնելու համարվորության քննարկումը, Պաղեստինի հարցը ՄԱԿ-ում բարձրացնելը⁴¹:

Ինչասում և Բլուուանում ընդունված որոշումները կարևոր էին Պաղեստինի արարներին օժանդակելու գործում: Դրանք ունեին հակաբեմպերիալիստական ուղղվածություն, որը, սա-կայս, թերավարութիւնը ԱՄՆ-ին և Անգլիային սրարեկամա-կան դեմոկրատիաներ» և նման փաղաքական մակդիրներով դիմելու փաստից բացի, այս բանի օգախն է վկայում նաև այն, որ արևմտյան երկրների դեմ հարկ եղած դեպքում ձևանարկելելիք միջոցառումների մասին որոշումը զաղտնի էր պահպան: Այլ իսութով, Արարական լիգայի համար առաջ-նայինը ոչ թե ԱՄՆ-ի և Անգլիայի իմպերիալիստական ծրագ-րների վիճեցումն էր ընդհանրապես, այլ դրանցում սիրոնիս-տամետության վերացմանն հասնելը: Բոլորովին էլ նպա-սաւել շունենալով արդարացնել լիգայի այսպիսի կուրս, նշենք, որ դրա հիմքում ընկած էր արարական երկրների հա-մոռվածությունն այն բանում, որ առանց արևմտյան երկր-ների, կամ դոնե նրանցից մեկի աշակցության, Պաղեստինի հարցի արարների համար ընդունելի պայմաններով լուծումն աշխատ էլ ռեալ չէ:

Այսուհեղ հարկ է արձանագրել, որ արարական աշխար-հուն կային նաև այլ տրամադրություններ: Նույնիսկ այնպի-սի մի գործիչ, ինչպիսին Պաղեստինի ավատատիրական շրո-շանակների ներկայացուցիչ Զամալ Շուսեյինին էր, 1946 թ. մայիսին, անգլո-ամերիկյան հանձնաժողովի հանձնարարա-կանների հրապարակումից հետո, հայտարարեց, որ «մեր միայն հույսը Արևելքը թեքվելն է, քանի որ Արևմուտքը մեռ-դավաճանեց»⁴², նույն օրերին Պաղեստինի արարական բարձ-րացույն կոմիտեն մի ուղերձով դիմեց ՍՍՀՄ-ին: Պետք է նշել, որ այդ փուլում գերիշխողը հակառակ տրամադրու-

թյուններն էին, որոնք արտահայտվեցին նաև կոմունիստների և առաջադիմական մյուս ուժերի գեմ պայքարելու վերաբերյալ Բլուզանում և Խնչասում ընդունված որոշումներում⁴³: Արարական լիգայում այդպիսի որոշումները անցկացնողները նպատակ ունեին կազմակերպությանը տալ նաև ոստիկանական ֆունկցիաները: Սակայն Հակակոմունիզմը լիգայի պաշտոնական շրջանակներում պատահական բնույթ կրեց և հետագայում նման դիպքեր շարձանագրվեցին:

Միբխայի կոմունիստական կուսակցության օրգան «Սառութ աշ շաար» թերթը անդրադառնալով Խնչասի և Բլուզանի խորհրդաժողովներում Պաղեստինի հարցի վերաբերյալ ընդունված որոշումներին, խստորեն քննադատեց դրանք, իրավացիորեն նշելով, որ դրանցում բացակայում են այնպիսի կարևոր պահանջներ, ինչպիսիք են Պաղեստինին անկախություն տալը և այնտեղից անզիւժական զորքերի դուրս բերումը: Թերթը ճիշտ է նկատել, որ իրավան ամեն ինչ անում և տանգիւթական իմացերին ալիքը հետ լավ հարաբերությունները շփշացնելու համար⁴⁴:

Արարական լիգայի Խնչասում և Բլուզանում ընդունած որոշումները որոշակի ազդեցություն թողեցին Պաղեստինում գեղագիտի հետազա զարգացման վրա: Անզիւ-ամերիկյան Հանձնարարականների նկատմամբ արարական երեխների բացասական զիրքորոշումը կոնդունին հնարավորություն ընձեռնց այդ Հանձնարարականները վերանաւել իր համար շահագետ ձևով⁴⁵: Այսպես է, որ երեխնեկավ Մորիսոնի նախագիծը, ըստ որի Պաղեստինը բաժանվելու էր շրու մարդի, որոնցից երկուսում՝ Երուսաղեմում և Նեգեռում պահպանվելու էր Անգլիայի մանդատային տիրապետությունը, իսկ մյուս երկուսը լինելու էին որոշ ինքնավարությունը ունեցող արարական և հրեական մարդեր⁴⁶: Արարական լիգայի անդամ պետությունների մասնակցությամբ 1946 թ. սեպտեմբերին կոնդունում կայացած կոնֆերանսում Անգլիան քննարկման դրեց նոր նախագիծը: Արարական երեխները, սակայն, մինչ այդ լիգայի բաղարական կոմիտեի 1946 թ. օգոստոսի 13—14-ին Ալեքսանդրիայում կայացած նստաշրջանում մշակել և հաստատել էին Պաղեստինի հարցի կարգավորման իրենց նախագիծը: Ըստ այդ նախագիծի Պա-

դեստինում ստեղծվելու էր յոթ արար և երեք հրեա մինիս-
տըրներից բաղկացած ժամանակավոր կառավարություն, որը
նախապատրաստելու էր 60 հոգուց բաղկացած Սահմանադիր
ժողովից ընտրությունը: Նախագծով նախատեսվում էր Սահ-
մանադրության մեջ արձանագրել, որ Պաղեստինը միշտ լի-
նելու է միասնական պետություն և զաղարեցվելու է հրեա-
կան ներդադիրը⁴⁷, կոնդոնի կոնֆերանսում արարական եր-
կրոները ճշդրություն, որ ստեղծվելիք պետության կառավա-
րության կազմում համայնքները ներկայացված են լինելու
բառ իրենց թվաբանակի⁴⁸, իսկ 1946 թ. կոկտեմբերին կիզա-
րի գլխավոր քարտուղար Ազգամը հայտարարեց, որ ժամա-
նակավոր կառավարությունը Պաղեստինում գործելու է 10
տարի⁴⁹: Կողմերի այսպիսի հակադիր դիրքորոշման պայ-
մաններում կոնդոնի կոնֆերանսը, բնականարար, անարդ-
ունք ավարտվեց:

1946 թ. աշնանը կոնդոնն առաջ քաշեց Պաղեստինի
շարցի կարգավորման Բնինի նախագիծը, որով նախատես-
վում էր Պաղեստինում ստեղծել արարական և հրեական մի
շանի ինքնավար շրջաններ, որոնք, սակայն, մտնելու էին
Անգլիայի տիրապետության տակ գտնվող միասնական պե-
տության մեջ⁵⁰. Դեկտեմբերին Արարական լիզայի խորհուր-
դը որոշեց չքննարկել Պաղեստինի բաժանման որևէ նախա-
գիծը, Միաժամանակ Խորհուրդը, անդրադառնալով Պաղես-
տինում տիրող իրադրությունը, նշեց, որ Պաղեստինի արար-
ները հաճախ են սիոնիստական ահարեկությունների զոհ
դառնում: Թանի որ անդիմական իշխանությունները չեին կա-
րողանում այդ գործողությունների դեմն առնել, ապա Արա-
րական լիզան կոնդոնից պահանջեց «զինել Պաղեստինի ա-
ռար ժողովրդին», հենվելով այն նույն սկզբունքների վրա,
որոնցից ելնելով բրիտանական կառավարությունը զինել է
Պաղեստինի հրեաներին...»⁵¹, Խորհրդի որոշման մեջ նշվում
էր, որ, եթե Պաղեստինում իրադրությունը սրվի, ապա մի
կարելի բացառել, որ արարական ժողովրդներն օգնեն իրենց
պաղեստինյան եղբայրներին⁵².

1946 թ. վերջին պարզ դարձավ, որ Պաղեստինի հար-
սում Անգլիայի բաղաքականությունը ճգնաժամի մեջ է և
միանգամայն հնարավոր է, որ այն վերանի ամրող Արարա-

կան արևելքում նրա քաղաքականության ճզնաժամի: Այս պաշմաններում 1947 թ. փետրվարին Անդրիան Հայտարարեց հարցը ՄԱԿ փոխանցելու մասին: Ինձարկեն, ուս չեր նշանակում, որ Հոնգոնց հրաժարվում էր Պաղեստինում իր ունեցած դիրքերը պահպանելուց: Ընդհակառակը, նա հոյս ուներ ՄԱԿ-ում համեմել իր համար հարմար որոշումների ընդունման:

Արարական լիգայի խորհրդի 1947 թ. մարտի հերթական նստաշրջանում որոշվեց պաշտպանել Պաղեստինի Հարցը ՄԱԿ-ում քննարկելը և հանձնարարվեց լիգայի անդամ երկրներին համապատասխան նախապատրաստական միջոցառումներ ձեռնարկել: Խորհրդի որոշման մեջ նշվում էր, որ արարական երկրները ՄԱԿ-ում պետք է հանդիս գան Պաղեստինին լրիվ անկախություն տալու պահանջով⁵⁵: Ընդունվեց նաև մի գաղտնի որոշում, որով նախատեսվում էր ՄԱԿ-ում արարական համար ոչ ձեռնտու որոշում ընդունվելու գեպրում նյիպատուսում ստեղծել Պաղեստինի արարական կառավարությունը⁵⁶:

ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի առաջին արտահերթ նըստաշրջանը 1947 թ. մայիսին որոշեց Պաղեստինի հարցը սամումնասիրելու համար ստեղծել 11 երկրների ներկայացուցիչներից քաղկեցած հատուկ մի հանձնաժողով: Արարական լիգայի քաղաքական կոմիտեն հռնիս ամսին կահիրենու նիստեր գումարեց՝ որոշելու համար այդ հանձնաժողովի նկատմամբ ունենալիք վերաբերումնքը: Կոմիտեի որոշման վերաբերյալ հակասական տեղեկությունները, որա մասին արարական տարբեր երկրներում արված այլևայլ մեկնարանությունները վկայում են⁵⁷, որ լիգայի անդամներին չհաջողվեց քննարկվող հարցում վերջնական համաձայնության գալ: Ավելացնենք, որ թեև նո Պաղեստինի արարական բարձրագույն կոմիտեն բոլյուտեց հանձնաժողովը, արարական երկրներն, այնուամենայնիվ, պարզաբանեցին իրենց տեսակետներն այդ հանձնաժողովին⁵⁸:

1947 թ. օգոստոսի 31-ին ՄԱԿ-ի հատուկ հանձնաժողովը հրապարակեց իր Հաշվետվությունը: Զանդրադառնալով գրամանքամասներին⁵⁹ նշենք, որ հանձնաժողովի անդամների մեծամասնությունն արտահայտվեց Պաղեստինում արարա-

կան և Հրեական առանձին պետություններ, իսկ փոքրամաս-
նությունը՝ երկու ինքնավար մարզերից բաղկացած դաշնակ-
ցային մի պետություն ստեղծելու օգտին։ Սևալունմբերի 16-ից
20-ը Սովորում (Հիբանան) Արարական լիգայի քաղաքական
կոմիտեն քննարկեց Հանձնաժողովի հաշվետվությունը։ Կո-
միտեն որոշեց «բոլոր միջոցները ձեռք առնել՝ թույլ շտալու
համար ոչ միայն Հանձնաժողովի այս Հանձնարարականների,
այլ նաև մյուս բոլոր այն միջոցառումների իրականացումը,
որոնք չեն ապահովում Պաղեստինի անկախությունը որպես
արարական երկրի»⁶⁰։ Սա նշանակում էր, որ արարական
երկրները չեն ընդունում Հանձնաժողովի թե՛ մեծամասնու-
թյան և թե՛ փոքրամասնության Հանձնարարականները Բա-
ցի այդ, իրենց Հայտարարությամբ արարական երկրները
համացնել էին տալիս, որ նման առաջարկների վրա հիմնը-
ված որևէ որոշում իրենք ոչ միայն չեն կատարի, այլև կաշ-
խատեն իւանգարել զրա իրականացումը։ Առաջ քաշելով
Պաղեստինում արարական պետություն ստեղծելու գաղափա-
րը, որում, սակայն, հաշվի կառնվեին Պաղեստինի բոլոր քա-
ղաքացիների և փոքրամասնությունների իրավունքները⁶¹, ա-
րարական երկրները շեշտը դուռ էին Պաղեստինի արարա-
կանությունը պահպանելու վրա, Հարկ եղած ձեռվ ուշադրու-
թյուն շղարձնելով Պաղեստինի Հրեաների կարևոր մոմեն-
տին, ինչը սիոնիստական պրոպագանդային տալիս էր լրա-
ցուցիչ Հաղթաթուղթ։ Սակայն այս քաղաքական գիծը, որը
Հետագայում վերաճեց Իսրայել պետության վերացման
կարգախոսի, նաև արդյունք էր սիոնիստական շրջանակների
վարած արարականալած քաղաքականության։ Միանգամայն
չիշտ է ակադեմիկոս Ե. Մ. Պրիմակովի միտքը, արտահայտ-
ված ընդհանրապես արարական իսրայելական թշնամության ա-
ռաջացման կապակցությամբ, որ «Իսրայելի վերացման կո-
չերը Հակաղղեցություն էին սկզբում սիոնիստական զեկավա-
ռության, իսկ Հետագայում իսրայելական զեկավար շրջան-
ների որոշակի գործողությունների»⁶²։ Հավանաբար ավելի
շիշտ և շրջահայաց կլիներ, եթե 1946—47 թթ. Արարական
լիդան պրոպագանդեր դեռ 1946 թ. օգոստոսին իր իսկ մշա-
կած Պաղեստինի Հարցի կարգավորման նախագիծը, կամ

զրա սկզբունքների վրա հիմնված մի ուրիշ այլընտրանքային նախագիծ:

Թաղաքական կոմիտեի Սոֆարում կայացած նստաշրջանին հայտարարությունում նշվում էր նաև, որ պաղեստինյան արարները գենքը ձեռքներին կապայքարեն իրենց նպատակների իրականացման համար, իսկ արարական երկրները՝ ուժունն նրանց մարդկանցով, դրամական միջոցներով և զենքով⁶³, Կոմիտեն քննարկեց նաև Բլուդանում ընդունված գաղտնի որոշումներն իրագործելու հարցը, սակայն, երբ առաջարկվեց այդ մասին վերջնագրեր ուղարկել ԱՄՆ-ի Անդիմայի կառավարություններին, Սառուցյան Արարիայի ներկայացուցիչ Յուսուֆ Յասինը, աշխատելով ձգձգել այդ հարցի լուծումը, հայտարարեց, որ պետք է «վերջնագրին բնադրի պատրաստել, դրկելը որոշելն առաջ»⁶⁴: Այս հարցը քննարկվեց նաև Խորհրդի Հոկտեմբերի 7-ից 15-ը իրանա նում տեղի ունեցած նստաշրջանում: Որոշվեց այնուամենայի նիվ էինսագործել Բլուդանի գաղտնի որոշումները, եթե ՄԱԿ-ի հաստատի պաղեստինյան հանձնաժողովի հանձնարարականները: Խորհրդը միաժամանակ անհրաժեշտ համարեց Պաղեստինին սահմանակից արարական երկրներին հանձնարել ուղղմական միջոցներ ձեռք առնել Պաղեստինում անդիմական մանդատի վերացման կապակցությամբ և հնարավորություն բնձեռնել արարական մյուս պետություններին՝ մասնակցելու Պաղեստինի պաշտպանությանը⁶⁵:

1947 թ. նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան որոշեց Պաղեստինում երկու առանձին՝ արարական և Հրեական պետություններ ստեղծելը՝ Արարական պետությունը՝ զբաղեցնելու էր Պաղեստինի տարածքի 43%-ը, իսկ Հրեականը՝ 56%-ը: Երուսաղեմը իր որոշ շրջանների հետ (Պաղեստինի տարածքի 1%-ը) ունենալու էր հատուկ միջադպարին վարչակարգ: Որոշումում նշվում էր, որ անդիմական մանդատը Պաղեստինում ավարտվելու էր ոչ ուշ, քան 1948 թ. սպոստոսի 1-ը: Մինչև այդ օրը Պաղեստինից պետք է Հրեանային նաև անդիմական բոլոր զորքերը⁶⁶: Արարական երեքը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում գեմ քվեարկեցին՝ Պաղեստինի անդամանական նախագծին:

իսկ ինչպիսի՞ն էր Սովետական Միության գիրքորոշումն այս հարցում: «Սովետական Միության գլխավոր պահանջը 1946—1948 թթ.,—նշում է օ. Դ. Պիոլինը,—պաղեստինյան զորքերում օտարերկրյա միջամտության վերացման, անզիւդական մանդատի չուծաբքի հնթարկման և այնպիսի պայմանների ստեղծման պահանջն էր, որոնց դեպքում կապահովվեն արարտների և Հրեաների ազգային իրավունքները չենց այս նպատակներից ենինը կատարվեց սովետական հայունի առաջարկությունը նախկին հնթամանդատային Պահանջմանի տարածքում երկմիասնական արարա-իսրայելական պետություն ստեղծելու վերաբերյալը⁶⁷: Սակայն, քանի որ ՄԱԿ-ի պիտակոր ասամբլեայում հիշյալ առաջարկը մերժվեց և հաշվի առնելով, որ Պաղեստինի արարտների և Հրեական թերակայության ներկայացուցիչները զեմ էին զրան, Սովետական Միությունը քվեարկեց Պաղեստինում երկու առանձին պետություններ ստեղծելու օգտին⁶⁸:

1947 թ. դեկտեմբերի 8-ից 17-ը Կայսրերում տեղի ունեցած Արարական լիգայի խորհրդի նստաշրջանը, որը ամբողջությամբ նվիրված էր Պաղեստինի հարցի քննարկմանը՝ Խորհրդի ընդունած հայտարարությունում նշվում էր, որ «Արարական լիգայի երկրների կառավարությունները իրենց բոլորությունների հետ միասին որայթարելու ևն իրենց եղբայրների հանդեպ կատարված անարդարությանը վերջ տալու համար և պատրաստ են հնարավորություն ընձեռել նրանց (պաղեստինցի արարտներին—Շ. Կ.) պաշտպանվելու և ձեռքբերելու Պաղեստինի անկախությունն ու միությունը⁶⁹: Խորհրդուղուց սրոշեց նաև «կտրուկ միջոցառումներ մշակել... խանգարելու համար Պաղեստինի բաժանման անարդար պլանի իրականացումը...»⁷⁰, Խորհրդուղու ընդունեց նաև մի պահոնի որոշում արարական երկրներում կամավորներ հավաքագրելու և զրանցից «Արարական ազատագրական բանակ» կազմավորելու վերաբերյալ⁷¹:

1947 թ. վերջից, 1948 թ. սկզբից Պաղեստինում դեպքերի հետագա սրման հետ մեկտեղ, զնալով ավելի դժվար էր դառնում արարական միացյալ զիծ որդեգրել Պաղեստինի հարցում: Հարկ է նշել, որ արարական երկրների դիրքորոշման մեջ տարրերություններ նկատվում էին զեռ ավելի շուտ:

Այսպես. տակավին 1946 թ. ԱնդրՀորդանանն ու Սառուցյան
Արարիան Բլուզանում գեմ արտահայտվեցին ԱՄՆ-ի և Ան-
դրայի նկատմամբ խիստ միջոցառումներ կիրառելում⁷²:
Նույն նստաշրջանում Իրաքն ու ԱնդրՀորդանանը հանդիս
եկան Պաղեստինի արարական բարձրագույն գործադիր կո-
միտենում հականողիականորեն տրամադրված գործիչների
ընտարվելու դեմ⁷³, Նշված ժամանակաշրջանից ուկած, սա-
կայն, այդ հակասությունները կրեցին անհամեմատ սուր-
բնույթ: Հենց այս պատճառով էլ 1947 թ. գեկտեմբերյան
նստաշրջանի ընթացքում հնարավոր շեղավ հաստատել Բլու-
զանում ընդունված որոշումներն անմիջապես իրականացնե-
լու վերաբերյալ առաջարկվ⁷⁴: Իսկ 1947 թ. հոկտեմբերին
կիրանանում գումարված Խորհրդի նստաշրջանում, երբ քըն-
նարկվում էր Պաղեստինյան հանրապետություն հռչակելու
հնարավորությունը, ԱնդրՀորդանանը դրան գեմ դուրս ե-
կավ⁷⁵: Ամժանի զիրորուցման փոփոխմանն հասնելու համար
Խորհրդում ներկայացված արարական երկրների պատմիրա-
կությունների ղեկավարները, որոնց մեծ մասը այդ երկրը-
ների վարչապետներն էին, հոկտեմբերի 13-ին այցելեցին
ԱնդրՀորդանան⁷⁶: Սակայն վերջինիս պաղեստինյան քաղա-
քականությունում որևէ էական փոփոխություն չկատարվեց:
Այցելության միակ արդյունքն այն եղավ, որ ԱնդրՀորդանա-
նի էմիր Արդալյան առժամանակ հրաժարվեց «Մեծ Սիրիա-
յի» ծրագիրը պրոպագանդելուց⁷⁷:

1948 թ. փետրվարի 7-ից 22-ը Կահիրենում տեղի ունե-
ցավ Արաբական լիգայի քաղաքական կոմիտեի նստաշրջա-
նը, որը որոշեց Պաղեստինի ազատագրման բանակի հրամա-
նատար նշանակել իրաքյան բանակի շտաբի պետ գեներալ
Իսմայիլ Սաֆվաթին: Միաժամանակ ստեղծվեց նաև պա-
զեստինյան արաբների տնտեսական և ֆինանսական հարցե-
րով զրադվող մի մարմին, որը նաև լինելու էր սազառագրո-
ման բանակի հրամանատարության անկյունաքարոզու: Այդ
մարմինի ղեկավարներ նշանակվեցին Լիգայի զինավոր քար-
տուղար Ազզամը, իրաքյան ղեներալ Թահա ալ Հաշիմին և
պաղեստինյան գործիչ Մուսա ալ Ալամբին⁷⁸: Քաղաքական
կոմիտեն որոշեց նաև նոր կոնցեսիաներ շտաբամգրել Պա-
զեստինի բաժանման օգտին քվեարկած երկրներին⁷⁹, Այս

որոշումը Բլուզանում ձեռք բերված պայմանավորվածության միայն մասնակի իրականացումն էր, որն իր հերթին հետևողականորեն չկիրառվեց:

Նստաշրջանի օրակարգի գլխավոր Հարցը՝ պաղեստինյան կառավարության ստեղծումը⁸⁰, այս անգամ ևս իր լուծումը շատացավ Բանն այն էր, որ Արարական լիդայի անդամները ամեն զնով ուղղում էին Հասնել Պաղեստինի Հարցում միացյալ քաղաքական գիծ որդեսպելուն: Իսկ պաղեստինյան կառավարության ստեղծումը, որն, անկասկած, պիտի կազմվեր այդ օրերին Պաղեստինի արաբների շրջանում գլխավոր քաղաքական ուժ հանդիսացող և կիզայի Հովանավորությունը վայելող Արարական քարձրագույն կոմիտեի գծի հետեւրդներից, որոնք հակաանգիտական և հակահաշիմյան տրամադրություններ ունեին, կհանգեցներ թե՛ Անզրհորդանանի և թե՛ Հոնդոնի հատհարաբերությունների սրման: Փաստորեն զիշում անելով Ամսանին, կիզայի անգամ մյուս սկսություններն ակնկալում էին, որ Արդալլաջն ի պատասխան Պաղեստինի Հարցում երենց հետ համաձայնեցված քաղաքականություն կվարի: Նման հաշվարկների սխալ լինելը պետք է որ ալդ օրերին ակնհայտ լիներ: Նույնիսկ պաղեստինյան պատերազմի նախօրեին կիզայի անգամ սկսություններն այնքան էլ ունել չեն զնահատում ուսպիոնում զեպիքը պարզացման հետագա ընթացքի հնարավոր տարրերակները: Այս բանում որոշակի գեր էին կատարում նաև ԱՄՆ-ի և Անգլիայի այլևայլ խաղերը Պաղեստինի Հարցի շուրջ: Այսպես, 1948 թ. մարտի 16-ից 21-ը, երբ Բնյերութում նիստեր էր գումարում Քաղաքական կոմիտեն, լիբանանյան արքմանտեմ քաղաքական գործիչ Քամիլ Շամունն առաջարկեց քննարկել Պաղեստինի Հարցի «կարգավորման» «իր» նախագիծը, ըստ որի Պաղեստինում ստեղծվելու էր դաշնակցացին մի պետություն, 100 հազար հրեաներ իրավունք էին ստանալու գաղթել Պաղեստինի ամսագծի իրականացմանը հսկելու համար⁸¹: Մարտի 19-ին, Պաղեստինի Հարցը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում թելարկելու ժամանակ, ԱՄՆ-ը հանդես եկավ Պաղեստինը ՄԱԿ-ի խնամակալությանը հանձնելու առաջարկով: ԱՄՆ-ի այս քայլի բուն նպատակը ՄԱԿ-ի քվեարկության մեխա-

նիզմն օգտագործելու միջոցով, խնամակալության անվան
տակ Պաղեսահնում իր տիրապետությունը հաստատելն էր⁸²,
նույն շրջանում ԱՄՆ-ի տարրեր քաղաքական գործիչներ
սկսեցին խռով ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի որոշումների
իրականացման հնարավոր շինելու մասին⁸³: Արարական լի-
գան, շխորանալով անգլո-ամերիկյան դիվանագիտության
բուն նստավակների մեջ, այն թյուր պատկերացումն ուներ,
որ անգլո-ամերիկյան նման նախագծերի ի հայտ գալն իրը
վկայում էր այդ երկրների պաղեստինյան քաղաքականու-
թյան փռփոխման մասին և որ միանգամայն հնարավոր եր
դրանց միջոցով հասնել Պաղեստինի հարցի արարների հա-
մար ձեռնառ որոշման Արարական լիգայի քաղաքական
կոմիտեի մարտյան նստաշրջանի փաստաթղթերում անգլո-
ամերիկյան այդ նախագծերը թեսվետ չեն պաշտպանվում և
նորից էր զրույն անկախ և միացյալ Պաղեստին ստեղծելու
պահանջը, սակայն այդ նախագծերը չեն դատապարտվում
և նկատվում էր անհարկի լավատեստիթյուն Պաղեստինի հար-
ցի խաղաղ ու արարներին հարմար կարգավորման հարցում⁸⁴:

Ապրիլի 10-ից 15-ը Քաղաքական կոմիտեն նորից նիս-
տեր գումարեց քննարկելու համար Պաղեստինի հարցը: Մի-
այն այս նստաշրջանում որոշվեց հանդես գալ Պաղեստինը
որևէ երկրի խնամակալությանն հանձնելու առաջարկների
դեմ, եթե խնամակալ շնչանակվեր Արարական լիգան կամ
նրա անդամներից որևէ մեկը⁸⁵, Պաղաքական կոմիտեն՝ որո-
շեց նաև մանգատի վերջանալուց անմիջապես հետո արա-
րական երկրների բանակները Պաղեստին մտցնել⁸⁶: Արևմբար-
յան երկրները, հանձին Անգլիայի, այս անդամ էլ փորձում
էին արարական երկրների ուշաղրությունը շեղել Պաղեստինի
խնդրից, առաջ քաշելով նրանց հետ ուղմա-քաղաքական պայ-
մանագրեր կնքելու գաղափարը⁸⁷:

Այս նստաշրջանը վերջինն էր արարա-իսրայելական ա-
ռաջին պատերազմի սկզբելուց առաջ Դրան նախորդող երեք
տարիների ընթացքում Արարական լիգան հիմնականում
ուշաղրություն էր դարձնում Պաղեստինի հարցի միջազգա-
յին ասպեկտին, ձգտելով սկզբում Անգլիայի և մասամբ նաև
ԱՄՆ-ի օգնությամբ, իսկ խնդրի ՄԱԿ փոխանցվելուց հետո
այդ կազմակերպության շրջանակներում հասնել Պաղեստի-
142

նում իր նպատակների իրականացմանը։ Ընդ որում մինչև 1948 թ. կեսերը գերազնահատվում էր արարական գործոնի դերը արևմտյան երկրների ընդհանրապես արտաքին քաղաքականության և մասնավորապես մերձավորարևելյան քաղաքականության ձևավորման պրոցեսում, և միաժամանակ թերագուահատվում էին սիոնիստների հնարավորությունները։ Հակառակ այն իրողության, որ Արարական լիգան քազմաթիվ անդամներ հայտարարում էր, որ արարական երկրները պատրաստ են ուժի դիմել հանուն Պաղեստինի միասնության, ուազմական ասպարեզում ձեռնարկված նախապատրաստական քայլերը ուղղակի անրավարար էին։ Այլ խոսքով սեալ համարելով՝ Պաղեստինի խողովի քաղաքական կարգավորումը, Արարական լիգան համարյա երեք տարի ճիշտ չէր զնահատում Պաղեստինում տիրող իրադրությունը։ Այսպիսի գիրքորշումը մասամբ արդյունք էր նուև ԱՄՆ-ի և Անգլիայի վարած քաղաքականության, որը շատ զեպքերում ուղղակի մոլորեցնում էր արարական երկրներին։

1948 թ. մայիսի 14-ին «Անգլիան հանկարծակիորեն հայտարարեց մանդատի գաղարեցման» և Պաղեստինից «իր զորքերը զուրս բնելու մասին»⁸⁸, նույն օրն իսկ հոչակեց հրայիլի պետությունը։ Հաջորդ օրը, մայիսի 15-ին Եղիպատուի, Իրարի, Սիրիայի, Լիբանանի և Անգլո-ուրդանանի բանակները մտան Պաղեստին։ Սակայն, ինչպես ցույց են տվել սովորական մասնագետներ և Դմիտրինը, վ. Պ. Լադեցկինը և լ. Ի. Մեղմեղենկոն, սիսալ է արարական երկրներին համարել արարա-իսրայելական առաջին պատերազմի նախաձեռնողներ⁸⁹, ինչպես նշում է լ. Ի. Մեղմեղենկոն, «պաղեստին-բան արյունակի կոտորածը, որն հնատապայում պատերազմի վերածեց, սկսվել է մինչև իրայիլի պետության հոչակումը (արդեն 1946—1947 թթ.)» և որ «այդ պատերազմը սանձազերծվել է ոչ թե արարների, այլ սիոնիստական համելիշների կողմից»⁹⁰, Այն փաստը միայն, որ 250 հազար պաղեստինցի արարներ մինչև 1948 թ. մայիսը լինել էին իրենց բնակավայրերը, խոսուն վկայություն է այդ մասին⁹¹, եզիպտոսի հայտնի քաղաքական գործիւ, Արարական լիգայի նախկին գլխավոր քարտուղար Մահմուդ Ռիազն իր հուշերում գրում է, որ Եղիպտոսն սկզբում մտադրվել էր ուազմական

դործողություններ չկատարել իր տարածքից զուրաց Այդ մասին նպագտուսի վարչապետ Նուբրաշին անդյակ էր պահել արարական երկրներին 1947 թ. Հոկտեմբերին Արարական միջայի քաղաքական կոմիտեի նիստերից մենքի ժամանակ՝ Դրա հետ համաձայննել էր նաև Սառույցան Արարիան, ենթելով արարական բանակների թույլ լինելուց Ռազես այլընտրանք առաջարկվել էր ուժեղացնել պաղեստինյան արարեներին ցույց տրվող օգնությունը նվազ միայն օգնության վերաբերյալ Պաղեստինի արարեների կոչերը ստիպեցին Կայիրենին փոխել իր դիրքորոշումը⁹²:

Արարական բանակների Պաղեստին մտնելու կապակցությամբ Արարական լիգայի անդամ երկրների կառավարությունները հանդիս եկան հատուկ հայտարարությամբ։ Դրանում նշվում էր, որ արարական բանակները մտնում վերջ տալու արյունահղությանը և այդ երկրի բնակչության հարավորություն տալու, որ նրանք անձամբ որոշեն իրենց երկրի ապագան։ Հայտարարությունում պնդվում էր, որ Պաղեստինի հարցի միակ նիշտ լուծումը կլինի միացյալ պաղեստինյան պետության հաստատումը, որում կապահովվեն փոքրամասնությունների իրավունքները⁹³։

Նախքան արարա-իսրայելական առաջին պատերազմին անդրադառնալը, պետք է պարզաբանել, թե դրա ընթացքում արարական առանձին երկրներ կոնկրետ ի՞նչ նպատակներ էին հետապնդում և թե ինչպիսի՞ն էր նրանց վրա իմպերիալիստական տերությունների աղղեցության աստիճանը։

Ինչպես իրավացիորեն նշված է «Մերձավոր և Միջին արևելքի երկրների արտաքին քաղաքականությունը» աշխատությունում, «իթե իրաբի և Անդրօքտանինի համար «պաղեստինյան հարցի արդարացի լուծում» նշանակում էր «Բարերեր մահիկի» կամ «Մեծ Սիրիայի» ստեղծելու հնարավորություն, ապա նպիգտուսն ու Սառույցան Արարիան պաղեստինյան հարցի լուծումն արդարացի էին համարում այն գեպօռմ միայն, երբ այն բացառում էր հաշիմյանների զինաստիքայի ուժեղացումը⁹⁴։ Այլ խոսքով նպիգտուսն Սառույցան Արարիայի զիրքորոշումը Պաղեստինի հարցում ծավալապաշտական չէր։ Համարյա նմանօրինակ զիրքորոշում ունեին նաև Սիրիան ու Լիբանանը։ Հարկ է նշել, որ

Կիդայի անդամ երկրներից շատերի վրա Անգլիան ուներ զգացմի աղղեցություն, որի աստիճանը, սակայն, նրանցից յուրաքանչյուրի վրա տարբեր էր: Պազեստափնի հարցում իր քաղաքականությունն իրականացնելիս լոնդոնը հենվում էր հիմնականուն Անդրհորդանանի վրա: Այս բանն ուներ մի քանի պատճեռ: Նախ Անդրհորդանանը Անգլիայից ամենաշատ կախված երկիրն էր Արարական արևելքում, իսկ նրա զեկավարները պատրաստ էին կատարել լոնդոնից ստացված ցուցումները: Պակաս կարենոր չէր նաև այն, որ Անդրհորդանանը միակ արարական երկիրն էր, որը բացահայտորեն հանդես էր դաշիս հականազիականորեն տրամադրված Պաղեստինի արարական բարձրագույն կոմիտեի ղեմ: Այսպես, օրինակ, Անդրհորդանանի թագավոր Արդալլահը 1948 թ. մայիսի կեսերին հայտարարում էր, որ բարձրագույն կոմիտեն վազուց ին ներկայացնում Պաղեստինի արաբներին²⁰: Եվ վերջապես Արդալլահն այն ժամանակ արար բաղաքական միակ զորքին էր, որը պատրաստ էր սիոնիստների հետ անջատողական զործարք կնքել (թեկուզ ոչ բացահայտ), ինչը Անգլիայի համար անշատ կարենոր էր, քանի որ լոնդոնն ու Վաշինգտոնը 1948 թ. սկզբին սկզբանքորեն պայմանավորվել էին Պաղեստինի աղղեցության գոտիների բաժանելու վերաբերյալ:

Այսպիսով, արարա-իսրայելական առաջին պատերազմի ժամանակ արարական տարբեր երկրներ հետապնդում էին տարբեր նպատակներ:

Իր նախագծերի իրականացման համար Անդրհորդանանի կառավարությունը 1948 թ. ապրիլին ղիմեց Արարական լիգայի զիլավոր քարտուղարին, «ինգրենով անդրհորդանանցան բանակին թույլ տալ զրավել ամբողջ Պաղեստինը, սկսած մայիսի 15-ից՝ այսինքն այդ երկրից բրիտանական զորքերի դուրս բերման պահից»²¹, Այդ գործողությունը միայն իր բանակի մասնակցությամբ իրականացնելու ցանկությունը Ամսանը հիմնավորում էր նրանով, որ ինքը «ՄԱԿ-ի անդամ չէ և դրա համար էլ իր զորքերի կողմից Պաղեստինի զրավումը մինի ՄԱԿ-ի կանոնադրության խախտում», այն դեպքում, երբ արարական մյուս՝ ՄԱԿ-ի անդամ երկրների այդպիսի քայլը կարող է առաջացնել «միջազգային իրադրության բար-

դացում⁹⁷: Իհարկե, «ամբողջ Պաղեստինը զրավելու մասին պնդումը միայն դատարկ հայտարարություն էր, քանի որ դեռ 1948 թ. մարտին Անգլիայի արտաքին գործերի մինիստր է Բեինը և Անգլո-Կորուսանանի վարչապետ Թավֆիկ Աբուկ Հուշան պայմանավորվել էին, որ Արաբական լեռնոնց (անգլիական սպաների հրամանատարության ներքո գտնվող անգրուրդանանյան բանակը), թափանցելով Պաղեստին, միտունի հրեական պետությանը հատկացված տարածքը⁹⁸, Ինչպես նշում է Լ. Ն. Կոտլովը, «այս սահմանափակումը անկատած արդյունք էր Պաղեստինը աղղեցության գոտիների բաժանելու վերաբերյալ այդ ժամանակ ԱՄՆ-ի և Անգլիայի իմաստիալիստների միջև արդեն ձեռք բերված պայմանավորվածության»⁹⁹: 1948 թ. ապրիլի 12-ին և մայիսի 11-ին Անգրուրդանանի թագավոր Արդալյանը և սիռիական գործիչների միջև տեղի ունեցան հանդիպումներ, որոնց ընթացքում կողմերը պայմանավորվեցին Պաղեստինը միմյանց միջև բաժանելու վերաբերյալ: Հետաքրքիր է, որ Արդալյանը հավաստիացրեց Հրեական գործակալության ներկայացուցիչ Դոլգա Մելիքին, որ իրաքյան զորամասներն էլ չեն ներխուժի Հրեական պետությանը հատկացված տարածքը¹⁰⁰:

Մտնելով Պաղեստին, արաբական երկրների բանակները զրաղեցրեցին արաբական պետությանը հատկացված տարածքը: Ընդ որում անգրուրդանանյան և իրաքյան զորամասները զրեթե ամրողովին զրավեցին Հորդանան գետի արևմտյան ափը: Պատերազմական գործողությունների սկզբից հետո ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը կոչ արեց դադարեցնել դրանք: Ակզրում Արաբական լիգան մերժեց զինադադարի առաջարկը¹⁰¹: Սակայն հունիսի 1-ին իրավայի քաղաքական կոմիտեն որոշեց համաձայնել զինադադարի հաստատմանը, միաժամանակ նշելով, որ արաբական երկրները կշարունակեն պայքարել Հրեական պետության դեմ¹⁰²: Հունիսի 11-ին ստորագրվեց զինադադարի վերաբերյալ առաջին համաձայնագիրը: Սակայն հուլիսի 8-ին ուղարկան գործողությունները վերսկսվեցին և շարունակվեցին մինչև հուլիսի 18-ը, երբ հայտարարվեց երկրորդ զինադադարի մասին: Այդ ընթացքում Իսրայելը պրավեց համարյա ամբողջ հյուսիսային Պաղեստինը¹⁰³:

Աւազմական գործողությունների սկսվելուց հետո Արաբական լիգայի առջև ժառացավ մի կարևոր խնդիր: Դա արաբական քանակիների գրաված պաղեստինյան հողերի ստատուսի հարցն էր: Արաբական լիգայի քաղաքական կոմիտեի 1948 թ. հունիսի 8-ին Ալեքսանդրիայում տևելի ունեցած նիստում որոշվեց Պաղեստինում Ահմեդ Հիլմիի ղլխավորությամբ ստեղծել ժամանակավոր քաղաքացիական վարչություն, որն ունենալու էր արգարադատության, ֆինանսների, ազգային տնտեսության և այլ՝ թվով ինը պաշտոնատներ¹⁰⁴: Հատկանշական է, որ ժամանակավոր քաղաքացիական վարչությունը տվյալ փուլում իրավասու չեր համարվում քաղաքական գործերում¹⁰⁵: Դրա պատճառը հավանաբար այն էր, որ կիդայի անդամները չեին ուզում բացահայտ առնակատման դալ Անդրհորդանանի դեմ, որը սկզբանքորեն առարկում էր Պաղեստինի ինքնորոշմանն ուղղված ցանկացած քայլի: Սակայն Պաղեստինի ժամանակավոր վարչության ստեղծումն էլ բավականին սրեց հարաբերությունները Անդրհորդանանի և կիդայի անդամ մյուս պետությունների միջև, որի պատճառով էլ տապալվեց արաբական բանակների միացյալ հրամանատարությունն ստեղծելու փորձը¹⁰⁶: Իսկ Ամմանը դեռ 1948 թ. մայիսից նախապատրաստական միջոցառումներ էր ձեռնարկել Պաղեստինի արաբական հատվածն իրեն բռնակցելու համար: Արդեն այդ շրջանում ստեղծվեց Արգալլահի պաղեստինցի կողմնակիցներին միավորող «Պաղեստինի բյուրոն», որը կոչված էր պայթարելու Պաղեստինի բարձրագույն կոմիտեի դեմ: Մի փոքր ավելի ուշ վերացվեցին Պաղեստինի և Անդրհորդանանի միջև եղող մաքսային արգելքները, պաղեստինցի պաղթականներին տըրպեցին անդրհորդանանյան քաղաքացիների որոշ իրավունքներ¹⁰⁷:

Քաղաքական կոմիտեի 1948 թ. սեպտեմբերի 6-ից 12-ը տեղի ունեցած նստաշրջանում նորից քննարկվում էր Պաղեստինի հարցը: Նստաշրջանի ավարտից հետո կիդայի գրեսավոր քարտուղար Ազգամը հայտարարեց, որ պաղեստինցի արաբներն իրավունք ունեն քաղաքացիական ժամանակավոր վարչությունը «դարձնել կառավարություն կամ կյանքի կողմէ մի նոր կառավարություն»¹⁰⁸: Արարտ լան լիգան այսպի-

սով ցանկանում էր պաղեստինյան կառավարության ստեղծմանը տալ «ինքնավար» բնույթ, այն շկագիլ իրազայի այս կամ այն ակտի հետ և դրանով իսկ խուսափել Անդրկորդանանի հետ հարաբերությունների կորուկ վատթարացումից:

Պաղեստինի բարձրագույն կոմիտեի 1948 թ. սեպտեմբերի 23-ի նիստում, որը գումարվեց Ամին ալ Հուսեյնիի նախագահությամբ, Հայտարարվեց Ահմադ Հիլմիի ղլիսավորությամբ՝ պաղեստինյան ազատ կառավարության ստեղծման մասին¹⁰⁹: Իսկ սեպտեմբերի 30-ին Ղազայում տեղի ունեցավ Պաղեստինի սահմանադիր ասամբլեայի նիստը, որի աշխատանքին մասնակցում էին Պաղեստինի բարձրագույն կոմիտեի, քաղաքագույնարանների, առևտրական պալատների և պաղեստինյան այլ կազմակերպությունների թվով 83 ներկայացուցիչներ: Ասամբլեայի նախագահ՝ միաձայնորեն ընտրվեց Ամին ալ Հուսեյնին: Այսուհետեւ ասամբլեան վրատահության ժիք արվեց Ահմադ Հիլմիի կառավարությանը¹¹⁰: Հաջորդ օրը, Հոկտեմբերի 1-ին, Հայտարարվեց անկախ Պաղեստինի ստեղծման մասին, որն իր մեջ ընդունվելու էր ամրող Պաղեստինի տարածքը, այդ թվում նաև ՄԱԿ-ի որոշումով հրեական պետությանը հատկացված հոգեբռը¹¹¹: Հոկտեմբերի 12-ին Պաղեստինի կառավարությունը (որը հաճախ իր նստավայրի անունով կոչվում է նաև Ղազայի կառավարություն) հանաշվեց Եղիպտոսի, 13-ին՝ Սիրիայի և Լիբանանի, 14-ին՝ Սաուդյան Արաբիայի, 16-ին՝ Եմենի կողմից¹¹²: Բոլորովին այլ զիրքորոշում ունեցավ Անդրկորդանանը: Նա ոչ միայն շնորհած Հիլմիի կառավարությունը, այլև ամեն կերպ խանգարեց նրա ազգեցության տարածմանը Արաբական լեգեոնի և իրաքյան զորամասերի կողմից գրավված արևելյան Պաղեստինում, որտեղ կհնարինացված էր պաղեստինցի արաբների մեծ մասը: Արդաւագանցը հրամայեց նաև ցրել Հուսեյնիի կողմնակիցների ուսումնական կազմակերպության («Ալ Զի՞ւադ ալ Մուկադդասի») շտկատեները: Միաժամանակ Ամմանի դրածոնները լայն արշավ ծավալեցին Ղազայի կառավարությանն ի հակակշիռ մի այլ կառավարություն ստեղծելու համար¹¹³: Հիլմիի կառավարության նկատմամբ բացասական զիրքորոշում որդեպեցին ԱՄՆ-ը և Անգլիան¹¹⁴:

հնչպիս դրում է Հ. Կոտլովը, «գեղաքերի հետազա ընթացքի վրա... լուրջ ազդեցություն թողեցին պազմստինյան պատերազմի ճակատներում ընդհանուր փոփոխությունները»¹¹⁵. Հոկտեմբերի 15-ին, խախտելով զինադադարը, իսրաւելական զորքերը նեզում հարձակման անցան և գիտական զորամասերի գնմ, որոնց հիմնական մասն ստիպված եղավ նաև անշնչել Պաղայի շրջան։ Խոկ հոկտեմբերի 29-ին իսրաւելական բանակը հյուսիսում մտավ Լիբանանի տարածքը¹¹⁶, Այս պայմաններում համարյա արարական բոլոր կառավարությունների, այդ թվում նաև Պաղայի կառավարության համար առաջնային նշանակություն ստացավ ուղղմական զործողությունների հետազա ընթացքը և նրանք առժամանակ համաձայնեցին օրակարգից հանել պազմստինյան արարական պետության ստեղծման հարցը, ակնկալելով, որ Արարական լեզեռնը ակտիվ գործողություններ ծավալելով կհեշտացնի արարական մյուս բանակների գործը Սակայն Ամմանը ոչ մի էական ուղղմական գործողություն շնորհարկեց արարական մյուս երկրներին օդնելու համար¹¹⁷, Ավելին, պատվելով արարական բանակների պարտությունից, Արդարւահանը սրոշեց արագացնել Պաղեստինի արարական հատվածների բոնակցումը¹¹⁸:

1948 թ. գեկանմբերի 1-ին Անգրհորդանանի բանակի կողմից վերահսկվող պաղեստինյան երիքով քաղաքում Արդարականի կողմնակից պազմստինյաները գումարեցին մի համաժողով, որը ուղերձով զիմեց ՄԱԿ-ին։ Դրանում նշյում էր, որ համաժողովը «որոշեց, որ պետք է Պաղեստինից և Անգրհորդանանից մի թագավորություն հիմնել և նորին Պայծառափայլություն Արդարականի իրն ալ Հուսեյնին Պաղեստինի սահմանադրական միավետ հաջակել»¹¹⁹, Արարական լիգավի անդամ պետությունների մեծ մասը դատապարտեց Երիքովի համաժողովի որոշումները։ Գլխավոր քարտուղար Ալզամը հայտարարեց, որ «Երիքովի համաժողովը մի քանի անձերի պարզ հավաք է միայն, որը չի կարող խոսել Պաղեստինի անունից»¹²⁰, Հակառակ դրան, Անգրհորդանանի կառավարությունը դեկտեմբերի 7-ին հավանություն տվեց Երիքովի համաժողովի որոշումներին, իսկ դեկտեմբերի 13-ին Անգրհորդանանի խորհրդարանը հաստատեց դրանք¹²¹, Սա-

կայն 1948 թ. գնեսոնմբերի վերջին Արդալահը ժամանակա-
վորապես հրաժարվեց իր նախագիծն իրականացնելուց,
ոնպատակ ունենալով Խորայելի հետ առաջիկայում ծրագրը
վող քանակցություններում առաջնութել արարական մյուս
Երկրների զիվանագիտական աշակցությունը»¹²²:

1948 թ. գնեսոնմբերի 15-ին Արարական Միզայի քաղա-
քական կոմիտեն նորից հանդես եկավ պաղեստինցի արար-
ների իրավունքների պաշտպանությամբ Նրա ընդունած «
որոշման մեջ նշվում էր, որ «Պաղեստինի արարները պետք
է զիտվեն որպես անկախ ազգ, որը ընակվում է անկախ
պետությունում»¹²³: Քաղաքական կոմիտեն գտնում էր, որ
ութիւն Պաղեստինի արարական մասը միավորվի ԱնդրՀորդա-
նանին, ապա դա կվանդի ինչպես Պաղեստինի անկախու-
թյունը, այնպես էլ անվտանգությունն ու օրինականությունն
այդ երկրում (ԱնդրՀորդանանում—Շ. Ա.)»¹²⁴:

1948 թ. վերջին, 1949 թ. սկզբին Պաղեստինում ռազ-
մական զործողությունները դադարեցվեցին: ՄԱԿ-ի որոշու-
մով Պաղեստինի արարական պետությանը հատկացված հո-
ղերի մեծ մասը՝ 6,6 հազար քառ. կմ. գրավեց Խորայելը,
5,5 հազար քառ. կմ՝ անցավ ԱնդրՀորդանանին, իսկ 253 քառ.
կմ (Պաղայի շրջանը)՝ Եղիպտոսին¹²⁵:

Գժվար է միանշանակ գնահատական տալ արարակա-
րայելական առաջին սպատերազմի ժամանակ Արարական լի-
գայի գործունեությանը: Փաստ է, որ այդ կազմակերպու-
թյունը չկարողացավ համակարգել իր անդամների ուղար-
կան զործողությունները: Սակայն պարզ է նաև, որ կիզայի
անդամ պետությունների հետապնդած ռազմա-քաղաքական
նպատակների շհամընկնման պայմաններում, հնարավոր էլ
չեր նրանց միջն գործուն, ոչ ձևական համագործակցություն
հաստատել այդ ասպարեզում: Եթե այս մարզում կիզայի
փաստական անգործության մատնվելը օրյեկտիվ պատճառ-
ներ ուներ, ապա պաղեստինյան պետության ստեղծման հար-
ցում նրա դանդաղկոտությունն այնքան էլ արգարացված չէր:
Աններելի է, որ ամրող շրոս ամիս (1948 թ. մայիսի 15-ից
մինչև սեպտեմբերի վերջը) շատեղծվեց Պաղեստինի արարա-
կան կառավարությունը: Այս հարցում ԱնդրՀորդանանին զի-
շումներ կատարելու տակտիկան ճիշտ չէր: Կիզայի անդամ-

ները այդպիսով շէին կարող Ամմանի դիրքորոշման փոփոխամանն հասնել թե՛ Պաղեստինի ապագայի, թե՛ պաղեստինցան պատերազմում նրա որդեգրած կուրսի հարցում: Եվս մի կարևոր հանգամանք: Ինչպես ցույց տրվեց վերևում, կիզան Պաղեստինում հնավում էր Արաբական բարձրագույն կոմիտեի վրա, որը թեսակ և ուներ հակառանգիսական և հակառաշիմյան ուղղվածություն, սակայն ներկայացնում էր Պաղեստինի բուրժուա-ավատատիրական վերնախավին: Այդ կաղմակարգությանը հատուկ էր դասակարգային նեղմտություն: Այսպես, օրինակ, բարձրագույն կոմիտեի ներկայացուցիչներից կազմված Պաղեստինի ժամանակավոր քաղաքացիական վարչության առաջին քայլերից մեկն եղավ Պաղեստինի առաջադիմական կազմակերպությունների ղեմ հալածանքներն սկսելը¹²⁶: Այսպիսի քաղաքականությունը, ինչ խոսք, միայն վնասում էր անկախ արաբական Պաղեստին ստեղծմանը:

1948 թ. սեպտեմբերի վերջին ստեղծված պաղեստինցան կառավարությունը Պաղեստինի ոչ մի շրջանում, բացի Հաղանից, գործելու հնարավորություն շտացավ:

Այս բոլորի հետ պետք է նշել, սակայն, որ 1948 թ. պայմաններում, երբ արաբական երկրները զինված էին շատ վատ և երբ անգլո-ամերիկյան խմբերի ավտոմաներն ու նրանց հովանավորյականեր՝ Խորայեն ու Անգլո-որդանանը, հիմնականում գործում էին նախօրին ձեռք բերմած, ընդ որում այդ օրերին դադունի պահպաղ և ամենայն հավանականությամբ արաբական մյուս պետություններին ոչ-հայտնի պայմանագրովածության համաձայն, Պաղեստինում կարելի էր հաշողության հասնել խնդրում ներքաշված արաբական բալոր երկրներում ժողովրդական լայն պայքար ծավալելով միայն: Իսկ կիզայի անդամ պետություններն այդ շրջանում իրենց սոցիալ-դասակարգային բնույթով ի վիճակի շեին այդ անել:

Պատերազմական գործողությունների ավարտից հետո պաղեստինյան արաբական պետություն ստեղծելու հարցը մեծապես կախված էր արևելյան Պաղեստինում տիրող արաբակարություններից, որը գրավվել էր Անգլո-որդանանի կողմից և որտեղ բնակվում էր պաղեստինցի արաբների զգալի մասը: «1948 թ. վերջին,—գրում է Լ. Ն. Կոտլովը,—սկսվեց

Հեղինակավոր, նախկինում Արդալյանին թշնամաբար տրամադրված բուրժուա-ավատատիրական խմբավորումների աստիճանական հեռացումը Ղազայի կառավարությունից, որոնք համոզվել էին Ամին ալ Շուսենիի ծրագրի իրագործման անհիմն լինելու մեջ՝¹²⁷ Միայն իրենց դասակարգային նեղ շահերի մասին մտածող այս խմբավորումները անդրհորդանանյան դորամաների ներկայության պայմաններում որևէ այլընտրանք չունենի իսկ Արարական լիգայի մի շարք անդամներ, որոնց, հակառակ այն իրողության, որ պաշտամինյան պատերազմում կրած պարտության հետևանքով դառնվում էին ճնշամամային իրավիճակում, Պաղեստինում արարական պետություն ստեղծելու համար պայքարը ավարտված շեին համարում Նրանց համար այդ պայքարը նաև ճնշամից դուրս դառնու միջոց էր: Այս դիրքերից առավել աշխարյական էր:

1949 թ. հունվարին մամուլում տեղեկություններ երևացին այն մասին, որ Կահիրեն առաջարկում է Անդրհորդանանին հեռացնել Արարական լիգայից, եթե նա արգելի պաղեստինյան անհամ պետության ստեղծմանը՝¹²⁸ Սակայն այս հարցում արարական երկրների միջև համաձայնություն չկարող եղիլու մասին նախաձեռնությունը մասնավորապես դիմ էր Իրաքը, որի հարաբերություններն այդ շրջանում որված էին լիգայի դեկավարության հետ: 1949 թ. մայիսին այդ հարաբերություններն այն աստիճան էին վատացել, որ Իրաքը կիրայի այլեւայլ մարմինների աշխատանքներին իր մասնակցությունը պայմանավորում էր կիգայի զիսավոր քարտուղար Ազգամի հեռացումով և նրա փոխարեն Թամիլ Շամունին կամ Իրաքի նախկին վարչապետ Զամիլ Մադֆաիին նշանակելով՝¹²⁹:

Օգովելով միշարաբական հարաբերություններում իր համար այսպիսի նպաստավոր մթնոլորտից, Արդալյանը զգուշորեն իրականացնում էր Արևելյան Պաղեստինի բռնակցման քաղաքականությունը: 1949 թ. փետրվարին նա հրապարակեց մի հրամանազիր, ըստ որի յուրաքանչյուր պաղեստինցու իրավունք էր տրվում ձեռք բերել անդրհորդանանյան քաղաքացիություն, իսկ նույն թվականի մայիսին անդրհորդանանյան նոր կառավարության կազմում ընդգրկ-

վեցին երեք պաղեստինցիներ¹³⁰: Սակայն 1949 թ. երկրորդ կեսին, 1950 թ. սկզբին, երր բարեկավելեցին եղապտա-իրաքան Հարաբերությունները, Արդարացման որոշ ժամանակակից ձևուագում մնաց բնակցողական քայլեր ձեռնարկելուց և սկսեց Խորայնի հետ մերձացման ուղիներ փնտրել¹³¹: 1949 թ. վերջին, 1950 թ. սկզբին Խորայնի կառավարության և նրա ներկայացուցիչների միջև կայցացած բանակցություններից պարզ դարձավ, որ «Խորայնի ղեկավարները բարյացակամուրն և վերաբերում Արևելյան Պաղեստինը Արդարացման տիրույթներին պաշտոնապես միացնելու նախագծին»¹³²:

Անդր՛օրդանանի վարած անշատողական քաղաքականությունը քննարկման առարկա դարձավ կիզայի 1950 թ. դարնանային նստաշրջանում, որը Կահիրենում զումարվեց մարտի 25-ից ապրիլի 13-ը: Եղիպտոսի վարչապետ Նահաւասուն առաջարկեց Ղազայի կառավարության ներկայացուցիչներին Հրավիրել նստաշրջանի աշխատանքներին մասնակցելու¹³³, ըստ որոշ ազբյուրների, Կահիրեն գրեց նաև Անդր՛օրդանանը կիզայից Հեռացնելու Հարցը¹³⁴: Ի պատճառամբ, Արդարացմանը իր ներկայացուցիչներին հրահանգ տվեց առժամանակ բոյկոտել նստաշրջանի աշխատանքը¹³⁵: Մարտի 27-ից պաղեստինյան կառավարության ներկայացուցիչները մասնակցեցին Խորհրդի նիստերին: Սակայն նստաշրջանը հիմնական ուշադրությունը դարձրեց Անդր՛օրդանանի և Խորային միջև անշատողական բանակցություններին, դրանք չկապելով Պաղեստինի արաբական հողերի ստատուսի և Ղազայի կառավարության խնդրի հետ: Կիզայի անդամ երկրների այսպիսի գիրքորոշումը արդյունք էր նաև Ամմանի վարած խորամանել քաղաքականության: Բանն այն է, որ Խարայիի հետ բանակցությունները «Արդարացմանի կողմից օգտագործվում էին որպես կիզայի պետություններին քաղաքական շանտաժի հնթարկելու միջոց, որոնց նա կարող էր սպառնալ դրանք նորից սկսելու Հնարավորությամբ»¹³⁶: Ապրիլի 1-ին Արաբական լիդայի անդամները, այդ թվում նաև Անդր՛օրդանանը, հաստատեցին Խորհրդի որոշումը Խորայիի հետ անշատողական բանակցություններ շվարելու վերաբերյալ¹³⁷, Որոշմամբ կիզայի անդամներին արգելվում էր պահակցել... անշատողական խաղաղության (պայմանագիր)

կամ որևէ (այլ) քաղաքական, ռազմական կամ տնտեսական համաձայնագիր կնքել խօսայելի հետը¹³⁹, Որոշման մեջ նշվում էր, որ այդպիսի քայլ անող երկիրը կհեռացվի կիզայից: Նստաշրջանի վերջին օրը՝ ապրիլի 13-ին, Խորհուրդը հաստատեց նաև այն պատճամիցոցները, որոնք գործադրութելու էին անշատողական դորժարք կատարած երկրի դեմ: Մասնավորապես նախատեսվում էր խզել այդ երկրի հետ բոլոր տեսակի քաղաքական, դիվանագիտական և առևտրակինանական կապերը¹⁴⁰,

Խորհրդի ապրիլի 1-ի որոշումը բոլորովին էլ շնանգեցրեց Անդրհորդանանի և Եգիպտոսի ու Ղազայի կառավարության միջև հակամարտության վերացմանը: Վերջիններին շատերով կիզայի քաղաքական կոմիտեն ապրիլի 6-ից 11-ը այնուամենայնիվ քննարկեց Անդրհորդանանի բռնակցողական քաղաքականության հարցը և ընդունեց մի որոշում, որը ապրիլի 13-ին հաստատվեց Խորհրդի բոլոր անդամների կողմից, քացառությամբ Անդրհորդանանի: Քրանում նշվում էր, որ արարական բանակները Պաղեստին ևն մտել, ինչպես որ դա ժամանակին շեշտվել է կիզայի կողմից, ոչ թե այդ երկիրն սկսում աշնելու, այլ տեղի բնակիչներին օգնելու, որ նրանք տնօրինեն իրենց բախտը: Որոշման մեջ ասվում էր, որ կիզայի դիրքորոշումը մնում է նույնը և եթե արարական որևէ երկիր խախտի այն, ապա նրա դեմ անհրաժեշտ միցոցներ ձեռք կառնվեն¹⁴⁰: Սակայն Արդարականը նույնպես անցել էր ակտիվ գործողությունների: Տեսնելով, որ Եգիպտոսի դիրքերը կիզայում այնքան էլ կայուն չեն, նա որոշեց կատարել Պաղեստինի արարական մասի բռնակցմանն ուղղված վերջին քայլերը: Ապրիլի 11-ին նա անցկացնել տվեց գեռ 1949 թ. դեկտեմբերին նշանակված պառամենտական ընտրությունները Անդրհորդանանում և Արևելյան Պաղեստինում: Որոշ տեղեկություններով ընտրություններին մասնակցել էր ընտրողների 35 տոկոսը միայն¹⁴¹, Ապրիլի 23-ին նորընտիր պառամենտը պաշտոնապես հայտարարեց Անդրհորդանանի և Արևելյան Պաղեստինի միավորման մասին, վերապահություն անելով, սակայն, որ «արարական Պաղեստինի միացումը Անդրհորդանանին ժամանակավոր քայլ է և չի ազդի արարական Պաղեստինի վերջնական ստա-

տուսիր վրաս¹⁴²: Եղիպտական կառավարությունը մայիսի սկզբին պահանջեց Քաղաքական կոմիտեի նիստ Հրավիրել՝ քննարկելու համար Անդրհորդանանի քաղաքականության հարցը: Սակայն Իրարին հաջողվեց հասնել նիստի հետաձգամանը, այն պատրիվակով, որ մայիսի սկզբին պառկամենտի նիստեր ևն տեղի ունենալու և կատարվելու է Ֆեյսալ թագավորի ծննդյան տոնակատարությունը¹⁴³:

Իսկ երբ մայիսի 10-ից 15-ը Կահիրեաւմ վերջապես տեղի ունեցավ Քաղաքական կոմիտեի նստաշրջանը, իրարի և եմանի խուսափողական կեցվածքի պատճառով որոշվեց հարցի քննարկումը հետաձդել մինչև հունիսի 12-ը¹⁴⁴: Այդ ընթացքում հաշիմամետ զիբրարոշում ընդունեցին նաև Սիրիան ու Իրանանը: Փաստորեն միայն նգիպտուն ու Սաուդյան Արարիան հետեղականություն դրսեորեցին և Քաղաքական կոմիտեի հունիսյան նստաշրջանում էլ պահանջեցին Անդրհորդանանին հեռացնել լիգայից¹⁴⁵: Այս պայմաններում կիսայի անդամները հունիսի 13-ին ընդունեցին մի փոխպետողական որոշում: Գրանում նշվում էր, որ Պաղեստինի արաբական մասի միացումը Հորդանանին պայմանավորված է պրակտիկ անհրաժեշտությամբ և որ Անդրհորդանանը այդ տարածքը կարա՞ի իր հսկողության տակ որպես խնամարկյալ տարածք մինչև պաղեստինյան հարցի վերջնական լուծումը¹⁴⁶: Այսպիսով կիսայի կողմից ոպաշտոնապես ճանաշվեց Արևելյան Պաղեստինում ստեղծված իրավիճակը և, թեկուղ վերապահումներով, նրա բռնակցումը Անդրհորդանանին»¹⁴⁷:

1950 թ. հետո Արաբական լիգան մոտ 15 տարի այնքան էլ հաճախ չէր անդրադառնում Պաղեստինի հարցին: Իսկ Զաղայի կառավարությունը դեռ որոշ ժամանակ շարունակում էր գոյություն ունենալ, սակայն նա աստիճանաբար բոլորովին կտրվեց պաղեստինյան ժողովրդական զանգվածներց և ի վերջո դատապարտվեց կործանման:

1945—50 թթ. Արաբական լիգան Պաղեստինի հարցում միշտ չէ, որ ընտրում էր ճիշտ տակտիկա: Պաղեստինի համար մղված պայքարի բոլոր փուլերում չէ, որ օգտագործվեց այդ կազմակերպության ամբողջ պոտենցիալը: Սակայն կիսայի անդամ պետությունների զգալի մասը իրոք ձգտում

Եր Հասնել Պաղեստինում արարական պետության ստեղծմանը, բայց նրանք իրենց նպատակների իրականացմանը շհասան հիմնականում պաղեստինյան խնդրում անզլուամերիկյան իմպերիալիստաների և նրանց արբանյակների՝ իսրայելի և Անդր՛որդանանի գիրքորոշման պատճառով։ Արարական աղօային-աղատազրական շարժման մեջ ոչ-այնքան արմատական ռւժերի գերակշիռ լինելու պայմաններում անհնարին եղավ զիմազրավել իմպերիալիստական գործարքի իրականացմանը։ Այնուամենայնիվ պետք է նշել, որ Հանուն պաղեստինյան պետության ստեղծման արարական երկրների և նրանց միավորող Արարական պետությունների լրացի պայքարն ուներ, թեկուզե ոչ միշտ ավարտուն և հնաևողական, բայց այնուամենայնիվ Հակաիմպերիալիստական որոշակի ռւղղվածություն։ Արարական աղօային-աղատազրական շարժման 1940-ական թվականների պատկերը, առանց Պաղեստինի Համար մղված պայքարի արտացոլման, թերի լլինե,

ՎԵՐՋԱԲԱՆ

1950-ական թվականների երկրորդ կեսից մինչև մեր օրերը ընկած ժամանակաշրջանում Արարական պետությունների լիգայի գործունեությունը ծավալվել է քաղաքական խիստ բարդ և անբարենպաստ պայմաններում, որը անխուսափելիորեն իր կնիքն է դրեւ, երբեմն խիստ բացասական էր երգով, նրա գործունեության վրա Պատմական դեպքերի և փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երբեմն նվազել է լիգայի ակտիվությունը և եղել են պահեր, երբ արարական այս կամ այն երկիրը կամ երկրների խումբը փորձել են շրջանցել նրան կամ շկատարել նրա ընդունած որոշումները։ Հետեւարար լիգայի վերջին շրջանի ավելի քան 30 տարի ընդգրկող ժամանակաշատվածի գործունեությանը մի կարևոր տակ միանշանակ դնահատական և այն լուրա-քանչուր գեպքում կարիք է զգում կոնկրետ վերլուծության։

